

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ**

**ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ**

***Հրատարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի երաշխավորությամբ
Լրատվական գործունեություն իրականացնող՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման
վկայական 03Ա085891՝ տրված 15.09.2009թ.***

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ գլխավոր խմբագրի տեղակալ
Ա. Մնացականյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

**ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ"**

"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал
*Издается по рекомендации Научного совета Образовательного
комплекса полиции Республики Армения*

ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И ВКЛЮЧЕН В
ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И ИЗДАНИЙ, В КОТОРЫХ
ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ДИССЕРТАЦИЙ НА
СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: заместитель главного редактора Артак Мнацаканян

**FOUNDER AND PUBLISHER:
"POLICE EDUCATIONAL COMPLEX OF RA" STATE NON-PROFIT
ORGANIZATION**

"BULWARK OF LAW" scientific-methodical journal

**It is published with the warranty of the Scientific Council of the Police
Educational Complex of RA**

THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN RA'S
MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMMITTEE'S IN THE
ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST

Address: Yerevan 0004, Covakal Isakov Avenue 23,

Official web-cite: www.edupolice.am

Email: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

The representative of the journal publishing: Deputy Head of the editor-in-chief
A. Mnatsakanyan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Գլխավոր խմբագիր - ի.գ.թ. **Տիգրան Եսայան**,

Գլխավոր խմբագրի տեղակալ - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ. **Արտակ Մնացականյան**,

Պատասխանատու քարտուղար - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ **Սիրանուշ Պողոսյան**։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Արա Տիդանյան**,

ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան**,

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Սերգեյ Առաքելյան**,

ՀՀ ոստիկանության պետի գլխավոր խորհրդական, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ. **Գրիգոր Բաղիրյան**,

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան**,

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան**,

ՀՀ ոստիկանության ՀԿԼՎ պետ, ոստիկանության գնդապետ **Աշոտ Ահարոնյան**,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան**,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գագիկ Գրիգորյան**,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան**,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան**,

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով**,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով**,

ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բավսուն**։

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор- кандидат юридических наук **Есаян Тигран Микаелович**,

Заместитель главного редактора- начальник отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, майор полиции, кандидат юридических наук **Мнацаканян Артак Самвелович**,

Ответственный секретарь- заместитель начальника отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции **Погосян Сирануш Гришаевна**,

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Заместитель начальника полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук **Фиданян Ара Хоренович**,

Судья конституционного суда Республики Армения, доктор юридических наук, профессор **Хачатрян Ашот Гайкович**,

Ректор Академии Юстиции, доктор юридических наук, профессор **Аракелян Сергей Ваганович**,

Главный советник начальника Полиции Республики Армения, полковник полиции, доктор юридических наук **Бадирян Григор Микаелович**,

Заслуженный юрист РА, кандидат юридических наук **Кочарян Оганнес Иишанович**,

Начальник Юридического управления Полиции Республики Армения полковник полиции, кандидат юридических наук, доцент **Мурадян Манук Оганнесович**,

Начальник Управления по связям с общественностью и информации Полиции Республики Армения, полковник полиции **Агаронян Ашот Сирасович**,

Первый заместитель начальника Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент **Маркосян Мисак Меружанович**,

Начальник академии Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Григорян Гагик Таарович**,

Заместитель начальника академии Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук **Марандян Руслан Рафикович**,

Начальник кафедры уголовного процесса академии Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент **Оганесян Артак Робертович**,

Первый заместитель начальника Краснодарского университета МВД РФ, доктор технических наук, профессор, генерал-майор полиции **Булгаков Олег Митрофанович**,

Первый заместитель начальника Академии управления МВД России, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Парадников Александр Геннадьевич**,

Заместитель начальника Омской академии МВД РФ (по научной работе), полковник полиции доктор юридических наук, профессор, **Бавсун Максим Викторович**.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ասլանյան Արայիկ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ: ՆԵՐՔԻՆ ՀԱՄՈՁՄՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ
ՓՈՐՁԱԳԵՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ԶԱՓԱՆԻՇ.....7

Բաբայան Մուշեղ

ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆԻՄԻԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ.....24

Գևորգյան Արուսյակ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԴԵԿԱՎԱՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՔ40

Թումասյան Դավիթ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ47

Իսրայելյան Գևորգ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐԶԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ
ՏՈՒՐՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ.....60

Կարապետյան Էլյա, Հակոբյան Սամվել

ԵՐԵՖԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ70

Ղազարյան Արտակ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ (ԽՈՐՀՐԴԱՅԻՆ և ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ) ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԼՐԱՅՆՈՂ» ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ .81

Ղազարյան Զեմա

ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....103

Մարգարյան Արգաթ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ.....112

Մարուքյան Գայանե

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ. ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ..... 123

Մինասյան Մերի

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱԿԱՆԽՄԱՆ ԵՎ ԿԱՆԽՄԱՆ ՄԵՋ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 134

Սարգսյան Լիդա

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 143

Վարդանյան Արթուր

ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽԹԱՆ 154

Վարյան Նվարդ

ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 167

Օհանյան Դավիթ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՌԵԱԼ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ..... 177

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ: ՆԵՐՔԻՆ ՀԱՄՈՁՄՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶԱՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Ասլանյան Արայիկ

*ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական
վարչության քրեագիտական հետազոտությունների
բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Հանցավորության դեմ տարվող պայքարը պետության առաջնային հիմնախնդիրներից մեկն է համարվում: Դատական համակարգը, իսկ առավել կոնկրետ՝ իրավապահ մարմինները, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, միշտ չէ, որ ի վիճակի են լինում լուծելու արդարադատության առջև ծառացած բոլոր խնդիրները: Նշված պայքարի իրականացման շրջանակներում կարևոր դեր են ստանձնում դատական փորձաքնությունները, որոնք, գիտության և տեխնիկայի վերջին նվաճումներն օգտագործելով, ստեղծում են առավել լայն հնարավորություններ՝ հանցագործությունների դեմ տարվող պայքարն ավելի ճիշտ և արդյունավետ կազմակերպելու նպատակով: Գործերի քննության ընթացքում փորձագետի եզրակացությունը հատկապես կարևորվում է նրանով, որ այն ապացուցման բուն գործընթացում հաճախ ունենում է **վճռական նշանակություն:**

ՀՀ քրեական դատավարության օրենսդրության (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ) 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությունում որպես ապացույցներ թույլատրվում են՝

(...)

6) փորձագետի եզրակացությունը.

(...)»:

ՀՀ ՔԴՕ 114-րդ հոդվածի համաձայն՝

«1. Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրած հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով»:

Ապացուցումը քրեական դատավարության և քրեագիտության, ամենաառանցքային հիմնախնդիրներից մեկն է համարվում: Ապացուցման քրեագիտական (կրիմինալիստիկական) հասկացությունն ավելի ընդարձակ է և իր մեջ ներառում է հետևյալ առանձնահատկությունները՝

1) գտնելը (ի հայտ բերելը), 2) հայտնաբերված հետքերի՝ «ընթերցումն» ու «գաղտնագրծումը», 3) ամրագրումը (ֆիքսումը), հավաստումը, 4) ստուգումը, 5) գնահատումը, 6) ապացույցների օգտագործումը քննչական գործողությունների իրականացման և դատական քննության ընթացքում, 7) համապատասխան հետևությունների հիմնավորումը գործին առնչվող միջանկյալ և եզրափակիչ որոշումներ կայացնելիս:¹

Ըստ էության, յուրաքանչյուր ապացույց որոշակի երևույթի մասին տեղեկատվություն է. այն կարող է ձեռք բերվել ինչպես ապացույցների պարզ քննության, այնպես էլ փորձագիտական հատուկ գիտելիքների կիրառման՝ դատափորձագիտական գործունեության արդյունքում: Այն ենթադրում է գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի բնագավառների (բացի իրավունքի ոլորտից) մասնագիտական բնույթի հատուկ գիտելիքներ (հմտություններ), որոնք անհրաժեշտ են փորձաքննությանն առաջադրված հարցերին պատասխանելու համար:

Եթե քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառների հատուկ գիտելիքներ, ապա նշված դեպքում անհնար է խուսափել փորձաքննություն նշանակելուց և կատարելուց: Այդ տեսակետից դատական փորձաքննությունը տարաբնույթ հանցագործությունների

¹ St'u **Новик В.В.** Криминалистические аспекты доказывания по уголовным делам. Проблемы теории и практики /Изд-во *Р. Асланова* Юридический центр Пресс/, 2005, էջ 68-69:

https://www.litres.ru/static/or4/view/or.html?cover=%2Fpub%2Fcover%2F11250021.jpg&uid=df07e024-40c2-11e5-8017-002590591ed2&baseurl=%2Fpub%2F%2F11250021.&trials=1&art=11250021&file=60299514&or_auth_succs=0&user=720733361

բացահայտման կարևոր և անհրաժեշտ նախապայմաններից մեկն է: Որքան գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի բնագավառ ու ոլորտ՝ նույնքան փորձաքննություն:²

Դատափորձագիտական գործունեությունն իրականացվում է միայն իրավունքի կոնկրետ ոլորտը կարգավորող դատավարության շրջանակներում և սահմաններում: Դատափորձագիտական գործունեության հիմնական նպատակը, ըստ էության, այնպիսի փաստական տվյալների ապահովումն է, որոնք վարույթն իրականացնող մարմնի համար կարող են բավարար հիմքեր ստեղծել՝ դրանք որպես ապացույց ճանաչելու և գործի համար էական նշանակություն ունեցող որոշումներ կայացնելու նպատակով: Միանշանակ կարելի է փաստել, որ փորձագիտական գործունեությունն ուղղակի կապված է ապացուցման գործընթացի հետ: Այն, դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով, գործի համար կարևոր նշանակություն ունեցող քննության ապահովման, առանձին հանգամանքների պարզաբանման և հիմնավորման, ինչպես նաև օրինական և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման, ապացույցների հավաքման, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ստուգման, ինչպես նաև գնահատման նպատակով, իր առջև դրված գործառույթների իրականացմանն ուղղված, հատուկ գիտելիքների կիրառումն է: Այն միտված է նաև օժանդակելու դատական փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտին և օրենքով սահմանված դեպքերում նաև դատավարության այլ մասնակիցներին՝ ապացուցման ենթակա հանգամանքների վերհանման գործում:

Չնայած այն հանգամանքին, որ փորձագետի եզրակացությունն այլ ապացույցների նկատմամբ չունի որևէ առավելություն, սակայն ունի մի շատ կարևոր առանձնահատկություն. այն ձեռք է բերվում հատուկ գիտելիքների հիման վրա իրականացվող մասնագիտական բնույթի հատուկ հետազոտությունների արդյունքում:

Հատուկ գիտելիքների օգտագործումն արտահայտվում է *գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում՝ հատուկ գիտելիքների օգտագործման արդյունքում* իրականացված դատական փորձաքննությո-

² Տե՛ս **Ալեքսանյան Մ. Մ.** Փորձաքննությունը քրեական դատավարությունում /Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը/. Երևան: Միվա-Պրեսս, 2009թ., էջ 23:

http://www.manvelaleksanyan.com/upload/files/PQD_Neratsutyun.pdf

յունների կատարման մեջ: Դրա արդյունքում՝ ստացված ապացուցողական նշանակություն ունեցող փաստական տվյալները չեն կարող արտացոլվել որևէ այլ դատավարական փաստաթղթում, քան՝ **փորձագետի եզրակացության մեջ:**

Ամփոփելով հատուկ գիտելիքների էության ու բովանդակության շուրջ գիտական վերլուծությունները՝ անհրաժեշտ է նշել, որ այդ գիտելիքների ամենաբնորոշ և առաջնային հատկանիշը դա նրանց կապն է գիտության հետ:

Արտասահմանյան դատափորձագիտական գրականության մեջ հատուկ գիտելիքների կիրառմամբ ձեռք բերված փաստական տվյալներն ընդունված է անվանել նաև «գիտական փաստական տվյալներ» (scientific evidence, scientific data) կամ «գիտական ապացույցներ» (scientific proof):³

Կարծում ենք, որ դատափորձագիտական գործունեության իմաստով կարելի է ընդունելի համարել հետևյալ բնորոշումը՝

«Հատուկ գիտելիք» ասելով՝ պետք է հասկանալ այնպիսի մասնագիտական գիտելիքների ամբողջությունը, հմտությունները և կարողությունները, որոնք ձեռք են բերվել հատուկ կրթության միջոցով կամ աշխատանքի փորձի արդյունքում, համապատասխանում են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի ներկա զարգացման աստիճանին ու հանդիսանում են բավարար հանգամանք փորձագիտական գործունեության անցկացման և կոմպետենտ եզրակացություն տալու համար:⁴

Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը կարող է տարբեր լինել: Այն դեպքերում, երբ փորձագետի կողմից հաստատված փաստերը չեն մտնում ապացուցման առարկայի մեջ, ապա դրանք կարող են դիտարկվել որպես *անուղղակի ապացույցներ*: Այլ հարց է, թե այդպիսի ապացույցների նկատմամբ ինչպիսի վերաբերմունք կցուցաբերի դատարանը, և դրանք գործի քննության համար ինչ նշանակություն կունենան: Մասնագիտական գրականության մեջ փորձագետի եզրակացությունը երբեմն բնորոշվում է որպես **անհատական ապացույց**՝ կապված այն հանգամանքի հետ, որ դրանում արտացոլվում են վերջինիս *անձնական դիտարկումները*:⁵

³ Տե՛ս Փորձաքննությունը քաղաքացիական գործերով դատական վարույթի շրջանակներում: Ուսումնական ձեռնարկ/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ. **Ս. Եզեկյան** – Եր.: ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրո, 2014, էջ 50:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս **Алферов В. Ю., Гришин А. И., Ильин Н. И., Чернышев Б. В.** Основы теории

Որպես օրինականության ամրապնդմանն ուղղված հատուկ գործունեության տեսակ՝ այն պետք է հիմնված լինի օրինականության, հետազոտման գիտական հիմնավորվածության, օբյեկտիվության, բազմակողմանիության, լրիվության, անձի իրավունքների և ազատությունների ապահովման, ինչպես նաև փորձագետի անկախության և մասնագիտական էթիկայի պահպանման սկզբունքի վրա:

Փորձագետի եզրակացությանն առնչվող բազմաթիվ հարցերի շուրջ որոշակի անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) նախադեպային որոշումներից մեկում, որտեղ, մասնավորապես, արձանագրել է հետևյալը.

«(...) մասնագետը և փորձագետը դասվում են քրեադատավարական այն սուբյեկտների շարքին, որոնք գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում իրենց ունեցած հատուկ գիտելիքներով և հմտություններով օժանդակում են գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքների բացահայտմանը, որոնք չեն կարող պարզվել առանց համապատասխան մասնագիտություն, որակավորում կամ փորձ ունեցող անձանց ներգրավվածության և համապատասխան գիտելիքների կիրառման...»

Անդրադառնալով մասնագետի և փորձագետի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակներին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ և 85-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետը հատուկ գիտելիքներն օգտագործում է հետազոտություն կատարելու և դրա արդյունքում եզրակացություն տալու համար, իսկ մասնագետն իր մասնագիտական հմտություններով ու գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելիս: Հետևաբար, փորձաքննության արդյունքում փորձագետի կողմից կազմվող

доказательств в уголовном судопроизводстве России : учеб. пособие для студентов, обучающихся по специальности 40.05.01 «Правовое обеспечение национальной безопасности» (специализация «Уголовно-правовая») / В. Ю. Алферов, А. И. Гришин, Н. И. Ильин, Б. В. Чернышев ; под общ. ред. В. В. Степанова. – 2-е изд., перераб. и доп. – Саратов : Саратовский социально-экономический институт (филиал) РЭУ им. Г. В. Плеханова, 2017, Էջ 21:

http://www.seun.ru/content/learning/4/science/1/doc/Alferov-Grishin_Osnovy%20teorii%20dokazatelstv.pdf

եզրակացությունը և մասնագետի կողմից տրվող կարծիքը նույնպես ունեն տարբեր իրավական բնույթ և նշանակություն ...».⁶

«(...) ՀՀ քր. դատ. օր-ի 250-252-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ փորձագետի եզրակացությունը պետք է լինի հիմնավորված, բավարար չափով հստակ և լրիվ: Այլ խոսքով՝ փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորինս չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալ հետազոտության էությունը և պատշաճ գնահատել դրա արդյունքները: Միննույն ժամանակ, այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում հիմնավորվածության, բավարար չափով հստակության կամ լրիվության պահանջներին, այն չի կարող գնահատվել որպես արժանահավատ ապացույց, քանի դեռ օրենքով սահմանված միջոցներով չեն վերացվել այդ խախտումները».⁷

Ինչպես նշում է գերմանացի դատավարագետ Կ. Միտտերմայերը՝ փորձագետի եզրակացությունը պետք է ընդունվի որպես ճշմարտություն, որը ենթակա չէ գնահատման: Նա, մասնավորապես, գրել է՝ «Որպեսզի հնարավոր լինի եզրակացության միջոցով ճիշտ պատկերացում կազմել ապացույցների

⁶ Մանրամասն տե՛ս. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արտեմ Արմենի Հարությունյանի վերաբերյալ գործով, 2016թ. նոյեմբերի 1-ի ՄԴ3/0226/01/14 որոշման 15 և 15.1. կետերը: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=113239>

⁷ Մանրամասն տե՛ս. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Օսիկի Խաչատրյանի վերաբերյալ գործով, 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման 17-րդ կետը: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=100079>

վերաբերյալ, ապա անհրաժեշտ է նախ և առաջ հրաժարվել այն որպես վկայի ցուցմունք դիտարկելուց կամ անձնական ստուգման ենթարկելուց, քանի որ նմանատիպ մոտեցումները գործնականում կարող են հանգեցնել մոլորության: Ակնհայտ է, որ փորձագետի եզրակացությանը պետք է վերաբերվել որպես **քրեական ապացույցի հատուկ տեսակի**, որը շատ դեպքերում նման է անուղղակի ապացույցի...):⁸ Ի տարբերություն վերջինիս, մեկ այլ հեղինակի կարծիքով՝ փորձաքննությունն ապացույց չէ, իսկ փորձագետները փաստական հարցերը լուծող «փաստերի դատավորներ» են (*judices facti*), որոնք էլ կանխորոշում են գործի ամբողջ ընթացքը:⁹ Կարելի է նաև ասել, որ փորձագետի եզրակացությունը, ըստ առաջացման աղբյուրի, խառը ապացույց է, քանի որ այն ձևավորվում է անձնական մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կիրառմամբ և գործի նյութերի ներգրավումով:¹⁰

Հաճախ դատավորների կամ քննիչների կողմից կասկածի տակ է դրվում ոչ միայն փորձագիտական մեթոդիկայի գիտական հիմնավորվածությունը, այլև տվյալ իրավիճակում դրա կիրառման օրինաչափությունը:¹¹ Փորձագետի եզրակացությունը գնահատելիս քննիչը պետք է ելնի այն հանգամանքից, որ դրանում ներառված յուրաքանչյուր հետևություն տեսականորեն լինի հիմնավորված, համապատասխան հաշվարկներով կամ փորձերով հաստատված, իսկ որոշ դեպքերում էլ պարունակի գրականության համապատասխան աղբյուրներին վերաբերող հղումներ: Այս ամենը եզրակացության հետազոտական մասում պետք է արտացոլված լինի այնպիսի լրիվությամբ և պարզությամբ, որպեսզի արդյունքում հնարավոր լինի ճշտելու հետևությունների օբյեկտիվությունն ու հուսալիությունը: Դրանք չեն կարող համարվել հուսալի, եթե նշված պահանջները չեն պահպանվել:¹²

⁸ Տե՛ս **Белкин А. Р.** Теория доказывания. Научно-методическое пособие. — М.: Издательство НОРМА, 1999, էջ 234:

http://library.nlu.edu.ua/POLN_TEXT/UP/BELKIN_1999.pdf

⁹ Տե՛ս նույն տեղը՝ էջ 235:

¹⁰ Տե՛ս **Մեղրյան Մ. Զ.** Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում / Մ. Մեղրյան: Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 275-276:

http://www.justiceacademy.am/assets/attachments/apacucum_2020.pdf

¹¹ Տե՛ս Теоретические вопросы судебной экспертизы /Сборник научных трудов 48/, Министерство Юстиции СССР, Всесоюзный НИИ судебных экспертиз, ред. кол.: **Д.Я. Мирский /председатель/, Г.П. Прошина, Е. Я. Сахарова** и др., М., 1981, էջ 33:

¹² Տե՛ս Криминалистика: учебник / под ред. д.ю.н., профессора **В.Д. Зеленского** и д.ю.н.,

Փորձագետը պարտավոր է տալ եզրակացություն ոչ միայն առաջադրված հարցերով, այլև իր իրավասության մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով նույնպես: Այսինքն՝ եթե քննիչի կողմից չեն առաջադրվել համապատասխան հարցեր, ապա փորձագետն այն պետք է իրականացնի սեփական նախաձեռնությամբ՝ օգտվելով իր փորձագիտական նախաձեռնության իրավունքից:¹³

Հեղինակներից Վ.Գ. Ենգիբարյանը, հաշվի առնելով մասնագիտական գրականության մեջ արտահայտված տեսակետները, կարծում է, որ փորձագետի եզրակացության գնահատումը կարելի է սահմանել որպես հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի կամ դատախազի մտավոր տրամաբանական գործունեություն, որով գնահատող սուբյեկտի մեջ ձևավորվում է ներքին համոզմունք եզրակացության թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության, գիտական հիմնավորվածության վերաբերյալ, որոնց հիման վրա հետևություններ են արվում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման համար փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստական տվյալների դերի և նշանակության մասին:¹⁴ Կարելի է ասել, որ այն նաև բարդ, մտավոր գործունեության տեսակ է, որն իր մեջ ներառում է փորձագիտական հետազոտության և դրա հավելվածներում ուղղակիորեն պարունակող տեղեկատվության ուսումնասիրությունն ու վերլուծությունը:¹⁵

профессора **Г.М. Меретукова** – СПб, Издательство «Юридический центр», 2015, էջ 610:
<file:///C:/Users/TEST/Downloads/%D0%9A%D1%80%D0%B8%D0%BC%D0%B8%D0%BD%D0%B0%D0%BB%D0%B8%D1%81%D1%82%D0%B8%D0%BA%D0%B0,%20%D0%97%D0%B5%D0%BB%D0%B5%D0%BD%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9%20%D0%92.%D0%94,%20%D0%9C%D0%B5%D1%80%D0%B5%D1%82%D1%83%D0%BA%D0%BE%D0%B2%20%D0%93.%D0%9C,%202015.pdf>

¹³ Տե՛ս. Криминалистическое исследование, веществ, материалов и изделий: учебник / **В. Н. Хрусталева** и др.; под общ. ред. проф., д.ю.н. **В. Н. Хрусталева**. – Иркутск : Типография на ПНа Чехова, 2017, էջ 386:

¹⁴ Տե՛ս **Ենգիբարյան Վ.** Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության առանձնահատկությունները քրեական դատավարությունում /քրեական դատավարություն և կրիմինալիստիկա/, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդես, ԵՊՀ հրատարակչություն, №1 (28), Երևան, 2019, էջ 49-50:
<http://www.y-su.am/faculties/Law/banber/Banber2019N1.pdf>

¹⁵ Տե՛ս **Степаненко Д. А., Полянская В. А.** К вопросу об оценке заключения эксперта-психолога: «Юридическая психология», 2013, N 3:
<http://center-bereg.ru/f154.html>

Առկա տեսակետներից մեկի համաձայն՝ քննիչի, հետաքննություն կատարող անձի և դատարանի կողմից իրականացվող փորձագիտական եզրակացության գնահատման գործընթացը նման է ալգորիթմի, որի ընթացքում պետք է իրականացվեն՝

1) փորձագետին առաջադրված՝ գործի համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող հարցերի ուսումնասիրությունը,

2) փորձագիտական հետազոտության համար ներկայացվող օբյեկտների (առարկաներ, փաստաթղթեր, նմուշներ և այլն) ստացման իսկության և օրինականության ստուգումը,

3) փորձագետի (փորձագիտական հանձնաժողովի) իրավասության և բացարկման հիմքերի առկայության ստուգումը,

4) փորձաքննության նշանակման դատավարական ընթացակարգերի ստուգումը (ներառյալ այն հանգամանքը, թե փորձագետին բացատրվե՞լ են արդյոք նրա իրավունքներն ու պարտականությունները, կամ վերջինս նախազգուշացվե՞լ է արդյոք ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված պատասխանատվության մասին և այլն),

5) փորձաքննության կատարման դատավարական ընթացակարգի, այդ թվում՝ դատավարական ժամկետների ստուգումը (օրինակ՝ փորձաքննության կատարման ընթացքում չի՞ կասեցվել արդյոք գործի ընթացքը),

6) փորձաքննության ընթացքի և արդյունքների դատավարական ձևակերպումների ստուգումը,

7) տվյալ, կոնկրետ դեպքում, փորձագիտական մեթոդիկայի գիտական հիմնավորվածության ու կիրառման օրինաչափության գնահատումը,

8) եզրակացության ամբողջականության ստուգումը,

9) փորձագիտական հետազոտության ընթացքի և արդյունքների տրամաբանական հիմնավորվածության, և եզրակացության՝ ներքուստ ոչ հակասական լինելը վկայող հանգամանքի ստուգումը,

10) փորձագետի հետևությունների ստուգումը գործով անցնող մնացած ապացույցների հետ:¹⁶

¹⁶ St'iu *Чельшьева, О. В.* Назначение и производство судебных экспертиз : учебное пособие / О. В. Чельшьева. — СПб. : Санкт-Петербургский юридический институт (филиал) Академии Генеральной прокуратуры Российской Федерации, 2010, էջ 29:
http://procuror.spb.ru/izdaniya/2010_02_03.pdf

Հեղինակներից Ռ. Ս. Բելկինն ապացույցների գնահատումը բնութագրում է որպես *տրամաբանական մտավոր գործընթաց*: Նրա կարծիքով՝ այն ուղղված է որոշելու ապացույցների թույլատրելիությունն ու վերաբերելիությունը, դրանց միջև առկա կապի առկայությունը, բնույթը, նշանակությունն ու օգտագործման հնարավորությունները ճշմարտության բացահայտման գործում:¹⁷

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ փորձագետի եզրակացությունը համարվում է ապացույցի աղբյուր, ապա դրան պետք է ներկայացվեն հետևյալ պահանջները. հետազոտության գիտական հիմնավորվածությունը, հետազոտական բնույթի բոլոր մեթոդների համալիր օգտագործումը, նկարագրությունների համապարփակությունն ու տրամաբանական հաջորդականությունը, հետազոտական մասի համապատասխանությունը կատարված հետազոտություններին և եզրակացություններին, հստակությունը, ճշգրտությունը, որոշակի տեքստային բնույթի կիրառումը, ինչպես նաև եզրակացության առանձնահատկություններով պայմանավորված՝ ընդհանուր կառուցվածքին հավաստարիմ լինելը և այլն¹⁸: Այսինքն՝ փորձագետի եզրակացության գնահատումը, ըստ էության, իր մեջ ներառում է հետևյալ հանգամանքերի ստուգումը. բավարարու՞մ է արդյոք տվյալ եզրակացությունն ապացույցի աղբյուրին, օրենքով սահմանված կարգով ներկայացվող բոլոր պահանջներին, և այն կարո՞ղ է արդյոք օգտագործվել որպես ապացույց, թե՛ ոչ:¹⁹ Այդ իսկ նպատակով ենթադրվում է, որ փորձագետը պարտավոր է այն կազմել ուշադրությամբ: Այն պետք է լինի բովանդակալից և անթերի:²⁰

Մասնագիտական գրականության մեջ, փորձագետի եզրակացության գնահատման համար կարևոր նշանակություն է տրվում նաև գնահատող

¹⁷ Տե՛ս *Белкин Р. С.* Собрание, исследование и оценка доказательств. М., 1966, էջ 65:

¹⁸ Տե՛ս *Жижина М.В.* Судебно-почерковедческая экспертиза документов /Учебно-практическое пособие под редакцией профессора Е.П. Ищенко/. Издательство «Юрлитинформ» Москва – 2006:

<http://www.bnti.ru/showart.asp?aid=1010&lvl=01.02.06>.

¹⁹ Տե՛ս *Савельева М.В., Смушкин А.Б.* Криминалистика. Учебник. М.: Издательство Издательский дом "Дашков и К". - 2009, էջ 190:

<https://www.e-reading-lib.com/bookreader.php/142434/aleksandr-saveleva-smushkin-kriminalistika-uchebnik.pdf>

²⁰ Տե՛ս *Ավագյան Ն. Մ., Նազարեթյան Կ. Լ., Թորոսյան Ա. Ս.*, Դատական բժշկության դասընթաց: ԼՈՒՅՄ հրատարակչություն, Երևան, 1978թ., էջ 21:

<https://vahagnakanach.files.wordpress.com/2011/04/tadagan-pishgutyun.pdf>

սուբյեկտի «ներքին համոզմունքի» ձևավորման խնդրին՝ այն դիտարկելով որպես **ապացույցների գնահատման մեթոդ**.²¹

Այլ կերպ ասած՝ ապացույցների բավարարությունը որոշող առաջին չափանիշը վարույթն իրականացնող մարմինների **ներքին համոզմունքն է**։ Վերջինիս վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր համապատասխան դիրքորոշումն է ձևավորել այն մասին, որ՝

«(...) Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա։ Ներքին համոզմունքը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով, այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ։

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում։ Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական։ Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը.²²

Զարգացնելով վկայակոչված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներքին համոզմունքը վարույթն իրականացնող մարմնի համոզմունքն է այն մասին, որ առկա ապացույցները բավարար են գործի ճիշտ լուծման համար անհրաժեշտ հանգամանքները բացահայտված դիտարկելու համար.²³ Կարելի է ասել, որ ապա-

²¹ Մանրամարտ տե՛ս. **Новик В. В.** (Валерий Валентинович). Криминалистическое обеспечение доказывания по уголовным делам: Проблемы теории и практики: Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. 12.00.09 - Уголовный процесс; Криминалистика и судебная экспертиза; Оперативно-розыскная деятельность /В. В. Новик. - М., 2009. -42 с.-Библиогр. : с. 33 - 42. 104. ссылок. **Источник:** **Электронный каталог отраслевого отдела по направлению «Юриспруденция» (библиотеки юридического факультета) Научной библиотеки им. М. Горького СПбГУ, էջ 29-30:**
<http://law.edu.ru/book/book.asp?bookID=1339495>

²² Տե՛ս. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Մակար Ռազմիկի Հովհաննիսյանի վերաբերյալ գործով, 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ **ԵՔԴ/0632/01/08** որոշման 14-րդ կետը:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=59791>

²³ Տե՛ս. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Սիրակ Շավարշի Սաքանյանի վերաբերյալ գործով,

ցույցների գնահատման հարցում ներքին համոզմունքը սուբյեկտի ունեցած լիակատար վստահությունն է՝ ստացված հետևությունների հուսալիության վերաբերյալ:²⁴

«(...) Դատական ճանաչողության գործընթացը եզրափակվում է դատավորի ներքին համոզմունքով, որը հիմնվում է հաստատված փաստերի վրա: Ներքին համոզմունքն անձնական մտավոր երևույթ է, որը չի ենթարկվում իրավական ուղղակի կարգավորմանը: Յուրաքանչյուր ապացույց կոնկրետ գործով որևիցե նշանակություն է ձեռք բերում դատավորի գիտակցությունում գնահատվելուց հետո...»:²⁵ «(...) Ներքին համոզումը հիմնված է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ և անմիջական հետազոտման վրա և ոչ մի դեպքում չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից կամայականության դրսևորում...»:²⁶

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քր. դատ. օր-ի համակարգային վերլուծության հիման վրա, արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

- 1) *վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,*
- 2) *դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,*

3) *անմեղության կանխավարկած» (տե՛ս Միրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 14-15-րդ կետերը, իսկ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքի, դատավարական որոշումների հիմնա-*

2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 16-րդ կետը:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=77184>

²⁴ Տե՛ս. **Смирнов А.В.** Уголовный процесс: учебник / А.В. Смирнов, К.Б. Калиновский; под общ. ред. проф. А.В. Смирнова. — 4-е изд., перераб. и доп. — М.: КНОРУС, 2008, էջ 77:

http://lib.maupfib.kg/wp-content/uploads/UGOLOVNYYY-PROCESS-smirnov_kalinovsky.pdf

²⁵ Տե՛ս ՀՀ Արդարադատության խորհրդի 2008թ.-ի №**ԱԽ-3-Ո-8** որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Կարինե Հակոբյանին, Լևոն Գրիգորյանին և ՀՀ վարչական դատարանի դատավոր Լարիսա Սոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճելու մասին:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=43083>

²⁶ Տե՛ս ՀՀ Արդարադատության խորհրդի 2011թ.-ի №**ԱԽ-1-Ո-4** որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ՝ *Ս. Խառատյանին, Ն. Տավարացյանին և Դ. Խաչատրյանին* կարգապահական պատասխանատվություն ենթարկելու վերաբերյալ:

<http://www.irtek.am/views/act.aspx?aid=59006>

վորվածության և պատճառաբանվածության, անմեղության կանխավարկածի մասին մանրամասն տե'ս նույն որոշման 16-19-րդ կետերը):²⁷

«(...) Ներքին համոզմունքը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից՝ անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը: (...)» (տե'ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԸԴ/0632/01/08 որոշման 14-րդ կետը):

Այսպիսով՝ «ներքին համոզմունքը» սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա է: Այն ապացույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածությունն է իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ (սուբյեկտիվ բնույթ): Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կձևավորեն նույն համոզվածությունը (օբյեկտիվ բնույթ):²⁸

Այն պահը, երբ հավանականությունը վերածվում է վստահության, ձևավորվում է **ներքին համոզմունքը**:²⁹

²⁷ Մանրամասն տե'ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արարատ Ավագի Ավագյանի և Վահան Մելյոժայի Սահակյանի վերաբերյալ գործով, 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 28-ից 30-րդ կետերը:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=95718>

²⁸ Տե'ս նույն տեղը՝ 31-րդ կետը:

²⁹ Մանրամասն տե'ս **Боруленков Ю.П.** Теоретические основы процессуального познания. - Владимир: ВГПУ, 2006, էջ 82:

http://skspba.ru/wp-content/uploads/2016/12/borulenkov_monografiya_03-2016.pdf

Փորձագետի եզրակացության գնահատման հաջողությունը մեծամասամբ կախված է ոչ միայն դրա կատարման որակից, այլև նրանից, թե որքանով է այն ճիշտ և բավարար կերպով արտացոլում հետազոտական գործընթացի գիտական հիմնավորվածությունը. դրա արդյունքները պետք է լինեն համոզիչ և տեսանելի:³⁰ Մասնավորապես, պետք է ավելի առանձնահատուկ մոտենալ այն հարցին, թե ինչպիսին է փորձագետի եզրակացության հիմնավորվածությունը՝ դրանով իսկ ավելի բարձրացնելով վերջինիս անձնական պատասխանատվության հարցը:³¹ Ելնելով այն հանգամանքից, որ փորձագետը եզրակացությունը տալիս է իր անունից, իր հատուկ գիտելիքներին համապատասխան կատարած հետազոտությունների օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման հիման վրա, ապա նա տված եզրակացության համար անձնական պատասխանատվություն է կրում: Փորձագետի եզրակացությունը հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի և դատարանի համար պարտադիր չէ, սակայն փորձագետի եզրակացությանը համաձայն չլինելը պետք է պատճառաբանվի համապատասխան որոշման կամ դատավճռի մեջ:³²

Փորձաքննության արդյունավետությունն ու ապացուցողական նշանակությունն ուղղակիորեն կախված են ոչ միայն փորձագետի կիրառած մեթոդների գիտական մակարդակից և հուսալիությունից, այլև փորձագետի եզրակացության կազմակերպչական, մարտավարական և մեթոդական գործողությունների նպատակային և գրագետ իրականացման, որպես ապացույց գնահատելու և օգտագործելու, կազմակերպչական գործողություններից:³³

³⁰ Մանրամասն տե՛ս Судебная экспертиза: российский и международный опыт: материалы II Международной научно-практической конференции., г. Волгоград, 21—22 мая 2014 г.—Волгоград: ВА МВД России, 2014, էջ 257:

<https://studylib.ru/doc/2576461/%C2%ABsudebnaya--e-kspertiza--rossijskij-i--mezhdunarodnyj--opyt%C2%BB...>

³¹ Մանրամասն տե՛ս **Казанцев В.В.** Оценка заключения эксперта следователем и судом: криминалистическое исследование средств компьютерных технологий и программных продуктов - <http://www.allpravo.ru/library/doc5195p0/instrum5196/print5204.html>:

³² Տե՛ս **Ավագյան Ն. Մ., Նազարեթյան Կ. Լ., Թորոսյան Ա. Մ.**, Դատական բժշկության դասընթաց: ԼՈՒՅՄ հրատարակչություն, Երևան, 1978թ., էջ 16:

<https://vahagnakanch.files.wordpress.com/2011/04/tadagan-pjshgutyun.pdf>

³³ Տե՛ս Теория и практика судебной экспертизы: научно-практический журнал №3 (35) 2014, էջ 13:

[http://www.sudexpert.ru/files/tipse/2014/sudex_mag_3\(35\)14.pdf](http://www.sudexpert.ru/files/tipse/2014/sudex_mag_3(35)14.pdf)

Փորձագետի անձի գնահատման, իսկ առավել կոնկրետ՝ մասնագիտական որակների և ձեռնհասության որոշման համար խիստ կարևոր է նաև համապատասխան մասնագիտական կրթության, որակավորման և աշխատանքային փորձի առկայության հանգամանքը: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ վարույթն իրականացնող մարմինը մինչ փորձաքննություն նշանակելու մասին համապատասխան որոշում կայացնելը պարտադրված է նաև իրականացնելու փորձագետի մասնագիտական որակների և ձեռնհասության գնահատում:

Մասնագիտական բառարանում «փորձագետի ձեռնհասություն» եզրույթի տակ հասկացվում է որպես իրազեկ անձի ընդունակությունը լուծելու փորձաքննության առարկային առնչվող հարցեր: Այն որոշվում է նրա կրթությամբ, հատուկ պատրաստվածությամբ, նմանատիպ խնդիրներ լուծելու փորձով, էվրիստիկ մտածողության անհատական ընդունակություններով:³⁴

Կարծում ենք, որ սույն հասկացության բնորոշման վերաբերյալ ՀՀ քր. դատ. օր-ի մեջ առկա է նաև օրենսդրական բաց: Սույն օրենսդրական բացը լրացնելու նպատակով *ստաջարկում ենք՝* ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածում *(Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները)* սահմանել «փորձագետի ձեռնհասության» եզրույթի իրավական բնորոշումը: Առաջարկվում է նաև օրենսդրական բնույթի նույնաբովանդակ մոտեցում՝ «**հատուկ գիտելիքներ**» և «**ներքին համոզմունք**» եզրույթների վերաբերյալ:

³⁴ Տե՛ս *Ավագյան Ա. Բ., Հովսեփյան Ա. Գ., Պետրոսյան Տ. Ռ.* «Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բառարան», Եր., «Այբ-Քե», 1993, էջ 56:

ДОКАЗАТЕЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ И ПРАВОВАЯ ОЦЕНКА ЗАКЛЮЧЕНИЯ ЭКСПЕРТА. ВНУТРЕННЕЕ УБЕЖДЕНИЕ КАК СУДЕБНЫЙ КРИТЕРИЙ ОЦЕНКИ ЭКСПЕРТНОГО ЗАКЛЮЧЕНИЯ

Асланян Араик Вардгесович

Заместитель начальника отдела

Криминалистических исследований

Экспертно-криминалистического управления

полиции РА, подполковник полиции,

кандидат юридических наук

Автором изучены и проанализированы многочисленные вопросы теоретического и правового значения, относящиеся к области судебной экспертизы. В частности, предметом обсуждения стали как мнения ряда криминалистов и авторитетных ученых, занимающихся сферой судебных экспертиз, подходы в профессиональной литературе, так и прецедентные решения Кассационного суда РА, играющие существенную роль в данном вопросе.

В результате проведенных исследований, автором также были представлены предложения, которые могут иметь важное значение для совершенствования уголовно-процессуального законодательства РА, а также повышения доказательной силы судебно-медицинских экспертиз.

Ключевые слова: эксперт, заключение, доказательное значение, оценить, специальные знания, наука, Кассационный суд.

EVIDENTIAL SIGNIFICANCE AND LEGAL EVALUATION OF AN EXPERT'S CONCLUSION. INTERNAL BELIEF AS A PROCEDURAL CRITERION OF AN EXPERT'S CONCLUSION EVALUATION

Aslanyan Arayik

*Deputy Head of the Subdivision of
Criminological Research, Forensic Expertise
Department of the RA Police PhD in Law,
Police Colonel*

In the present article a number of theoretical and legal issues related to the field of judicial expertise have been studied and analyzed from the author's standpoint. In particular, the article focuses on the views of a number of criminologists and well-known researchers in the field of judicial expertise, the existing approaches in professional literature as well as the precedential decisions of the RA Court of Cassation. The research resulted in some proposals, which may be highly important for the improvement of the Criminal Procedure Code of RA and for the increase in role of evidential significance of judicial expertise.

Key words: expert, conclusion, evidential significance, evaluate, special knowledge, science, Court of Cassation.

Հոդվածը գրախոսվել է՝ 10.07.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 10.09.2020թ.

**ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՕՊԵՐԱՏԻՎ-
ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Բաբայան Մուշեղ

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի պետ,
ռստիկանության զեներալ-մայոր*

Հասարակության զարգացման արդի ժամանակահատվածում անհատի մասնավոր կյանքն ընթանում է բարձր տեխնոլոգիաների կիրառման, դրանց անընդհատ հսկողության, միջոցների ու մեթոդների ժամ առ ժամ աննախադեպ կատարելագործման պայմաններում: Տեղեկատվության պարբերաբար կուտակման (հավաքման) գործընթացին զուգահեռ իրականացվում է այդ տեղեկատվության անընդհատ մշակում, որի արդյունքում ստեղծվող տեղեկությունները ևս խթանում են տեխնոլոգիական առաջընթացին: Վերջինս էլ հանգեցնում է նրան, որ պարբերաբար ի հայտ են գալիս մասնավոր կյանքի անձեռնմխելիության համար նորանոր մարտահրավերներ:

Ժամանակակից մարդն անընդհատ հսկողության տակ է: Նույնիսկ կենցաղում ամեն օր մարդու վերաբերյալ հավաքվում և օգտագործվում է բազմաթիվ տեղեկատվություն: Այսպես՝ քաղաքացին երբ վաղ առավոտյան ավտոկայանատեղիից իր ավտոմեքենայով դուրս է գալիս փողոց, նրա տվյալները գրանցվում են կայանատեղիում տեղադրված տեսագրող և վճարման սարքերով: Նա օգտվում է բջջային հեռախոսից, որը տեղեկություններ է հավաքում քաղաքացու կոնկրետ գտնվելու աշխարհագրական տեղի մասին, աշխատանքի վայր մտնելիս մուտքի դռան մոտ ցույց է տալիս աշխատակցի՝ իր քարտը, մուտքի սարքը գրանցում է անձնական տվյալները, գրասենյակում միացնում է համակարգիչը, ուղարկում է էլեկտրոնային նամակներ կամ սոցիալական ցանցերով հաղորդագրություններ, որոնք շատ հեշտ կարող են վերահսկվել ցանցային կառավարչի կամ աշխատանքի վայրի ղեկավարների կողմից և այլն:

Եթե նախկինում մասնավոր կյանքի միջամտությունները հիմնականում ֆիզիկական էին, տեղեկատվությունը կարող էր հասանելի դառնալ անմիջական զգայական ընկալումներով, «իմ տունն իմ ամբոցն է» հասկացությունը կարող էր որոշ չափով մարդուն մեկուսի պահել և չեզոքացնել «կողմնակի աչքի» վտանգը, ապա ներկայումս առաջին պլան են մղվել տեղեկատվական մարտահրավերները, երբ ֆիզիկական մեկուսացումը բնավ բացարձակ երաշխիք չէ մասնավոր կյանքի անձեռնմխելիության համար:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը՝ որպես իրավունք, ներառում է կառուցվածքային մի քանի տարրեր, որոնցից յուրաքանչյուրն առանց մյուսների չի կարող ամբողջական պատկերացում տալ այդ իրավունքի մասին, սակայն տարրերի տարանջատումը կարևոր է իրավունքի պաշտպանության ընթացքում կարգավորող օրենսդրության կոնկրետ ճյուղն ընտրելու համար:

Այդ տարրերն են՝

- 1) բնակարանի անձեռնմխելիության իրավունքը,
- 2) անձնական բնույթի փաստաթղթերի և հաղորդումների անձեռնմխելիության իրավունքը,
- 3) անձնական ազատության անձեռնմխելիության իրավունքը, որն իր մեջ ներառում է ոչ միայն ազատ տեղաշարժման իրավունքը, այլ նաև՝ այլ անհատների հետ ազատ շփվելու իրավունքը,
- 4) արտաքին տեսքի և ձայնի անձեռնմխելիության իրավունքը,
- 5) անհատական տվյալների անձեռնմխելիության իրավունքը¹:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության կառուցվածքային այս բոլոր տարրերը միջամտության, պաշտպանության և երաշխիքային ապահովման առումով կարևոր դերակատարություն ունեն օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության ընթացքում:

Նորագույն մարտահրավերները կապված են հենց անձնական տվյալների անձեռնմխելիության հետ: Ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտում, համակարգչային տեխնիկայի տարածմանը զուգահեռ մասնավոր

¹ Stéu Ариков Г. Межотраслевой анализ права на неприкосновенность частной жизни // REVISTA NAȚIONALĂ DE DREPT, Nr. 3, 2013, էջեր 32-39 (Հասանելի աղբյուրը՝ https://ibn.idsi.md/sites/default/files/imag_file/Mezhotraslevoj%20analiz%20prava%20na%20neprikosnovennost%27%20chastnoj%20zhizni.pdf);

կյանքի համար առավել էական վտանգի աղբյուր են դառնում անձնական տվյալների հավաքման, մշակման, պահպանման ավտոմատացված համակարգերը: Ուստի խիստ կարևոր է մշակել վտանգները չեզոքացնելու գործուն մեխանիզմներ:

Կյանքի բոլոր փուլերում անհատը թողնում է որոշակի «տեղեկատվական» հետքեր, որոնք հավաքվում, կենտրոնացվում են տարբեր թվայնացված գրառումների, փաստաթղթերի, տեղեկատվական բանկերի, արխիվային նյութերի մեջ²:

Հանրային ոլորտում տեղեկատվական հետքերը կուտակվում են տարբեր կառույցների (ոստիկանություն, հարկային և մաքսային մարմիններ, ազգային անվտանգության ծառայություն և այլն) տեղեկատվական, վիճակագրական բանկերում:

Մասնավոր ոլորտում մասնավոր կյանքի անձեռնմխելիության վտանգները կապված են անհատական տեղեկատվական կուտակիչների հետ՝ բանկային, ապահովագրական և այլ ոլորտներ, բուհեր, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություններ:

Անձնական տվյալներ ասելով՝ պետք է հասկանալ կոնկրետ անձին կամ մի քանի անձանց վերաբերող տեղեկությունները, որոնք հնարավորություն են տալիս նույնացնել այդ անձին կամ անձանց:

Հեռահաղորդակցման և իրավունքի ուսումնասիրությունների նորվեգական կենտրոնի պրոֆեսոր Լի Ս. Բիգրեյվը նշում է անձնական տվյալների շրջանառության (դրանց հավաքում, հաշվառում, պահպանում և տնօրինում) անհրաժեշտ սկզբունքները՝

1) «Ազնիվ հավաքելու սկզբունք»-ը՝ անձնական տվյալները պետք է հավաքվեն բարեխղճորեն և օրինական միջոցներով,

2) «Նվազագույնի սկզբունք»-ը՝ հավաքված անձնական տվյալների քանակը պետք է սահմանափակվի միայն այն տեղեկատվությամբ, որն անհրաժեշտ է տվյալների հավաքման նախանշված նպատակին հասնելու համար,

3) «Որոշակիացված նպատակի սկզբունք»-ը՝ անձնական տվյալների

² St' u Шадрин С. А. Содержание права на неприкосновенность частной жизни по российскому и европейскому законодательству // Сравнительное правоведение, 2018, N 9 (94), էջեր 208-216 (Հասանելի աղբյուրը՝ URL:<https://cyberleninka.ru/article/n/soderzhanie-prava-na-neprikosnovennost-chastnoy-zhizni-po-rossiyskomu-i-evropeyskomu-zakonodatelstvu>):

շրջանառությունը պետք է դուրս չգա այն նպատակների շրջանակից, ինչ որ կանխորոշվել է օրինական ընթացակարգով,

4) «Սահմանափակ գործածման սկզբունք»-ը՝ հավաքման ընթացքում որոշված նպատակներից դուրս այլ նպատակներով անձնական տվյալներն օգտագործվել չեն կարող առանց իրավատիրոջ կամ իշխանության իրավասու մարմնի համաձայնության,

5) «Տվյալների որակի սկզբունք»-ը՝ անձնական տվյալները պետք է լինեն կոնկրետ, ամբողջական և համապատասխանեն դրանց շրջանառության նպատակներին,

6) «Անվտանգության սկզբունք»-ը՝ պետք է բավարար անվտանգության միջոցներ ձեռնարկվեն հավաքված անձնական տվյալների ապօրինի հրապարակումը, ոչնչացումը կամ փոփոխումը կանխելու համար,

7) «Անձնական մասնակցության սկզբունք»-ը՝ անձնական տվյալների սուբյեկտները պատշաճ կարգով տեղեկացվում են շրջանառության մասին, նրանց հասանելիություն է տրվում իրենց տվյալներին, տրվում է տվյալները շտկելու և լրացնելու հնարավորություն,

8) «Համապատասխանության սկզբունք»-ը՝ անձնական տվյալների շրջանառության հետ զբաղվող կողմերը պետք է իրենց գործունեությունը համապատասխանեցնեն վերը նշված սկզբունքներին³:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության ապահովման իրավական կարգավորման համակարգը պետք է կառուցվի երկու հիմնական ուղղություններով՝

1) հասարակությունից մեկուսացված լինելու, մտերիմների շրջանում ինքն իր հետ առանձնանալու՝ անհատի հնարավորության ապահովումը,

2) իր վերաբերյալ տեղեկության նկատմամբ հսկողություն իրականացնելու, իրեն շահեկան տեղեկատվության մասը տարածելու, և ոչ շահեկան տեղեկատվության տարածումն արգելելու՝ անհատի հնարավորության ապահովումը⁴:

³ St' u Lee A. Bygrave. Data Protection Pursuant to the Right to Privacy in Human Rights Treaties, in International Journal of Law and Information Technology, 1998, vol. 6, էջեր 247–284:

⁴ St' u Ариков Г. Обеспечение права на неприкосновенность частной жизни в системе права Республики Молдова: особенности уголовной политики // Studia Universitatis Moldaviae, Seria “Științe sociale”, Revistă Științifică a Universității de Stat din Moldova, 2013, nr.3 (63), էջեր 171–182 (Հասանելի աղբյուրը՝ <http://studiamsu.eu/wp-content/uploads/24.-p.171-182.pdf>):

Այնուամենայնիվ, որքան էլ որ զարգացած լինի իրավունքի համակարգը, դրա կիրառման արդյունավետության կարևորագույն ցուցիչներից մեկն իրավատերերի՝ մարդկանց տեղեկացվածությունն է սեփական իրավունքների պաշտպանության կառուցակարգերի մասին: Մասնավոր կյանքին միջամտության փաստի դեպքում շատ հաճախ անհատը կանգնում է պաշտպանության խնդիրների առջև, մասնավորապես, թե իրավունքի ո՞ր բնագավառի, ճյուղի նորմերն են կիրառելի, խնդիրը քաղաքացիաիրավակա՞ն է, ոտնձգությունը վարչակա՞ն իրավախախտում է, թե՞՝ քրեորեն պատժելի հանցագործություն:

Անձնական տեղեկությունների պաշտպանությունն ապահովելու հիմնական դժվարություններից մեկը մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտումների լատենտայնությունն է: Իրականում երբեմն իրավատերը կարող է նույնիսկ չկոտակել իր մասնավոր կյանքի նկատմամբ կատարված կամ կատարվող ոտնձգության (անձնական տվյալների ապօրինի հավաքման, պահպանման, մշակման, վերացման կամ փոխանցման) մասին:

Պաշտպանության դժվարություններից մեկն էլ այն է, որ մասնավոր կյանքի մեջ ընդգրկվող տեղեկությունների՝ օրենսդրությամբ հստակ ամրագրված չլինելու պարագայում յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում դրանց գաղտնի կամ ոչ գաղտնի լինելու հանգամանքը: Իսկ նման հայեցողության դրսևորումները հանրության և նույնիսկ հենց իրավատիրոջ համար ստեղծում են պաշտպանության տակ առնված տեղեկությունների շրջանակի անհստակություն, անորոշություն:

Գ. Բ. Ռոմանովսկին նշում է. «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը հենց իրավունք է, ոչ թե՝ պարտականություն: Ցանկացած մարդ կարող է պաշտպանել իր «կենսական միջավայրը», բայց նա կարող է նաև այդ միջավայրը բացել, հանրայնացնել: Ընդ որում, այդ բացահայտումներն ու հանրայնացումները կարող են պայմանավորված լինել ինչպես հանրօգուտ վարքագծով, այնպես էլ՝ զուտ սեփական կամահայտնությամբ»⁵:

⁵ St' u Романовский Г. Б. Право на неприкосновенность частной жизни. Москва: МЗ-Пресс, 2001 (Հղումն ըստ՝ Гырла Л. Г., Табарча Ю. М. Уголовное право Республики Молдова: Часть Особенная: С изменениями и дополнениями на 10 октября 2010 года. Кишинэу: Cartdidact, 2010. Том 1, էջ 259), հասանելի աղբյուրը՝ <http://libed.ru/knigi-nauka/1045946-1-g-romanovskiy-pravo-neprikosnovennost-chastnoy-zhizni-moskva-2001-udk-3471-bbk-67404-r69-romanovskiy-pravo.php>:

Առավել ևս, դժվարություն է հարուցում մահացած անձի մասնավոր կյանքի պաշտպանությունը՝ հաշվի առնելով, որ, ըստ էության, այս դեպքերում անձի մասնավոր կյանքի վերաբերյալ գաղտնիության տիրույթում ընդգրկված տեղեկությունների շրջանակն ընդգծվում է առանց իրավատիրոջ հայեցողության:

Այս համատեքստում Յու. Ե. Սիսոնը նշում է. «Չնայած, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքն անմիջականորեն կապված է մարդու կյանքի հետ, այնուամենայնիվ, համարել, որ այդ իրավունքը կյանքի ավարտի պահից դադարում է, սխալ է, քանի որ մարդը մահից հետո էլ բարի անվան իրավունք ունի»⁶:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ապահովման համակարգը գործնականում իր մեջ ներառում է երեք ուղղություն՝

- 1) պահպանություն,
- 2) պաշտպանություն,
- 3) հենց չմիջամտելը:

Պետությունը պարտավոր է ոչ միայն գերծ մնալ քաղաքացու մասնավոր կյանքին ապօրինի միջամտությունից, այլև պարտավոր է միջոցներ ձեռնարկել անձեռնմխելիության պահպանության ուղղությամբ, ինչպես նաև՝ պաշտպանել անձեռնմխելիությունը հանցավոր ոտնձգություններից՝ իրավախախտումները բացահայտելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու, ոտնձգության հետևանքով պատճառված վնասը վերականգնելու եղանակով:

Հարկ է նշել, որ մարդու անբաժանելի և անօտարելի իրավունքի (մասնավոր կյանքի անձեռնմխելիություն) միայն ճանաչումը բավարար չէ այն ապահովելու համար: Նման իրավունքը կարիք ունի ինչպես պահպանության, այնպես էլ՝ պաշտպանության:

Պահպանությունը ապագային ուղղված գործունեություն է, որի հիմնական խնդիրն է կանխել, նախազգուշացնել իրավախախտումները:

⁶ Ст'у Сысоев Ю. Е. Уголовно-правовые средства противодействия незаконному вмешательству в частную жизнь / Автореф. дисс. ... канд. юрид. наук. Специальность 12.00.08 – Уголовное право и криминология; Уголовно-исполнительное право. Москва: Федеральное государственное казенное учреждение «Всероссийский научно-исследовательский институт Министерства внутренних дел Российской Федерации», 2011, էջ 19 (Հասանելի աղբյուրը՝ <http://disus.ru/r-yuridicheskie/366403-1-ugolovno-pravovie-sredstva-protivodeystviya-nezakonnomu-vmeshatelstvu-chastnuyu-zhizn.php>):

Իսկ պաշտպանությունը գործունեություն է, որն ուղղված է արդեն ոստն-
 ձգության ենթարկված իրավունքի վերականգնմանը, պատճառված վնասի
 հատուցմանը և ոստնագողի պատասխանատվությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը 2020 թ. հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշ-
 մամբ նշել է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրա-
 վունքի պաշտպանությունը ներառում է ոչ միայն պետության կողմից մաս-
 նավոր կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալը, այլև՝ պետության պոզիտիվ
 պարտականությունը՝ անհրաժեշտ և արդյունավետ օրենսդրական և իրա-
 վակիրառ միջոցներով երաշխավորելու և ապահովելու այն: Հետևապես, պե-
 տությունը նախ ինքը չպետք է միջամտի այս հիմնական իրավունքին, բացա-
 ռությամբ Սահմանադրությամբ թույլատրված դեպքերի, ինչպես նաև՝ պար-
 տավոր է սահմանել ոչ միայն իր, այլև երրորդ անձանց կողմից այս հիմնա-
 կան իրավունքի խախտումների դեպքում դրանցից արդյունավետ պաշտ-
 պանվելու համար անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր, և, վեր-
 ջապես, պարտավոր է նաև գործնականում ապահովել այս հիմնական իրա-
 վունքի պաշտպանությունը երրորդ անձանցից:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ որևէ հիմնական իրա-
 վունքի կամ ազատության չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված
 դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն:
 Որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում
 սահմանափակումը հիմնավորելու բեռը⁷:

Հայ իրավական համակարգում մասնավոր կյանքի անձեռնմխելիության
 իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 31-րդ հոդվածի 1-ին
 մասն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան
 կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք»⁸: Այս ի-
 րավունքի բաղադրիչներից մեկը անձի նամակագրության, հեռախոսային
 խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունն է, որն
 ավանդաբար կոչվում է մեկ տերմինով՝ հաղորդակցության գաղտնիություն:

Վերը նշված իրավունքի պաշտպանությունը ՀՀ օրենսդրության շրջա-

⁷ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2020 թ. հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշումը
 (ՀՀՊՏ 2020.06.24/69(1624) Հոդ.866):

⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով:
 Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի և 2015 թ.
 դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեներով, ՀՀՊՏ Հատուկ թողարկում, Հոդ. 1118, 21. 12. 2015):

նակներում իրականացվում է ընդհուպ քրեաիրավական պաշտպանության գործիքակազմով: Այսպես, հանցագործություն է համարվում և քրեորեն պատժվում մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով⁹:

ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 2-րդ մասը թույլատրում է սահմանափակել հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հանրային գործառույթներից մեկը, որի ընթացքում թույլատրվում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավաչափ սահմանափակումները, հենց իրավասու պետական մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ (այսուհետ՝ ՕՀՄ) իրականացնելու գործառույթն է: ՀՀ տարածքում օպերատիվ-հետախուզական գործունեության բովանդակությունը և ՕՀՄ-ների իրականացման ընթացքում օրինականության երաշխիքների համակարգն ամրագրված է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով:

Վերը նշված օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների և օրինական շահերի պաշտպանության և գերակայության, գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահության, օպերատիվ-հետախուզական գործունեության բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության սկզբունքների հիման վրա¹⁰:

Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում ևս մասնա-

⁹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածը (ՀՀՊՏ N25 (260), Հոդ. 407, 02. 05. 2003):

¹⁰ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ 2007 թ. հոկտեմբերի 22-ի օրենքը (ՀՀՊՏ 2007.11.28/59(583) Հոդ.1197):

վոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պահպանության բարդ հարցերից մեկը հենց մասնավոր կյանքի սահմանների որոշումն է: Ուշագրավ են քննարկվող հարցի կապակցությամբ ՌԴ Սահմանադրական դատարանի մի քանի որոշումներով արտահայտած դիրքորոշումները:

Այսպես՝ քաղաքացի Ի. Գ. Չերնովայի բողոքի քննության արդյունքում 1998 թ. հուլիսի 14-ին կայացված թիվ 86-Օ որոշմամբ ՌԴ Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՌԴ օրենքի որոշ դրույթների սահմանադրականության հարցը, նշել է. «Հանցավոր արարքը անձի մասնավոր կյանքի ոլորտի մեջ չի մտնում, չի համարվում մասնավոր կյանքի բաղկացուցիչ մաս, այսինքն՝ նման արարքի վրա չի տարածվում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին բնորոշ՝ անձի վերաբերյալ տեղեկությունները միայն այդ անձի համաձայնությամբ հավաքելու, պահելու, օգտագործելու և տարածելու սահմանափակումը: Հետևաբար, օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը չի կարող դիտարկվել որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի խախտում»¹¹:

Մեկ այլ (2005 թ. հունիսի 9-ի թիվ 248-Օ) որոշմամբ ՌԴ Սահմանադրական դատարանը նշել է, որ ծանր հանցագործություն կատարելու մտադրություն ունեցող անձը պետք է նախատեսի, որ իր գործողությունների արդյունքում նա կարող է զրկվել ազատությունից, և կարող են սահմանափակվել նրա իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության: Հանցանք կատարելով՝ անձն ինքը գիտակցաբար իրեն դնում է նման սահմանափակումների հնարավորության տիրույթում¹²:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը թվարկում է այդ գործունեության ընթացքում թույլատրվող ՕՀՄ-ների ցանկը, որոնցից շատերի իրականացումն անմիջականորեն կապված է մասնավոր կյանքի անձեռնմխելիության տարբեր աստիճանի սահմանափա-

¹¹ St' u Собрание законодательства РФ. – 1998. – № 34. – Ст. 4368 (Հասանելի աղբյուրը՝ <http://www.szrf.ru/szrf/doc.phtml?nb=100&issid=1001998034000&docid=316>):

¹² St' u Определение Конституционного Суда РФ от 09.06.2005 N 248-О "Об отказе в принятии к рассмотрению жалобы граждан Захаркина Валерия Алексеевича и Захаркиной Ирины Николаевны на нарушение их конституционных прав пунктом "б" части третьей статьи 125 и частью третьей статьи 127 Уголовно-исполнительного кодекса Российской Федерации" (Հասանելի աղբյուրը՝ https://legalacts.ru/doc/op_redelenie-konstitutsionnogo-suda-rf-ot-09062005-n-248-o-ob/):

կումների հետ: Այդ միջոցառումներից են՝

1) արտաքին և ներքին դիտումները (օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետեր),

2) շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտումը (օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ),

3) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը (օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ),

4) հեռախոսային խոսակցությունների վերահսկումը (օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ)¹³:

Օրենսդրությունը հատուկ նախատեսել է մի շարք երաշխիքներ, որոնք նպատակաուղղված են հիշյալ սահմանափակումների կիրառման ընթացքում իրավապահ մարմինների հնարավոր ամենաթողության կանխմանը և ձեռք բերված տեղեկություններն օրենսդրությամբ չսահմանված նպատակներով օգտագործելու բացառմանը:

Այսպես՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» ՕՀՄ-ի անցկացումն ապահովում է միայն ՀՀ ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը¹⁴:

Հարկ է նկատել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.01.2020 թ. հունվարի 21-ին ընդունված ՀՕ-5-Ն օրենքի 1-ին հոդվածի փոփոխություններով (ուժի մեջ կմտնի Վարչապետի կողմից ՀՀ ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման պետին նշանակելու օրվան հաջորդող օրը) «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» ՕՀՄ անցկացումն ապահովելու իրավասություն տրվել է նաև ՀՀ ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումներին: Ընդ որում, հստակեցվել է, որ ՀՀ ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումն ապահովում է միայն ոստիկանության օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների նախաձեռնությամբ, ինչպես նաև՝ օրենքով սահմանված հիմքերով կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում այդ ստորաբաժանումներին

¹³ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ 2007 թ. հոկտեմբերի 22-ի օրենքը (ՀՀՊՏ 2007.11.28/59(583) Հոդ.1197):

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

տրված հանձնարարության կատարման նպատակով իրականացվող «Հեռախոսային խոսակցության վերահսկում» ՕՀՄ-ի անցկացումը:

Հաջորդ երաշխիքը սահմանված է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ըստ որի, ի թիվս այլոց, ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում ՕՀՄ-ները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով ՕՀՄ-ն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Հարկ է նկատել, որ ՀՀ սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է մասնավոր և ընտանեկան կյանքին միջամտության սահմանադրական արդարացումները: Ընդ որում, կարգավորումների հիմքում դրված է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության սահմանադրական բանաձևը: Սահմանադրությունը քննարկվող հիմնական իրավունքների պաշտպանության առարկային իրավաչափ միջամտությունն արդարացնում է պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հատկանշական է, որ հանցագործությունների կանխման կամ բացահայտման կապակցությամբ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման տիրույթում հիմնական օրենքն անդրադարձ չի կատարում ինչպես բացահայտման ենթակա հանցագործության ծանրության աստիճանին ու վտանգավորությանը, այնպես էլ այդ հիմքով իրականացվող միջամտության ինտենսիվությանը:

Այլ կերպ ասած՝ Սահմանադրությունը պետական իրավասու մարմիններին հնարավորություն է ընձեռում սահմանափակել մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը հանցագործությունները կանխելիս կամ բացահայտելիս, հանցագործություններից տուժածների շահերը պաշտպանելիս՝ անկախ կատարված հանցագործության վտանգավորությունից և ծանրությունից:

Այնինչ, ըՕպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի նորմերով, ըստ էության, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման կարգավորումները փոփոխության են ենթարկվել: Ի տարբերություն հիմնական օրենքի՝ ըՕպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը հանցագործությունները բացահայտելու նպատակով մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության միջամտության հնարավորությունը պայմանավորել է կատարված հանցագործության ծանրության աստիճանով: Մի կողմից՝ դրանով խստացվել են միջամտության պայմանները՝ ի շահ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավատիրոջ, սակայն մյուս կողմից՝ հանցագործություններից տուժածների շահերի պաշտպանության առումով՝ իրավապահ մարմինների հնարավորությունները, ի տարբերություն սահմանադրական կարգավորումների, սահմանափակվել են:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված է կարևոր մեկ այլ երաշխիք՝ ըստ որի արգելվում է անցկացնել վերը նշված օպերատիվ միջոցառումները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Անհապաղ ոչնչացման են ենթակա օպերատիվ-հետախուզական այդ միջոցառումների անցկացման ընթացքում ստացված փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունները¹⁵:

Նույն օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ ՕՀՄ-ներն անցկացնելու մասին որոշում կայացրած պաշտոնատար անձի վրա է դրվում միջոցառումների իրականացման նկատմամբ անմիջական վերահսկողությունը, և նրա վրա օրենքով անձնական պատասխանատվություն է դրվում օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման օրինականության համար:

ՕՀՄ-ները կրում են գաղտնի բնույթ: Հասարակական վերահսկողության բացակայության հանգամանքը կարող է պայման հանդիսանալ որոշ դեպքերում իրավունքների չարաշահումներ թույլ տալու համար: Ուստի, օրինականության պահպանման կարևորագույն երաշխիքներից մեկը մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը հատկապես միջամտող ՕՀՄ-ների համար օրենսդրությամբ նախնական դատական վերահսկողություն նախատեսելն է:

Այսպես՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ

¹⁵ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ 2007 թ. հոկտեմբերի 22-ի օրենքը (ՀՀՊՏ 2007.11.28/59(583) Հոդ.1197):

օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ, ի թիվս այլոց, ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին, կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ¹⁶:

Օրինականության պահպանման երաշխիքներից մեկն էլ օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատախազական հսկողության սահմանումն է («Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս):

Անդրադառնալով «ներքին դիտում» ՕՀՄ-ի ընթացքում մասնավոր կյանքի անձեռնմխելիության երաշխիքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Գոռ Սարգսյանի վերաբերյալ ԵԿԴ/0229/0116 գործով 2019 թ. ապրիլի 11-ի որոշման մեջ նշել է. «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների կոնկրետ տեսակն ընտրելիս, ելնելով անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության բնույթից, պետությանը վերապահված սեփական հայեցողության լուսանցքի տիրույթի տարբերակման գաղափարն արտացոլված է նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում: Մասնավորապես, օրենսդիրը որոշ խումբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար նախատեսելով լրացուցիչ չափանիշներ՝ սահմանափակել է դրանք ընտրելու իրավակիրառողի հայեցողության լուսանցքը: Այդպիսի միջոցառումների շարքին է դասվում «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի նպատակն անձին (անձանց) բնակարանում հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների օբյեկտիվ ընթացքը վերահսկելն է, դրա արդյունքներն ամրագրելը՝ առանց այդ դեպքերի և իրադարձությունների ընթացքն ուղղորդելու կամ դրանք նախապես ծրագրելու:

Հաշվի առնելով, որ այդ գործողության իրականացմամբ լուրջ միջամտություն է տեղի ունենում անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտ-

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

նիության իրավունքին՝ օրենսդիրն ամրագրել է, որ այն կարող է իրականացվել բացառապես երբ՝

ա) անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ,

բ) եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Հարկ է ընդգծել, որ վերջին չափանիշի ամրագրմամբ օրենսդիրն *inter alia* սահմանել է, որ նշված միջոցառումը կարող է իրականացվել միայն որպես ծայրահեղ (վերջին) միջոց (*last resort*), երբ այլընտրանքային եղանակով անհնարին է առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը: Այսինքն՝ նշված միջոցառումը ոչ միայն պետք է իրականացվի դրա բնույթին և նպատակային նշանակությանը համապատասխան, այլ նաև այն դեպքում, երբ բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, այդ թվում՝ քրեական գործով վարույթի շրջանակում քրեական դատավարության օրենսգրքով կոնկրետ տեղեկությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները¹⁷:

Ինչպես արդեն նշվեց, առավել լայն վերահսկողության բացակայության պայմաններում ՕՀՄ-ների գաղտնի իրականացման օրինականությունը պահպանելու նպատակով օրենսդրությունը նախատեսել է հատուկ երաշխիքներ և գործիքակազմ: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ անձը, ում մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ են հավաքվում, ուսումնասիրվում, ոչ միայն ընթացքում այլ նաև գործընթացից հետո չի տեղեկացվում ՕՀՄ-ների, դրանց իրականացման ուժերի, մեթոդների, գործիքների և եղանակների մասին, շատ հաճախ երբևէ չի իրազեկվում հենց ձեռք բերված տեղեկությունների մասին: Անձին հասու է դառնում իր վերաբերյալ ստացված տեղեկություններից միայն այն մասը, որը հետագայում իրացվում, ձեռք է բերում ապացույցի ուժ և ընդգրկվում քրեական գործի նյութերում: Օբյեկտիվորեն ընդունելով ՕՀՄ-ների, դրանց իրականացման ուժերի, մեթոդների, գոր-

¹⁷ Տե՛ս Գոռ Սարգսյանի վերաբերյալ ԵԿԴ/0229/01/16 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թ. ապրիլի 11-ի որոշումը (ՀՀՊՏ 2020.03.18/22(1577) Հոդ. 266):

ծիքների և եղանակների գաղտնիության անհրաժեշտությունը՝ այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ անհրաժեշտ է օրենսդրությամբ նախատեսել հատուկ ընթացակարգեր, որոնց պահպանմամբ գործընթացի ավելի ուշ փուլերում, երբ գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը կորցնում է արդիականությունը, անձը կարողանա ծանոթանալ իր վերաբերյալ ձեռք բերված տեղեկություններին ամբողջ ծավալով: Սա հնարավորություն կտա իրագրել լինելու ուժով կանխել քրեական գործի նյութերում տեղ չգտած տեղեկությունները՝ անհրաժեշտությունը վերանալուց հետո պահպանելու, դրանք ոչ իրավաչափ նպատակներով օգտագործելու հնարավոր չարաշահումները:

КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВА ОГРАНИЧЕНИЯ ОСНОВНОГО ПРАВА НА НЕПРИКОСНОВЕННОСТЬ ЧАСТНОЙ ЖИЗНИ И ГАРАНТИИ ЗАЩИТЫ ПРИ ПРОВЕДЕНИИ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНЫХ МЕРОПРИЯТИЙ

Бабаян Мушег Аветикович

*Начальник Образовательного комплекса
полиции РА, генерал-майор полиции*

В рамках научной статьи обсуждается вопрос о конституционных основах ограничения права на неприкосновенность частной жизни и гарантиях их защиты при проведении оперативно-розыскных мероприятий. Анализируя нормативно-правовые акты, регулирующие данную сферу, автор обсуждал вопросы, связанные с защитой частной жизни человека в рамках решения Конституционного суда и правовых позиций Кассационного суда РА.

В результате обсуждения законодательного регулирования и юридической практики, автором были предложены меры преодоления пробелов и пути совершенствования внутреннего законодательства.

Ключевые слова: оперативно-розыскные мероприятия, неприкосновенность частной жизни, решения Конституционного Суда, публичные мероприятия, Конституционные гарантии.

CONSTITUTIONAL BASIS FOR RESTRICTING THE FUNDAMENTAL RIGHT TO PRIVACY AND GUARANTEES OF PROTECTION DURING OPERATIVE-INVESTIGATIVE ACTIVITIES

Babayan Mushegh

*Head of the Police Educational Complex of RA,
Police Major General*

Within the framework of the article, the issue of the constitutional basis of the restriction of the right to privacy and the guarantees of their protection during the implementation of operative-investigative activities became a subject of discussion. The author discussed the issue, analyzing the question around the decisions of Constitutional Court and the Cassation Court of RA.

As a result of the discussion of the legal practice, ways of fulfillment of gaps in law and ways of improvement of domestic legislation were presented.

Key words- operative-investigative activities, privacy, decisions of the Constitutional Court, public events, Constitutional guarantees.

Հոդվածը գրախոսվել է՝ 14.08.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 04.09.2020թ.

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՂԵԿԱՎԱՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՔ

Գևորգյան Արուսյակ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի

հոգեբանության ամբիոնի դասախոս,

նույն համալսարանի կիրառական

հոգեբանության ամբիոնի ասպիրանտ

Ոստիկանության գերատեսչության ղեկավար կազմը և ստորաբաժանումների ղեկավարները ոլորտի մասնագետներ են, ովքեր ստացել են համապատասխան կրթություն և անցել են մի քանի մասնագիտական վերապատրաստումներ: ՀՀ ոստիկանությունում մասնագիտական վերապատրաստումները կանոնակարգված ձևով և աստիճանակարգով նախատեսված են ՀՀ կառավարության որոշմամբ և ՀՀ ոստիկանության պետի համապատասխան հրամանով՝ որի համաձայն տարբեր խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, ըստ սահմանված ժամանակահատվածի, պետք է վերապատրաստվեն:¹ ՀՀ ոստիկանության ղեկավար կազմի համար առանձնակի կարևորություն է ներկայացնում նաև հոգեբանական համապատասխան գիտելիքների իմացությունը և կիրառումը՝ որպես կառավարման ոլորտի առանձնակի բաղադրիչ:

Մեր օրերում ոստիկանության գերատեսչության ղեկավար կազմի և ստորաբաժանումների ղեկավարների կառավարչական աշխատանքը ենթադրում է պատասխանատվության բարձր աստիճան: Այն ենթադրում է թե՛ մասնագիտական, թե՛ հոգեբանական գիտելիքների և հմտությունների տիրապետում, քանի որ մի կողմից անհրաժեշտ է կատարել անմիջապես աշխատանքին առնչվող գործառույթներ, մյուս կողմից՝ անհրաժեշտ է առաջնորդել անձնակազմին և ապահովել մասնագիտական արդյունավետ գործունեություն: Այս առումով անհրաժեշտ ենք համարել ուսումնասիրել ղեկա-

¹ ՀՀ Կառավարության 23 հունվարի 2003 թվականի N 174-Ն որոշում՝ «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում անցնելու կարգը եվ պայմանները հաստատելու մասին»:

վարների հոգեբանական կոմպետենտությունը, որն էլ հանգեցնում է կոնստրուիվ կառավարման:

Ժամանակակից պայմաններում ղեկավարները, ովքեր ձգտում են կատարելագործել իրենց մասնագիտական գիտելիքները, տիրապետելով որոշակի հոգեբանական հմտությունների, զարգացնելով իրենց լիդերական ներուժը, ունակ են ապահովել արդյունավետ կառավարում, բարելավել ոչ միայն մասնագիտական կարողությունների որակը, այլև ընդհանրապես իրավապահ մարմինների հեղինակությունը:

Հոգեբանության ոլորտում գիտնականները բազմիցս փորձել են ստեղծել «արդյունավետ կառավարող ղեկավարի» մեկ ընդհանրական կերպար, որտեղ մեծ դերակատարություն ունի հոգեբանական կոմպետենտությունը: Այդ խնդիրն արդիական է նաև իրավապահ մարմինների ղեկավարների համար, քանի որ այն հարցը, թե հոգեբանական ինչպիսի կոմպետենտություն պետք է ունենան ոստիկանության գերատեսչության և ստորաբաժանումների ղեկավարները, հստակեցված չէ մինչ այսօր:

2019թ. փետրվարին մեր կողմից իրականացվել է փորձագիտական հարցում ՀՀ ոստիկանության մի շարք ստորաբաժանումների ղեկավարների հետ՝ կապված հոգեբանական կոմպետենտության և կառավարման հետ: Համաձայն ղեկավարների կարծիքի՝ մասնագիտական առաջխաղացման արդյունքում փոխվում է շատերի ղեկավարման ոճը, փոխվում է նաև ղեկավարի կոմպետենտությունը, առաջին հերթին՝ նրա հաղորդակցական կոմպետենտությունը: Ղեկավարներից ոմանք էլ նշել են, որ առաջխաղացումը բերում է նաև ղեկավարի շփումների շրջանակի փոփոխության:

Ըստ Ա.Մ. Ստոյարենկոյի՝ որքան բարձր է ղեկավարի դիրքը, այնքան մոտ է այն պետական նշանակության դիրքին, և եթե դա այդպես է, ապա ղեկավարից պահանջվում է ցուցաբերել համազգային, պետական մոտեցում ինչպես գործունեության, այնպես էլ մտածողության մեջ:² Ղեկավարը կենտրոնանում է պետական խնդիրների լուծման վրա և հանդիսանում է խմբի մեջ պետության ներկայացուցիչ, և ոչ թե խմբի ներկայացուցիչը պետության մեջ, այսինքն՝ նրա գործունեության ոլորտը վերադասավորվում է ներխմբային միջավայրից դեպի արտաքին խումբ, իսկ նրա կոմպետենտությունը ճանաչո-

² Столяренко А.М. Обеспечение морально психологической подготовки личного состава горрайорганов внутренних дел к выполнению оперативно-служебных задач. – М., 1990.

ղական-գարգացումից անցնում է հաղորդակցականի:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է ենթադրել, որ ուստիկանական համակարգում ղեկավարը պետք է տիրապետի հաղորդակցական հմտությունների՝ դրանով իսկ նպաստելով արդյունավետ կառավարմանը:

Կարևորելով հաղորդակցական հմտությունները՝ հարկ ենք համարել դիտարկել արդյունավետ կառավարում իրականացնող ղեկավարի կերպարի ձևավորման հիմնախնդիրն ավելի բազմակողմանի:

Վ. Դ. Օրեխովը կոմպետենտությունը համարում է շրջապատի մարտահրավերներին արդյունավետորեն արձագանքելու և դրանք կանխատեսելու, ինչպես նաև կազմակերպության ռազմավարական նպատակներն զգալու, մարդկանց շահերը հասկանալու, նոր պայմաններում ինքնուրույն գործելու կարողություն:³

Կառավարչի կոմպետենտության մակարդակը որոշվում է կառավարման օպերատիվ գործառնություններ կատարելու նրա ընդունակությամբ:⁴

Ա. Ֆ. Վեսելկովը, ներկայացնելով մի շարք հեղինակների սահմանումները (Ա. Կ. Մարկովա, Լ. Ն. Միտինա, Բ. Ի. Խասան, Թ. Ն. Շչերբակովա, Լ. Ա. Պետրովսկայա, Վ. Ն. Կանցցևա և այլն) «Կոմպետենտություն» հասկացության վերաբերյալ, եզրակացնում է, որ այն մասնագիտական իրավիճակային խնդիրներն արդյունավետ լուծելու կոգնիտիվ կարողությունն է, ինչպես նաև մարդու ընդունակությունը՝ այնպես կառավարելու իր վարքը (հատկանիշների ամբողջությունը), որպեսզի դա համապատասխանի մասնագիտական այն պահանջներին, որոնք մշակվել են որոշակի կազմակերպական միջավայրում՝ ցանկալի արդյունքների հասնելու նպատակով. դրանք կառավարչական հաջող գործունեության համար անհրաժեշտ բնութագրերն են:⁵ Վերլուծելով տարբեր սահմանումներ՝ նա հանգում է այն եզրակացության, որ «Կոմպետենտություն» հասկացությունը «Հիմնարար հատկություն» հասկացությամբ փոխարինելիս սահմանման կառուցվածքը և իմաստը չեն փոխվում:

³ Д. В. Орехов, К лидерству в бизнесе через развитие компетентности, Управление персоналом համար 3 (80), 2003, с. 48.:

⁴ Համայնքային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները/Ա. Բ. Լոքյան. –Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015. – 240էջ:

⁵ А. Ф. Веселков, К вопросу о надежности результатов оценочных процедуры эффективности их использования, Журнал прикладной психологии, 2001, N/համար/3, с. 3-8:

«Կոմպետենտություն» հասկացությունն առաջ է եկել մասնագիտությունների ամբողջական պրոֆեսիոգրամմաների շեմն զգալիորեն իջեցնելու, բայց ոչ տարրական մակարդակի հասցնելու անհրաժեշտությունից:⁶

Ելնելով վերոնշյալ վերլուծությունից՝ առաջարկել ենք իրավապահ մարմինների ղեկավարի հոգեբանական կոմպետենտության հետևյալ բաղադրիչները.

1. Գիտելիքի ենթակառուցվածք. հոգեբանական գիտելիքների համակարգ, որը ներառում է ընդհանուր հոգեբանության, անձի հոգեբանության, անձնային առանձնահատկությունների, հոգեբանական ախտորոշման, միջանձնային փոխհարաբերությունների, կոնֆլիկտաբանության ոլորտները:

2. Հոգեբանական հմտությունների և ունակությունների ենթակառուցվածք, ներառող՝

- զրուցակցի հետ հոգեբանական կապ հաստատելու հմտություններ,
- տարբեր սոցիալական խմբերում արագ հարմարվելու հմտություններ,
- վերբալ և ոչ վերբալ դրսևորումներով զրուցակցին հասկանալու ունակություն,
- զրուցակցի ստի ճանաչման հմտություններ,
- ոչ կոնֆլիկտային հարաբերությունների հաստատման և կոնֆլիկտների կառուցողական լուծման հմտություններ:

3. Աուտոկոմպետենտության ենթակառուցվածք. ներառյալ սթրեսակայուն վարքի հմտություններ, նպատակներ դնելու և մոտիվացիայի խթանման հմտություններ, իր հոգեվիճակը գիտակցելու և վերահսկելու կարողություն, իր սոցիալական վարքը վերահսկելու ունակություն, հոգեկան ինքնակարգավորման մեխանիզմներին տիրապետելու հմտություն:

4. Իրավապահ մարմինների ղեկավարի համար հոգեբանական կարևոր անձնային որակների ենթակառուցվածք, որը ներառում է վերլուծական մտածողության զարգացման բարձր մակարդակ, զարգացած սոցիալական ինտելեկտ, բանական և ռացիոնալ ճանաչողություն, հոգեբանական կայունություն, կազմակերպական հմտություններ, անհանգստության բացակայություն:

⁶ А. Ф. Веселков, К вопросу о надежности результатов оценочных процедуры эффективности их использования, Журнал прикладной психологии, 2001, N/համար/3, с. 3-8:

Ամփոփելով վերը նշվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ կոմպետենտ ղեկավարի իդեալական կերպարն առաջին հերթին համակողմանի և ներդաշնակ զարգացած անհատականությունն է, ով տիրապետում է արդեն ձևավորված կամ ձևավորվող կոմպետենտությունների համալիրին, որն էլ իր հերթին ներառում է ղեկավարի հոգեբանական կոմպետենտության ձևավորման հետևյալ ուղղությունները.

առաջինը՝ անհրաժեշտ է հոգեբանական գիտելիքները լայնորեն կիրառել իրավաբանական գիտության և պրակտիկայի խնդիրների ուսումնասիրության ժամանակ: Այդ նպատակով անհրաժեշտ է ընդլայնել ուստիկանության ծառայողների ընդհանուր տեսական հոգեբանական պատրաստվածությունը, ինչպես նաև նրանց զինել կիրառական հոգեբանական գիտելիքներով, որոնք անհրաժեշտ են իրավապահ մարմինների աշխատակիցներին հոգեբանական լարված իրավիճակներում արդյունավետ ծառայողական գործունեություն իրականացնելու համար:

Երկրորդ՝ ավելի բարձր պաշտոնում նշանակվելուս պատրաստ լինելու համար ղեկավարը պետք է վերապատրաստման դասընթացներ անցնի առնվազն կառավարման հոգեբանական հիմունքների վերաբերյալ:

Երրորդ՝ գործնական հոգեբանական պատրաստվածությունը բարձրացնելու համար աշխատակիցներին առաջարկվում է սոցիալ-հոգեբանական վերապատրաստման ծրագիր՝ ուղղված նշված հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Սոցիալ-հոգեբանական վերապատրաստումը թույլ է տալիս ապահովել անհատական մոտեցում: Այսպես օրինակ՝ Լ.Ա. Պետրովսկայան առաջարկում է վերապատրաստման դասընթացի ընթացքում զարգացնել հոգեբանական կոմպետենտության պերցեպտիվ, հաղորդակցական և ինտերակտիվ բաղադրիչները:⁷ Ղեկավարներին առաջարկվում է մասնակցել, օրինակ, «Արդյունավետ կառավարում» թեմայով դասընթացին, որի նպատակը կառավարման հոգեբանության գիտելիքների գործնական յուրացումն է, կառավարման գործընթացում կառավարչական մշակույթի և սոցիալ-հոգեբանական կոմպետենտության ձևավորումը:

Ուստիկանության համակարգի ղեկավարների հետ անցկացվող հոգեբա-

⁷ Петровская Л.А. Компетентность в общении. социально-психологический тренинг М.: Изд-во Московского университета, 1989. — 216 с.

նական դասընթացներն արդյունավետն են, քանի որ ընդհանուր առմամբ վերապատրաստումը գործընթաց է, որն ունի երկու կողմ և ընդգրկում է ինչպես իրավապահ մարմինների արտաքին հարաբերությունները քաղաքացիների, մեծ և փոքր սոցիալական խմբերի, կազմակերպությունների հետ, այնպես էլ իրավապահ մարմինների գործընկերների և ենթակաների հետ միջգերատեսչական հարաբերությունների ոլորտը:

Այսպիսով՝ վերապատրաստման դասընթացները, որոնք մշակվել են կառավարման ժամանակակից հայեցակարգերին համապատասխան, ուղղված են ոստիկանության համակարգի ղեկավարների նոր կերպարի ստեղծմանը. ղեկավարներ, որոնք տիրապետում են մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից մեթոդներին, ունեն համապատասխան հոգեբանական կոմպետենտություն, որի շնորհիվ էլ ունակ են իրականացնել կոնստրուկտիվ կառավարում:

ПСИХОЛОГИЧЕСКАЯ КОМПЕТЕНТНОСТЬ РУКОВОДИТЕЛЯ КАК ОСНОВА ЭФФЕКТИВНОГО УПРАВЛЕНИЯ В ПОЛИЦИИ

Геворгян Арусяк Геворговна

*Преподаватель кафедры психологии Армянского
Государственного педагогического университета
им. Абовян, аспирант кафедры прикладной
психологии того же университета*

Сегодня руководителю в органах и подразделениях полиции необходимо быть не только профессионалом своего дела, но и квалифицированным психологом, способным разбираться в вопросах психологического характера и умеющим их решать. Главный акцент в развитии профессионализма руководителя ставится на формировании и развитии психологической компетентности как профессионально важной характеристики личности, проявляющейся в умении взаимодействовать с окружающими людьми, быстро ориентироваться в социальных ситуациях, правильно выявлять личностные особенности подчиненных и находить адекватные стратегии взаимодействия с

ними. В связи с этим существует необходимость изучения психологической компетентности руководителей в теоретическом и прикладном аспектах

Ключевые слова: компетенция, психологическая компетентность, коммуникативная компетентность, профессионализм, социально-психологический тренинг, эффективность психологической подготовки руководителей.

EXECUTIVE'S PSYCHOLOGICAL COMPETENCY AS A BASIS FOR AN EFFECTIVE ADMINISTRATION OF THE POLICE SYSTEM

Gevorgyan Arusyak

*Lecturer at the Chair of Psychology,
Armenian State Pedagogical University
after Kh. Abovyan, PhD Student at the
Chair of Applied Psychology*

Nowadays any executive of the police system must be not only a professional, but also a qualified psychologist, capable to understand and solve problems of a psychological nature. The professional development of a police chief is emphasized in terms of formation and development of psychological competences as professionally important characteristics of any individual, which are demonstrated in the ability of orientation in social situations, identification of subordinates' personal characteristics and finding adequate strategies of interaction with them. In this regard, it is becoming increasingly necessary to study the psychological competency of a police chief from theoretical and practical aspects.

Key words: psychological competency, communicative competence, professionalism, portrait of the modern Head of Police, social and psychological training, efficiency of leaders' psychological training.

Հոդվածը գրախոսվել է՝ 09.09.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 14.09.2020թ.

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Թումասյան Դավիթ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
քրեական իրավունքի և քրեաբանության
ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ*

Ընտանիքում բռնության¹ դեմ պայքարը Հայաստանում նոր թափ է ստացել 2017թ-ի դեկտեմբերի 13-ից, երբ ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը: Այդ օրենքի հիման վրա վերանայվեց ՀՀ օրենսդրությունը՝ համապատասխան փոփոխություններ կատարվեցին ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում, ընդունվեցին մեկ տասնյակից ավել նորմատիվ ակտեր², իրականացվեց լայնածավալ քարոզարշավ, վերանայվեց պետական բյուջեն և այլն: Չնայած այս ամենին՝ Հայաստանում դեռ լուծված չէ ընտանի-

¹ Սույն հոդվածում «ընտանիքում բռնությունը» և «ընտանեկան բռնությունը» կիրառվելու են որպես հոմանիշներ:

² Մասնավորապես, ընդունվել են՝ ՀՀ վարչապետի 28.12.2018թ-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» N1685-Ա որոշումը, ՀՀ կառավարության 10.07.2018թ՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ ստեղծելու, խորհրդի ձևավորման կարգը և գործառնությունները հաստատելու մասին» N786-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29.03.2019թ.՝ «Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ և 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1069-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 364-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29.03.2019թ.՝ «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին» N 333-Ն որոշումը, ՀՀ կառավարության 10.10.2019թ. «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» N1381-Ն որոշումը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.11.2018թ.՝ «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 119-Ն հրամանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.11.2018թ.՝ «Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 120-Ն հրամանը և այլն:

քում բռնության քրեականացման հարցը, ինչն առաջացնում է բազմաթիվ բարդություններ թե՛ տեսության մեջ, թե՛ իրավակիրառ պրակտիկայում, թե՛ երևույթների մեկնաբանման, թե՛ արարքների իրավական գնահատականը ներկայացնելիս:

Ընտանեկան բռնությունը բռնության տարատեսակ է, որի առանձին դրսևորումներ քրեորեն պատժելի են, որոշ դրսևորումներ էլ հանրորեն վտանգավոր հետևանքների նվազ կարևորության պատճառով հանցագործություն չեն համարվում: Ուստի ընտանեկան բռնության ՀՀ քրեական օրենսգրքով արգելված դրսևորումներն ավելի քիչ են, քան ընտանեկան բռնության դրսևորումներն առհասարակ:

Ընտանեկան բռնության հանցավոր դրսևորումների մեծամասնությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների բաժնում, որտեղ առանձնացված է 5 գլուխ: Ընտանեկան բռնության հանցավոր դրսևորումների քրեաիրավական բնութագիրը մեծամասամբ նույնն է, ինչ ցանկացած այլ դրսևորման դեպքում: Իհարկե, եթե հանցանքը կատարվել է հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ, ինչպես նաև մանկահասակի, այլ անպաշտպան կամ անօգնական կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ, ապա, ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի համաձայն, այս հանգամանքը հանդիսանում է պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ընտանեկան բռնությանը բնորոշ են այն բոլոր հիմնական հատկանիշները, որոնցով բնութագրվում է հանցավոր բռնությունը՝ արարքի դիտավորությունը, հակաիրավականությունը, ուրիշի կամքին հակառակ կամ առանց ուրիշի կամքը հաշվի առնելու կատարված գործողությունը, մարդու դեմ ուղղված լինելը և այլն: Ինչպես հանցավոր բռնության, այնպես էլ ընտանեկան բռնության օբյեկտ են հանդիսանում մարդու կյանքի, առողջության, ֆիզիկական ազատության, ֆիզիկական ցավերից, ֆիզիկական և հոգեկան տառապանքներից պաշտպանվածության վերաբերյալ հասարակական հարաբերությունները: Երկու դեպքում էլ հանցագործության օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունների օբյեկտ հանդիսացող արժեքներ կամ բարիքներ են մարդու կյանքը, առողջությունը, ֆիզիկական ազատությունը, ֆիզիկական ցավերից, ֆիզիկական և հոգեկան տառապանքներից պաշտպանվածությունը: Հանցավոր բռնության և ընտանեկան բռնության անմիջական ներգործության առարկա է հանդիսանում մարդը, ով միաժամանակ հանդիսանում է նաև հանցավոր բռնության օբյեկտ հանդիսացող հասարա-

կական հարաբերության կողմ և կոնկրետ արժեքի կամ բարիքի կրող:³

Ընտանեկան բռնության որոշ դրսևորումներ հատուկ մատնանշված են երեխաների նկատմամբ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ և 142-րդ հոդվածներն ուղղակի նախատեսում են արարքը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ կատարելը:

Առհասարակ երեխաների նկատմամբ բռնությունն ունի իր առանձնահատկությունները ՀՀ քրեական օրենսգրքի համատեքստում: Հարկ է նշել, որ մարդու դեմ ուղղված հանցագործությունների բաժնում հատուկ առանձնացված է ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների գլուխը, սակայն երեխաների իրավունքների քրեաիրավական պաշտպանությունն ընտանեկան բռնությունից իրականացվում է ՀՀ քրեական օրենսգրքի նաև այլ գլուխներում նախատեսված հոդվածներով: Երեխայի՝ բռնությունից պաշտպանությունը նախատեսված է, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի, ինչպես նաև առնանգված կամ որպես պատանդ վերցված անձի նկատմամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 124-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ) և այլն:

Երեխայի նկատմամբ բռնության հանցավոր դրսևորումները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1 – միայն երեխաներին վերաբերող հանցագործություններ, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ, 132.2-րդ, 141-րդ, 142-րդ, 166-րդ, 166.1-րդ, 168-րդ և այլ հոդվածներ,

2 – հանցագործություններ, որտեղ արարքն անչափահասի նկատմամբ կատարելը համարվում է հանցագործության ծանրացնող հանգամանք, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ, 124-րդ, 138-րդ, 139-րդ և այլ հոդվածներ,

3 – հանցագործություններ, որտեղ երեխաների առնչությամբ որևէ առանձնահատկություն նախատեսված չէ, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 112-րդ և այլ հոդվածներ:⁴

³ Մանրամասն տե՛ս Հունանյան Դ.Ռ. Բռնությունը քրեական իրավունքի մեջ (իրավահամեմատական վերլուծություն ՀՀ և ՌԴ օրինակով) իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2010, էջեր 54-58:

⁴ Մանրամասն տե՛ս Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ

2011թ. ապրիլի 7-ին ընդունված Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան նախատեսել է քրեականացման ենթակա որոշ արարքներ, որոնց միայն մի մասն է ամրագրված ՀՀ գործող քրեական օրենսգրքում: Մասնավորապես, այս կոնվենցիայի պահանջ չէ ընտանեկան բռնությունը քրեականացնել առանձին հանցակազմով, ինչը մասնակից պետություններին թույլ է տալիս ինքնուրույն որոշել՝ իրականացնել դա առանձին հոդվածով, թե՛ ոչ: Այս արարքն առանձին հանցակազմով քրեականացնելը հնարավորություն է տալիս լավագույնս արձագանքել ընտանեկան բռնության, մասնավորապես՝ շարունակական բնույթ կրող արարքների կամ ոտնձգող վարքագծի օրինաչափ այն դեպքերին, որոնք առանձին դիտարկելիս չեն հատում քրեորեն պատժելի համարվելու սահմանը: Ավելին՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն նույնպես մտահոգություն է հայտնել Հայաստանում ընտանեկան բռնությունը քրեականացնող հատուկ իրավակարգավորման բացակայության կապակցությամբ (Խոշտանգումների դեմ կոմիտե, 2016թ.):⁵ Ընտանեկան բռնությունը քրեականացնող հատուկ իրավակարգավորման բացակայության կապակցությամբ հայտնած դիրքորոշումը, սակայն, չի նշանակում, որ այն պետք է սահմանվի առանձին հոդվածով, բայց որոշակի քայլեր այս առնչությամբ պետք է իրականացվեն:

ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածն ընտանիքում բռնությունը կամ ընտանիքի անդամի կողմից հանցանք կատարելը չի նախատեսում որպես ծանրացնող հանգամանք:

Սակայն, հաշվի առնելով, որ բռնությունն առկա է այնտեղ և այն ժամանակ, երբ առկա է շահերի բախում⁶, պետք է փաստել, որ ընտանիքում նման բախումներն անխուսափելի են և, եթե դրանք չարժանանան պատշաճ արձագանքի, դա կարող է հանգեցնել այդ երևույթի տարածման և բռնության առավել վտանգավոր կամ ծանր դրսևորումների իրականացմանը (ընդհուպ սպանություն կատարելը): Ընտանիքում բռնությունն առանձնանում է բռնության

բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները: Երևան, 2019, էջ 16:

⁵ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն, Երևան, 2017, էջ 16:

⁶ Հունանյան Դ.Ռ. Բռնությունը քրեական իրավունքի մեջ (իրավահամեմատական վերլուծություն ՀՀ և ՌԴ օրինակով): Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2010, էջ 37:

այլ տեսակներից, քանի որ այն իրականացվում է այն անձանց կողմից, ում տուժողը վստահում է, սիրում է, ումից նա նյութական, հոգեբանական, սոցիալական կամ այլ կախվածության մեջ է, ում վրա դրված է այդ անձին դատարարելու կամ խնամելու պարտականությունը, ում համար անձը զգում է որոշակի պատասխանատվություն:

Հանցավոր արարքի (*actus reus*) նեղ մեկնաբանությունը չի ներառում մի շարք բռնարարքներ, որոնք տեղի են ունենում ընտանեկան բռնության դեպքերում՝ որպես կանոն ներառելով տևական ժամանակահատվածում կատարվող այնպիսի գործողությունների շարք, որոնցից յուրաքանչյուրը, որպես այդպիսին, կարող է քրեականացված չլինել (օրինակ՝ մեկ ապտակը, մազերը քաշելը): Այլ կերպ ասած՝ ծեծը (*որպես բռնության քրեորեն պատժելի նվազագույն շեմ – նշումը հեղինակի*) ենթադրում է այնպիսի հանցագործության շեմ, որից ներքև որևէ հանցավոր գործողություն լինել չի կարող: Այս առումով կարևոր է հիշատակել Վ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի գործը, որում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կոմիտեն հայտնաբերել է խախտում, քանի որ ստորին աստիճանի ներպետական դատարանը մերժել էր տուժողի՝ պաշտպանիչ կարգադրության համար ներկայացված դիմումը, քանի որ ներպետական օրենսդրության համաձայն՝ հանցանք կատարողի կողմից հարված ստանալը չէր բավարարում բռնության շեմը: Կոմիտեն հիշեցրել է, որ գենդերային հիմքով բռնությունը «ոչ թե սահմանափակվում է այնպիսի արարքներով, որոնցով պատճառվում է ֆիզիկական վնաս, այլ նաև ներառում է այնպիսի արարքներ, որոնցով պատճառվում է հոգեկան կամ սեռական վնաս կամ տառապանք, ցանկացած այդպիսի արարքների սպառնալիք, հարկադրանք կամ ազատությունից զրկելու այլ տեսակներ», և գտել է, որ «երկու դատարաններն էլ ուշադրությունը բացառապես կենտրոնացրել են դիմումատուի կյանքին կամ առողջությանն ուղղակիորեն և անմիջականորեն սպառնացող վտանգի ու նրա ֆիզիկական անձեռնմխելիության վրա՝ անտեսելով նրա հուզական և հոգեբանական տառապանքը»:⁷

Քննարկվող հարցը կարգավորված չէ նաև ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում:

Չմանրամասնելով այլ պետություններում առկա իրավական կարգավո-

⁷ Հաղորդագրություն թիվ 20/2008, ԿՆԽՎԿ/C/49/D/20/2008, 9.8-րդ, 9.9-րդ պարբերություններ:

րումները և չմեկնաբանելով ընտանիքը պաշտպանելու պետության պարտականությունը՝ հստակ կարելի է նշել, որ ընտանիքում բռնության կատարումը ՀՀ օրենսդրությամբ առավել ռացիոնալ եղանակով կարելի է սահմանել այն որպես ծանրացնող հանգամանք: Դրանով իսկ ցանկացած հանցագործություն, որը կկատարվի ընտանիքի անդամի կողմից, կհանգեցնի առավել խիստ պատժի:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի, իսկ նախագծի 70-րդ հոդվածի 1-ին մասերում, ի թիվս քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող այլ հանգամանքների, ցանկալի է նախատեսել նաև հանցանքը մերձավոր ազգականի կողմից կատարելը: Դրանով փաստացի կապահովվի ընտանեկան բռնության համար առավել խիստ պատասխանատվություն նախատեսելը, ինչպես նաև տարբերակված մոտեցման իրականացումը բռնության կատարման դեպքում՝ ոչ մերձավոր ազգականի կողմից կատարված լինելու դեպքում:

Հարկ է նշել, որ նույն նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 14-րդ կետն ամրագրում է, որ մերձավոր ազգական է համարվում՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեգավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, եղբայրներն ու քույրերը (նաև խորթ), պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսնու ծնողների համար՝ փեսան կամ հարսը: Այս փաստով է պայմանավորված, որ մեր կողմից առաջարկվում է կիրառել ոչ թե «ընտանիքի անդամ», այլ «մերձավոր ազգական» հասկացությունը:

Փաստացի նախագծով արդեն իսկ սահմանվել է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են համարվել մերձավոր ազգականներ, և միայն այդ անձանց կողմից հանցանք կատարելը ծանրացնող հանգամանք դիտելը կլուծի ՀՀ քրեական օրենսդրության առջև ծառայած խնդիրներից մեկը՝ ընտանիքում բռնության քրեականացումը և հետևաբար՝ կանխարգելումը:

Ընդ որում, նախագծում կիրառվող ձևակերպումը բովանդակությամբ տարբերվում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում տրված սահմանումից՝ որի համաձայն ընտանիքի անդամներ են համարվում՝

ա. անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեգավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները,

բ. համատեղ բնակվող տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը:

Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի համատեքստում ընտանիքի անդամի համատեղ բնակվելու/ չբնակվելու հանգամանքը որևէ իրավական նշանակություն չի ունենալու անձին մերձավոր ազգական ճանաչելու համար, ինչն առավել կամբողջականացնի ընտանիքում բռնության դեմ պայքարը:

Առաջարկվող ծանրացնող հանգամանքի նախատեսումն ամենևին չի ենթադրում, որ ՀՀ քրեական օրենսգիրքը կամ նախագիծը չպետք է համապատասխանեցվեն Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին ԵՖ կոնվենցիային՝ քրեականացնելով ընտանեկան բռնության որոշ դրսևորումներ, որոնք ներկայում Հայաստանում քրեականացված չեն: Այս կոնվենցիայի համաձայն՝ քրեորեն պատժելի պետք է լինեն ընտանեկան բռնության տարբեր դրսևորումներ, ինչը լուծվում է վերը նշված ծանրացնող հանգամանքը նախատեսելով, իսկ մի մասը պատժելի չէ՝ անկախ այն հանգամանքից դա իրականացվում է ընտանիքի անդամի կողմից, թե ցանկացած այլ անձի կողմից՝ չնայած այդ արարքների վտանգավորության աստիճանը բավարար է դրանք հանցագործություն համարելու համար:

Մասնավորապես, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին ԵՖ կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն քրեորեն հետապնդելի պետք է լինի հետամտումը⁸, 37-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր ամուսնությունը⁹, 38-րդ հոդվածի հա-

⁸ Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողությունները, որոնք այդ անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար:

⁹ Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն դիտավորությամբ հարկադրելը: Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր

մաձայն՝ կանանց սեռական օրգանների խեղումը¹⁰, 39-րդ հոդվածի համաձայն՝ աբորտ կատարելուն կամ ստերջացնելուն հարկադրելը¹¹, իսկ 40-րդ հոդվածի համաձայն՝ սեռական հետամտումը¹²:

Ընտանիքում բռնության այլ դրսևորումները՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, արդեն իսկ ունեն իրենց ամրագրումները թե՛ ՀՀ քրեական օրենսգրքում, թե՛ դրա նախագծում:

Հոգեբանական բռնության մասով քրեական հետապնդում իրականացնելու պարտականությունը բխում է նաև միջազգային իրավունքի այլ աղբյուրներից: Օրինակ՝ ՄԻԵԴ-ը նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի կոդմերն ունեն ընտանեկան բռնության դեպքերն արդյունավետորեն քննելու պոզիտիվ պարտականություն, նույնիսկ եթե տուժողին ֆիզիկական վնաս չի պատճառվել:¹³ Կանանց

միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն հարկադրելու նպատակով այդ անձի քաղաքացիության կամ բնակչության վայրի պետություն չհանդիսացող պետության տարածք մուտք գործելուն դիտավորությամբ գայթակղելը:

¹⁰ Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունների քրեականացումն ապահովելու համար՝ ա. սեռական մեծ և փոքր շուրթերը և ծիլի լրիվ կամ մասնակի անդամահատելը, կապելը կամ խեղման այլ գործողությունների ենթարկելը, բ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ կնոջ ստիպելը կամ դրանց ենթարկվելու համար կին տրամադրելը, գ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ աղջկա ստիպելը, դրդելը կամ դրանց ենթարկվելու համար աղջիկ տրամադրելը:

¹¹ Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունների քրեականացումն ապահովելու համար՝ ա. կնոջ հղիության արհեստական դադարեցումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության, բ. կնոջ կամ աղջկա բնականորեն վերարտադրելու կարողությունը կորցնելու նպատակով կամ դրան հանգեցրած վիրահատության կատարումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության և ընթացակարգերի իմաստը հասկանալու:

¹² Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը, պատժելի լինի քրեական կամ որևէ այլ սանկցիայի ներքո:

¹³ Տե՛ս, օրինակ, Օփուզն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey], Գանգատ թիվ 33401/02 2009,

նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոն-վենցիայի կոմիտեն ընդունել է համանման եզրակացություն Վ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի գործում՝ նշելով, որ «գենդերային հիմքով բռնությունը չի սահ-մանափակվում ֆիզիկական վնաս պատճառելով, այլ նաև ներառում է այն-պիսի արարքներ, որոնք պատճառում են հոգեկան տառապանք»:¹⁴

Հոգեբանական բռնությունն արտացոլում է այնպիսի վերահսկող վար-քագիծ, որն ունի արտահայտման ձևերի լայն շրջանակ՝ վիրավորանքների միջոցով ահաբեկում, նվաստացում, ցանկացած տեսակի սպառնալիքներ, մեկուսացում տուժողի նեղ շրջապատից (անմիջական ընտանիքից) և այլն: Հոգեբանական բռնությունը կարող է նաև կապված լինել տնտեսական բռնության այնպիսի ձևերի հետ, ինչպիսիք են՝ ֆինանսական ռեսուրսներից զրկելը կամ դրանք սահմանափակելը:

Հոգեբանական բռնության քրեականացումն ու դրա առնչությամբ քրեա-կան հետապնդումը հեշտ առաջադրանք չէ: ՄԱԿ-ի կանայք առաջարկում են «հարկադիր հսկողություն» եզրույթը՝ որպես հետևանք հասցվող վնասի վրայից ուշադրությունը կենտրոնացնելով անօրինական վարքագծով հե-տապնդվող նպատակի վրա:¹⁵ «Բռնի հսկողությունը» ներառում է հոգեբանա-կան և տնտեսական բռնությունը, սակայն այնպես, որ այդ հասկացություննե-րը կապվում են գերիշխանության ձևի հետ: Այն ենթադրում է ահաբեկման միջոցով ծայրահեղ հսկողություն, մեկուսացում կամ հետզարգացում և ուղ-ղորդում է համապատասխան իրավական միջոցները՝ թիրախավորելու հա-մար տուժողի ինքնուրույնության ու արժանապատվության վրա ազդող իս-կապես վնասակար վարքագիծը:¹⁶

Հոգեբանական բռնության դեմ պայքարին այսքան ուշադրություն դարձ-նելը պայմանավորված է նրանով, որ գործնականում ընտանիքում բռնու-թյունն ունի «զարգացման միտում»՝ սկսվելով ոչ վտանգավոր, թեթև, ֆիզիկա-կան բռնության տարրեր չպարունակող, միայն հոգեբանական ազդեցու-թյամբ սահմանափակվող դրսևորումներից և հասնելով մինչև առողջությանը

Հայդուովան ընդդեմ Սլովակիայի [Hajduová v. Slovakia], Գանգատ թիվ 2660/03, 2010:

¹⁴ Հաղորդագրություն թիվ 20/2008, ԿՆԽՎԿ/49/D/20/2008, 9.8-րդ պարբերություն:

¹⁵ Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը վերացնելու համար նախատեսված վիրտուալ գիտելիքների կենտրոն, հասանելի է հետևյալ հղումով՝ www.endvawnow.org/en/articles/398-definition-of-domestic-violence.html?next=399.

¹⁶ Մանրամասն տե՛ս նաև՝ Ման Լ., Սարգսյան Լ. Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը, Երևան, 2018:

ծանր վնաս պատճառելը, կյանքից զրկելը և այլն: Հետևաբար, միայն այս արարքների քրեականացմամբ ընտանիքում բռնության դեմ պայքարն արդյունավետ իրականացնելը բավարար չէ, և, մասնավորապես, հոգեբանական բռնության վաղ փուլերի և դեպքերի բացահայտումը խիստ կարևորվում է այս երևույթի դեմ պայքարն արդյունավետ դարձնելու համար:

Քանի որ հետամտումը սահմանելը մեծ դժվարություններ է առաջացնում թե՛ տեսությունում, թե՛ օրենսդրությունում, այս հարցի կապակցությամբ ցանկալի է առավել մանրամասն ներկայացնել առկա կարգավորումները:

Հետամտումը հստակ սահմանելու լավ օրինակ կարելի է գտնել Գերմանիայի քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածում¹⁷, որում հանգամանալից ներկայացվում են այն գործողությունները, որոնք համարվում են հետամտում:

1) ֆիզիկական մոտիկության ձգտելը.

2) կապ հաստատելու նպատակով հեռահաղորդակցության միջոցներ կամ հաղորդակցության այլ միջոցներ կամ երրորդ կողմին օգտագործելը.

3) նրա անվամբ ապրանքներ կամ ծառայություններ պատվիրելու նպատակով նրա անձնական տվյալները ոչ պատշաճ ձևով օգտագործելը կամ երրորդ կողմին պարտադրելը, որ նրա հետ կապ հաստատի.

4) նրա կամ նրան մտերիմ անձանց կյանքին, ֆիզիկական անձեռնմխելիությանը, ֆիզիկական առողջությանը կամ ազատությանն ուղղված սպառնալիքներ հնչեցնելը,

5) համանման գործողություններ կատարելը և նրա անձնական ազատության վրա լուրջ ներգործություն ունենալը:

Ակնհայտ է, որ վերջին արարքի դեպքում սահմանման հիմքում ընկած է ոչ թե վարքագիծը, այլ արդյունքը՝ այսպիսով էականորեն ընդլայնելով դրա կիրառության շրջանակը:

Այլ քրեական օրենսդրության շրջանակներում հետամտման մասին դրույթը մշակվում է՝ հաշվի առնելով ոստիկանության դիտավորությունը: Օրինակ՝ Բելգիան եղել է ԵՄ-ի առաջին անդամ պետություններից մեկը, որտեղ հետամտումը սահմանվել է որպես հանցագործություն, և նախապատվությունը տրվել է լայն սահմանմանը՝ հիմք ընդունելով ոստիկանության դիտավորությունը: Բելգիայի քրեական օրենսգրքի 442.bis հոդվածի¹⁸ ներկայիս ձևակերպման

¹⁷ Գերմանիայի քրեական օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղումով՝ www.gesetze-im-internet.de/englisch_stgb/.

¹⁸ Բելգիայի քրեական օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղումով՝ www.legislationline.org/documents/section/criminal-codes.

համաձայն՝ այն անձը, «որը հետապնդել (անհանգստացրել) է մեկ այլ անձի, այն դեպքում, երբ գիտեր կամ պետք է իմանար, որ այդպիսի վարքագիծ դրսևորելով՝ նա լրջորեն կխաթարի այդ անձի անդորրը», մեղավոր է ճանաչվում հետամտելու համար:

Ի վերջո, Դանիան ընդունել է հետամտման վերաբերյալ հետաքրքիր քրեական կարգավորում՝ համաձայն որի ոստիկանությունն անձին պատասխանատվության ենթարկվելուց առաջ անում է նախազգուշացում կամ արձակում է սահմանափակող կարգադրություն: Դանիայի քրեական օրենսգրքի 265-րդ հոդվածում¹⁹ նշվում է. «Ցանկացած անձ, ով, անտեսելով ոստիկանության կողմից արված նախազգուշացումները, խախտում է մեկ այլ անձի անդորրը՝ ներխուժելով նրա կյանք, նրան նամակներով հետապնդելով կամ համանման ձևով անհանգստություն պատճառելով, պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: Սույն դրույթով նախատեսված նախազգուշացումը գործում է 5 տարի ժամկետով»:²⁰

Հայաստանի առնչությամբ առաջարկվում է հետևյալ լուծումը. ՀՀ քրեական օրենսգրքում և դրա նախագծում քրեականացնել հետևյալ արարքը. «Հետամտումը՝ անձի նկատմամբ պարբերաբար կատարվող սպառնալից գործողությունները, որոնք դրսևորվում են մտերիմ հարաբերություններին ձգտելով, հեռահաղորդակցության միջոցներ կամ հաղորդակցության այլ միջոցներ օգտագործելով շփում հաստատելով, ապրանքներ կամ ծառայություններ պատվիրելու նպատակով նրա անձնական տվյալներն առանց անձի համաձայնության օգտագործելով, անձի կամ նրա մերձավոր անձանց ֆիզիկական անձեռնմխելիությանը, ֆիզիկական առողջությանը կամ ազատությանն ուղղված սպառնալիքներ հնչեցնելով, եթե այդ անձի մոտ վախ է առաջանում սեփական անվտանգության համար»: Առաջարկվող ձևակերպումը հնարավորինս ներառում է հետամտման բոլոր դրսևորումները՝ ձգտելով համապարփակ սահմանել այս արարքը:

Հարկադիր ամուսնության, կանանց սեռական օրգանների խեղման, արբորտ կատարելուն կամ ստերջացնելուն հարկադրելու սահմանումներ չեն առաջարկվում, քանի որ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան

¹⁹ Դանիայի քրեական օրենսգրքը հասանելի է հետևյալ հղումով՝ www.legislationline.org/documents/section/criminal-codes.

²⁰ Մանրամասն տե՛ս նաև՝ Ման Լ., Մարգայան Լ. Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը, Երևան, 2018:

բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին ԵՖ կոնվենցիայի 37-39-րդ հոդվածներում ներկայացված սահմանումները կարող են ուղղակի ամրագրվել ՀՀ օրենսդրության մեջ՝ կիրառվող եզրույթների համահունչությունն ապահովելով:

Սեռական հետամտման սահմանումը կարող է ածանցվի հետամտման սահմանումից՝ հատուկ շեշտելով սեռական շարժառիթի առկայությունը:

Ամփոփելով սույն հոդվածը՝ կարելի է նշել հիմնական հետևյալ երկու առաջարկությունները՝

1. ի թիվս քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող այլ հանգամանքների՝ թե՛ ՀՀ քրեական օրենսգրքում, թե՛ դրա նախագծում նախատեսել նաև հանցանքը մերձավոր ազգականի կողմից կատարելը,
2. թե՛ ՀՀ քրեական օրենսգրքում, թե՛ դրա նախագծում քրեականացնել հետևյալ արարքները՝ հետամտումը, հարկադիր ամուսնությունը, կանանց սեռական օրգանների խեղումը, արորտ կատարելուն կամ ստերջացնելուն հարկադրելը, սեռական հետամտումը (սահմանումները ձևավորելով՝ հաշվի առնելով վերը նշված սահմանումները և չափորոշիչները):

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КРИМИНАЛИЗАЦИИ НАСИЛИЯ В СЕМЬЕ

Тумасян Давид

*Преподаватель кафедры уголовного права
и криминологии Образовательного комплекса
полиции РА, кандидат юридических наук, доцент*

В данной статье автор касается вопросов насилия в семье в международном и национальном законодательствах. В результате анализа положений действующего Уголовного кодекса РА и соответствующего законопроекта предлагается одновременно реализовать следующие действия: криминализовать такие деяния, как преследование, насильственный аборт, насильственная стерилизация и т.д., которые не являются преступлением в соответствии с действующим законодательством РА, а также указать «совершение преступле-

ния близким родственником», как отягчающее уголовную ответственность и наказание обстоятельство.

Ключевые слова: насилие, насилие в семье, криминализация, преступление, отягчающее обстоятельство, близкий родственник.

SOME ISSUES OF CRIMINALIZATION OF DOMESTIC VIOLENCE

Tumasyan Davit

*Lecturer at the Chair of Criminal Law
and Criminology, Academy of the
Educational Complex of Police of RA,
PhD in Law, Associate Professor*

The present article deals with the issue of international and national legislation on domestic violence. Based on the analysis of the provisions of the current RA Criminal Code and the relevant Draft, it is proposed to implement the following actions simultaneously: to criminalize the acts that aren't considered as crimes in accordance with the current RA legislation, such as stalking, forced abortion and forced sterilization, etc., and to indicate "the crime committed by a close relative" as an aggravating circumstance for criminal liability and punishment.

Key words: violence, domestic violence, criminalization, crime, aggravating circumstance, close relative.

Հոդվածը գրախոսվել է՝ 05.05.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 23.07.2020թ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Իսրայելյան Գևորգ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության
փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ*

Իրավունքի տարբեր սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների ու ազատությունների լիարժեք դատական պաշտպանությունն ապահովելու համար ծախսվում են զգալի ֆինանսական միջոցներ: Պետությունը շահագրգռված է արդարադատության՝ որպես պետական գործունեության յուրահատուկ տեսակի իրականացմամբ: Միաժամանակ, դրանում հետաքրքրված են նաև դատական պաշտպանություն հայցող անձինք: Այդ պատճառով էլ արդարադատության իրականացմանն ուղղված ծախսերի մի մասը կրելու պարտականությունն օրենքը դրել է նշված անձանց վրա¹:

Դատական ծախսեր կատարվում են ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական դատավարությունում, սակայն ո՛չ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (ընդունվել է 09.02.2018թ., ՀՕ-110-Ն ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208, այսուհետ՝ ՔԴՕ), ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (ընդունվել է 05.12.2013թ., ՀՕ-139-Ն ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1, այսուհետ՝ ՎԴՕ) չեն սահմանում դատական ծախսերի հասկացությունը: Օրենսդրության և մասնագիտական գրականության² համեմատական վերլու-

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն /Ռ.Գ. Պետրոսյան (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ. Զ. Թադևոսյան խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն. - Եր., Ոսկան Երևանցի, 2012, էջ 202:

² Տե՛ս օրինակ **Իսրայելյան Գ.Վ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության իրավունք: Ընդհանուր մաս: Դասախոսությունների և թեստերի ժողովածու: Երևան, Աստղիկ Գրատուն, 2018, էջեր 116-122, **Акулова М.О.** Судебные расходы по законодательству РФ. Дисс. ... канд. юрид. наук. Томск, 2017, էջեր 7-10, **Скобелев В.П.** Судебные расходы по гражданским и экономическим делам //

ծության հիման վրա դատական ծախսերը կարելի է բնորոշել որպես գործի հարուցման, քննության և լուծման, ինչպես նաև դատական ակտերի վերանայման առնչությամբ դատարանի, գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կատարած ծախսեր, որոնց փոխհատուցման պարտականությունը սահմանված է դատավարական օրենսդրությամբ:

ՔԴՕ 101-րդ և ՎԴՕ 56-րդ հոդվածները միատեսակորեն սահմանում են, որ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունվել է 27.12.1997թ., ՀՕ-186 ՀՀՊՏ 1998.01.11/1, այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը սահմանում է, որ պետական տուրքը, պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող օրենքով սահմանված պարտադիր վճար է: Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքը գանձվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանից փաստաթղթերի պատճեններ ստանալու համար, Մահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների համար և այլ դեպքերում: Ըստ այդմ, քաղաքացիական և վարչական դատավարությունում պետական տուրքը կարելի է բնորոշել որպես դատարանի կողմից համապատասխան սուբյեկտի խնդրանքի հիման վրա որոշակի գործողությունների կատարման համար պետական բյուջե գանձվող պարտադիր վճար:

Մասնագիտական գրականության մեջ տարբերակվում է պետական տուրքի գանձման երկու հիմնական նպատակ՝ հատուցողական և կանխարգելիչ: Հատուցողական նպատակի նշանակությունը դատական համակարգի պահպանման և կանոնավոր գործունեության ապահովման համար պետության կատարած ծախսերի մի մասի վերականգնումն է, ինչպես նաև կոնկրետ գործի քննությանն ուղղված ծախսերի հատուցումը: Կանխարգելիչ նպատակի նշանակությունն է համապատասխան սուբյեկտներին՝ իրենց պարտականությունները կատարելուն հարկադրելով՝ մյուսներին կարգապահ դարձնելու համար հոգեբանորեն ներգործելը, ինչպես նաև անհիմն դատարան դի-

մեղը կամ պարտականությունների կատարումից անհիմն խուսափելը կանխելը³: Նման դիրքորոշում է արտահայտել նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը, որը 2018 թվականի հուլիսի 10-ի՝ Կարեն Ավագյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՄԴՈ-1423 որոշման մեջ նշում է. «...Ելնելով այդ վճարի՝ օրենքով որոշված իրավական բովանդակությունից և նպատակային նշանակությունից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասամբ նախականիլ ալկոհոլի անհիմն հայցադիմումների հոսքը՝ նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը և թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը»:

Իրավակիրառ պրակտիկայում երբեմն անհրաժեշտություն է առաջանում վերադարձնել վճարված պետական տուրքը համապատասխան սուբյեկտին: Պետական տուրքի վերադարձման հիմքերը սահմանված են Օրենքի 38-րդ հոդվածում: Մասնավորապես, պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ.

1) եթե պետական տուրքը վճարվել է ավել, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ,

2) Սահմանադրական դատարանի կողմից դիմումը վերադարձնելու, գործի քննությունը մերժելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում,

3) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձվելու կամ դրանց ընդունումը մերժվելու, ինչպես նաև նոտարի կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժվելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցումը և ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատա-

³ Մանրամասն տե՛ս **Իսրայելյան Գ.Վ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության իրավունք: Ընդհանուր և հատուկ մասեր: Ուսումնական ձեռնարկ: Երևան, Աստղիկ Գրատուն, 2014, էջեր 74-75:

րումը մերժվելու դեպքում՝ բացառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի, որը կքննարկվի ստորև,

4) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը,

5) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը գանձել է պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետևանքով պակասել է հայցի ընդհանուր գինը,

6) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում,

7) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ,

8) մինչև համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն սկսվել է տևական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը, ինչպես նաև Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին կետի 5.1-ին⁴ և 11.1-ին⁵ ենթակետերով սահմանված գործունեության իրավունք ձեռք բերելու համար վճարված պետական տուրքը,

9) անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության ակտի գրանցման փոխարեն մուծված պե-

⁴ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» դասակարգչի 220820 ծածկագրին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող սպիրտային թրմօղիների արտադրության իրականացման և մինչև 100 հազար լիտր (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) արտադրանքի իրացման իրավունք:

⁵ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» դասակարգչի 220820 ծածկագրին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող սպիրտային թրմօղիների մինչև 100 հազար լիտր (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման իրավունք:

տական տուրքը, եթե գրանցումը չի կատարվել ամուսինների հաշտվելու կամ նրանցից որևէ մեկի չներկայանալու պատճառով,

10) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով վավերացված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին վկայականները և այլ փաստաթղթերը դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում,

11) արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերով փորձաքննության կայացրած որոշումը բողոքարկման խորհրդի կամ դատարանի կողմից անվավեր ճանաչելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է փորձաքննության որոշումն ընդունումից հետո ի հայտ եկած նոր հանգամանքների հիմքերով,

12) Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթեր ստանալու համար քաղաքացիների վճարած պետական տուրքերը՝ մինչև մեկնելու թույլտվություն ստանալն արտասահման մեկնելուց հրաժարվելու դեպքում:

Ինչպես իրավացիորեն նշում է Տ. Մարկոսյանը⁶, պետական տուրքի վերադարձման հիմքերի ուսումնասիրությունը փաստում է նա մեկ հիմքի ներդրման անհրաժեշտությունն այն դեպքերում, երբ օրենքի ուժով պետական տուրքից ազատված գործերով պատասխանողը բողոքարկման կապակցությամբ վճարում է պետական տուրք, և հայցը մերժվում է, իսկ հայցվորն ի սկզբանե պետական տուրքից ազատված լինելու արտոնության ուժով ազատվում է նաև պատասխանողի կողմից վճարված տուրքի գումարը փախհատուցելու պարտականությունից: Սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի գծով արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը, որը չի կարող ներառել այդ արտոնությամբ նախատեսված պետական տուրքի վճարը»: Այլ

⁶ Մանրամասն տե՛ս **Մարկոսյան Տ.Ա.**, Դատական ծախսերը քաղաքացիական դատավարությունում: Գիտագործնական ձեռնարկ - Եր., Արդարադատության ակադեմիա, էջ 22:

կերպ ասած՝ դատավարության այն մասնակիցը, ով իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի վճարման արտոնությունից և դատավարության արդյունքում պարտվել, կայացված դատական ակտով կարող է կրել դատական ծախսերն օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականությունը՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը: Նման դեպքում պետական տուրքը կամ դրա մի մասը վերադարձվում է այն վճարած հաղթանակած սուբյեկտին:

Օրենսդրությունը սահմանում է նաև այն դեպքերը, երբ պետական տուրքը չի վերադարձվում: Այսպես.

1. ՔԴՕ 103-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պետական տուրքը ենթակա չէ վերադարձման, եթե գործի քննության ընթացքում հայցվորը հայցի առարկան այնպես է փոփոխել, որ առաջացել է պետական տուրքի ավել վճարված մաս:

2. Օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վճռաբեկ բողոքի ընդունումը մերժվելու դեպքում պետական տուրքը չի վերադարձվում ոչ ավել, քան քսան հազար ՀՀ դրամի չափով: Օրենքի այս կարգավորումը մնում է անկատար բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքին կցվում է ոչ թե պետական տուրքը վճարելու անդորրագիրը, այլ պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին միջնորդություն: Հետևաբար, խնդրի լուծման տարբերակ կարող է լինել վճռաբեկ բողոքի ընդունումը մերժվելու դեպքում այդ ակտով բողոք բերող անձից համապատասխան չափով պետական տուրք գանձելու հնարավորության ամրագրումը⁷:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՎԴՕ՝ «Դատական ծախսեր» վերտառությամբ 10-րդ գլխում պետական տուրքի վերադարձի վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չէ:

Այսպես՝ ՎԴՕ 57-րդ հոդվածը սահմանում է. «Պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»: Նշված խնդիրը չի կարող լուծվել քաղաքացիական դատավարության համապատասխան նորմերի կիրառությամբ, քանի որ ՎԴՕ 2-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է. «Վարչական դատավարու-

⁷ Տե՛ս նույն տեղում:

յան կարգը սահմանվում է սույն օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության ղատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Կարծում ենք, որ մատնանշված օրենսդրական բացը կարող է հարթվել ՎԴՕ-ում համապատասխան լրացում կատարելով: Առաջարկում ենք ՎԴՕ-ը լրացնել հետևյալ հոդվածով.

«Հոդված 57.1. Պետական տուրքը վերադարձնելը

Պետական տուրքը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները, որքանով դրանք չեն հակասում վարչական դատավարության էությանը»:

ՔԴՕ 103-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերի առկայության դեպքում դատարանը պարտավոր է դատական ակտում նշել պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հիմք հանդիսացած հանգամանքները: Այս առումով հստակեցման կարիք ունի այն հարցը, թե որ դատական ակտում և ինչպես պետք է նշվի պետական տուրքի վերադարձման հիմքերը, քանի որ դատական պրակտիկայում հարցի վերաբերյալ առկա են տարատեսակ մոտեցումներ: Այսպես՝ մի դեպքում դատարանները պետական տուրքի վերադարձման հիմքերին անդրադառնում են միայն դատական ակտի պատճառաբանական մասում, մեկ այլ դեպքում՝ դրանք համապատասխանաբար նշվում են պատճառաբանական և եզրափակիչ մասերում, երրորդ դեպքում՝ այդ հարցը լուծվում է առանձին դատական ակտով: Համակարծիք ենք Տ. Մարկոսյանի հետ, ով նշում է, որ պետական տուրքի վերադարձման հիմքերի քննարկման հարցերը՝ որպես դատական ծախսերի բաշխման գործունեության բաղկացուցիչ մաս, պետք է լուծվեն բացառապես եզրափակիչ ակտերով կամ լրացուցիչ վճռով, քանի որ այս ակտերով է օրենսդիրը նախատեսել դատական ծախսերի բաշխման հարցի լուծումը: Ընդ որում՝ նույն տրամաբանությամբ ասվածը ենթադրում է պետական տուրքի վերադարձման հարցին անդրադարձ ինչպես դատական ակտի պատճառաբանական, այնպես էլ՝ եզրափակիչ մասերում⁸:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջեր 23-24:

Պետական տուրքի վերադարձման կարգը սահմանված է Օրենքի 39-րդ հոդվածում: Պետական տուրքը վերադարձվում է այն վճարողի կողմից Ֆինանսների նախարարություն ներկայացված դիմումի հիման վրա, որին կցվում է դատարանի տրված տեղեկանքը՝ պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հանգամանքների հիմնավորման վերաբերյալ, ինչպես նաև՝ պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը: Ակնհայտ է, որ համապատասխան դատական ակտ կայացվելու դեպքում վերը հիշատակված տեղեկանքի ներկայացման պահանջն ավելորդ բեռ է շահագրգիռ սուբյեկտի համար: Ուստի, նման տեղեկանքի ներկայացման կարգավորումն ունի փոփոխության կարիք:

Վերը նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է պետական տուրքը վերադարձնելու վաղեմության ժամկետը: Մասնավորապես, պետական տուրքը վերադարձվում է դիմումը և պահանջվող փաստաթղթերն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում, եթե դիմումը ներկայացվելու օրվա դրությամբ չի անցել պետական տուրքը կամ դրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարի:

Այսպիսով, դատավարական իմաստով պետական տուրքը, դատարանի լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, որոշակի ծառայությունների կամ գործողությունների, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ տալու համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է: Օրենքով նախատեսված հիմքերով և կարգով վճարված պետական տուրքը կամ դրա մի մասը ենթակա է վերադարձման: Մեր կողմից առաջարկվող օրենսդրական փոփոխությունները և լրացումները հնարավորություն կտան ամբողջացնել պետական տուրքի վերադարձման հիմքերը, արդյունավետ դարձնել տուրքի վերադարձի գործընթացը, ընդհանուր առմամբ՝ կատարելագործել քննարկվող խնդրի իրավական կանոնակարգումը:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИНСТИТУТА ВОЗВРАТА ГОСУДАРСТВЕННОЙ ПОШЛИНЫ В ГРАЖДАНСКОМ И АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

Исраелян Геворг Воваевич

*Начальник кафедры гражданского права и
гражданского процесса Академии
Образовательного комплекса полиции РА,
подполковник полиции, кандидат
юридических наук, доцент*

Статья посвящена анализу оснований и порядка возврата государственной пошлины по гражданским и административным судебным делам. Автор указывает на некоторые недостатки в процессе возврата пошлины, а также на отсутствие данного института в Административном процессуальном кодексе РА. В соответствии с вышеуказанным, автор предлагает ввести соответствующие изменения и дополнения в гражданско-процессуальное и административно-процессуальное законодательство, с целью совершенствования правового регулирования института возврата государственной пошлины.

Ключевые слова: возврат, государственная пошлина, гражданское судопроизводство, административное судопроизводство.

SOME ISSUES OF THE INSTITUTE OF STATE DUTY REFUND IN CIVIL AND ADMINISTRATIVE PROCEEDINGS

Israyelyan Gevorg

*Head of the Chair of Civil Law and Civil Procedure,
Academy of the Educational Complex of Police of RA
Police Lieutenant Colonel, PhD in Law, Associate Professor*

The current article analyses the grounds and procedure of state duty refund in civil and administrative court cases. The author points out some shortcomings of the process of duty refund, as well as the absence of this institute in the RA

Administrative Procedure Code. In this regard, the author proposes appropriate amendments to the civil procedural and administrative procedural legislation in order to improve the legal regulation of the institute of state duty refund.

Key words: refund, state duty, civil proceedings, administrative proceedings.

Հոդվածը գրախոսվել է՝ 31.08.2020թ.

Ներկայացվել է տպագրության՝ 10.09.2020թ.

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Կարապետյան Էլյա

*ՀՀ ոստիկանության շտաբի
միջազգային համագործակցության
վարչության ավագ տեսուչ*

Հակոբյան Սամվել

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի վճարովի
ուսուցման 4-րդ կուրսի սովորող*

Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքները պաշտպանված են թե՛ ներպետական, թե՛ միջազգային մակարդակով: Միջազգային իրավական փաստաթղթերից են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և այլն:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, հիմնվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վրա, սահմանում է երեխայի իրավունքների պաշտպանության գործում երեխայի իրավունքները, պետության և նրա համապատասխան մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների պարտավորությունները:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը՝ որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների պաշտպանությունը և ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանիքում երեխայի դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից:¹

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 546:

Չնայած երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա վերնոշյալ իրավական մի շարք փաստաթղթերի առկայությանը՝ մենք շարունակում ենք բախվել երեխաների իրավունքների խախտումների մասին վկայող բազմաթիվ փաստերի:

Ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի վիճակագրության՝ 2010-2019թթ. ՀՀ-ում գրանցված հանցագործությունների 1-2% դեպքերում տուժողները եղել են երեխաներ (Աղյուսակ 1):

Տարիներ	ՀՀ-ում գրանցված հանցագործությունների քանակ	Հանցագործություններ, որոնց դեպքում տուժողը անչափահաս է	Երեխաների շահերի դեմ ուղղված հանցագործությունների քանակ
2010	15477	275 / 1,8%	37 / 0,24%
2011	16572	262 / 1,6%	30 / 0.18%
2012	15776	293 / 1.9%	28 / 0.18%
2013	18333	362 / 2%	25 / 0.13%
2014	17546	289 / 1,6%	15 / 0.08%
2015	17043	310 / 1.8%	15 / 0.09%
2016	18764	277 / 1,5%	7 / 0.03%
2017	20284	307 / 1,5%	20 / 0.1%
2018	24678	257 / 1,04%	19 / 0.8%
2019	26850	258 / 1%	41 / 0,15%

Աղյուսակ 1. Հանցագործություններ, որոնց դեպքում տուժողն անչափահաս է (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի 2010-2019թթ. վիճակագրության):

Անչափահաս տուժողների դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում գերակշռում են ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներով նախատեսված արարքները՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը (117), ծեծը (118), բժշկական օգնություն և սպասարկում

իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (130), բռնաբարությունը (138), սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (139), սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ (141), անառակաբարո գործողությունները (142), ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (242):

2010-2019թթ. ընթացքում անչափահասները հիմնականում տուժել են հետևյալ հանցավոր ոտնձգություններից՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՔՕ հոդված 242)՝ միջինում 23,23%, ծեծը (ՔՕ հոդված 118)՝ միջինում 20,33% և տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերությունը կամ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողությունները (ՔՕ հոդված 141)՝ միջինում 15,82% (Աղյուսակ 2):

	2010		2011		2012		2013		2014		2015		2016		2017		2018		2019	
	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Հոդված 117	16	5,8	19	7,2	19	6,4	21	5,9	12	4,2	17	5,5	13	7,7	12	3,9	14	5,4	9	3,5
Հոդված 118	54	19,6	46	17,5	53	18	85	23,5	74	25,6	63	20,3	60	21,7	67	21,8	46	17,9	45	17,4
Հոդված 130	2	0,7	6	2,3	0	0	5	1,4	12	4,2	10	3,2	13	4,7	18	5,9	31	12	14	5,4
Հոդված 138	1	0,3	5	1,9	6	2	3	0,9	5	1,7	12	3,9	5	1,8	9	2,9	4	1,6	2	0,8
Հոդված 139	6	2,2	7	2,6	8	2,7	9	0,3	2	0,7	15	4,8	6	2,2	7	2,3	13	5	4	1,6

Հոդված 141	46	16,7	36	13,7	61	20,8	64	17,4	53	18,3	41	13,2	55	19,9	47	15,3	26	10,1	32	12,8
Հոդված 142	7	2,5	5	1,9	7	2,4	13	3,6	6	2	14	4,5	11	4,0	9	2,9	7	2,7	19	7,4
Հոդված 242	65	23,6	65	24,8	62	21,2	85	23,5	75	26	63	20,3	48	17,3	70	22,8	65	25,3	71	27,5
Հանցագործություններ, որոնց դեպքում տուժողն անչափահաս է	275	262	293	362	289	310	277	307	257	258										

Աղյուսակ 2. 2010-2019թթ. ՀՀ-ում հանցավորության կառուցվածքը, որոնց դեպքում տուժողը եղել է անչափահաս:

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են երեխաների նկատմամբ բռնության առկայության մասին: Պետք է հավելել նաև, որ այս վիճակագրությունը, սակայն, չի կարող արտահայտել երեխաների դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների իրական պատկերը՝ պայմանավորված անչափահասի տարիքային, հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկություններով, ինչի արդյունքում համապատասխան դեպքերը հաճախ չեն հաղորդվում և չեն գրանցվում²:

Երեխաների նկատմամբ բռնության վտանգավորության ամենաբարձր աստիճանը բնորոշ է ընտանիքում բռնությանը: Այս դեպքերի թիվն աճում է ամբողջ աշխարհում: Վիճակագրական տվյալները փաստում են, որ յուրաքանչյուր 5 տարին 1 աշխարհում ընտանեկան բռնությունների արդյունքում

² Ст'ю Прозументов Л.М. «Некоторые проблемы уголовно-правового регулирования защиты прав несовершеннолетних», Вестник Томского государственного университета, Томск, 2011г., էջ. 100

մահանում են շուրջ 2000-3000 երեխաներ, ամեն օր տնից փախչում է մոտ 100.000 երեխա, իսկ տարվա ընթացքում երեխաների շրջանում ինքնասպանություն կատարելու փորձերի քանակը հասնում է 2000-ի:³

Հայաստանում ևս ընտանիքում երեխաների նկատմամբ բռնությունը կարևորագույն հիմնախնդիր է: ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում գրանցված ընտանեկան բռնության դեպքերում երեխա տուժողները վերջին տարում ավելացել են (Աղյուսակ 3):

Տարի		2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Գրանցված ընտանեկան բռնություններ		442	677	769	731	679	785	749	771	682	471
Որից տուժողներն անչափահաս են	թիվ	9	14	13	22	10	22	12	18	4	16

Աղյուսակ 3. 2010-2019թթ. ընթացքում ՀՀ-ում գրանցված ընտանեկան բռնության դեպքերն ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի:

Ընտանիքում բռնության ենթարկված երեխաների թիվն իրականում ավելի մեծ է: Դրա մասին են վկայում Հայաստանում իրականացված հետազոտությունները: Պատճառներից մեկն այն է, որ երեխաները, պայմանավորված իրենց տարիքային առանձնահատկություններով, չեն գիտակցում իրենց նկատմամբ իրականացվող հանցավոր արարքների վտանգավոր բնույթը: Այլ պատճառ կարող է լինել տեղեկացվածության պակասը. ի՞նչ կարող են անել երեխաներն ընտանիքում բռնության ենթարկվելու դեպքում:

Երեխաների շահերի պաշտպանության շրջանակներում ՀՀ-ում անցկացվող մի շարք հետազոտություններ, ի տարբերություն պաշտոնական վիճակագրության, այլ արդյունքներ են տալիս: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համատեղ «Բնակչության և զարգացման ռազմավարություններ» ծրագրի շրջանակում 2006թ. ընթացքում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ համատեղ իրականացրել է «Ընտանիք» ինստիտուտի ընտրանքային հետազոտություն, որի արդյունքները հաստատում են հայկական որոշ

³ <https://enlightngo.org/post/967>

ընտանիքներում երեխաների նկատմամբ բռնության և դաժան վերաբերմունքի առկայությունը⁴:

Մեկ այլ հետազոտություն, որն անցկացվել է 2014թ. Հասոնիայի կանանց ուսումնասիրությունների և հետազոտությունների կենտրոնի (ENUT) և «Հույս և օգնություն» ՀԿ-ի կողմից համատեղ իրականացվող «Երեխաների պաշտպանություն բռնությունից գիտելիքների ամրապնդման և լավագույն փորձի միջոցով» ծրագրի շրջանակում, փաստում է, որ ընտանիքում երեխաները ենթարկվում են ծեծի կամ ծեծին հավասարագոր այլ բռնի գործողությունների, հարկադիր աշխատանքի, սեռական բռնության, ֆիզիկական բռնության, ապտակի և հրմշտոցի, հոգեբանական բռնության և այլն⁵:

Իսկ ինչ ենք հասկանում բռնություն ասելով: Նախ նշենք, որ ինչպես միջազգային, այնպես էլ հայաստանյան օրենսդրությունում օգտագործվում է «երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունք» հասկացությունը: Դրա էությունն ընդհանուր գծերով բացահայտված է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, ՀՀ ընտանեկան օրենսգրքում, ՀՀ քրեական օրենսգրքում և այլ փաստաթղթերում: Սակայն ոչ մի իրավական ակտում սպառնիչ չի սահմանվում, թե երեխայի նկատմամբ հատկապես ո՞ր վերաբերմունքը կարելի է համարել դաժան:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքը (child maltreatment) սահմանում է 18 տարին չըրացած անձանց նկատմամբ բռնությունը և անտեսումը: Այն ներառում է ֆիզիկական և հուզական, սեռական բռնությունը, անտեսումը, անփութությունը, առևտրային կամ այլ շահագործումը, ինչի արդյունքում վնաս է պատճառվում երեխայի առողջությանը, գոյատևմանը, բնականոն զարգացմանը կամ արժանապատվությանը, սոցիալական հարաբերություններում պատասխանատվությանը և վստահությանը⁶:

⁴ ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման Հավելված 1, «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգ», էջ 3 https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/12/51-2_1ardz.pdf

⁵ Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում. հետազոտության արդյունքների վերլուծության հաշվետվություն <http://hopehelp.am/files/pdfs/violence%20against%20children%20in%20the%20republic%20of%20armenia.pdf>, էջեր 21, 30, 32, 34, 84:

⁶ Child maltreatment <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/child-maltreatment>

Երեխաների նկատմամբ բռնությունը սահմանվում է որպես ընտանեկան բռնության մի մաս: Ընտանեկան բռնությունն իրավաբանները սահմանում են որպես «հուզական, ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնություն մի ամուսնու կողմից մյուսի, նախկին ամուսնու, կողակցի, նախկին կողակցի կամ ծնողի կողմից երեխայի նկատմամբ: Բռնությունը ներառում է սպառնալիք, ցավ, վնասվածք, ոտնձգություն, հսկողություն, կյանքի կամ սեփականության վնաս կամ ահաբեկում»⁷:

Ընտանիքում երեխաների նկատմամբ բռնության հետևյալ ձևերն են իրագործվում.

- **Բռնություն մոր կողմից կերակրվող երեխաների նկատմամբ:** Բռնության այս տեսակը կարող է երեխայի առողջությանը վնաս պատճառել, անգամ՝ հանգեցնել մահվան: Մայրը կարող է նույնիսկ չիմանալ, որ երեխային թափահարելը կարող է ուղեղի վնասվածք առաջացնել կամ հանգեցնել մահվան:

- **Ֆիզիկական բռնություն:** Շատ դեպքերում երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնությունը չի առաջացնում ծանր վնասվածքներ և, հետևաբար, չի հանգեցնում մահվան: Սովորաբար այն կիրառում են, որպեսզի ստիպեն երեխային համապատասխան վարքագիծ դրսևորել:

- **Հուզական բռնություն:** Երեխաներին պատժելու համար ընտանիքում ֆիզիկական բռնությունից բացի կիրառվում է հուզական բռնություն՝ սպառնալիք, մեկուսացում, մերժում և այլն:

- **Անտեսում:** Այս դեպքում ծնողները չեն ապահովում համապատասխան ուշադրություն երեխայի անվտանգ և առողջ զարգացման համար, չեն պաշտպանում նրանց սպառնալիքներից:

- **Սեռական բռնություն:** Երեխաների նկատմամբ իրականացվում են սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կամ բռնաբարություն:

- **Վաղ ամուսնություն:** Ամբողջ աշխարհում 82 միլիոն աղջիկ ամուսնանում է 18 տարին չլրացած: Նրանցից շատերին ստիպում են ամուսնանալ վաղ տարիքում տարիքով մեծ տղամարդկանց հետ: Այս դեպքում նրանք կարող են ենթարկվել բռնության, այդ թվում՝ սեռական:

- **Խեղաթյուրված ավանդական պրակտիկա:** Որոշ ավանդական ծիսա-

⁷ Domestic Violence: A Reference Handbook. Edition: 2nd. Contributors: Margi Laird McCue - Author. Publisher: ABC-Clío. Place of publication: Santa Barbara, CA. Publication year: 2008. Page number: 3

կարգեր, որոնք ուղեկցվում են բռնությամբ, այդ թվում՝

- Կանանց սեռական օրգանների խեղում (կանանց թլպատում)
- Մարմնի ձևավորման նպատակով այրվածքների և սպիների առաջացում,
- Բռնության գործադրմամբ ծեսեր, որոնց նպատակն է ստիպել երեխաներին կատարել գործողություններ, որի արդյունքում նրանք կհամարվեն հասուն,
- Պատվի սպանություններ, ընտանիքում հայրը ստիպում է աղջկան սպանել մորը, որը արտամուսնական կապի մեջ է եղել,
- Երեխաները մեղադրվում են կախարդության մեջ, կամ նրանք դառնում են կախարդությունների զոհ:

• **Ընտանեկան բռնություն:** Շատ երեխաներ ընտանիքում բախվում են ծնողների միջև բռնության, որը ևս ազդում է նրանց զարգացման վրա⁸:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածն ընտանիքում բռնությունը սահմանում է որպես ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարք, ինչպես նաև անտեսում, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի արդյունքում ծնողներին կամ պատասխանատու անձանց կարող են.

1. Զրկել ծնողական իրավունքներից (ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 59)
2. Սահմանափակել ծնողական իրավունքները (ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 63)
3. Ենթարկել վարչական պատասխանատվության (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 178)
4. Ենթարկել քրեական պատասխանատվության (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 170)

ՀՀ քրեական օրենսգիրքը 170-րդ հոդվածով սահմանում է պատասխա-

⁸«Доклад об исследовании по вопросам насилия (версия для молодежи) ООН» <https://www.un.org/ru/rights/protectedfromviolence/ch3.shtml>

նատվություն՝ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Ըստ հոդվածի առաջին մասի՝ ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականություն, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն առաջացրել է երեխայի իրավունքների և օրինական շահերի էական խախտում, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ եթե նույն արարքը զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի վիճակագրության՝ ՀՀ ՔՕ 170-րդ հոդվածի շրջանակներում 2019թ. գրանցվել է 3 դեպք (նախորդ տարիներին՝ 2-ական դեպք): Վերոնշյալ հանցակազմի դեպքում դատական վարույթում նույն ժամանակահատվածում քննվել է երկու դեպք, որոնց դեպքում կայացվել է մեղադրական դատավճիռ և որոշվել է պատիժը պամանականորեն չկիրառել՝ հաշվի առնելով գործի մի շարք հանգամանքներ:

ՀՀ քննչական կոմիտեի հրապարակած տվյալներով՝ 2019 թվականի ընթացքում երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 294 վարույթ է ընդունվել, որից 3-ը վերաբերել են ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով նախատեսված՝ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն: Գրեթե նույն պատկերն առկա է մյուս տարիներին:

Խոսելով երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի մասին՝ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ իրավապահ մարմինների դերը վերոնշյալ խնդրի համատեքստում գլխադասային է, քանի որ ընտանեկան

բռնության դեմ պայքարում վերջիններս օժտված են լայն լիազորություններով: Ինչպես ցույց է տալիս միջազգային դատական պրակտիկան, հաճախ իրավապահ մարմինների անգործության պատճառով երեխաների նկատմամբ ընտանեկան բռնությունները չեն կանխվում: Օրինակ՝ Բոնարարի նկատմամբ իրականացված քրեական վարույթը ձգձգվել էր, և գործը չէր քննվել ողջամիտ ժամկետում, ինչն էլ առաջացրել էր ՄԻԵԿ 3-րդ հոդվածով պետության վրա դրված պոզիտիվ պարտավորությունների (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք) խախտում:⁹

Ներպետական իրավակարգավորումները երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման համատեքստում ևս քիչ չեն:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարող ենք ասել, որ ընտանիքում երեխաների նկատմամբ բռնությունը ներկայումս համարվում է նշանակալի և սուր հիմնախնդիր Հայաստանում, և երեխաների նկատմամբ բռնի հանցավարության պատճառականությունը պետք է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝ հաշվի առնելով ինչպես ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական, բարոյական, քաղաքական, այնպես էլ հասարակության կենսագործունեության այն պայմանները, որոնք այս կամ այն կերպ ազդում են ընտանիքում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի ավելացմանը:

НАСИЛИЕ НАД ДЕТЬМИ В СЕМЬЕ

Карапетян Эля Грайровна

Старший инспектор управления

международного сотрудничества

Штаба полиции РА, аспирант

Образовательного комплекса полиции РА

Акопян Самвел Ваграмович

Студент 4-го курса Академии

Образовательного комплекса

полиции Республики Армения

Работа посвящена вопросам насилия по отношению к детям, осуществляющегося в семье, выявлению правовых аспектов этой проблемы, сопоставлению статистических данных и латентности.

Внутригосударственные и международные акты, направленные на пре-

⁹Տե՛ս D.P. ընդդ. Լիտվայի (թիվ 27920/08) 22 հոկտեմբեր, 2013թ., D.M.D. ընդդ. Ռումինիայի (թիվ 23022/13) 3 հոկտեմբեր, 2017 թ.

дотвращение насилия над детьми в семье, свидетельствуют о тенденциях урегулирования вышеуказанной проблемы.

Ключевые слова: семья, насилие, ребенок, насильник, ответственность, право.

VIOLENCE AGAINST CHILDREN WITHIN THE FAMILY

Karapetyan Elya

*Senior Inspector at the Department of
International Cooperation,
Headquarters of RA Police,
PhD Student at the Educational Complex
of Police of RA*

Hakobyan Samvel

*Undergraduate at the Academy of the
Educational Complex of Police of RA*

The present article focuses on the study of violence against children within the family with reference to the identification of legal aspects of this problem and the comparison of statistical data and latency.

Governmental and international acts aimed at preventing violence against children within the family prove the tendency towards the solution to the above mentioned problem.

Key word: family, violence, child, abuser, liability, right.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.10.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 02.10.2020թ.

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ (ԽՈՐՀՐԴԱՅԻՆ և ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ)
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԼՐԱՑՆՈՂ»
ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

Ղազարյան Արտակ

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի քրեական դատավարության
ամբիոնի ավագ դասախոս*

Եթե «հիմնական» մասնավոր մեղադրանքի դեպքում քրեական հետապնդման տնօրինումը վերապահվում է (կամ կախվածության մեջ է դրվում) ենթադրյալ հանցագործությունից տուժողից (նրա մերձավոր ազգականներից), ապա «լրացնող» մասնավոր մեղադրանքի դեպքում հարցը տրամադորեն այլ կերպ է լուծվում՝ «հիմնական» քրեական հետապնդումն իրականացվում է հանրային (պետական) մեղադրանքի կարգով, իսկ հանցագործությունից տուժած անձն իր մեղադրական գործունեությամբ **միայն** լրացնում, օժանդակում է հանրային (պետական) մեղադրանքի իրացմանը՝ գտնվելով հանրային (պետական) մեղադրանքից կախվածության (ստորադասության) մեջ:

Այդ կախվածությունից (ստորադասությունից) բխում են մի շարք կարևոր հետևություններ. նախ՝ «լրացնող» մասնավոր մեղադրանքը կարող է ծագել այն ժամանակ, երբ ծագել է հանրային (պետական) մեղադրանքը: Ըստ այդմ՝ բացառվում է «լրացնող» մասնավոր մեղադրանքի ժամանակային առումով ավելի վաղ ծագելը:

Եվ երկրորդ՝ այն դադարում է հանրային (պետական) մեղադրանքի դարեցմամբ:

Ընդհանրացնելով՝ կարող ենք «լրացնող» բնորոշել այն մասնավոր մեղադրանքը, որը ծագում, իրացվում և դադարում է «հիմնական» հանրային (պետական) մեղադրանքին զուգահեռ և գտնվում է նրանից կախվածության (ստորադասության) մեջ¹:

¹ «Լրացնող» մասնավոր մեղադրանքի այսպիսի ընկալմանը մոտ տեսակետ արտահայտվել է ինչպես նախկինում, (տե՛ս, օրինակ, **Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том II (издание 3-е, пересмотренное и дополненное). - С.-Петербург,

«Լրացնող» մասնավոր մեղադրանքը շատ վաղուց տեղ է գտել մայրցամաքային քրեադատավարական համակարգին պատկանող երկրներում:

Ընդ որում՝ «լրացնող» մասնավոր մեղադրանքի կազմակերպումը հնարավոր է երկու ձևով՝ «լրացնող» մասնավոր մեղադրանքը սահմանափակելով որոշակի շրջանակ գործերով («սահմանափակ» «լրացնող» մեղադրանք՝ «գերմանական» մոդել) և այդպիսի մեղադրանքի հնարավորություն նախատեսելով բոլոր գործերով («անսահմանափակ» «լրացնող» մեղադրանք՝ «ֆրանսիական» մոդել):²

Ելնելով այն հանգամանքից, որ հայրենական դատավարությունը մայրցամաքային քրեադատավարական համակարգի մաս է կազմում, այստեղ նույնպես սկզբունքորեն չպետք է բացառվի «լրացնող» մասնավոր մեղադրանքը:

Հայրենական դատավարությունում «լրացնող» մասնավոր մեղադրանքի կազմակերպման հարցի հետազոտությունը կիրականացնենք խորհրդային (հետխորհրդային) դատավարությունում տուժողի կարգավիճակի հաստատման և զարգացման հարցերի քննարկմամբ՝ պատասխանելով այն հարցին, թե տուժողն ունի արդյոք այն ուղղվածության իրավունքները, որոնք նրան վերապահում են հանրային մեղադրանքի գործերով «հիմնական» հանրային (պետական) մեղադրանքին **գուգահեռ** մեղադրական գործունեություն իրականացնելու հնարավորություն. մեղադրական գործունեություն, որը լրացնում, օժանդակում է հանրային (պետական) մեղադրանքին՝ գտնվելով հանրային (պետական) մեղադրանքից կախվածության (ստորադասության) մեջ:

Сенатская типография, 1910, էջ 28,) այնպես էլ վերջերս լույս տեսած ռուսալեզու գրականության մեջ, (տե՛ս **Чигрин Д. А.** Государственное обвинение в российском уголовном процессе: проблемы формирования и поддержания (сравнительно-правовое исследование). Дисс. ...канд. юрид. наук. Уфа, 2018, էջ 54): «Լրացնող» մասնավոր մեղադրանքի վերաբերությամբ համանման քննարկում առկա է նաև գերմանական իրավունքում. տե՛ս, օրինակ, **Вернер Б.**, Уголовно-процессуальное право ФРГ: Учебник. 6-е изд., пер.с нем. Я.М. Плошкиной; Под ред. Л.В. Майоровой. – Красноярск : РУМЦЮО, 2004, էջ 333:

² Տե՛ս **Головко Л.В.** Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. 11. – М.: Правоведение, 2009, էջեր 297-299, **Трефилов А. А.** Уголовный процесс Швейцарии / Уголовный процесс зарубежных стран. Том 1. М., 2016, էջ 393:

1920-ական թվականների խորհրդային օրենսգրքերում տեղ գտած կարգավորումներ

Խորհրդային առաջին քրեական դատավարության օրենսգրքերով տուժողի դատավարական կարգավիճակը, թեև լուրջ սահմանափակումներով, այնուամենայնիվ, ամրագրվեց: Սկզբնական շրջանում (1923թ. ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքով)³ տուժողն իբրև կողմ էր դիտարկվում **միայն** մասնավոր մեղադրանքի գործերով (1923 թ. ՀԽՍՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածի 5-րդ կետ)⁴: Հենց այդ պատճառով՝ խորհրդային այդ շրջանի կարգավորումների մասին խոսելիս⁵ գիտության մեջ հնչել են դիտարկումներ՝ ըստ որի տուժողը հանրային մեղադրանքի գործերով հանդես էր գալիս «ոչ ավել, քան որպես վկա»⁶: Դատավարագետ Դ.Չեկուլանը, համադրելով 1922թ. ՌԽՖՍՀ քր. դատ. օր. և 1923 թ. ՌԽՖՍՀ քր. դատ. օր.-երում տեղ գտած տուժողի դատավարական կարգավիճակին վերաբերելի կարգավորումները, նկատում էր *տուժողի իրավունքների սահմանափակման միտումներ*: Հեղինակն արձանագրում էր, որ 1923թ. ՌԽՖՍՀ քր. դատ. օր.-ից հանվեցին քննչական գործողություններին մասնակցելու, առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ տուժողի՝ գործին ծանոթանալու և դրանից առանձին տեղեկություններ դուրսգրելու իրավունքներ վերապահող կարգավորումները⁷: Խորհրդային ժամանակների հեղինակներն իրենց հերթին, անարդար դիտարկելով տուժողի ու մեղադրյալի կարգավիճակների խիստ անհավասարությունը, նկատում էին, որ. «Տուժողը ոչ միայն կողմ չէր, այլ կարող էր հարցաքննվել ամբաստանյալի կողմից, սակայն ինքը չուներ ամբաստանյալին հարցեր առաջադրելու իրավունք, չէր կարող վերջինիս մերկացնել (հանցանքի կատարման մեջ՝ Ա.Դ.) ... դատարանում նա ժամանակի նշանակալի մասն անցկացնում էր դատական նիստի դահլիճի դռներից դուրս, իսկ իբրև վկա

³ Այսուհետ նաև՝ 1923թ. ՀԽՍՀ քր. դատ. օր.:

⁴ Համանման կարգավորում էր նախատեսվում նաև 1922թ. ՌԽՖՍՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածի 6-րդ կետով)

⁵ Խոսքը մասնավորապես 1923թ. ՌԽՖՍՀ քր. դատ. օր.-ի կարգավորումների մասին է, որը, ի տարբերություն 1922թ. ՌԽՖՍՀ կարգավորումների, էլ ավելի էր նեղացրել տուժողի իրավունքների շրջանակը հանրային մեղադրանքի գործերով:

⁶ Տե՛ս Чекулаев, Д. П. Потерпевший в уголовном судопроизводстве: доступ к правосудию и компенсация причиненного ущерба. Дисс. ... канд. юрид. наук : М.: 2005, էջ 20: Տե՛ս նաև Божьев В. П. Потерпевший в советском уголовном процессе : автореф. дис. ... канд. юрид. наук, Всесоюз. ин-т юрид. наук., М., 1963. էջ 8:

⁷ Տե՛ս Чекулаев, Д. П. նշվ. աշխ., էջ 20:

հարցաքննվելուց հետո, որպես քրեական դատավարության գործունեության մասնակից, քաղաքացիական հայցը պաշտպանելուց բացի, զրկվում էր որևէ իրավունքից»⁸:

Սակայն որքան էլ տուժողի դատավարական կարգավիճակը խորհրդային առաջին օրենսգրքերով հստակ չէր առանձնացվում, այնուամենայնիվ, վերջինս ամբողջությամբ չէր էլ հավասարեցվում վկային: Տուժողը նախաքննության ընթացքում ուներ որոշ իրավունքներ, որ չունեի վկան, օրինակ՝ վկաներ և փորձագետներ հարցաքննելու և այլ ապացույցներ հավաքելու միջնորդությամբ քննիչին դիմելու (1923թ. ՀԽՍՀ քր. Դատ. Օր. 112-րդ հոդված)⁹, իսկ դատական քննության ընթացքում՝ դատարանին «մերժելու» (մերօրյա տերմինաբանությամբ՝ ինքնաբացարկի) միջնորդություն ներկայացնելու (1923թ. ՀԽՍՀ քր. Դատ. Օր. 278-րդ հոդված) իրավունք: Հենց այս հաշվառմամբ էլ գիտության մեջ ընդգծվել է նաև վերջինիս «յուրահատուկ» վկա լինելու հանգամանքը: Այս առումով՝ տեղին են հնչում Ն. Պոլյանսկու խոսքերը. «-Տուժողը քրեական դատավարությունում վկա է, որը **օժտված է կողմի որոշակի իրավունքներով...**»¹⁰:

Հանցագործությամբ իրեն պատճառված նյութական վնասի վերականգնման համար արդեն տուժողն ստանում էր առավել լայն հնարավորություններ և իրավասու էր ներկայացնել քաղաքացիական հայց քաղաքացիական հայցվորի (1923թ. ՀԽՍՀ քր. դատ. օր-ի տերմինաբանությամբ՝ քաղաքացիական պահանջատիրոջ) կարգավիճակով, հանրային մեղադրանքի գործերով կարող էր հանդես գալ իբրև **կողմ**՝ օգտվելով իր քաղաքացիական հայցը հիմնավորելու համար օրենսգրքով նախատեսված լայն իրավունքներից (1923թ. ՀԽՍՀ քր. դատ. օր-ի 14-րդ, 15-րդ, 18-րդ հոդվածներ, 23-րդ հոդվածի 5-րդ կետ)¹¹:

⁸ Ст' у Рахунов Р.Д. Участники уголовно-процессуальной деятельности по советскому праву. М., 1961, էջեր 238-239:

⁹ Համանման կարգավորում էր նախատեսվում նաև 1923թ. ՌԽՖՍՀ քր. դատ. օր. 112-րդ հոդվածով:

¹⁰ Ст' у Полянский Н.Н. Процессуальные права потерпевшего // Советское государство и право. М., 1940. № 12., էջ 69:

¹¹ Մասնավորապես 1923թ. ՀԽՍՀ քր. դատ. օր-ով քաղաքացիական պահանջատերը (հայցվորը՝ Ա.Ղ.) ուներ դատական քննությանը մասնակցելու (1923թ. ՀԽՍՀ քր. դատ. օր. 250-րդ հոդված), դատավորին բացարկելու (մերժման) (1923թ. ՀԽՍՀ քր. դատ. օր-ի 278-րդ հոդված) վկաներ կամ փորձագետներ կանչելու, այլ ապացույցներ պահանջելու

Ամփոփելով՝ պետք է փաստենք, որ, տուժողը, հանրային մեղադրանքի գործերով գրեթե հավասարեցված լինելով վկային, չունեի այնպիսի իրավունքներ, որոնցով կարող էր մասնակցել քրեական վարույթին իբրև «լրացնող» մեղադրող: Իսկ ահա հանցագործությամբ պատճառված նյութական վնասի վերականգնման հարցում օրենսդիրը հանցանքից տուժած անձին (քաղաքացիական հայցվորի կարգավիճակում) լայն իրավունքներ էր վերապահում: Այսպիսի տարբերակումը թերևս պայմանավորված կարող էր լինել նշված ժամանակներում տեղ գտած այն ընդհանուր գիտակցումով, որ տուժողի օրինական շահերի բովանդակությունն սպառվում է պատճառված վնասի հատուցմամբ:

1960-ական թվականների խորհրդային օրենսգրքերում տեղ գտած կարգավորումներ

Հիմք ընդունելով դատավարագիտության մեջ առկա իրավացի այն պնդումը, որ տուժողի շահերը հանդիսանում են **տուժողի դատավարական կարգավիճակի հետագա բարելավման, նրա իրավունքների ընդարձակման նախադրյալ**¹², և համապատասխան մասով ուսումնասիրելով 1960-ականների խորհրդային (մասնավորապես ՀՖՍՀ և ՌՖՖՍՀ) քրեական դատավարության օրենսգրքերում տեղ գտած կարգավորումները, ժամանակի գիտական հրապարակումները, կարելի է եզրակացնել, որ արդեն այդ ժամանակներում **տուժողի օրինական շահերի ընկալման հարցում** աստիճանաբար տեղի էին ունեցել **էական փոփոխություններ**: Եթե նախկինում (1920-ականներին) շահերի ընկալումները հիմնականում սահմանափակվում էին պատճառված վնասի հատուցման տուժողի ձգտումներով, ապա քննարկվող ժամանակներում ակնհայտորեն արդեն տուժողի շահերի ընկալումները «հարստացվել էին»՝ ներառելով մասնավորապես հանցագործությունը, այն կատարած անձին բացահայտելու, հանցանքը ճիշտ որակելու, հանցանք կատարած անձի դատապարտվելու և վերջինիս նկատմամբ արդարացի պատժի նշա-

միջնորդություններ ներկայացնելու (1923թ. ՀՖՍՀ քր. դատ. օր-ի 253-րդ հոդված) , ամբաստանյալին (1923թ. ՀՖՍՀ քր. դատ. օր-ի 283-րդ հոդված), վկային հարցեր տալու (1923թ. ՀՖՍՀ քր. դատ. օր-ի 288-րդ հոդված), դատական վիճաբանություններին մասնակցելու, ճառով հանդես գալու (1923թ. ՀՖՍՀ քր. դատ. օր-ի 304-րդ հոդված) և այլ իրավունքներ:

¹² **Ս.Ա. Դիրանյան**, Տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում, ի.գ.թ. ... ասենախոսություն, Երևան, 1995, էջ 45:

նակելու տուժողի ձգտումները¹³:

Ասվածից պատկերվում է հետևյալը՝ տուժողի օրինական շահերի ընկալման փոփոխությունը, դրա «հարստացումը» ժամանակի ընթացքում հանգեցնում է նրան, որ տուժողի դատավարական կարգավիճակը «հարստացվում է» տուժողի շահերի շրջանակում ներառված նրա այդ «նոր» ձգտումներն ապահովող իրավունքներով (չէ որ առանց հավելյալ իրավունքների չէին կարող արդեն «հարստացված» շահերը բավարարվել, և տուժողի շահերն արդյունավետ պաշտպանելու միջոցները կբացակայեին): Իրենց հերթին հավելյալ այդ «նոր» իրավունքների վերապահումը հանգեցնում էր նրան, որ տուժողը մասնակից էր դառնում հանրային մեղադրանքի գործերով մեղադրական գործունեություն իրականացնելուն:

Այսպիսով՝ տուժողը, օրինական շահերի ընկալումների փոփոխությամբ պայմանավորված, օժտվելով լրացուցիչ իրավունքներով հանրային մեղադրանքի գործերով վեր էր ածվում «լրացնող» մասնավոր մեղադրողի:

Այս համատեքստում տեղին կլինի մեջ բերել հենց խորհրդային ականավոր դատավարագետ Մ. Ստրոգովիչի 1968թ. արած հետևյալ արձանագրումը. «...այն իրավունքները, որոնք նրան (տուժողին՝ Ա.Դ.) վերապահված են, թույլ են տալիս տուժողի կողմից իրականացվող դատավարական գործառույթի բնույթի վերաբերյալ եզրահանգում անել. դա մեղադրանք է, մեղադրական գործունեություն...տուժողը վարույթին մասնակցում է, որ պաշտպանի իր՝ հանցագործությամբ խախտված շահերը, ապացուցելու համար, որ հանցագործությունը կատարվել է, որ այդ հանցագործությամբ իրեն վնաս է պատճառվել, որ հանցանքի համար պատասխանատվությունը կրում է հենց ամբաստանյալը: Իսկ դա մեղադրանք է, մեղադրական գործունեություն»¹⁴:

¹³ Տուժողի շահերի շրջանակի մասին մանրամասն տե՛ս Ս.Ա. Դիլբանյան, նշվ. աշխ., էջեր 51-52: 2010թ. Վճռաբեկ դատարանը իր ԵՇԴ/0097/01/09 գործով կայացրած որոշման մեջ համանման դիրքորոշում է արտահայտել. «...տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը: Այդ շահերի ապահովման երաշխիքներից է տուժողի իրավունքը, որպեսզի իր գործով դատական քննությունն ընթանա «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ» (տե՛ս որոշման 18-րդ կետ):

¹⁴Տե՛ս Ս. Տրոգովիչ М.С. Курс советского уголовного процесса. Том 1. Основные положения науки советского уголовного процесса. М.: Издательство «Наука», 1968, էջ 255:

Համանման դիրքորոշում արտահայտվել է նաև ավելի վաղ: Օրինակ՝ Վ. Բոժևը, այս

Արդեն 1961 թ. ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքով¹⁵ հստակ տրվեց տուժողի սահմանումը¹⁶, ամրագրվեցին նրա՝ ապացույցներ ներկայացնելու, գործի բոլոր նյութերին նախաքննության ավարտման պահից ծանոթանալու, բացարկներ հայտնելու, հետաքննություն կատարող անձի, քննիչի գործողությունները դատախազին բողոքարկելու, դատախազի գործողությունները վերադաս դատախազին բողոքարկելու, ինչպես նաև դատարանի գործողությունները, դատավճիռը կամ որոշումները բողոքարկելու իրավունքները (1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր. 48-րդ, 194-րդ, 216-րդ, 218-րդ և 261-րդ հոդվածներ):

Բացի այդ, տուժողին վերապահվեցին քրեական հետապնդման վրա ազդեցություն ունենալու այլ իրավունքներ ևս, մասնավորապես՝ վերջինս օժտվեց միջնորդություններ հարուցելու¹⁷, տարբեր քննչական գործողություններին մասնակցելու¹⁸, քրեական գործը կարճելու և կարճման հիմքերի մասին գրավոր տեղեկացվելու, այն դատախազին բողոքարկելու իրավունքներ (1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր. 48-րդ, 170-րդ, 174-րդ, 203-րդ և 204-րդ հոդվածներ):

Տուժողին վերապահվեց ոչ միայն դատաքննությանը մասնակցելու, այլև

առումով, դեռևս 1963թ. գրել է. «...տուժողին բոլոր դեպքերում երաշխավորվում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք բավարար են սեփական դատավարական շահերը պաշտպանելու համար: Տուժողը բոլոր գործերով օժտվում է իրավունքներով, որոնք անհրաժեշտ են մեղադրյալի մեղավորությունն ապացուցելու համար...**Այդպիսի իրավունքների առկայությունը տուժողի գործունեությանը հաղորդում են մեղադրական բնույթ...**» տե՛ս **Божьев В. П.** Потерпевший в советском уголовном процессе: автореф. дис. ... канд. юрид. наук, Всесоюз. ин-т юрид. наук, - М., 1963. էջեր 8-9:

¹⁵ Այսուհետ նաև՝ 1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր.:

¹⁶ Համանման սահմանում տրվեց նաև 1960թ. ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով: Եվ քանի որ, այդ ժամանակի ազգային օրենսգրքերի տարբերություններն առավելապես ոչ էական էին ու կրում էին նրբերանգային բնույթ, այսուհետ հղումներ կանենք հիմնականում 1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր-ի կարգավորումների վրա:

¹⁷ Միջնորդություններ հարուցելու իրավունքն այդ ժամանակներում որոշ գիտնականների կողմից արհեստականորեն նեղ էր մեկնաբանվում՝ այն դիտելով միայն որպես նոր ապացույցներ պահանջելու միջոց: Սակայն այսպիսի մոտեցումը գրականության մեջ իրավացի քննադատության է ենթարկվել, և հիմնավորվել, որ տվյալ ժամանակի գործող օրենսդրական կարգավորումներից բխում է, որ կարելի է միջնորդություններ հարուցել նաև այլ հարցերով, օրինակ՝ հանցագործությունը վերադրակելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և այլն: Այս մասին մանրամասն տե՛ս **Ларин А.М.**, Расследование по уголовному делу: процессуальные функции.-М., 1986, էջեր 87-89:

¹⁸ Խոսքը մասնավորապես զննմանը և փորձարարությանը քննիչի հայեցողությամբ (անհրաժեշտ համարելու դեպքում) տուժողի մասնակցության մասին է:

մեղադրողի, ամբաստանյալի, պաշտպանի հետ միասին դատական քննության ժամանակ **ապացույցներ ներկայացնելու, ապացույցների զննությանը մասնակցելու և միջնորդություններ հարուցելու հավասար իրավունքներից օգտվելու իրավունքներ**(1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր. 238-րդ հոդված)¹⁹: Բացի այդ, եթե, օրինակ, մինչդատական վարույթում փորձաքննության նշանակման ու կատարման ժամանակ տուժողը գրկված էր իրավունքներից (ի տարբերություն մեղադրյալի), ապա դատական քննության ընթացքում փորձաքննություն կատարելու դեպքում ստանում էր փորձագետին հարցեր առաջադրելու (1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր. 278-րդ հոդված), փորձագետի կողմից իր եզրակացությունը հրապարակելուց հետո եզրակացությունը պարզելու և լրացնելու համար հարցեր տալու իրավունք (1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր. 279-րդ հոդված):

Այսպիսով, եթե ընդհանրացնենք, պետք է փաստենք, որ արդեն 1960-ականների խորհրդային օրենսդրությամբ տուժողը դառնում էր քրեական վարույթի լիարժեք սուբյեկտ, դատավարության ակտիվ մասնակից, ով իր իրավունքներն իրացնելով հնարավորություն էր ստանում անգամ հանրային մեղադրանքի գործերով²⁰ ազդեցություն ունենալ քրեական վարույթի, մասնավորապես՝ քրեական հետապնդման ընթացքի վրա՝ այդպիսով իսկ փաստացիորեն վերածվելով «լրացնող» մասնավոր մեղադրողի²¹:

Մյուս կողմից՝ 1960-ականների օրենսդրությամբ տուժողի կարգավիճակի էական փոփոխությունը, նրան հավելյալ իրավունքների վերապահումը ամեննին չի նշանակում, որ տուժողն օժտվեց բավարար իրավունքներով, որոնք անհրաժեշտ էին «լրացված», «նոր» ընկալումներով իր օրինական շահերի արդյունավետ պաշտպանության համար²² և, հետևաբար, կար նրա

¹⁹ Ապացուցման ոլորտում տուժողն ուներ նաև նոր վկաներ, փորձագետներ ու մասնագետներ կանչելու և իրենին ապացույցներ ու փաստաթղթեր պահանջելու միջնորդություն ներկայացնելու իրավունք (1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր. 266-րդ հոդված):

²⁰ Մասնավոր մեղադրանքի գործերի մի մասով տուժողն ինքը հանդես էր գալիս որպես մեղադրող՝ օգտվելով մեղադրողի լայն իրավունքներից (1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր.5-րդ, 48-րդ, 102-րդ հոդվածներ):

²¹ Ուղիղ այսպիսի դիտարկում դեռ 1960-ականներին արել է Մ.Ստրոգովիչը. «Տուժող-քաղաքացին քրեական վարույթում մեղադրող հանդես է գալիս ոչ միայն մասնավոր մեղադրանքի գործերով, ինչպես նախկին օրենսդրությամբ էր (խոսքը՝ մասնավորապես 1923թ.ՌԽՖՍՀ քր. դատ. օր-ի կարգավորումների մասին է՝ Ա.Ղ.), այլ՝ բոլոր գործերով, որոնցով նա մասնակցում է իբրև տուժող», տե՛ս **Строгович М.С.**, նշվ. աշխ., էջ 255:

²² Օրինակ՝ տուժողը չունեի նախնական քննության ընթացքում նշանակված

կարգավիճակի հետագա զարգացման անհրաժեշտություն²³:

Տուժողի գործառույթների վերաբերյալ տեսական բանավեճերը և քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած կարգավորումները

Տուժողի գործառույթների վերաբերյալ տեսական բանավեճերը:

Նախորդ դարի երկրորդ կեսերից տուժողի օրինական շահերի ընկալման հարցում տեղ գտած փոփոխություններն իրենց հերթին գիտության մեջ որոշակի քննարկումների, բանավեճերի տեղիք տվեցին, որոնք ուղղակիորեն կապված են տուժողին «լրացնող» մասնավոր մեղադրող դիտարկել-չդիտարկելու հարցի հետ:

Ըստ մի խումբ գիտնականների՝ տուժողի իրականացրած գործունեության և քրեական հետապնդման մարմինների գործունեության ուղղությունները տարբեր են: Ընդգծվում էր, որ տարբերվում է իրականացվող գործունեության **նպատակը**: Ըստ այդմ՝ հեղինակները եզրահանգում էին նրանց գործառույթների տարբերությանը՝ նշելով, որ տուժողն իրականացնում է **ոչ թե մեղադրանքի, այլ իր շահերի պաշտպանության գործառույթ**²⁴: Որոշ հեղինակներ առաջարկում էին հարցի լուծումը փնտրել՝ ելնելով կոնկրետ գործով տուժողի դրսևորած վարքից. «...ամեն կոնկրետ դեպքում, յուրաքանչյուր քրեական գործով անհրաժեշտ է որոշել, թե ինչ դիրքորոշում է որդեգրել տուժողը՝ դատավարական ո՞ր գործառույթին է նա օժանդակում», - գրում էր դա-

փորձաքննության որոշմանը ծանոթանալու, փորձագետին հարցեր առաջադրելու և այլ իրավունքներ: Նա, ի տարբերություն քաղաքացիական հայցվորի, հանրային մեղադրանքի գործերով զրկված էր դատական վիճաբանություններին մասնակցելու իրավունքից և այլն: Հետևաբար՝ տուժողը, զրկված լինելով հանրային մեղադրանքի գործերով վիճաբանություններին մասնակցելու իրավունքից, գործնականում «արհեստականորեն» ներկայացնում էր քաղաքացիական հայց, որպեսզի քաղաքացիական հայցվորի կարգավիճակով կարողանա մասնակցել վիճաբանություններին: Մյուս կողմից՝ նույնիսկ այդպեղյակ գործելու դեպքում, վիճաբանություններում սահմանափակված լինելով հայցի շրջանակներում, չէր կարողանում կարծիք արտահայտել պատժի տեսակի ու չափի ընտրության առիթով: Այս մասին մանրամասն տե՛ս **В.П. Божьев, М. Сухарев. Защита прав потерпевших // Советская юстиция. – М., 1963. – № 1, էջեր 8-9**:

²³ Այստեղ տեղին է հնչում դատավարագետ Ս.Դիրանդյանի այն դիտարկումը, որ. «Երբ մենք խոսում ենք տուժողի իրավունքների ընդարձակման մասին, միաժամանակ նկատի ունենք նաև նրա օրինական շահերի պաշտպանությունը: Որքան ընդարձակ են անձի իրավունքները, նույնքան լրիվությամբ են նրա շահերը ճանաչվում և պաշտպանվում պետության կողմից», տե՛ս **Դիրանդյան Ս.Ա.**, նշվ. աշխ., էջ 49:

²⁴ Այս մասին մանրամասն տե՛ս **Чекулаев, Д. П.** նշվ. աշխ., էջ 58: Տե՛ս նաև **Ларин А.М.**, նշվ. աշխ., էջ 51-55:

տավարագետ Լ. Կոկորևը²⁵:

Գիտնականների մյուս խումբը հակադրվում էր այս մոտեցմանը՝ տուժողի գործունեության հիմնական ուղղություն առանձնացնելով հենց մեղադրականը: Հարելով վերջիններիս՝ պետք է նկատել, որ տուժողի «շահերի պաշտպանությունը» (հաշվի առնելով շահերի շրջանակի մեջ հանցագործության լրիվ բացահայտումը, դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը, արդարացի պատժի նշանակումը ներառելը), ոչ միայն **չի հակադրվում մեղադրանքի գործառնություն²⁶**, այլև **անհնար է առանց մեղադրանքի գործառնության**: Իսկ տուժողի համար այդ գործառնության իրականացմանը մասնակցելու հնարավորությունը նրա շահերի արդյունավետ ապահովման միջոց է:

Բացի այդ, «իրենց շահերի պաշտպանություն» են իրականացնում նաև վարույթի այլ մասնակիցներ՝ կասկածյալ, մեղադրյալ, սակայն դրանից նրանց գործունեության հիմնական ուղղությունը չի փոխվում, մնում է նույնը՝ պաշտպանությունը: Հետևաբար, ճիշտ է հնչում այն պնդումը, որ այդպիսի մոտեցումը չի բացահայտում տուժողի գործառնության յուրահատկությունը, չի սահմանազատում այն այլ գործառնություններից²⁷: Ինչ վերաբերում է Լ. Կոկորևի՝ վերը բերված դիտարկմանը, ապա, համաձայնելով Յա. Մոտովիլովների հետ, պետք է արձանագրել, որ նման մոտեցման դեպքում տուժողի դատավարական գործառնության հարցը **փոխարինվում է յուրաքանչյուր գործով այս կամ այն տուժողի փաստացի դիրքորոշման հարցով²⁸**:

Ինչպես նշեցինք վերևում, տուժողի մեղադրական գործառնության իրականացնելու հարցի լուծումն ուղղակի ազդեցություն է ունենում հանրային մեղադրանքի գործերով տուժողի՝ «լրացնող» մեղադրող դիտարկվելու, տուժողու «լրացնող» մասնավոր մեղադրողի կարգավիճակների նույնացման-տարանջատման հարցի վրա:

Առաջին խմբին հարող գիտնականները, տարանջատելով մեղադրանքի և տուժողի՝ իր շահերի պաշտպանության գործառնությունները, նկատում են, որ

²⁵ Ст'я Кокорев Л.Д. Потерпевший от преступления в советском уголовном процессе. Воронеж, 1964, էջ 82, մեջբերումն ըստ՝ Мотовиловкер Я.О. Основные уголовно-процессуальные функции. Ярославль, 1976, էջ 44:

²⁶ Համանման մոտեցում տե՛ս Мотовиловкер Я.О. նշվ. աշխ., էջ 43:

²⁷ Ст'я, Мотовиловкер Я.О. նշվ. աշխ., էջ 43:

²⁸ Ст'я, Мотовиловкер Я.О. նշվ. աշխ., էջ 44:

տուժողի կարգավիճակի ձեռքբերմամբ անձն ինքնաբերաբար չի հանդիսանում «լրացնող» մասնավոր մեղադրող, և որ չպետք է նույնացվեն «լրացնող» մեղադրողի և տուժողի կարգավիճակները՝ ընդգծելով, որ առաջինի դեպքում իրականացվում է մեղադրական գործառույթը, երկրորդի դեպքում՝ ոչ: Ավելին, գիտնականների այս խմբի որոշ ներկայացուցիչներ ասվածը փաստարկում էին նաև առաջին հայացքից ծանրակշիռ այլ հիմնավորմամբ: Մասնավորապես, դատավարագետ Ն. Պետրովան նշում էր, որ մեղադրանքը շատ լուրջ գործունեություն է, որը ենթադրում է բարդ **պարտականություններ** ու խիստ պատասխանատվություն, որոնք մեխանիկորեն տուժողի ուսերին դնելը կլինե՞ր գերաստիճան անարդար: Ասվածը հեղինակն իր հերթին ամրապնդում է դատավարագետ Ա.Ալեքսանդրովի այն դիտարկմամբ, որ քննչական դատավարությունում մասնակիցներին դատավարական իրավունքի ձևով տրվում են միջոցներ, որոնք անհրաժեշտ են դատավարական **պարտականությունների** կատարման համար²⁹: Ըստ այդմ՝ Ն. Պետրովան կտրականապես դեմ էր արտահայտվում մեղադրողի հետ տուժողի նույնացմանը³⁰՝ եզրահանգելով, որ տուժողը պետք է **մեղադրողի կարգավիճակ ձեռք բերի միայն հստակ արտահայտած իր համաձայնության դեպքում**: Ուստի, հենվելով «կոկորեյան» մոտեցումների վրա, արձանագրում է, որ **տուժողի** քրեական վարույթին **ակտիվ** մասնակցության դեպքերը կարելի է համարել իբրև **լրացնող**³¹ **մեղադրանքի** դրսևորումներ ժամանակակից Ռուսաստանի քրեական դատավարությունում³² (չէ որ ակտիվ մասնակցությունը ենթադրում է տուժողի **համաձայնություն**):

Նման փաստարկումներով կարծես անխոցելի էր դառնում առաջին խմբի գիտնականների մոտեցումը՝ հանրային մեղադրանքի գործերով տուժողի տարանջատումը «լրացնող» մեղադրողից: Սակայն բերվող հիմնավորումների առավել խորագնին ուսումնասիրությունը հակառակի մասին է վկայում:

Նախ՝ պնդումը, թե տուժողի կարգավիճակով մեխանիկորեն մեղադրողի կարգավիճակի ձեռքբերումը «**պարտականություն է դնում տուժողի ուսերին**»,

²⁹ St' u **Петрова Н.Е.** Частное и субсидиарное обвинение. Самара: Изд-во «Самарский университет», 2004, էջ 98

³⁰ St' u **Петрова Н.Е.** նշվ. աշխ., էջ 97:

³¹ Հեղինակը, «լրացնող» տերմինի փոխարեն օգտագործում է «սուբսիդիար» տերմինը՝ դրա բովանդակությունն ընկալելով մեր օգտագործած «լրացնող» տերմինի իմաստով:

³² St' u **Петрова Н.Е.** նշվ. աշխ., էջ 160:

մեր համոզմամբ, հեղինակի կողմից **երկու տարբեր երևույթների՝ «դատավարական պարտականության»** և **«դատավարական բեռի»** սխալմամբ **նույնացնելու արդյունք է:**

Առաջինը՝ դատավարական պարտականությունը թելադրված է **ոչ այն անձի մասնավոր շահով, ում վրա դրված է պարտականությունը:** Այս դեպքում անձի վրա դրված վարքագիծ դրսևորելու պարտականություններին թղթակցում է այդ վարքագիծը պահանջելու այլոց իրավունքը, իսկ պարտականության չկատարումն արգելված է սանկցիայի կիրառման սպառնալիքով, ինչը «հանդիսանում է իրավաբանական պարտականության անհրաժեշտ տարր, հատկանիշ»³³:

Հարցը տրամագծորեն այլ լուծում է ստանում դատավարական բեռի պարագայում: Այս դեպքում որոշակի վարքագիծ դրսևորելու անհրաժեշտությունը թելադրված է այն անձի **մասնավոր շահով, ում վրա դրված է բեռը:** Վարքագիծն իրականացվում է ոչ թե պարտականությունների կատարման, այլ իրավունքների իրացման կարգով: Այստեղից էլ, ի հակադրություն «դատավարական պարտականության» կարգավորման դեպքերի, դատավարական բեռի դեպքում բացակայում է **թղթակցող իրավունքը՝ պահանջելու դրսևորել վարքագիծ:** Սա իր հերթին հանգեցնում է նրան, որ **կոնկրետ վարքագիծ դրսևորելուց հրաժարվելու պարագայում բացակայում է սանկցիայի կիրառման հնարավորությունը**, քանի որ. «...բեռի չկատարումը որոշում է **միայն վարքագծի և վարքագծի նպատակի հարաբերությունները, բայց չի ստեղծում (ի տարբերություն պարտականության չկատարման) կողմերի միջև իրավահարաբերություններ**»³⁴:

Երկու այս երևույթների չտարբերակման, մեկը մյուսի հետ նույնացման արդյունքում դատավարագետ Պետրովան ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի³⁵ վերլուծությունից, մեր համոզմամբ, սխալ եզրահանգում է անում. «...օրենքի իմաստով, տուժողը հատուկ դատավարական կարգավիճակով է օժտվում **ոչ թե իր սեփական իրավունքների պաշտպանությամբ**

³³ Տե՛ս **Мотовиловкер Я.О.** նշվ. աշխ., էջ 30:

³⁴ Տե՛ս **Мотовиловкер Я.О.** նշվ. աշխ., էջ 30:

³⁵ Խոսքը տուժողի կարգավիճակը սահմանող, նրա իրավունքներն ու պարտականություններին հիմնական մասը թվարկող ՌԴ քր. դատ. օր-ի հոդվածի մասին է:

յան, այլ քննության մարմինների շահերից ելնելով»³⁶:

Ինչ վերաբերում է քննարկվող հիմնավորման այն հատվածին՝ ըստ որի միայն տուժողի ակտիվ մասնակցության դեպքերը կարելի է գնահատել իբրև լրացնող մեղադրանքի դրսևորումներ, ապա այս առումով մնում է կրկնել արդեն հնչեցվածը. այսպիսի մոտեցման դեպքում ոչ թե որոշվում (լուծվում) է տուժողի դատավարական գործառույթի հարցը, այլ այն **փոխարինվում է տուժողի փաստացի դիրքորոշման հարցով**: Իսկ տուժողի գործառույթի հարցը որոշելիս պետք է ելնել ոչ թե **կոնկրետ գործով տուժողի փաստացի դիրքորոշումից**, այլ **նրանից, թե օրենսդիրն ինչ ուղղվածության իրավունքներով է օժտել տուժողին իր շահերը պաշտպանելու համար՝ անկախ կոնկրետ գործով նրա դրսևորած ակտիվությունից**³⁷:

Հետևաբար, պետք է փաստել առաջին մոտեցման ոչ հիմնավոր լինելը, ինչն էլ, որպես արդյունք, հանգեցրել է նրան, որ արդեն 1990-ականներից տուժողի կողմից մեղադրական գործառույթ իրականացնելու, հետևաբար՝ վերջինիս հանրային մեղադրանքի գործերով «լրացնող» մասնավոր մեղադրող (մեղադրական գործունեություն իրականացնող (մասնակցող)) դիտարկելու մոտեցումն առավել ամրապնդվեց ու տարածում ստացավ՝ արտացոլվելով ինչպես բարձր դատարանների որոշումներում, այնպես էլ գիտական հանրության հեղինակավոր ներկայացուցիչների աշխատություններում³⁸: Իսկ ահա ռուսական գրականության վերջին որոշ հրապարակումներում ընդհանրապես «տուժողի» կարգավիճակի գոյության անհրաժեշտությունը հիմնավորվում է. «...**ոչ այլ ինչով, քան նրա (տուժողի՝ Ա.Դ.)՝ քրեական հե-**

³⁶ Տե՛ս **Петрова Н.Е.** նշվ. աշխ., էջ 98:

³⁷ Համանման դիրքորոշում տե՛ս **Мотовиловкер Я.О.** նշվ. աշխ., էջ 27:

³⁸ Այսպես օրինակ՝ ՌԴ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով հանրային մեղադրանքի գործերով մեղադրանքին տուժողի մասնակցության հարցերին, վերջինիս դիտարկում է «մեղադրանքի կողմից իբրև սուբսիդիար մասնակից» (տե՛ս Постановление Конституционного Суда Российской Федерации от 17 октября 2011 г. N 22-П "По делу о проверке конституционности частей первой и второй статьи 133 Уголовно-процессуального кодекса Российской Федерации в связи с жалобами граждан В.А. Тихомировой, И.И. Тихомировой и И.Н. Сардыко): Արդեն ավելի ուշ՝ 2017 թ., Մոսկվայի պետական համալսարանի դատավարագետները, վերլուծելով տուժողի կարգավիճակը հանրային մեղադրանքի (մասնավոր-հանրային մեղադրանքի) գործերով, նրան դիտարկում են «սուբսիդիար (լրացնող) մեղադրողի փաստացի դեր իրականացնողի» (տե՛ս Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. **Головки Л.В.**, 2-е изд., испр. – М.: Статут, 2017, էջ 117: Համանման դիրքորոշումներ արտահայտել են նաև ավելի վաղ. տե՛ս, օրինակ, **Чекулаев, Д. П.** նշվ. աշխ., էջեր 58-59, 94):

տապանդմանը մասնակցելու և արդարադատության մատչելիությունը ապահովելու հնարավորությամբ...»³⁹: Հոդվածագիրը՝ Ս. Ռոսինսկին, նկատում է, որ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով⁴⁰ նախատեսված տուժողի բոլոր իրավունքների իմաստը (բացառությամբ ցուցմունք տալու վերաբերությամբ վկայի հետ նույնական տուժողի իրավունքների) հանգում է հենց նրան, որ ապահովվի նախնական քննության մարմինների և դատախազի հետ միասին մեղադրանքի գործառույթի իրացմանը տուժողի մասնակցության հնարավորությունը, մեղադրյալին (կասկածյալին) մեղսագրվող հանցագործության մեջ մերկացման գործընթացի վրա տուժողի ակտիվ գործողություններով ազդեցություն ունենալուն կամ մեղադրյալի համար ոչ բարենպաստ այլ հետևանքներ առաջացնելուն⁴¹:

Քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած կարգավորումները

Գործող օրենսգրքի՝ տուժողի կարգավիճակը սահմանող դրույթների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ **պահպանվել և զարգացվել է** հանրային մեղադրանքի գործերով տուժողի՝ **մեղադրանքի գործառույթի իրացմանը մասնակցելու իրավունքները**:

Նախ՝ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով⁴² տուժողը քրեական հետապնդման մարմինների հետ միասին ընդգրկվեց մեղադրանքի կողմում (քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 21-րդ կետ), ինչը նախորդ օրենսգրքի կարգավորումներում բացակայում էր:

Բացի այդ, տուժողն օժտվեց հանրային մեղադրանքի գործերով քրեական հետապնդմանը մասնակցելու որոշակի՝ համեմատաբար ավելի լայն իրավունքներով:

Մասնավորապես քր. դատ. օր-ը տուժողին վերապահեց մի շարք իրավունքներ, որոնցով նա **վարույթի ընթացքը կանխորոշող որոշումների վրա ազդեցություն ունենալու իրավունքներով օժտվեց**: Իբրև այդպիսին՝ պետք է առանձնացնել քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը հանցանքից

³⁹ St' u **Россинский С.Б.**, Является ли потерпевший субъектом доказывания по уголовному делу?// Криминалистика:вчера, сегодня, завтра. 2020, No 2 (14), էջ 240:

⁴⁰ Խոսքը տուժողի կարգավիճակը սահմանող, նրա իրավունքներն ու պարտականությունների հիմնական մասը թվարկող ՌԴ քր. դատ. օր-ի հոդվածի մասին է:

⁴¹ St' u, **Россинский С.Б.**, նշվ. աշխ., էջ 240:

⁴² Այսուհետ նաև՝ քր. դատ. օր.:

տուժած անձի կողմից⁴³ դատախազին, իսկ ապա նաև՝ դատական վերահսկողության կարգով բողոքարկելու իրավունքի մասին (քր. դատ. օր. 185-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր): Այստեղ պետք է միանանք դատավարագետ Ե.Կոլուզակովայի այն դիտարկմանը, ով քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը տուժողի կողմից դատարան բողոքարկելը դիտարկում է իբրև մեղադրական ուղղվածության գործունեություն⁴⁴:

Բացի այդ, գործող օրենսգրքով տուժողն իրավունք ունի բողոքարկել նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը դատախազին, ապա՝ դատարան (քր. դատ. օր. 263-րդ հոդված): Ընդ որում՝ ի ապահովումն այս իրավունքի արդյունավետ իրացման, տուժողն իրավունք ունի պատշաճ ծանուցմամբ անհապաղ ստանալ նշյալ որոշումը (59-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ, 262-րդ հոդվածի 1-ին մաս), ծանոթանալ կարճված գործի նյութերին⁴⁵ (քր. դատ. օր 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, 262-րդ հոդվածի 3-րդ մաս)⁴⁶:

Տուժողին է վերապահված նաև քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումն ստանալու և այն բողոքարկելու իրավունք (քր. դատ. օր-ի 258-րդ 1-ին մաս)⁴⁷, ինչը նույնպես արդյունավետ միջոց է «ժամանակավորա-

⁴³ Այս փուլում տուժող սուբյեկտը՝ որպես այդպիսին, բացակայում է:

⁴⁴ Տե՛ս **Колузакова Е.В.**, նշվ. աշխ., էջ 121: Գործնականում եղել են դեպքեր, երբ հանցանքից տուժած անձինք քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկմամբ «վիճելով» մեղադրանքի հանրային (պետական) մասնակիցների հետ հասել են մինչ Վճռաբեկ դատարան, տե՛ս, օրինակ, ՀՀ Վճռաբեկ դատարանի 11.04.2019թ թիվ ԵԱՔԴ/0086/11/17 որոշումը:

⁴⁵ Գործնականում եղել են դեպքեր, երբ տուժողին չի պարզաբանվել իր՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքը, ինչը քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի կողմից դիտարկվել է իբրև կարգապահական խախտում: Տե՛ս Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի՝ 19.09.2018թ. թիվ ԿՀՈ 23 որոշում և 28.11.2018թ. թիվ ԿՀՈ 37 որոշում և այլն:

⁴⁶ ՀՀ Սահմանադրական դատարանը, 30 մայիսի 2017 թ. ՍԴՈ-1372 որոշմամբ անդրադառնալով քր. դատ. օր-ի 262-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցին, արձանագրել է, որ այն համապատասխանում է Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ՝ համաձայն որի գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի կամ քր. դատ. օր. 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցների՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում:

⁴⁷ Թեև քր. դատ. օր-ը կասեցված գործի նյութերին տուժողի ծանոթանալու ուղղակի

պես արգելակված» վարույթի շարունակականությունն ապահովելու համար:

Հանցանք կատարած անձի բացահայտումը (նրա մերկացումը) կազմում է մեղադրանքի գործառույթի մաս, ուստի տուժողին **ապացուցման ոլորտում վերապահված իրավունքները նույնպես պետք է դիտարկել իբրև տուժողի մեղադրական գործառույթն ապահովող:**

Այս առումով գործող քր. դատ. օր-ով տուժողն ունի ցուցմունք տալու իրավունք (քր. դատ. օր. 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), ինչը գիտության մեջ դիտարկվել է իբրև «քրեական հետապնդմանը մասնակցելու ավանդական ձև»⁴⁸, տուժողի «կողմից իրականացվող գործառույթին (մեղադրանքի գործառույթին՝ Ա.Ղ.) լիովին համապատասխանող իրավունք»⁴⁹: Բացի այդ, գործող օրենսգրքով տուժողն ունի քննիչի թույլտվությամբ կատարվող քննչական գործողությանը մասնակցելու⁵⁰, քրեական գործին կցելու և հետազոտելու համար նյութեր ներկայացնելու (քր. դատ. օր. 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ)⁵¹, տարատեսակ քննչական գործողություններ կատարելու

իրավունք չի վերապահել, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը, նշված որոշման բողոքարկման իրավունքի, տուժողի օրինական շահերի արդյունավետ ապահովման հանգամանքից ելնելով, 07.11.2019թ. ՇՂ/0003/11/18 գործով կայացրած որոշմամբ արձանագրել է, որ քրեական գործով վարույթը կասեցնելու որոշումը տուժողին (տուժողի իրավահաջորդին) ուղարկելիս վերջինիս պետք է պարզաբանվի որոշման բողոքարկման կարգը և ժամկետները, գործի նյութերին ծանոթանալու նրա իրավունքը: Իսկ համապատասխան **միջնորդության դեպքում տուժողին (տուժողի իրավահաջորդին) պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու նրան վերաբերող գործի նյութերին՝ բացառությամբ կոնֆիդենցիալ կամ գաղտնի բնույթի տվյալների՝ նրա դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու համար** (տե՛ս որոշման 19-րդ կետ):

⁴⁸ Տե՛ս **Петрова Н.Е.** նշվ. աշխ., էջեր 169-170,

⁴⁹ Տե՛ս **Чекулаев, Д. П.** նշվ. աշխ., էջ 67:

⁵⁰ Ի տարբերություն գործող ՀՀ քր. դատ. օր-ի, որտեղ քննիչի թույլտվությամբ տարբեր քննչական գործողություններին մասնակցելու իրավունքը բխեցվում է տարատեսակ հոդվածների համադրված վերլուծությունից, ՌԴ քր. դատ. օր-ի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով ուղղակի սահմանված է տուժողի՝ իր (իր ներկայացուցչի) միջնորդությամբ կատարվող քննչական գործողություններին քննիչի (հետաքննիչի) թույլտվությամբ մասնակցելու իրավունքը: Գործող օրենսդրությունն այս առումով կատարելագործելու առաջարկներ հայկական գրականության մեջ դեռ վաղուց են արվել (տե՛ս **Դիլբանյան Ս.Ա.**, Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում: Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 217):

⁵¹ Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ ՌԴ քր. դատ. օր-ի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով խոսվում է տուժողի **ապացույցներ** ներկայացնելու իրավունքի մասին: Թեև

համար միջնորդություններ ներկայացնելու իրավունք⁵²: Բացի այդ, գործող օրենսգրքով ընդլայնվեցին տուժողի իրավունքները՝ փորձաքննության նշանակելիս ու կատարելիս՝ հավասարեցնելով այդ առումով կասկածյալի ու մեղադրյալի իրավունքների հետ⁵³:

Գործող օրենսգրքով տուժողը կարող է **որոշակիորեն ազդեցություն ունենալ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման վրա**: Մասնավորապես, կարող է միջնորդել կիրառել տարատեսակ խափանման միջոցներ, իսկ այդպիսիք հետաքննության մարմնի, քննիչի կողմից կիրառված լինելու դեպքում բողոքարկել համապատասխան դատախազին, դատախազի որոշումը՝ վերադաս դատախազին (քր. դատ. օր-ի 150-րդ հոդվածի 1-ին մաս):

Ինչ վերաբերում է մեղադրյալին կալանավորելու հարցում տուժողի ազդեցություն ունենալուն, ապա գործող օրենսգրքի 285-րդ հոդվածի 3-րդ մասի նախնական խմբագրությունը կալանավորման միջնորդության քննարկմանը

առաջին հայացքից կարող է ՀՀ և ՌԴ քր. դատ. օր-երում տեղ գտած այս կարգավորումների տարբերությունն սկզբունքային դիտարկվել, սակայն, կարծում ենք, որ «ապացույց» բառի օգտագործումը ՌԴ օրենսգրքում տուժողին չի վերաժում ինքնուրույն ապացույց հավաքողի: Ասվածը հիմնավորվում է ՌԴ քր. դատ. օր-ի 86-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած կարգավորմամբ, որը կոնկրետացնելով տուժողին վերապահված այդ իրավունքը՝ նշում է. «...տուժողը, քաղաքացիական հայցվորը...իրավունք ունեն **հավաքել ու ներկայացնել գրավոր փաստաթղթեր ու առարկաներ քրեական գործին իբրև ապացույց կցելու համար**»: Հնդ որում՝ ռուսական գրականության մեջ էլ, ելնելով նշված դրույթների համակարգային այս վերլուծությունից, քննադատվում է մոտեցումը, որ քրեական վարույթի մասնավոր մասնակիցների կողմից ապացույցների ձեռքբերումն ու ներկայացումը պետք է դիտարկել իբրև քննչական գործողություններին զուգահեռ ապացույցների հավաքման ինքնուրույն ձև: Մանրամասն տե՛ս **Чекулаев, Д. П.** նշվ. աշխ., էջեր 73-74:

⁵² Սա բխում է տուժողի ընդհանրապես միջնորդություններ հարուցելու իրավունքից (քր. դատ. օր-ի 59-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

⁵³ Տուժողը, ի տարբերություն նախկին օրենսգրքի կարգավորումների, ստացավ փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը ծանոթանալու և իր իրավունքների պարզաբանում ստանալու իրավունք (քր. դատ. օր. 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Հնդ որում՝ փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը ծանոթանալու՝ իր իրավունքի իրացման արդյունքում տուժողին վերապահվեց փորձագետին բացարկ հայտնելու, իր մատնանշած անձանց թվից փորձագետին նշանակելու միջնորդություն ներկայացնելու, քննիչի թույլտվությամբ փորձաքննության կատարմանը ներկա գտնվելու, լրացուցիչ հարցեր առաջադրելու, քննիչի կողմից փորձագետի եզրակացությունն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում փորձագետի եզրակացությանը ծանոթանալու իրավունքներ: Իսկ ահա փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում՝ տուժողին վերապահվեց լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն կատարելու միջնորդություն ներկայացնելու իրավունք:

դատական նիստին տուժողին և նրա ներկայացուցչին դատարանի կողմից կանչվելու ուղղակի հնարավորություն էր նախատեսում: Այս պայմաններում տուժողը, կարծիքներ հայտնելով, բացատրություններ տալով, կարող էր որոշակիորեն ազդեցություն ունենալ հարցի լուծման վրա: Սակայն 2006թ. մայիսի 25-ի՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-91 ՀՀ օրենքով քննարկվող նորմը վերախմբագրվեց այն կերպ, որ առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե ընդհանրապես վերացվեց տուժողի մասնակցության հնարավորությունը նշված հարցի քննարկմանը⁵⁴: Սակայն նույնիսկ նշված դրույթի վերախմբագրության պայմաններում, կարծում ենք, ներկա կարգավորումները չեն բացառում տուժողի՝ կալանքի ընտրության հարցը քննարկող նիստին մասնակցելու, բացատրություններ տալու հնարավորությունը, եթե դատարանն անհրաժեշտ համարի լսել տուժողին: Կալանքի հարցի քննարկմանը տուժողի մասնակցության հնարավորության անուղղակի օրենսդրական արտահայտություն կարելի է դիտարկել նաև այն, որ քր. դատ. օր-ի 285-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է միջնորդության արդյունքում կայացված որոշումը **նաև տուժողին ուղարկելու** պահանջ. «դատական նիստին **վերջիններիս** (այդ թվում՝ տուժողի՝ Ա.Ղ.) **չներկայանալու դեպքում...**»:

Բացի այդ, կարծում ենք, անտրամաբանական կլիներ ընդհանրապես բացառել տուժողի մասնակցությունն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կալանավորման միջնորդության քննարկման դեպքում, երբ օրենսդիրը, վերաքննիչ դատարանին վերապահում է կալանավորումն **ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման ժամանակ անհրաժեշտության դեպքում** բացատրություններ տալու համար դատական նիստին տուժողին մասնակից դարձնելու հնարավորություն (քր. դատ. օր-ի 288-րդ հոդվածի 3-րդ մաս):

Նկատենք, որ քննարկվող հարցին անդրադարձել է նաև ՌԴ Գերագույն դատարանը և դիրքորոշում արտահայտել, որ ՌԴ քր. դատ. օր-ի 108-րդ հոդվածի 4-րդ մասով կալանավորման հարցին քննարկմանը դատական նիստին

⁵⁴ Փոփոխությունների վերաբերությամբ հայկական գրականության մեջ հնչել է նման տեսակետ, տե՛ս **Դանիելյան Ա.Կ.**, Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում, ի.գ.թ. ... ատենախոսություն, Երևան, 2019, էջեր 65-66:

մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակն **սպառնիչ չէ**: Դատարանը ՌԴ քր. դատ. օր-ի 19, 42, 108, 123-րդ հոդվածների հիման վրա հանգում է եզրակացության, որ այն դեպքում, երբ խափանման միջոցի հարցի լուծմամբ շոշափվում են նաև տուժողի իրավունքներն ու օրինական շահերը, վերջինս (նրա ներկայացուցիչը) այս կամ այն խափանման միջոցի ընտրության, երկարացման, փոփոխման, վերացման կապակցությամբ պետք է ունենա նախնական քննության մարմիններին, դատախազին ու դատարանին սեփական դիրքորոշումը հայտնելու իրավունք⁵⁵:

Ավելին, նույն հիմնավորմամբ ՌԴ Գերագույն դատարանն արձանագրեց նաև կալանքի միջնորդության քննության արդյունքում կայացված որոշումը տուժողի կողմից բողոքարկելու հնարավորությունը⁵⁶, անկախ առաջին ատ-

⁵⁵ St' u Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 29 октября 2009 г. N 22 г. Москва «О практике применения судами мер пресечения в виде заключения под стражу, залога и домашнего ареста» 15-րդ կետ:

⁵⁶ Համանման կարծիքներ հնչել են տեսական գրականության մեջ, տե՛ս, օրինակ, **Ветрова Г. Н.**, Субсидиарное обвинение и принцип состязательности // Известия Алтайского государственного университета, 1. № 3(95), էջ 33: Հայկական դատավարական գրականության մեջ ևս հնչել է նման տեսակետ, տե՛ս **Դամբարյան Ա.Ս.**, Դատական ակտերի բողոքարկումը ժամանակակից քրեական դատավարությունում, Երևան, Լուսարգ, 2017թ., էջ 49:

Սակայն հարցին տրամագծորեն հակառակ լուծում են տվել ինչպես ՀՀ սահմանադրական, այնպես էլ Վճռաբեկ դատարանները: ՀՀ սահմանադրական դատարանը, 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՌ-1373 որոշման 6-րդ կետում քննարկման առարկա դարձնելով նախնական կալանքի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի հարցը, արձանագրել է. «... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են վերաքննիչ բողոք բերել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ: **Դրանք են՝ դատախազը, մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը:** Ընդ որում՝ օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է դոմփակ նիստում՝ դատախազի և պաշտպանի ներկայությամբ... Վերոշարադրյալ իրավակարգավորումների համադրված վերլուծությունից հետևում է, որ (...) օրենսդիրը համապատասխան դատական ակտի հասցեատեր դիտարկելով նաև քննիչին և տուժողին, **միննույն ժամանակ, նրանց չի ճանաչում որպես այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտ:** Օրենսդիրը, ի թիվս մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի, այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք վերապահում է դատախազին: Այսինքն՝ դատախազն օրենսգրքի 283-րդ

յանի դատարանում դատական նիստին վերջինիս մասնակցած լինելու հանգամանքից⁵⁷:

Գործող օրենսգիրքը տուժողին վերապահում է նաև մեղադրանքի (սյուրափրավական իմաստով) ձևավորման վրա ազդեցություն ունենալու որոշակի հնարավորություններ ևս: Ընդ որում՝ տուժողը կարող է ազդեցություն ունենալ մեղադրանքի ձևավորման վրա՝ ինչպես արդեն վերը քննարկած՝ ապացուցման ոլորտում իր իրավունքներն իրացնելով⁵⁸, այնպես էլ՝ կայացրած որոշումը բողոքարկելով (59-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ, 103-րդ հոդվածի 1-ին մաս): Կարծում ենք, հենց այս լույսի ներքո պետք է դիտարկել օրենսգրքով տուժողին վերապահված՝ իր խնդրանքով անվճար որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենն ստանալու (քր.դատ.59-րդ հոդվածի 1-ին մաս- 11-րդ կետ), առաջադրված մեղադրանքին ծանոթանալու իրավունքները (քր. դատ. օր-ի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Իսկ ահա դատական վարույթում, մասնավորապես՝ դատական քննությանը, տուժողի իրավունքները կարծես հավասարվում են մեղադրողի (դատախազի) իրավունքներին՝ եզակի բացառություններով (մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակում, մեղադրանքից հրաժարվելու լիազորություն և այլն):

Եզրահանգումներ.

Ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

1. Եթե 1920-ականներին տուժողի շահերի շրջանակի ընկալումները

հոդվածի 2-րդ մասի ուժով իրավասու է մասնակցելու նաև այն դատական նիստին, որում քննության առարկա է քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը: Ավելին՝ իրավունք ունի հետ վերցնել ներկայացված միջնորդությունը կամ այն անձամբ պաշտպանել: Ասվածի համատեքստում, նման օրենսդրական կարգավորման պայմաններում **տուժողի շահերի միակ պաշտպանը, վերոնշյալ սահմանադրական լիազորությունների շրջանակներում, դատախազն է**»: Հիմնվելով այս որոշման վրա՝ համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը (տե՛ս Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ 11.04.2019թ թիվ **ԵՂ/0068/06/18 որոշման 18-րդ կետ**):

⁵⁷ См. u Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 29 октября 2009 г. N 22 г. Москва "О практике применения судами мер пресечения в виде заключения под стражу, залога и домашнего ареста" 15-րդ կետ: Տուժողի՝ նշված որոշումը բողոքարկելու իրավունքն արձանագրելիս ՌԴ Գերագույն դատարանը հղում է անում ՌԴ Քր. դատ. օր-ի 354-րդ հոդվածի վրա, ինչը, սակայն, ներկայումս ուժը կորցրել է:

⁵⁸ См. u **Берова Г. Н.**, նշվ. աշխ., էջ 35:

հիմնականում սահմանափակվում էին հանցագործության պատճառված վնասի հատուցմամբ, ապա ժամանակի ընթացքում տեղի ունեցան տուժողի շահերի շրջանակի այդ ընկալումների փոփոխություններ: Դրա հետևանքով հայրենական դատավարությունում «տուժող» սուբյեկտն օժտվեց որոշակի իրավունքներով իր՝ «հարստացված» ընկալումներով շահերն արդյունավետ պաշտպանելու համար:

2. 1960-ականների քրեական դատավարության օրենսգրքերով՝ հանրային մեղադրանքի գործերով տուժողին վերապահված նոր իրավունքներով նրա գործառույթի հարցի վերաբերությամբ առաջացած տարակարծությունները պետք է լուծել՝ հիմք ընդունելով ոչ թե կոնկրետ գործով տուժողի դրսևորած ակտիվ-պասիվ վարքագիծը (տուժողի փաստացի դիրքորոշումը), այլ՝ թե ինչ ուղղվածության իրավունքներով է տուժողն օժտված՝ անկախ կոնկրետ գործով նրա դրսևորած ակտիվությունից:

3. Հանրային մեղադրանքի գործերով տուժողն իրականացնում է մեղադրանքի գործառույթ՝ ունենալով «հիմնական» հանրային (պետական) մեղադրանքի վրա ազդեցություն գործադրելու լայն իրավունքներ:

4. Հանրային մեղադրանքի գործերով տուժողը հանդես է գալիս իբրև «լրացնող» մասնավոր մեղադրող՝ տուժողի կարգավիճակ ձեռք բերելու պահից:

О "ДОПОЛНИТЕЛЬНОМ" ЧАСТНОМ ОБВИНЕНИИ В ОТЕЧЕСТВЕННОМ (СОВЕТСКОМ И ПОСТСОВЕТСКОМ) УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

Казарян Артак. Арменович

Старший преподаватель

кафедры уголовного процесса Академии

Образовательного комплекса полиции

РА. майор полиции

В статье рассматриваются вопросы реализации потерпевшим функции обвинения в делах публичного обвинения. Автор анализирует изменения в статусе потерпевшего в уголовно-процессуальных кодексах 1920-х, 1960-х и 1990-

х годов и констатирует, что в настоящее время потерпевший выступает в качестве "дополняющего" частного обвинителя уже по всем делам.

Ключевые слова: потерпевший, частное обвинение, дополнительный частный обвинитель.

ON "COMPLEMENTARY" PRIVATE PROSECUTION IN THE NATIONAL (SOVIET AND POST-SOVIET) CRIMINAL PROCEEDINGS

Ghazaryan Artak

*Senior Lecturer at the Chair of Criminal Procedure,
Academy of the Educational Complex of Police of RA,
Police Major*

The article deals with the issues of implementation of prosecution function by the victim in public prosecution cases. The author analyzes some changes in the victim's status in the Criminal Procedure Codes of the 1920s, 1960s and 1990s and comes to the conclusion that, at present, the victim is considered to be a "complementary" private prosecutor in all cases.

Key words: victim, private prosecution, "complementary" private prosecutor.

Հոդվածը գրախոսվել է՝ 24.09.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 28.09.2020թ.

ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ղազարյան Զեմա

Երևանի պետական համալսարանի մագիստրանտ

Միջազգային առևտրային իրավունքը բարդ և ընդլայնվող ոլորտ է: Միջազգային տնտեսական հարաբերությունների չորս մակարդակ գոյություն ունի. միակողմանի միջոցներ (ազգային իրավունք), երկկողմ հարաբերություններ (օրինակ՝ Կանադա-ԱՄՆ ազատ առևտրի համաձայնագիր), բազմակողմ համաձայնագրեր (plurilateral agreements) և բազմակողմ պայմանավորվածություններ (multilateral arrangements, օրինակ՝ ՄԱԳՀ/ԱՀԿ):¹ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) համաշխարհային միջազգային կազմակերպություն է, որն ստեղծվել է՝ կարգավորելու միջազգային առևտուրը. այն ստեղծվել է Եվրոպական համայնքների և այլ պետությունների միջև Ուրուգվայում ընթացած և 1994թ. ապրիլի 12-15-ը Մարաքեշում կայացած առևտրի բազմակողմ բանակցությունների արդյունքում ստորագրված՝ Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի արդյունքները պարփակող եզրափակիչ փաստաթղթի, վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ ԱՀԿ ստեղծման Մարաքեշի համաձայնագրի (այսուհետ՝ ԱՀԿ համաձայնագիր) հիման վրա, որն ուժի մեջ է մտել 1995թ. հունվարի 1-ից:² ԱՀԿ համաձայնագիրը, այնուամենայնիվ, էականորեն չի տարբերվում հին Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի շրջանակից և գործունեությունից: Այն չի ստեղծում նոր վերազգային կազմակերպություն, որին կփոխանցվի իր անդամների ինքնիշխանությունը:³ ՄԱԳՀ-ն, որը սկզբնապես նախագծվել էր որպես ժամանակավոր համաձայնագիր, երկար ժամանակ միայնակ հանդիսանում էր միջազգային առևտուրը կարգավորող միջոց: Այսօր ՄԱԳՀ-ն գործում է ԱՀԿ շրջանակներում: ՄԱԳՀ 1947-ի և ՄԱԳՀ 1994-ի միջև կարևոր փոփո-

¹Տե՛ս <https://www.law.berkeley.edu/library/dynamic/guide.php?id=60>:

²Տե՛ս Առևտրի համաշխարհային կազմակերպության պաշտոնական կայքէջ, https://www.wto.org/english/thewto_e/thewto_e.htm:

³Տե՛ս August R., International Business Law: Text, Cases, and Readings. Fourth edition, New Jersey, Prentice Hall, 2004, էջ 359:

խությունը պաշտոնական վեճերի լուծման ընթացակարգն էր՝ ներառելով ԱՀԿ քննախմբերի՝ ԱՀԿ բողոքարկման մշտական մարմին դիմելու հնարավորությունը:⁴

Ներկայումս առևտրի ազատականացումը և առևտուրը կարգավորող կանոնները դարձել են անքակտելի տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի պահպանման և սոցիալական վիճակի բարելավման հետ: ԱՀԿ շրջանակներում պետություններն իրականացնում են սահմանների բացում այլ պետությունների համար, սահմանափակումների վերացում: Առևտրային համակարգի ԱՀԿ կանոնները հիմնված են ոչ խտրական առևտրային հարաբերությունների՝ համակցված վեճերը կարգավորող արդյունավետ և համաձայնեցված մեխանիզմի վրա:⁵ Լիակատար ազատ առևտրի կիրառումը պետք է լինի հիմնական թիրախ:⁶ ԱՀԿ-ն գործում է ինքնիշխան հավասարության սկզբունքի հիման վրա: Ինչպես բոլոր ինքնիշխան հավասարության կազմակերպությունների լիազումար նիստերում (օրինակ՝ Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիա (ԱՍԵԱՆ), Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ), Հարավային Ամերիկայի երկրների ընդհանուր շուկա (ՄԵԲԿՕՍՈՒԲ), Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն (ՆԱՏՕ), Եվրոպական Միություն (ԵՄ)) դիվանագետները լիովին հարգում են յուրաքանչյուր անդամ պետության իրավունքը՝ մասնակցելու, միջամտելու, տեսակետ հայտնելու, նախաձեռնությամբ հանդես գալու (որևէ հարց առաջադրելու), ներկայացնելու, հրաժարվելու կամ կարծիք հայտնելու որևէ առաջարկության կամ փոփոխության վերաբերյալ և արգելափակելու գործողության համար միաձայն աջակցություն պահանջող համաձայնությունը:⁷

ԱՀԿ անդամ պետությունների միջև կնքվում են տարածաշրջանային և բազմակողմ տնտեսական համաձայնագրեր, որոնք ԱՀԿ պարտավորություններից վեր կամ դուրս առևտրային զիջումներ են՝ կա՛մ տարածաշրջանային, կա՛մ բազմակողմ հիմքի վրա: Ընդհանրապես, ԱՀԿ անդամակցությունը թույլ է տալիս ընդգրկվելու այլ տնտեսական միավորումների մեջ: Ավելին, օրենսդ-

⁴ St' u Janis M., An Intoduction to International Law, Fourth Edition, New York, Little Brown & Co Law & Business, 2003, էջ 295-296:

⁵ St' u Sampson G., The WTO and sustainable development, United Nations University Press, 2005, էջ 54:

⁶ St' u Desta M., The Law of International Trade in Agricultural Products, From GATT 1947 to the WTO Agreement on Agriculture, The Hague, Kluwer Law International, 2002, էջ 5:

⁷ St' u International Law and International Relations, Edited by Simons B. and Steinberg R., New York, Cambridge University Press, 2006, էջ 547:

րական փոփոխությունները, ԱՀԿ պահանջներին համապատասխան, հեշտացնում են ինտեգրումն այլ տնտեսական միավորումներ: Շատ մեկնաբաններ արտահայտել են իրենց անհանգստությունը ԱՀԿ տեսանկյունից նման առևտրային արտոնյալ համաձայնագրերի տարածման վերաբերյալ: Պնդում են, որ նման համաձայնագրերի կողմից կա միջազգային իրավունքն ապակայունացնելու միտում՝ կոտրելով ԱՀԿ համակարգի միասնականությունը և թուլացնելով սկզբունքները, օրինակ՝ Ազգերի առավել բարենպաստման սկզբունքը, որի հիման վրա է ԱՀԿ-ն ստեղծվել:⁸ Ազգերի առավել բարենպաստման սկզբունքը (ԱԱԲ) ամրագրված է ՄԱԳՀ-1947-ի հոդված I-ում,⁹ ԾԱԳՀ հոդված II-ում¹⁰ և ՄՍԱԱ հոդված 4-ում¹¹: Սկզբունքի էությունն այն է, որ ԱՀԿ անդամ պետությունները հավասար են, և արգելվում է խտրականություն ցուցաբերել: Այս համատեքստում խոսքը նման ապրանքի մասին է, քանի որ, եթե ապրանքը նման չէ, ապա պետությունն իրավունք ունի խտրական ռեժիմ ունենալ:¹² Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ազգերի առավել բարենպաստման սկզբունքից առկա բացառությունները խոսում են ԱՀԿ գործունեության ճկունության և ոչ քարացած ու միանշանակ համակարգ լինելու մասին: ԱՀԿ-ն գործում է ոչ թե ուժի, այլ կանոնների գերակայությամբ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո աշխարհի բոլոր հատվածներում հաստատուն կերպով սկսեցին աճել տարածաշրջանային տնտեսական համաձայնությունները: Չնայած նրանք միմյանցից տարբերվում էին իրենց ինստիտուցիոնալ համակարգով և տնտեսական գործառույթների շարքով՝ շատերը հետևեցին Եվրոպական տնտեսական ընկերակցության օրինակին և սկսեցին առաջինն ուշադրություն դարձնել ազատ առևտրի գոտիների և մաքսային միությունների ստեղծման վրա:¹³ Այս կամ այն ինտեգրացիոն միավորմանն անդամակցության կամ համագործակցության ժամանակ անհրաժեշտ է գնահատել, թե որքանով է այդ քայլը մեծացնում երկրի անվտանգության աստիճանը, մասնավորապես՝ նրա տնտեսական

⁸ St' u Harrison J., *The Human Rights Impact of the World Trade Organisation*, Oxford and Portland, Oregon, 2007, էջ 108:

⁹ St' u http://www.wto.am/documents/magseri_arevtri_glxavor_hamadzaynagir.pdf:

¹⁰ St' u <http://www.wto.am/documents/havelvac1b.pdf>:

¹¹ St' u <http://www.wto.am/documents/havelvac1g.pdf>:

¹² St' u Bossche P., *The Law and Policy of the World Trade Organisation*, New York, Cambridge University Press, 2005, էջ 40:

¹³ St' u *International Law*, Edited by Evans M., Second edition, New York, Oxford University Press, 2006, էջ 714:

անվտանգության աստիճանը, որքանով է ինտեգրումը նպաստում ՀՆԱ աճին, նրա կառուցվածքի բարելավմանը, արտահանման աճին ու առևտրային հաշվեկշռի պակասորդի հիմնախնդրի լուծմանը, և, իհարկե, ինչպես է դա անդրադառնում զբաղվածության հիմնախնդրի լուծման վրա:¹⁴ Առևտրի տարածաշրջանացումը, որի մասին վկայում է Եվրոպական միությունը (ԵՄ) և Ազատ առևտրի հյուսիսամերիկյան համաձայնագիրը (ՆԱՖՏԱ), վերացրեց առևտրային խոչընդոտները և ստեղծեց օտար ապրանքների համար ավելի լայն շուկա: Տարածաշրջանային տնտեսական միավորումները կարող են օգնել հաղթահարել ոչ թափանցիկ տարբեր ազգային ստանդարտների արգելքները: Ազատ առևտրի համաձայնագիրը սահմանվում է որպես երկու կամ ավել պետությունների խումբ, որոնց միջև տարիֆները և առևտրային այլ արգելքները նվազեցվում կամ վերացվում են: Ազատ առևտրի հյուսիսամերիկյան համաձայնագիրը տարածաշրջանային ազատ առևտրի համաձայնագիր է: Մաքսային միությունը, ի տարբերություն ազատ առևտրի համաձայնագրի, ազատ առևտրի գոտի է, որտեղ երրորդ երկրների նկատմամբ սահմանվում են ընդհանուր արտաքին սակագներ: Եվրոպական միությունը մաքսային միություն է:¹⁵ Մաքսային միությունները երրորդ երկրների հետ առևտրային հարաբերությունների կարգավորումը փոխանցում են վերազգային մարմնին (օրինակ՝ ԵՄ դեպքում՝ Եվրոպական հանձնաժողովին, ԵԱՏՄ դեպքում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին):¹⁶

ՄԱԳՀ XXIV հոդվածից հետևում է, որ սույն Համաձայնագիրը չի արգելում պայմանավորվող կողմերի տարածքների միջև մաքսային միություն կամ ազատ առևտրի գոտի կազմավորել կամ մաքսային միություն կամ ազատ առևտրի գոտի կազմավորելու համար անհրաժեշտ միջանկյալ համաձայնագիր ընդունել, եթե տուրքերը և առևտրի կարգավորման այլ միջոցները, միության կամ համաձայնագրի կողմ չհանդիսացող պայմանավորվող կողմերի հետ ամբողջությամբ վերցված, ավելի բարձր կամ սահմանափակող չեն, քան այն տուրքերը և առևտրի կարգավորման միջոցները, որոնք կիրառվել են նախքան միության կազմավորումը կամ համաձայնագրի ընդունումը:

¹⁴ Տե՛ս Թավադյան Ա., Ինտեգրացիոն գործընթացների իրական հնարավորությունները, «21-րդ ԴԱԼ», 2014, թիվ 5(57), էջ 5-6:

¹⁵ Տե՛ս Dimatteo L., Dhooge L., *International Business Law: A transactional approach*, Second edition, USA, Cengage Learning, 2006, էջ 168:

¹⁶ Տե՛ս Исполинов А., ВТО и региональные торговые соглашения или что нам делать с ВТО и ЕАЭС, 2015;

Հակառակ դեպքում՝ կողմերը պետք է պահպանեն ՄԱԳՀ XXVIII հոդվածով սահմանված ընթացակարգը, այսինքն՝ իրականացնեն փոխհատուցողական կարգավորում: Կարծում ենք, որ մաքսային միությունների ստեղծումն առնչվում է երրորդ պետությունների շահերի հետ, քանի որ այս պարագայում, հանգամանքների բերումով, որոշ երրորդ պետություններ կարող են հայտնվել խոցելի իրավիճակում: Կարելի է պնդել, որ տարածաշրջանային առևտրային միությունները, ինչպես օրինակ՝ Եվրոպական միությունը, գործում են որպես «մինի-ՄԱԳՀ-ներ»:¹⁷

ԱՀԿ Բողոքարկման մարմինը սահմանել է երկու քայլից բաղկացած թեստ, և տարածաշրջանային տնտեսական համաձայնագրերի անդամ պետությունները երրորդ պետությունների հետ առևտրային հարաբերություններում պետք է գործեն վերոնշյալով սահմանված միջոցներին համապատասխան: Առաջին հերթին, անհրաժեշտ է ցույց տալ, որ մաքսային միությունն ստեղծվել է այն միջոցներին համապատասխան, որոնք սահմանված են ՄԱԳՀ XXIV հոդվածի 5 (ա) և 8 (ա) ենթակետերի պահանջներով, և երկրորդ՝ պետք է ապացուցել, որ մաքսային միության ստեղծումը կախված է նման միջոցների ընդունումից:¹⁸

ԾԱԳՀ V հոդվածը նույնպես «իր Անդամներից որևէ մեկին չի արգելում որևէ համաձայնագիր կնքել կամ լինել այնպիսի համաձայնագրի կողմ, որով ազատականացվում է այդ համաձայնագրի կողմերի մեջ կամ դրանց միջև ծառայությունների առևտուրը....պայմանով, որ այն ոլորտների էական ընդգրկում ունի և վերացնում է գոյություն ունեցող խտրական միջոցները և արգելում է նոր կամ ավելի խտրական միջոցները»: ԾԱԳՀ-ն տարբերակում չի մտցնում մաքսային միության և ազատ առևտրի գոտու միջև: Սա պայմանավորված է առնվազն երկու հանգամանքով. ծառայությունների առևտրի պարագայում չեն կիրառվում մաքսատուրքեր և մաքսավճարներ, և ծառայությունների առևտրի ազատականացումը բնորոշվում է որպես առավել բարձր մակարդակի տնտեսական ինտեգրացիա, ինչը ինքնին հատկորոշում է ԾԱԳՀ V հոդվածում «տնտեսական միասնացում» եզրույթը: ԱՀԿ իրավունքն անդամ պետություններին թույլ է տալիս կիրառել միջոցներ, որոնք դիտվում են որպես «արտոնյալ տնտեսական բացառություններ»: Այդպիսի

¹⁷ St' u Dimatteo L., Dhooge L., նշվ. աշխ., էջ 177:

¹⁸ St' u Appellate Body Report, Turkey-Restrictions on Imports of Textile and Clothing products, WT/DS34/AB/R, 22 October 1999, պարբ. 49:

միջոցները չեն համապատասխանում ԱՀԿ-ին, բայց դրանց կիրառումն օրինական շեղում է, քանի որ դրանք նպաստում են ԱՀԿ անդամ պետությունների առավել խոր տնտեսական ինտեգրմանը: ԱՀԿ իրավունքը ճանաչում է տնտեսական ինտեգրման և առևտրի ազատականացման առավելությունները, նույնիսկ եթե դրանք ներառում են միայն իր անդամներից մի քանիսին:¹⁹ Ավելին՝ ԱՀԿ բողոքարկման մարմինը (համենայն դեպս 1 գործում) ՄԱԳՀ XXIV հոդվածը համարել է ՄԱԳՀ 1994-ի հետ անհամապատասխանության բացահայտման դեպքում հնարավոր «պաշտպանություն»:²⁰

Կարևոր խնդիր է, թե արդյո՞ք հակասության դեպքում առաջնահերթությունը պետք է տրվի ԱՀԿ համաձայնագրերին, թե՝ տարածաշրջանային տնտեսական համաձայնագրերով նախատեսված նորմերին: Առաջին հարցադրման վերաբերյալ նշենք, որ պայմանագրերի և դրանց դրույթների միջև հակասությունների խնդիրը նոր երևույթ չէ: Միջազգային իրավունքի մասնագետները, Միջազգային իրավունքի հանձնաժողովը և Վիեննայի 1969 և 1989 թթ. կոնվենցիաները փորձել են լուծել պետությունների ստանձնած զուգահեռ և հակասական պարտավորությունների խնդիրը:²¹ 1969թ. միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 30-րդ հոդվածը համարվում է բավականին բարդ և անհասկանալի դրույթ:²² Ներկայումս վիճելի է, թե ԱՀԿ համաձայնագրերը և տարածաշրջանային տնտեսական համաձայնագրերը գտնվում են 30-րդ հոդվածի համատեքստում, թե՛ ոչ:²³

Հաջորդող պայմանագրերի հետևանքով առաջացող խնդիրները գնալով լրջանում են՝ պայմանավորված պետությունների և ուժի մեջ մտած պայմանագրերի թվի մեծանալով, ինչպես նաև տարածաշրջանային մակարդակում պետությունների առավել ակտիվ գործունեություն ծավալելով: Վիեննայի

¹⁹ St' u Bossche P, նշվ. աշխ., էջ 648:

²⁰ St' u Qureshi A., *Interpreting WTO Agreements: Problems and Perspectives*, New York, Cambridge University Press, 2006, էջ 103:

²¹ St' u MARCEAU G., *Conflicts of norms and conflicts of jurisdictions : the relationship between the WTO agreement and MEAs and other treaties*. *Journal of World Trade*, 2001, vol. 35, no. 6, էջ 1083-1084:

²² St' u <https://treaties.un.org/doc/publication/unts/volume%201155/volume-1155-i-18232-english.pdf>:

²³ St' u Боклан Д., *Евразийский экономический союз и Всемирная торговая организация: соотношение правовых режимов* // *Право. Журнал Высшей школы экономики*. 2017. № 2 , էջ 226:

կոնվենցիայի 30-րդ հոդվածով սահմանված կանոնները տալիս են ընդհանուր ուղղորդում և մի շարք դեպքերում խնդիրը պետք է ուղղակիորեն լուծվի կողմերի կողմից:²⁴

Մի շարք միջազգայնագետ-իրավաբաններ վերոգրյալ հարցադրման վերաբերյալ ունեն այլ տեսակետ: Օրինակ՝ Ն. Լավրանոսի կարծիքով ԱՀԿ-ն և տարածաշրջանային միություններն անկախ են միմյանցից, և նրանց փոխհարաբերություններում բացակայում է հիերարխիան:²⁵ Ա. Սմբատյանը նույնպես հարում է այս տեսակետին և նրա կարծիքով՝ ԱՀԿ համաձայնագրերի և տարածաշրջանային տնտեսական միությունների միջև կնքված համաձայնագրերն օժտված են միևնույն իրավաբանական ուժով:²⁶ Ճիշտ է, ի տարբերություն ներպետական իրավունքի, որտեղ առկա է հիերարխիա, օրինակ՝ սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական ակտերի միջև, միջազգային իրավունքում սա բացակայում է, և հիմնական սկզբունքն այն է, որ բոլոր պայմանագրերն օժտված են հավասար իրավաբանական ուժով (բացառությամբ՝ *jus cogens* նորմերի): Սակայն հիերարխիան կարող է գոյություն ունենալ, եթե պայմանագրով տրվում է առաջնահերթությունը մեկ այլ պայմանագրի, երբ հաջորդողը գերակայություն է ունենում նախորդի նկատմամբ, և երբ հատուկ կանոնը գերակայում է ավելի ընդհանուրին:²⁷

Բացառությունների դեպքում հաճախ հղում է կատարվում լատիներեն *exceptio est strictissimae applicationis* սկզբունքին, որի համաձայն՝ պայմանագրային պարտավորություններից բացառությունները մեկնաբանվում են զսպող կերպով: Այն նշանակում է, որ ընդհանուր դրույթի և բացառության միջև կոլիզիան լուծվում է հոգուտ ընդհանուր դրույթի:²⁸

Առանցքային խնդիր է նաև այն, որ Անդամակցության վերաբերյալ ԱՀԿ համաձայնագրի XII հոդվածի ու ՄԱԳՀ XXXIII հոդվածի միջև առկա է որոշակի անհամապատասխանություն: ԱՀԿ համաձայնագրի XII հոդվածի համա-

²⁴ St' u Shaw M., International Law, Fifth edition, New York, Cambridge University Press, 2003, էջ 834:

²⁵ St' u Lavranos N., The Brazilian Types Case: Trade Supersedes Health, Trade, Law and Development, Vol 1, № 2 (2009), էջ 11:

²⁶ St' u ВТО и Региональные интеграционные объединения: Соотношение «Правовых Сил» в урегулировании торговых споров: А .С. Сибатян //Российский внешнеэкономический Вестник, 2011, № 8, էջ 18:

²⁷ St' u Pawelyn J., Legal avenues to “Multilateralizing Regionalism”: Beyond Article XXIV, Geneva, 2007, էջ 8:

²⁸ St' u Qureshi A., նշվ. աշխ., էջ 104:

ձայն՝ ցանկացած պետություն կամ մաքսային տարածք, որն ունի իր արտաքին առևտրային հարաբերությունները և սույն Համաձայնագրով և Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերով նախատեսված մյուս հարցերը վարելու լիարժեք ինքնուրույնություն, կարող է անդամակցել սույն Համաձայնագրին՝ իր և ԱՀԿ միջև համաձայնեցված պայմաններով: Իսկ ՄԱԳՀ XXXIII հոդվածի համաձայն՝ որևէ կառավարություն, որը սույն Համաձայնագրի կողմ չէ, կամ որևէ կառավարություն, որը գործում է առանձին մաքսային տարածքի անունից, որը լիարժեք ինքնավարություն ունի իր արտաքին առևտրային հարաբերությունների վարման կամ սույն Համաձայնագրով նախատեսված այլ հարցերում, կարող է իր կամ այդ տարածքի անունից անդամակցել սույն Համաձայնագրին: Այսինքն՝ ԱՀԿ համաձայնագրի պայմաններով, եթե պետությունն անդամակցում է որևէ մաքսային տարածքի, կարող է կորցրած լինել արտաքին առևտրային հարաբերությունները վարելու լիարժեք ինքնուրույնությունը: Բնականաբար, սա չի գործում: Հակասում է հենց ԱՀԿ համաձայնագրի XI հոդվածը՝ Եվրոպական համայնքների դեպքում: Ինչպես նաև ՄԱԳՀ XXIV հոդվածի նշանակությունն է դատարկ դարձնում, որը պետություններին թույլ է տալիս մաքսային միություններ կազմավորել: ԱՀԿ համաձայնագրի XII հոդվածը, ըստ էության, լիարժեք ինքնավարություն ասելով, նկատի ունի ոչ միայն ապրանքների, այլ նաև ծառայությունների առևտրի, մտավոր սեփականության իրավունքներին առնչվող հարցերի կարգավորման ինքնավարություն: ԵՄ-ն գործում է անդամ պետությունների կողմից փոխանցված իրավասությունների հիման վրա: ԵՄ-ն ունի լիարժեք ինքնավարություն ապրանքների առևտրի հարցերում, իսկ ծառայությունների առևտրի և մտավոր սեփականության իրավունքների որոշ ասպեկտների դեպքում լիազորությունը բաշխված է անդամ պետություններին և միաձայն պետք է ընդունվի նրանց կողմից նախքան ԵՄ շրջանակներում որոշման կայացումը:²⁹

Մեր կարծիքով, այնուամենայնիվ, տարածաշրջանային առևտրատնտեսական համաձայնագրեր կնքելիս անհրաժեշտ է գնահատել, թե արդյո՞ք, աշխարհը բաժանելով տարածաշրջանային միավորումների, առկա է ԱՀԿ համաշխարհային ձգտումներից շեղումներ, և եթե՝ այո, ապա՝ դրանց հնարավոր հետևանքները:

²⁹ St' u Parenti A., Accession to the World Trade Organisation: A Legal Analysis, 2000 Kluwer Law International, Netherlands, 2000, էջ 149:

ВСЕМИРНАЯ ТОРГОВАЯ ОРГАНИЗАЦИЯ И РЕГИОНАЛЬНЫЕ ЭКОНОМИЧЕСКИЕ СОЮЗЫ

Казарян Джема Артаковна

Магистрант Ереванского государственного университета

В статье подвергается анализу соотношение регулирующей международной торговлю Всемирной торговой организации и региональных экономических объединений, поскольку между государствами - членами Всемирной торговой организации заключаются региональные и многосторонние экономические соглашения, являющиеся региональными или многосторонними торговыми уступками сверх или вне обязательств ВТО.

Ключевые слова: организация, либерализация торговли, экономический союз, региональное торгово-экономическое соглашение.

WORLD TRADE ORGANIZATION AND REGIONAL ECONOMIC UNIONS

Ghazaryan Jema

Master of Laws, Yerevan State University

The article covers the correlation between the World Trade Organization, regulating international trade, and the regional economic associations. A number of regional and multilateral economic agreements, made between the member states of the World Trade Organization, are considered to be trade concessions above or beyond the WTO obligations, either on regional or multilateral ground.

Key words: organisation, trade liberalization, economic union, regional trade-economic agreement.

Հոդվածը գրախոսվել է՝ 09.09.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 11.09.2020թ.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Մարգարյան Արգար

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի վարչական իրավունքի և
ռստիկանության վարչական գործունեության
ամբիոնի դասախոս, ռստիկանության մայոր*

Յուրաքանչյուր հասարակություն օբյեկտիվորեն ունի իր ներսում առաջացող հարաբերությունների կազմակերպվածության և կարգավորվածության կարիք՝ անկախ վերջիններիս դրսևորման աստիճանից: Այդ նպատակին հնարավոր է հասնել բացառապես սոցիալական կարգավորման միջոցով, իսկ որպես մարդկանց վարքագծի կարգավորիչներ՝ հանդես են գալիս սոցիալական նորմերը: Դրանք հանրային ներսում համատեղ մարդկային կյանքի համար օբյեկտիվորեն անհրաժեշտ կանոններ են, որոնք կանխորոշում են հնարավորի ու թույլատրելիի սահմանները¹:

Իրավունքը և սոցիալական նորմերի մյուս տեսակներն այն հիմնական ձևերն ու միջոցներն են, որոնց օգնությամբ կարգավորվում է մարդկանց վարքագիծը: Ակներև է, որ սոցիալական նորմերի տարբեր տեսակների (բարոյական, իրավական, էթիկական, կորպորատիվ, գեղագիտական, կրոնական և այլն) փոխազդեցության գործընթացում դրանցից յուրաքանչյուրը, ունենալով սոցիալական նորմերին բնորոշ ընդհանուր հատկանիշներ, պահպանում է իր առանձնահատկությունները և հանդես է գալիս որպես հատուկ տեսակի կարգավորիչ:

Ընդհանուր առմամբ՝ իրավական և բարոյական նորմերի աղբյուրները նույնն են եղել. դրանք են՝ դիցաբանությունը, աստվածաբանությունը (կրոնը), սովորույթները, տարբուները և այլն: Այլ խոսքով՝ ի սկզբանե մարդն արարել է աշխարհի մեջ՝ որպես նրա անբաժան մասնիկ, և միևնույն ժամանակ տեսել աշխարհին իր մեջ՝ «փոքրը մեծի մեջ է, մեծը՝ փոքրի»: Հետագայում, երբ մարդկությունը մտավ ռացիոնալիզմի դարաշրջան, բարոյականությունը և իրա-

¹ Տե՛ս՝ Теория государства и права. Курс лекций / Под ред. Н. И. Матузова и А. В. Малько. – М.: Юрист, 1997, էջ 288:

վունքը տարանջատվեցին միմյանցից՝ աստիճանաբար վերածվելով հակոտնյաների, և մարդը սկսեց կորցնել աշխարհի ամբողջական ընկալումը, ուղենիշերի այն հիմնարար համակարգը, որի հիման վրա նա իմաստավորում էր իր կյանքը և կառուցում իր կենցաղը: Արդյունքում փոխվեցին գերակայությունների նվիրապետությունը. ոգի-հոգի-մարմին հիերարխիայում որպես գերակա չափանիշ համարվեց մարմինը, և որպես հետևանք՝ կյանքի հիմնական արժեքը դարձավ նյութը²:

Բարոյական նորմերի տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ դրանք արտահայտում են անհատների ինքնություն դիրքորոշումը, նրանց ազատ և ինքնագիտակցված տեսակետը՝ մատնանշելով, թե մարդկանց արարքներում և փոխհարաբերություններում ո՞րն է բարին ու չարը, պարտքն ու խիղճը: Բարոյականությունն անհատի ներքին կողմնորոշման չափանիշն ու արտաքին վարքագծի ինքնակարգավորման սկզբունքն է:

Իրավունքի սոցիալական արժեքը նույնպես առանձնահատուկ է: Այն, որպես հասարակական հարաբերությունների կայունացման և կարգավորման նորմատիվ ձև, պաշտպանվում է պետական հարկադրանքով:

Ավելին, պետության և իրավունքի տեսության բնագավառի առաջավոր գիտնական Վ. Ներսեսյանցի համոզմամբ իրավունքն իր արժեքաբանական չափման մեջ ոչ թե բարոյական (կամ խառը՝ բարոյա-իրավական) արժեքների կրող է, ինչը բնութագրական է բնական-իրավական մոտեցմանը, այլ հենց իրավական արժեքների խիստ որոշակի՝ իրավական պարտադրականության առանձնահատուկ ձև է³:

Նկատենք, որ ներկայումս ժողովրդավարական պետություններում հասարակական հարաբերությունների կարգավորումն ապահովող սոցիալական նորմերից ոչ բոլորն են ներառված իրավունքի համակարգում: Պատճառը ըստ ամենայնի, այդպիսի կանոնների դասակարգման տարակերպությունն է և նրանց մեկ միասնական գնահատողական առանցքի շուրջ խմբավորման անհնարինությունը: Ըստ այդմ էլ կանոնների արժեքայնությունը միշտ կախված է մի շարք գործոններից, մասնավորապես նրանից, թե որքանով են մարդիկ պատրաստ հետևել դրանց, որքան է մեծ հասարակության

² Տե՛ս՝ URL:<https://iravaban.net/1541.html> (11.06.2020 թ.):

³ Տե՛ս՝ Ներսեսյանց Վ. Ս. «Իրավունքի և պետության տեսություն», Երևան, 2001, էջ 48:

ճնշումը հասարակության բոլոր անդամների կողմից (այդ կանոններին հետևելու առումով):

Որպես կանոն՝ թե՛ բարոյական, թե՛ իրավական նորմերն ունեն հասարակական հարաբերությունների կարգավորման՝ իրենց բնորոշ յուրահատկությունը, ինչը կարող է արտահայտվել՝ կախված իրավիճակից, մարդու կողմից պարտականությունների կատարմամբ կամ չկատարմամբ:

Ընդ որում՝ բարոյական նորմերը, ի տարբերություն իրավական նորմերի (վերջիններս կարգավորում են միայն վարքագիծը և, որպես կանոն, չեզոք են շարժառիթի նկատմամբ), չեն պահանջում կոնկրետ գործողություններ, այլ ընդգծում են միայն շարժառիթը (վարքագծի, բարի կամքի և մտադրության նպատակահարամարությունը):

Այս համատեքստում՝ մեր ուսումնասիրության առանցքն իրավունքի և բարոյականության հարաբերակցությունն է: Այս հարցը մշտապես եղել է հումանիտար գիտությունների ուշադրության կենտրոնում՝ հին դարերից մինչև նոր ժամանակներ: Սակայն իրավունքը և բարոյականությունը որպես լիովին անկախ երևույթ կարելի է դիտարկել՝ սկսած լուսավորության դարաշրջանից: Բուրժուական հեղափոխությունների ժամանակներից ի վեր հասարակական գիտակցության ձևերի համակարգում հիմնական տեղն զբաղեցրել է իրավաբանական աշխարհայացքը: Մինչ այդ, հասարակական գիտակցության մեջ որոշիչ դեր ունեին նախ՝ դիցաբանությունը, այնուհետև՝ կրոնը, իսկ հետագայում՝ նոր ժամանակներում, բարոյականությունն ու քաղաքականությունը:

Մասնագիտական գրականության մեջ իրավունքի և բարոյականության հարաբերակցության հարցի շուրջ մեկնաբանությունները բազմաբովանդակ են:

Ըստ Վ. Ս. Ներսեսյանցի, իրավական և ոչ իրավական նորմերի առանձնահատկություններն ազդում են միմյանց վրա, բայց, դրանով հանդերձ, նրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես հատուկ տեսակի կարգավորիչ: Հիմնական սկզբունքը, որով իրավունքը տարբերակվում է այլ նորմատիվ-արժեքային համակարգերից, հանդիսանում է ձևական հավասարությունը⁴:

Կ. Վ. Միխայիլովսկին իր «Իրավունքի փիլիսոփայության գրառումներ» աշխատանքում վերը նշված հիմնախնդրի կապակցությամբ առանձնացնում է չորս մոտեցում: Առաջինը վերաբերում է իրավունքի և բարոյականության

⁴ Տե՛ս՝ Нерсесянц В. С. Проблемы общей теории права и государства. М., 2008, էջեր 82, 90:

միջև տարբերության ժխտմանը, քանի որ բարոյականության յուրաքանչյուր պահանջ կարող է դրվել իրավաբանական նորմերի հիմքում: Երկրորդը բնութագրվում է իրավունքի և բարոյականության հակադրությամբ՝ հիմնավորելով նրանց ինքնուրույնությունն ու անկախությունը: Երրորդ դեպքում՝ իրավունքը դիտարկվում է որպես էթիկայից ածանցվող՝ «էթիկական նվազագույն»: Եվ վերջապես, չորրորդը վերաբերում է իրավունքի և բարոյականության փոխհարաբերությունների խնդրի լուծմանը⁵:

Բ. Ն. Չիչերինի տեսական հայացքներում իրավունքը բնորոշվում է որպես «օրենքով սահմանված ազատություն»: Ազատության գաղափարը հեղինակը միավորում է բարոյականության և իրավունքի հասկացություններով՝ այն մեկնաբանելով սուբյեկտիվ և օբյեկտիվ իմաստներով. «Ազատությունը, որից օրենքի շրջանակներում օգտվում է մարդը, իրավունքն է սուբյեկտիվ իմաստով: Օրենքը, որը սահմանում է այդ ազատությունը, իրավունքն է օբյեկտիվ իմաստով»⁶:

Ակնհայտ է նաև այն հանգամանքը, որ բարոյական նորմերը կարող են որոշ դեպքերում համընկնել իրավական նորմերի հետ՝ կարգավորելով հասարակական հարաբերությունների միևնույն ոլորտը: Ավելին, որոշ դեպքերում իրավական նորմերը կարող են լինել որոշ բարոյական նորմերի փոփոխման կամ վերացման պատճառներից մեկը: Նշված հարցադրումը, մեր կարծիքով, ունի հայեցողական բնույթ, քանի որ հարցադրման հիմքում ընկած է իրավունքի համընդհանուր հնարավոր ազդեցությունը հասարակության բարոյականության վրա:

Այս իմաստով, հասարակության հիմնարար արժեքների պահպանման և երաշխավորման համակարգում իրավունքը կարելի է դիտարկել որպես վերը նշված արժեքներին հասնելու միջոց: Դա է պատճառը, որ ռացիոնալիզմի դիրքերից գնահատականը պետք է հիմնված լինի իրավունքի՝ բարձր սոցիալական արժեքների պաշտպանության ապահովման հնարավորության վրա՝ զերծ պահելով այնպիսի իրավիճակներից, որոնցում առկա են արժեքների բխումներ, և որոնք, ըստ էության, չեն կարող լուծվել միայն իրավունքի միջոցով:

Այս պարագայում կարևոր դերակատարություն կարող է ունենալ պարզաբանման միջոցով իրավունքի մեկնաբանումը, որը կարող է արտահայտ-

⁵ Տե՛ս՝ Михайловский И. В. Очерки философии права. Томск, 1914. Т. 1, էջեր 143–160:

⁶ Տե՛ս՝ Чичерин Б. Н. О началах этики // Философские науки. № 1. 1990, էջ 103:

վել արդարադատության գործառույթի իրականացմամբ և վերջինիս պարզաբանմամբ: Ինչպես նշում է ռուս անվանի իրավագետ Ա. Ֆ. Կոնին, արդարադատությունը չի կարող առանձնացվել արդարությունից, իսկ վերջինս ամենևին չի կայանում միայն պատժիչ սանկցիաների իրավաչափ կիրառման մեջ: Դատական պաշտոնյան այն մարդկանց նկատմամբ իր գործողությունների ամբողջ կերպարով, որոնց վարքագծի կապակցությամբ նա կոչված է ներդնել իր գիտելիքները, փորձը և իշխանությունը, պետք է ձգտի բարոյական օրենքի իրագործմանը⁷: Արդյունքում, ձևական առումով, արդարադատության հասկացության բովանդակությունը կարող է արտահայտվել հետևյալ բանաձևով՝ բոլորին հավասար իրավունքներ և պարտականություններ հավասար պայմանների դեպքում:

Ուշագրավ է, որ բարոյականությունն իր մեջ ներառում է ոչ միայն պարտականություններ և պարտավորություններ, այլև՝ որոշակիացված բարոյական իդեալներ: Վերջիններս, ի տարբերություն բարոյական պարտականությունների, չեն դիտարկվում որպես հերթական, «շարքային» գաղափարներ, քանի որ բարոյական իդեալների կատարումն արժանի է առանձին գնահատման: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է գերազանցել պահանջները և, միաժամանակ, մասնավոր և հանրային շահերի հարաբերակցության մեջ նախապատվությունը տալ ընդհանուր՝ հանրային շահերին՝ հնարավորինս պահպանելով մասնավոր շահերը: Այստեղ կարևոր է փաստել, որ անձը հարգանքով է վերաբերվում իդեալներին և դրանք չի դիտարկում որպես քննադատության առարկա: Հենց այսպիսի իդեալներն են մարդու կյանքում զբաղեցնում այն տեղը, ինչ որ բարոյականությունը՝ հասարակությունում:

Այսպիսով, բարոյականությունը արժեքային նորմատիվ համակարգ է՝ չնայած որ դժվարությամբ կարելի է խոսել այն ունիվերսալ բարոյական սկզբունքների մասին, որոնք կարող են կիրառվել միշտ և ամենուր: Նույնիսկ այսօր բարոյականությունը մեծապես հիմնավորվում է ավանդական հայացքներով և քաղաքական նախընտրություններով՝ ցանկացած սոցիալական խմբում հնարավոր համարելով փոխադարձ իրավունքների և պարտականությունների շրջանակներում որոշակի տեսակի վարքագծից ձեռնպահ մնալը:

⁷ Ст'е'у` Теория государства и права. Курс лекций / Под ред. Н. И. Матузова и А. В. Малько. – М.: Юрист, 1997, էջեր 302-303:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր քաղաքակրթություն սահմանում է իրավունքի և բարոյականության փոխազդեցության սեփական առաջնահերթությունները՝ հիմք ընդունելով իրավական և բարոյական նորմերի ազդեցության տիրույթը հասարակական հարաբերությունների վրա:

Հարկ է նշել նաև, որ սեփականության և քաղաքական իշխանության հարաբերությունների ոլորտում ծագող իրավական նորմերին բնորոշ է «իրենց կարգավորման սահմաններից դուրս գալու միտումը»: Այդ իսկ պատճառով իրավական նորմերին բաժին է ընկնում հասարակական հարաբերությունների կարգավորման ավելի մեծ շրջանակ՝ համեմատաբար փոքրը (ընկերական, փոխօգնության, սիրո, կարեկցանքի և այլ հարաբերությունները, բարության, չարի, ազնվության, երախտագիտության, պարկեշտության, խղճի կատեգորիաները) թողնելով բարոյական կարգավորիչների ազդեցությանը⁸:

Այսպիսով, և՛ իրավունքը, և՛ բարոյականությունը կարողանում են ներթափանցել հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառները: Սակայն ո՛չ իրավունքը, ո՛չ էլ բարոյականությունը չեն սահմանափակվում սոցիալական հարաբերությունների առարկայական առանձնացված ոլորտով, այլ գործում են սոցիալական կապերի միասնական հարթությունում:

Այս համատեքստում առանձնապես կարևորվում է այն հիմնադրույթը, որ իրավունքը և բարոյականությունը՝ որպես սոցիալական կարգավորիչներ, մշտապես առնչվում են անհատի ազատ կամարտահայտության հետ: Հասցեագրված լինելով մարդու գիտակցությանը և կամքին՝ իրավունքը և բարոյականությունը որոշում են անձի ազատ վարքագծի սահմանները հետևյալ կերպ. իրավունքն իր էությանմբ ուրվագծում է մարդու գործողությունների արտաքին ազդեցությունը՝ չեզոք մնալով նրա վարքագծի ներքին շարժառիթների նկատմամբ, իսկ բարոյականությունը ոչ միայն որոշում է արտաքին ազատության սահմանները, այլև պահանջում է անձի ներքին ինքնորոշումը: Այս իմաստով՝ բարոյականությունը կարելի է համարել ազատության ոչ ձևական կողմնորոշիչ⁹:

⁸ St' u՝ Лукашева Е. А. Взаимодействие права и морали: общее и особенное // Взаимодействие права и морали: материалы Международной научной конференции / отв. ред. Т. А. Сошникова. - М.: Изд-во Моск. гуманит. ун-та, 2014, էջ 11:

⁹ St' u՝ նույն տեղում, էջ 15:

Իրավական և բարոյական ոլորտներում ազատության բնույթի ընկալման տարբերությունը կանխորոշում է նաև իրավական և բարոյական պատասխանատվության ոլորտների տարբերությունը, որը բնորոշ է ինչպես սանկցիաներին, այնպես էլ՝ դրանք կիրառող սուբյեկտներին: Սանկցիաները տարբերակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ պատմական պայմանները, որոնցում գործում են այդ սոցիալական կարգավորիչները: Բարոյական սանկցիաների խստության աստիճանը տարբերվել է ոչ միայն ժամանակային առումով, այլև՝ ըստ ազգային պատկանելության: Այստեղ իրավունքի և բարոյականության հարաբերակցությունը նույնպես տեսանելի է, քանի որ բարոյական արգելքները շատ հաճախ վերածվել են իրավականի, իսկ իրավականը՝ բարոյականի:

Ավելին, իրավական սանկցիաների առանձնահատկությունը ոչ միայն նրանց խստության և ձևական որոշակիության, այլ նաև ապահովման միջոցների մեջ է, որոնք անքակտելիորեն կապված են պետության հետ: Վերջինս, ունենալով հատուկ գործիքակազմ, կարող է հարկադրել՝ պահպանելու իրավական նորմերի պահանջները: Ի տարբերություն իրավունքի՝ բարոյականությունը տիրապետում է այլ «պաշտպանական» գործիքակազմի՝ հասարակական կարծիք, սոցիալ-հոգեբանական կարծրատիպեր, ավանդույթներ և մարդկանց հոգևոր կյանքի սովորույթներ: Սակայն նույնիսկ այս առանձնահատկությունը չի չեզոքացնում իրավունքի և բարոյականության՝ պատմականորեն առկա անհերքելի կապը, նրանց առարկայական հատկանիշների ընդհանրությունը, գործառությային, կառուցվածքային տարրերի միասնականությունը, իրավական և բարոյական նորմերի գնահատողական և արժեքային նմանությունը և այլն:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ բարոյականությունը՝ որպես իրավունքի արժեքի գնահատման չափանիշ, կապված է իրավունքի ձևավորման բոլոր փուլերի ու իրավունքի սոցիալական գործողության հետ: Իսկ իրավունքը՝ որպես «բարոյականության իրավական չափում», հանդիսանում է իրավական համակարգերի կատարելագործման կարևորագույն գործոն: Դա է պատճառը, որ, մեր կարծիքով, իրավունքը և բարոյականությունը մշտապես պետք է դիտարկվեն ներդաշնակ հարաբերակացության մեջ՝ չկորցնելով յուրահատկությունը և ինքնուրույնությունը: Ավելին, ինչպես արդարացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ, իշխանությունների տարանջատման պայմաններում իրավական նորմի կառուցվածքային տարրերի ներդաշնակ

փոխգործակցությունը հնարավոր է դառնում, եթե իրավունքն արտահայտող իրավական նորմը խարսխված է բարոյականության ազգային ընկալումների վրա, ինչն էլ իր հերթին հավասարակշռված է համամարդկային արժեքաբանության հետ¹⁰: Ըստ այդմ՝ իրավական նորմերի պահանջներին հետևելը բարոյական արժեք է՝ բարոյականության և օրենքի հարաբերակցության միայն այդպիսի ընկալումն է հանդիսանում հասարակության և պետական ինստիտուտների միջև կառուցողական փոխգործակցության բանալին, և, ի վերջո, ազգային անվտանգություն ապահովման երաշխիքը: Օրենքի չպահպանումը, դրա անտեսումը պետք է լինեն ոչ միայն իրավական առումով դատապարտելի, այլ նաև՝ ամոթալի երևույթ ինչպես պետական մարմինների ու պաշտոնատար անձանց, այնպես էլ՝ հասարակության համար¹¹:

Ընդհանուր առմամբ՝ իրավունքի և բարոյականության փոխազդեցությունը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ 3 հիմնական ուղղությունների՝

- 1) բարոյական նորմերի իրավական ամրագրում,
- 2) բարոյական նորմերի նկատմամբ իրավունքի չեզոքություն,
- 3) իրավունքի և բարոյականության հակադրություն:

Առաջին ուղղության դեպքում ակնհայտ է բարոյականության ազդեցությունն իրավունքի և իրավական կանոնների ձևավորման վրա: Ընդ որում՝ բարոյական կանոններն իրավունքում կարող են հանդես գալ սուբյեկտիվ իրավունքների, իրավաբանական պարտականությունների կամ արգելքների տեսքով: Օրինակ՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը (սուբյեկտիվ իրավունք), ալիմենտ վճարելը (իրավաբանական պարտականություն), սպանության, գողության արգելքները (իրավաբանական արգելք) և այլն: Արդյունքում՝ բարոյական կանոններն իրենց արտացոլումն են գտնում իրավական նորմերում՝ դառնալով ոչ միայն բարոյականության, այլ նաև իրավունքի կողմից պարսավելի՝ ապահովվելով պետական հարկադրանքով:

Գաղտնիք չէ, որ բարոյականության ազդեցության տիրույթում են գտնվում հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր ոլորտները, ինչը վստահաբար չենք կարող ասել իրավունքի մասին: Ուստի պետք է փաս-

¹⁰ St' u՝ URL: <https://iravaban.net/1541.html> (11.06.2020 թ.):

¹¹ St' u՝ Application no. 5493/72 Handyside v. The United Kingdom, (հասանելի աղբյուրը՝ http://european-court.eu/uploads/ECHR_Handyside_v_the_United_Kingdom_07_12_1976.pdf 12.06.2020թ.)

տել, որ որոշակի խումբ հարաբերությունների կարգավորման նկատմամբ իրավունքը դրսևորում է չեզոք վերաբերմունք: Այսօրինակ մոտեցման պատճառները կարող են տարբեր լինել՝ հիշյալ հարաբերությունների իրավական կարգավորման աննպատակահարմարությունից ընդհուպ անհնարինություն: Օրինակ, ըստ էության, նպատակահարմար և հնարավոր չէ իրավական կարգավորման ենթարկել ընկերական, միջանձնային հարաբերությունների բազմաթիվ ասպեկտներ, ընտանեկան կյանքի, խղճի և դավանանքի ազատության շատ կողմեր և այլն:

Խոսելով իրավունքի և բարոյականության փոխազդեցության մասին՝ պետք է խոստովանել, որ այդ գործընթացը հարթ և միատարր չէ: Նշված սոցիալական կարգավորիչների միջև հաճախ ծագում են հակասություններ, կոլիզիաներ, տարամիտումներ: Բարոյական և իրավական պահանջները ոչ միշտ և ոչ ամեն ինչում են համաձայնեցվում: Այդ անհամապատասխանությունն ունի ինչպես սոցիալական, այնպես էլ դիալեկտիկական ծագում, և բխում է հակադրությունների միասնության և պայքարի օրենքի գործողությունից: Թեև իրավունքի հիմքում ընկած է բարոյականությունը, դա ամենևին չի նշանակում, որ իրավունքը մեխանիկորեն ամրագրում է բարոյականության բոլոր պահանջները՝ անկախ դրանց էությունից և պատկանելությունից: Էթիկայի և իրավունքի ողջամիտ համադրության հասնելը բոլոր իրավական համակարգերում եղել է դժվար լուծելի խնդիր: Եվ, ինչպես վկայում է փորձը, սովորաբար կատարյալ ներդաշնակության հասնել չի հաջողվում. հակադրություններն անխուսափելիորեն պահպանվում են, ծնվում են նորերը և խորանում արդեն իսկ գոյություն ունեցողները: Այս հակասություններն ինչոր չափով հնարավոր է հարթել, թուլացնել, նվազեցնել, բայց հասնել իսպառ չեզոքացման, որպես կանոն, հնարավոր չէ¹²: Բարոյականությունը, օրինակ, դատապարտում է ծնողի կողմից երեխայից կամ նրա խնամքից հրաժարվելն այն դեպքում, երբ ծնողը դրա իրականացման համար ունի համապատասխան հնարավորություններ, սակայն չի ցանկանում օգտագործել դրանք: Մինչդեռ իրավունքը ծնողին թույլատրում է հրաժարվել երեխայից կամ նրա խնամքից այն դեպքում, երբ ծնողը իրավաբանորեն հիմնավորում է, որ չունի նման հնարավորություն: Համանման իրավիճակ առկա է նաև այն դեպքում, երբ սեփականատիրոջ երեխայի պատճառով վարձակալի բնակարանում

¹² Ст'ю` Теория государства и права. Курс лекций / Под ред. Н. И. Матузова и А. В. Малько. – М.: Юрист, 1997, էջեր 303-304:

բռնկված հրդեհի հետևանքով մահանում է սեփականատիրոջ երեխան, և ոչնչանում է վարձակալի, ինչպես նաև սեփականատիրոջ գույքը, սակայն վարձակալը դատական հայց է ներկայացնում սեփականատիրոջ դեմ՝ պահանջելով իրեն պատճառված նույնիսկ ոչ էական գույքային վնասի փոխհատուցում և անտեսելով հարցի բարոյական կողմը: Մեկ այլ իրավիճակում բարոյականությունը կարող է արդարացնել այն, ինչն արգելում է իրավունքը: Օրինակ՝ թշնամական պետության պետական խորհրդանիշներն անարգելը տվյալ հասարակության բարոյական հարթությունում կարող է համարվել ընդունելի, մինչդեռ նման արարքն իրավունքի տեսանկյունից շատ հաճախ համարվում է ոչ իրավաչափ:

Այսպիսով, խոսելով իրավունքի և բարոյականության փոխազդեցության մասին, պետք է փաստել, որ հիմնախնդրի լուծման թերևս լավագույն տարբերակը բարոյական հիմնավորման ենթարկված իրավունքի գոյությունն է: Ընդ որում, հաշվի առնելով իրավունքի նորմատիվ բնույթը և համահասարական շահերն սպասարկելու հանգամանքը՝ իրավունքում պետք է արտացոլվեն համընդհանուր ճանաչում ստացած բարոյական արժեքները՝ իրավունքը գերծ պահելով հատվածական բարոյական արժեքների ազդեցությունից:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ ПРАВА И МОРАЛИ

Маргарян Абгар Самвелович

*Преподаватель кафедры административного права и
административной деятельности полиции Академии
Образовательного комплекса полиции
Республики Армения, майор полиции*

В научной статье обсуждаются вопросы, связанные с правом и моралью как самостоятельными социальными регуляторами, их особенностями, ролью в общественной и государственной жизни, а также анализируются связи и взаимодействие между ними. По мнению автора, в этом взаимодействии особенно важным является выделение следующих направлений: правовое закрепление моральных норм, нейтралитет права по отношению к моральным нормам, противопоставление права и морали. Лучший вариант решения обсуждае-

мой проблемы автор видит в существовании такого права, которое подверглось моральному обоснованию. При этом, учитывая нормативный характер права и обстоятельство обслуживания общесоциальных интересов, в праве должны отражаться общепризнанные моральные ценности, тем самым, избавляя его от влияния фрагментарных моральных ценностей.

Ключевые слова: право, мораль, взаимодействие, общество, государство, норма, социальный регулятор, сознание, поведение.

SOME ISSUES OF INTERACTION BETWEEN LAW AND MORALITY

Margaryan Abgar

*Lecturer at the Chair of Administrative Law
and Police Administrative Activity, Academy
of the Educational Complex of Police of RA
Police Major*

Some issues related to law and morality, as separate social regulators, their role and characteristics in social and state environment, as well as their correlation and interaction have been discussed in the present article. The author refers to their interaction with an emphasis to the following directions: legal confirmation of moral norms, neutrality of law towards morality and contradiction of law and morality. The best solution to this problem, from the author's point of view, is the existence of morally justified law. Moreover, taking into consideration the normative character of law and the circumstances serving common social interests, the generally accepted moral values should be reflected in law relieving it from the influence of fragmented moral values.

Key words: law, morality, interaction, society, state, norm, social regulator, consciousness, behavior.

Հոդվածը գրախոսվել է՝ 16.09.2020թ.

Ներկայացվել է տպագրության՝ 17.09.2020թ.

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ. ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՄԱՐՈՒԹՅԱՄԲ

Մարտության Գայանե

*Հայաստանի Հանրապետության ոստիկանության
կրթահամալիրի ակադեմիա Քաղաքացիական
իրավունքի և քաղաքացիական դատավարության
ամբիոնի դոցենտ, ոստիկանության կապիտան*

Պարտավորությունների կատարումն իրենից ենթադրում է ավարտված գործողություն, որի պարագայում պարտավորության սուբյեկտները դրսևորում են անհրաժեշտ վարքագիծ և գործում են քաղաքացիական օրենսդրության կամ պարտավորության բնույթից բխող պահանջների պահպանմամբ¹:

Իրավաբանական գրականության մեջ պարտավորության կատարումը բնութագրվում է որպես պարտավորական հարաբերության սուբյեկտների կողմից իրենց սուբյեկտիվ իրավունքների և պարտավորությունների շրջանակներում գործողությունների կատարումը կամ կատարումից ձեռնպահ մնալը²:

Սակայն հարկ է նկատել, որ պարտավորությունների կատարման ինստիտուտի արդյունավետ գոյության և գործունեության համար առաջնային դերակատարություն ունի նաև կատարման ապահովումը:

Պարտավորաիրավական հարաբերությունները դժվար է պատկերացնել առանց պարտավորությունների կատարման ապահովման միջոցների: Քաղաքացիական շրջանառության մասնակիցները մտնում են պարտավորաիրավական հարաբերությունների մեջ այն հավատով, որ իրենց նկատմամբ կոնտրագենտի պարտավորությունները կատարվելու են պատշաճ:

Միամտություն կլիներ կարծելը, թե այս վստահությունը բխում է քաղա-

¹ Տե՛ս Сегеева А. П., Толстого Ю. К. Гражданское право, Том 1, М. 2001, стр. 517.

² Տե՛ս Илларионовой Т. И., Гонгало Б. М., Плетнева В. А., Гражданское право. Учебник для ВУЗ-ов, М, 2001, стр. 357

քացիական շրջանառության մասնակիցների անվերապահ բարեխղճությունից: Ճիշտ է նաև այն պնդումը, որ պարտավորաիրավական հարաբերությունների ծագման ակունքներում ընկած են հենց «հավատի» և «վստահության» սկզբունքները, ուստի պատահական չէ, որ պարտատեր կամ կրեդիտոր տերմինի ծագման հիմքում ընկած է «credere»՝ թարգմանաբար հավատալ բառը:

Իհարկե, կոնտրագենտի նկատմամբ ներքին վստահության իսպառ բացակայության պայմաններում դժվար է պատկերացնել ժամանակակից ֆինանսատնտեսական դինամիկ զարգացող և մեծ ծավալների հասնող հարաբերությունները, սակայն պարտավորաիրավական հարաբերությունների զարգացման երաշխիքն այդ հարաբերությունների նորմալ գոյությունն ապահովող քաղաքացիաիրավական հարկադրանքի և պաշտպանության միջոցների գուգակցված գործադրման մեջ է:

Պարտավորաիրավական հարաբերություններում ընդունված է համարել, որ առավել արդյունավետ պաշտպանության միջոցներ են հանդիսանում կանխարգելիչ կամ ex ante պաշտպանության միջոցները՝ ի տարբերություն քաղաքացիական իրավունքների հետագա պաշտպանության ex post միջոցների: Պարտավորաիրավական հարաբերություններում ex ante պաշտպանության միջոցների հիմնական (կարելի է ասել նաև ամենաարդյունավետ) մասը բաժին է ընկնում պարտավորությունների կատարման ապահովման միջոցներին: Պարտավորությունների կատարման ապահովման հիմնական միջոցները թվարկված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Դրանք են՝ գրավը, տուժանքը, պարտապանի գույքի պահումը, երաշխավորությունը, երաշխիքը, նախավճարը: Սակայն պարտավորությունների կատարման ապահովման միջոցների շրջանակն ավելի լայն է և ընդգրկում է օրենքով և պայմանագրային իրավունքով ձևավորված բազմաթիվ այլ միջոցներ ևս:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված այս իրավական միջոցները կոչված են ապահովել պարտավորությունների պատշաճ կատարումը: Ընդ որում՝ այդ իրավական միջոցները բաժանվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ միջոցների: Այսպես՝ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում ապահովման ընդհանուր միջոցներից առավելապես կիրառվում են պարտավորությունների կատարմանը հարկադրելը և պարտավորությունների խախտմամբ պատ-

ճառված վնասների հատուցումը: Սակայն այս միջոցները ոչ բոլոր դեպքերում են արդյունավետ գործում: Օրինակ՝ լինում են դեպքեր, երբ պարտատերը վնասներ չի կրում կամ չի կարողանում ապացուցել դրանց չափը և այլն: Այդ իսկ պատճառով օրենքով թույլատրվում է նաև պարտավորությունների կատարման ապահովման համար օգտագործել հատուկ բնույթի միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովել պարտավորությունների պատշաճ կատարումը՝ անկախ պարտատիրոջ վնասների առկայությունից և պարտապանի գույքային դրությունից: Այդ միջոցները կիրառվում են ինչպես իրավաբանական անձանց, նրանց և քաղաքացիների, այնպես էլ քաղաքացիների միջև հարաբերություններում:

Պարտավորությունների կատարումն ապահովող թվարկված միջոցները միևնույն կիրառությունը չունեն: Պարտավորությունների կատարման ապահովման միջոցները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ ակցետոր (լրացուցիչ) և ոչ ակցետոր միջոցների:

Ակցետոր ապահովման միջոցների էությունն իր լրացուցիչ, այսինքն՝ հիմնականից բխող, լրացնող բնույթի մեջ է: Ակցետոր ապահովման միջոցի կիրառման վերաբերյալ կողմերի համաձայնությունը հիմնական պարտավորությունից ծնված լրացուցիչ պարտավորության առարկան է: Սակայն պարտադիր չէ, որ ակցետոր պարտավորությունը ծագի կողմերի համաձայնությամբ, այն կարող է ծագել նաև օրենքի ուժով որոշակի իրավաբանական փաստերի վրա հասնելու հետևանքով, օրինակ՝ ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար ամբողջական վճարելը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ ի ապահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով: Ավանդաբար առանձնացվում են ակցետոր պարտավորությունների չորս հիմնական հատկություններ.

ա/ Ակցետոր պարտավորությունը ծագում է հիմնական պարտավորությունից (ծագման հատկություն),

բ/ Ակցետոր պարտավորության ծավալը համընկնում է հիմնական պարտավորության ծավալի հետ (ծավալի հատկություն)

գ/ ակցետոր պարտավորությունը հետևում է հիմնական պարտավորության ճակատագրին: Այսինքն՝ հիմնական պարտավորության պարտատիրոջ փոխվելու դեպքում նոր պարտատիրոջն են անցնում ակցետոր պար-

տավորությամբ պարտատիրոջ իրավունքներն ու պարտականությունները (հետևելու հատկություն),

դ/ հիմնական պարտավորության անվավերությունը կամ դադարեցումը հանգեցնում է ակցետոր պարտավորության անվավերության/դադարեցման (դադարման հատկություն):

Տեսության մեջ շրջանառվում են հատկությունների նաև այլ տեղադրություններ, սակայն դրանք հիմնականում պտտվում են թվարկված այս չորս հատկությունների առանցքի շուրջ, որոնք էլ իրենց հերթին ամփոփված են դեռևս հռոմեական իրավունքից հայտնի *In omnibus speciebus liberationum etiam accessiones liberantur, puta adpromissores hypothecae pignora* սկզբունքում, որը ձևակերպված է Ուլպիանոսի կողմից և թարգմանաբար նշանակում է «Բոլոր դեպքերում, երբ անձն ազատվում է պարտավորությունից, ապա ազատվում է նաև ակցետոր պարտավորություններից, ինչպիսիք են երաշխավորությունը, հիփոթեքը և գրավը»³:

Ակցետոր ապահովման միջոցների թվին են պատկանում նախավճարը, գրավը, երաշխավորությունը: Ոչ ակցետոր ապահովման միջոցներից է երաշխիքը: Այն օժտված չէ ակցետոր պարտավորության հատկություններով և անկախ է հիմնական պարտավորությունից, կարող է գոյություն ունենալ անգամ հիմնական պարտավորության անվավերության կամ դադարման պայմաններում:

Ակցետոր պարտավորությունների դադարման հատկությունն ամփոփվում է երկու կանոնների մեջ: Առաջին կանոնը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի⁴ 368-րդ հոդվածի 3-րդ մասով՝ որի համաձայն «Հիմնական պարտավորության անվավերությունը հանգեցնում է այն ապահովող պարտավորության անվավերության, եթե այլ բան սահմանված չէ օրենքով»: Պայմանականորեն այս կանոնը կարելի է անվանել անվավերության կանոն:

Երկրորդ կանոնը հիմնական պարտավորության դադարման արդյունքում ակցետոր պարտավորության դադարման կանոնն է: Այս կանոնը բխում է ինչպես ակցետոր պարտավորության ընդհանուր էությունից, այնպես էլ հստակեցվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կոնկրետ նորմերում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի համաձայն. «Երաշխավո-

3 The “why” and “how” of an anachronism, Roman Law, University of Zurich, 2018

4 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի// ՀՀՊՏ 1998.08.10/17(50), Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին:

րությունը դադարում է՝

1) դրանով ապահովված պարտավորությունը դադարելու, ինչպես նաև առանց երաշխավորի համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների (...): Նույն օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն. «1. Գրավը դադարում է՝

1) գրավով ապահովված պարտավորությունը դադարելով (...):»

Նշանակում է, որ ակցետոր ապահովման միջոցներն իրենց ապահովող ֆունկցիան կատարում են մինչև անվավերության կամ դադարման կանոնների համաձայն ապահովման պարտավորության վերանայը: Մինչև այդ պահը, ապահովման միջոցն ապահովում է հիմնական պարտավորությամբ պարտապանի պարտավորությունների պատշաճ կատարումը, փոխառության կամ վարկի գումարի վերադարձը, մատակարարման իրականացումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը և այլն: Այսինքն՝ ապահովման միջոցն իր ապահովող նշանակությունը կորցնում է, երբ, օրինակ, հիմնական պարտավորությունն անվավեր է ճանաչվում, կամ հիմնական պարտավորությամբ պայմանագիրը համարվում է չկնքված: ՀՀ *քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն*. «Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով»: *Չկնքված գործարքների մասով, ըստ էության, գործում է նույն նախկինում ստացածը վերադարձնելու կանոնը: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն*. «Անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի»:

Ստացվում, որ ապահովման միջոցների ակցետորության դասական ընկալման համատեքստում ապահովման միջոցները չեն գործում, երբ խոսքը

գործարքի անվավերության կամ չկնքված լինելու ուժով ռեստիտուցիայի պարտավորության կատարման մասին է:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում պայմանագրով սահմանվող կատարման ապահովման միջոցների վերաբերյալ առկա իրավակարգավորումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Երաշխավորության պայմանագիրը կարող է կնքվել նաև ապագայում ծագելիք պարտավորության ապահովման համար»: Մեր կարծիքով՝ որ վկայակոչված նորմը հնարավորություն է ստեղծում պայմանագրի կողմերին պայմանագրով նախատեսել, որ երաշխավորությամբ ապահովվում է նաև հիմնական պայմանագրի անվավերության դեպքում հիմնական պայմանագրով պարտապանի ստացածը վերադարձնելու պարտավորությունը: Նշենք նաև, որ, ի տարբերություն երաշխավորության պայմանագրի, գրավի և տուժանքի դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նման թույլատրող կարգավորում չի նախատեսել, այսինքն՝ տեսականորեն և գործնականում հնարավոր չէ պայմանագրային կարգավորումներով ապահովագրել պարտատիրոջը պայմանագրի անվավերության դեպքում առանց ապահովման մնալու ռիսկից: Այս առումով՝ ուշագրավ է ՌԴ դատական պրակտիկայի ամփոփման նյութերում առկա դիտարկումը: ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումն իր որոշումներից մեկում քննարկել է ՌԴ քաղաքացիական օրենսգրքի⁵ համանման նորմը և հանգել այն հետևությանը, որ երաշխավորության պայմանագրի կողմերը կարող են նախատեսել, որ երաշխավորությունն ապահովում է ոչ միայն հիմնական պայմանագրից ծագող պարտավորությունները, այլ նաև պայմանագրի անվավերության դեպքում գործարքով ստացածը (բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրամական արժեքի հատուցումը) հետ պահանջելու կամ չկնքված գործարքի դեպքում անհիմն հարստացման հետևանքով ստացածը հետ պահանջելու իրավունքները⁶:

ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի վերոնշյալ որոշումը դարձավ ՌԴ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու և պարտավորությունների կատարման ապահովման ակցեսոր միջոցների

5 Гражданский Кодекс РФ//Принят Государственной Думой 21 октября 1994 года.

⁶ St'u Постановление Пленума Высшего Арбитражного Суда Российской Федерации от 12.07.2012 номер 42 "О некоторых вопросах разрешения споров, связанных с поручительством.

գարգացման կարևորագույն խթան: 2015 թվականին փոփոխություններ կատարվեցին ՌԴ քաղաքացիական օրենսգրքում, արդյունքում՝ կտրուկ փոխվեց ապահովման ակցետոր միջոցների տրամաբանությունը, և ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածը շարադրվեց նոր բովանդակությամբ, որի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական պարտավորության անվավերության դեպքում ապահովված են համարվում անվավերության արդյունքում ծագած գործարքով ստացածը վերադարձնելու պարտավորությունը: Ճիշտ է, այս նորամուծությունն իրապես հեղափոխական քայլ էր պարտավորաիրավական հարաբերությունների իրավական ընկալման տեսանկյունից, սակայն ինչ-որ առումով նաև նահանջ էր ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումի վերոնշյալ որոշման պոստուլատներից: Բանն այն է, որ այդ որոշմամբ անդրադարձ էր կատարվել ոչ միայն գործարքի անվավերության հետևանքով առաջացած ռեստիտուցիոն պարտավորության կատարման ապահովմանը, այլ նաև չկնքված գործարքների արդյունքում անհիմն հարստացման հետևանքով ստացածը վերադարձնելու դեպքին: ՌԴ օրենսդրի այս մոտեցման հիմնավորումն ակնհայտ է, բայց կարելի է պնդել, որ նորամուծությունը նոր մակարդակի վրա է դնում պարտավորությունների կատարման ապահովման ինստիտուտը:

Միաժամանակ պետք է նշել, որ այս միջոցները կարող են կիրառվել միայն այն դեպքում, եթե դրանք նախատեսված են օրենքով կամ կողմերի հատուկ համաձայնությամբ: Ընդ որում՝ այդ միջոցների կիրառման համար անհրաժեշտ է, որ գոյություն ունենա ապահովման կարիք զգացող որևէ պարտավորություն, որն անվանում ենք գլխավոր կամ հիմնական պարտավորություն, իսկ պարտավորությունների ապահովման միջոցի վերաբերյալ համաձայնությունը լրացուցիչ պարտավորություն: Եվ եթե կողմերն ապահովման միջոցի վերաբերյալ պայմանագիր կնքեն այն դեպքում, երբ գոյություն չունի գլխավոր պարտավորությունը, ապա ապահովման միջոցի վերաբերյալ պայմանագիրը կհամարվի անվավեր:

Այս կապակցությամբ, սակայն, հարկ է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ պայմանագրային պարտավորությունների զարգացման միտումները մղում են նաև կոնտրագենտների շահերի պաշտպանության երաշխիքների ձևավորման, բացի նրանցից, որոնք արդեն իսկ առկա են: Այս առումով, կարծում ենք, որ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածն ունի որոշակի վերանայման կարիք: Կարծում ենք, որ անհրաժեշտ է փոփո-

խություններ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 3-րդ մասում և սահմանել, որ հիմնական պարտավորության անվավերության կամ հիմնական պարտավորությունը սահմանող գործարքը չկնքված համարվելու դեպքում ապահովված են համարվում անվավերության կամ չկնքված համարվելու արդյունքում պարտապանի կողմից գործարքով հետ ստացածը կամ անհիմն հարստացման արդյունքում ստացածը վերադարձնելու պարտավորությունը:

Այս փոփոխությունները, ըստ էության, ոչ թե կսահմանափակեն ապահովման միջոցների այս տեսակի ակցետը բնույթը, այլ դրանց կօծտեն պարտավորաիրավական հարաբերություններում նոր՝ ավելի կարևոր դերով՝ ընդգծելով դրանց հիմնական ապահովող հատկությունը:

Պարտավորությունների կատարման ապահովման միջոցների լրացուցիչ բնույթն արտահայտվում է հետևյալում.

- գլխավոր պարտավորության դադարումը մեծամասամբ դադարեցնում է նաև լրացուցիչ պարտավորությունը (բացառությամբ երաշխիքի),

- եթե լրանում է գլխավոր պարտավորության հայցային վաղեմության ժամկետը, ապա լրացած է համարվում նաև լրացուցիչ պարտավորության հայցային վաղեմության ժամկետը,

- գլխավոր պարտավորության անվավերությունն անխուսափելիորեն առաջացնում է պարտավորության ապահովման միջոցի վերաբերյալ կայացված համաձայնության անվավերություն: Այս առումով՝ բացառություն է միայն երաշխիքը, քանի որ երաշխիքով ապահովված պարտավորության անվավերությունը երաշխիքի պարտականության անվավերություն չի առաջացնում,

- ապահովման միջոցի վերաբերյալ համաձայնության դադարումը կամ անվավերությունը գլխավոր պարտավորության վրա որևէ ազդեցություն չի ունենում:

Պարտավորությունների կատարման ապահովման ոչ ակցետը միջոցներն այն միջոցներն են, որոնք որևէ կերպ փոխկապակցված չեն այն հիմնական պարտավորությունից, որոնց կատարումն ապահովելու համար դրանք տրվել են: Որպես այդօրինակ կատարման ապահովման միջոց՝ գիտական գրականության և պրակտիկայի մեջ հիշատակվում է երաշխիքը: Ընդ որում, մի հետաքրքիր նկատառում՝ այս պարագայում, անգամ երբ հիմնական պարտավորությունն անվավեր է ճանաչվում, պարտավորության

կատարման ապահովման միջոցը շարունակում է գործել: Երաշխիքի ոչ ակցեսոր բնույթը հենց իր բնորոշման մեջ է: Մասնավորապես, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 383-րդ հոդվածի՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս: Երաշխիքի անկախությունը հիմնական պարտավորությունից ստացել է նաև հստակ օրենսդրական ամրագրում: Մասնավորապես, համաձայն քաղաքացիական օրենսգրքի 385-րդ հոդվածի՝ բենեֆիցիարի հանդեպ երաշխիք տված անձի՝ երաշխիքով նախատեսված պարտավորությունն ինքնուրույն է և անկախ է հիմնական պարտավորությունից, որի կատարման ապահովման համար այն տրվել է, եթե նույնիսկ երաշխիքում վկայակոչվում է այդ պարտավորությունը: Հոդվածով առկա իրավակարգավորումը վերաբերում է նաև այն դեպքին, երբ հիմնական պարտավորությունը՝ որպես այդպիսին, օրենքի ուժով անվավեր է ճանաչվում: Այդ պատճառով էլ այս պարտավորությունը կրում է ոչ ակցեսոր բնույթ և հանդիսանում պարտավորությունների կատարումն ապահովող այս տեսակի մեջ իրավական կարգավորման ենթարկված միակը իր տեսակում: Հարկ է նկատել, որ սա չի բացառում, սակայն, ոչ ակցեսոր պարտավորությունների այլ տեսակների առկայություն ևս՝ նկատի ունենալով քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին մասով տրված իրավակարգավորումը՝ համաձայն որի պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել գրավով, տուժանքով, պարտապանի գույքի պահումով, երաշխավորությամբ, երաշխիքով, նախավճարով և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներով:

ПОНЯТИЕ СПОСОБОВ ОБЕСПЕЧЕНИЯ ИСПОЛНЕНИЯ ОБЯЗАТЕЛЬСТВ, ЕГО ВИДЫ. ВОПРОСЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ В СООТВЕТСТВИИ С ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ РА

Марукян Гаяне Сосоевна

*Доцент кафедры гражданского права и
гражданского процесса Академии
Образовательного комплекса полиции
РА, капитан полиции*

Научная статья посвящена средствам обеспечения исполнения обязательств. В рамках научной статьи анализируются две основные группы исполнения: акцессорные и неакцессорные. Раскрываются особенности действующего правового регулирования с акцентом на анализе материалов судебных актов, предлагаются решения по ликвидации пробелов в законодательном регулировании.

Ключевые слова: исполнение обязательств, акцессорные виды исполнения, неакцессорные виды исполнения, решения Кассационного суда, Гражданский Кодекс РФ.

UNDERSTANDING OF THE MEANS OF ENSURING THE FULFILLMENT OF OBLIGATIONS AND ITS TYPES. LEGAL REGULATION ISSUES UNDER THE LEGISLATION OF RA

Marukyan Gayane

*Associate Professor at the Chair of Civil Law and
Civil Procedure, Academy of the Police Educational
Complex of RA, PhD in Law, Police Captain*

The scientific article refers to the means of ensuring the fulfillment of obligations. In the framework of the article the two major groups of means of

ensuring the fulfillment of obligations, accessory (additional) and non-accessory, have been analyzed. Meanwhile, some peculiarities of the existing legal regulation have been revealed with an emphasis to the analysis of judicial acts and, as a result, exclusive solutions have been proposed.

Key words: ensuring the fulfillment of obligations, accessory means of fulfillment of obligations, non-accessory means of fulfillment of obligations, decisions of the Court of Cassation, Civil Code of the Russian Federation.

Հոդվածը գրախոսվել է՝ 16.09.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 18.09.2020թ.

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ
ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՆԽՄԱՆ ԵՎ ԿԱՆԽՄԱՆ
ՄԵԶ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Մինասյան Մերի

*Եվրոպական համալսարանի իրավագիտության
ամբիոնի հայցորդ, ՀՀ ոստիկանության Երևան
քաղաքի վարչության ՊՊԾ գնդի ծառայության տեսուչ,
ոստիկանության կապիտան*

Ընտանեկան բռնության մասին իրազեկությունը, դրանց կանխարգելումը յուրաքանչյուր իրավական պետության համար պետք է լինի առաջնային լուծում պահանջող հարցերից մեկը: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր պետություն այդ խնդիրները լուծելու համար իր առջև պետք է դնի իրավական այնպիսի մեխանիզմներ կամ լծակներ, որոնց շնորհիվ այդ խնդիրները կբացահայտվեն և կարժանանան համապատասխան արձագանքման:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրեթե բոլոր իրավական երկրներում այդպիսի լծակներ են ոստիկանության մարմինները: ՀՀ հանրապետությունում ևս 2017 թվականից, երբ ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ոստիկանությունը նոր գործելաոճ որդեգրեց ընտանեկան բռնությունների գործերի դեպքերով արագ և օպերատիվ արձագանքման ուղղությամբ:

Հայաստանում ընտանեկան բռնությունը՝ որպես առանձին հանցագործություն, քրեականացված չէ, սակայն ՀՀ-ի կողմից վավերացվել են կանանց նկատմամբ խտրականության վերացմանը և ընտանեկան բռնության կանխարգելմանը վերաբերող միջազգային փաստաթղթեր. այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան (թիվ 210 կոնվենցիա), որի 3(բ) հոդվածում ընտանեկան բռնությունը սահմանվում է որպես ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողություններ, որոնք կատարվում են ընտանիքի, ընտանեկան միավորի ներսում՝ նախ-

կին կամ ներկա ամուսինների, զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե արդյո՞ք կատարողը բնակվում կամ բնակվել է տուժողի հետ նույն վայրում:

Հատկանշական է, որ ընտանեկան բռնության դեպքերը հստակ իրավական կարգավորման և ամրագրման չեն ենթարկվել ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլ այդ թեման շարունակում է խոցելի մնալ նաև միջազգային հարթակում, այդ թվում՝ զարգացած և առաջադեմ պետություններում: Նշվածը հաշվի առնելով՝ սույն հոդվածով ընտանեկան բռնության դեպքերը քննարկման առարկա են դարձվում ՄԻԵԴ-ի դատական ակտերի լույսի ներքո, որոնցում վեր է հանվում ոստիկանության արձագանքման կարևորությունը՝ նմանատիպ գործերի բացահայտման և կանխարգելման նպատակում: Մասնավորապես, ՄԻԵԴ-ի դատական ակտերի համատեքստում կներկայացվեն այնպիսի գործեր, որոնք լավագույն գործիքներ կդառնան Հայաստանի Հանրապետությունում ձևավորվող նոր պարեկային ծառայության աշխատանքային արդյունավետության բարձրացման համար: Միաժամանակ այդպիսի գործերը կարևոր են այնքանով, որքանով դրանցում արձանագրվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթների խախտումներ անդամ պետությունների կողմից, որոնք որպես նախադեպ կարող են կիրառվել մեր պատկան մարմինների կողմից: Նշվածը թույլ կտա հետազայում խուսափել նմանատիպ սխալներից, և կձևավորի ոստիկանության ավելի ճկուն, գրագետ արձագանքման համակարգ:

Այսպես՝ ՄԻԵԴ-ը *Kontrová v. Slovakia* գործով 31.05.2007 թվականի վճռով¹ արձանագրել է Կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածների² խախտում:

Մասնավորապես, նշված գործի փաստերի համաձայն՝ 02.11.2002 թվականին գանգատաբերը քրեական բողոք էր ներկայացրել ամուսնու դեմ՝ իր վրա հարձակվելու և էլեկտրական մալուխով մարմնական վնասվածքներ պատճառելու համար: Հետազայում ամուսնու ուղեկցությամբ ներկայացել և

¹ St' u EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS, Case of KONTROVÁ v. SLOVAKIA, 31.05.2007, CHAMBER JUDGMENT, application no. 7510/04 [https://hudoc.echr.coe.int/eng-press#{%22itemid%22:\[%22003-2013708-2124711%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng-press#{%22itemid%22:[%22003-2013708-2124711%22]})

² St' u «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ընդունված 04.11.1950 թվական, Հոմ, 2-րդ և 13-րդ հոդվածներ

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>

փորձել էր հետ վերցնել քրեական բողոքը: Ավելի ուշ փոփոխել էր բողոքն այնպես, որ ամուսնու ենթադրյալ գործողությունները դիտարկվել էին որպես ոչ ծանր հանցագործություն, որի կապակցությամբ լրացուցիչ գործողություններ չէին պահանջվել: Ամուսինը 31.12.2002 թվականին կրակելով սպանել էր իրենց՝ 1997 թվականին ծնված դստերը և 2001 թվականին ծնված որդուն: Գանգատաբերը ՄԻԵԴ-ում պնդել էր, թե ոստիկանությունը, իմանալով ամուսնու բռնարար և վտանգավոր վարքագծի մասին, պատշաճ քայլեր չէր ձեռնարկել իր երեխաների կյանքը պաշտպանելու ուղղությամբ: Նա նաև բողոքել էր, որ չի ունեցել փոխհատուցում ստանալու հնարավորություն: ՄԻԵԴ-ը վճռեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում (կյանքի իրավունք)՝ այն առումով, որ իշխանությունները չեն պաշտպանել գանգատաբերի երեխաների կյանքը: ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ գանգատաբերի ընտանիքում տիրող իրավիճակը հայտնի էր եղել տեղի ոստիկանությանը, քանի որ նա 2002 թվականի նոյեմբերին ներկայացրել էր քրեական բողոք, իսկ 2002 թվականի դեկտեմբերին հեռախոսով ահազանգել էր ոստիկանությանը: Գործող օրենքի հիման վրա արձագանքելու դեպքում ոստիկանությունը պարտավոր կլիներ գրանցել գանգատաբերի քրեական բողոքը, անմիջապես քրեական քննություն և քրեական վարույթ հարուցել գանգատաբերի ամուսնու նկատմամբ, պատշաճ կերպով արձանագրել հեռախոսային ահազանգերը, իրավիճակի մասին տեղեկացնել հաջորդ հերթափոխին և քայլեր ձեռնարկել գանգատաբերի ամուսնու՝ հրացան ունենալու և այն օգտագործելու սպառնալիք ներկայացրած լինելու կապակցությամբ: Այնուհանդերձ, մասնակցող ոստիկաններից մեկը նույնիսկ օգնել էր գանգատաբերին և իր ամուսնուն՝ փոփոխելու 2002 թվականի նոյեմբերի քրեական բողոքը, որպեսզի դեպքը դիտարկվեր որպես ոչ ծանր հանցագործություն, որի կապակցությամբ լրացուցիչ գործողություններ չէին պահանջվի: Այսպիսով, ինչպես ներպետական դատարաններն էին հաստատել, և ինչպես դա ընդունել էր Սլովակիայի կառավարությունը, ոստիկանությունը չէր կատարել իր պարտավորությունները, և այդ թերացումների ուղղակի հետևանքը եղել էր գանգատաբերի երեխաների մահը: ՄԻԵԴ-ը նաև վճռեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում (արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի իրավունք), քանի որ գանգատաբերը պետք է հնարավորություն ունեցած լիներ դիմելու ոչ նյութական վնասի հատուցման համար, սակայն նրա համար գոյություն չէր ունեցել իրավական պաշտպանության այդպիսի միջոց:

Մեկ այլ՝ *Talpis v. Italy* գործով, ՄԻԵԴ-ը 02.03.2017 թվականի վճռով³ արձանագրել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի⁴ խախտում՝ նույն Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների⁵ համակցությամբ:

Վերը նշված գործի փաստերի ուսումնասիրությունից պարզվում է, որ այն վերաբերում է գանգատաբերի նկատմամբ տեղի ունեցած ամուսնական բռնությանը, որի հետևանքով սպանվել էր նրա որդին, իսկ գանգատաբերի նկատմամբ կատարվել էր սպանության փորձ: ՄԻԵԴ-ը վճռեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում (կյանքի իրավունք), քանի որ սպանվել է գանգատաբերի որդին, իսկ գանգատաբերի նկատմամբ կատարվել է սպանության փորձ: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը վճռեց, որ գանգատաբերի ներկայացրած բողոքի կապակցությամբ անհապաղ քայլեր չձեռնարկելով Իտալիայի իշխանություններն իմաստագուրկ էին դարձրել այդ բողոքը՝ ստեղծելով անպատժելիության իրավիճակ, որը նպաստավոր էր այնպիսի բռնարարքների կրկնության համար, ինչպիսիք էին գանգատաբերի նկատմամբ սպանության փորձը և նրա որդու սպանությունը: Ուստի, իշխանությունները չէին կատարել համապատասխան անձանց կյանքը պաշտպանելու՝ իրենց պարտավորությունը: ՄԻԵԴ-ը վճռեց նաև, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք), քանի որ իշխանությունները չէին կատարել գանգատաբերին ընտանեկան բռնությունից պաշտպանելու իրենց պարտավորությունը: Այդ առումով ՄԻԵԴ-ը նշեց, մասնավորապես, որ գանգատաբերն ապրել էր իր երեխաների հետ բռնության միջավայրում, որը բավականաչափ ծանր էր, որպեսզի համարվեր դաժան կամ անմարդկային վերաբերմունք, և որ իշխանությունների կողմից քրեական վարույթի իրականացումը վկայում էր դատաիրավական պասիվության մասին, որն անհամատեղելի է 3-րդ հոդվածի հետ: Ի վերջո, ՄԻԵԴ-ը վճռեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում (խտրականության արգելք)՝ 2-րդ և 3-րդ հոդվածների

³ St'e u Affaire TALPIS c. ITALIE, 02.03.2017, ARRÊT, Requête no 41237/14
[https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-171508%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-171508%22]})

⁴ St'e u «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ընդունված 04.11.1950 թվական, Հռոմ, 14-րդ հոդված
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>

⁵ St'e u «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ընդունված 04.11.1950 թվական, Հռոմ, 3-րդ հոդված
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>

համակցությամբ, եզրակացնելով, որ գանգատաբերը հանդիսացել է կնոջ նկատմամբ խտրականության գոհ, քանի որ իշխանությունները ցուցաբերել էին անգործություն՝ թերագնահատելով առկա բռնությունը և այդպիսի փաստացի հավանություն տալով դրան:

Ոստիկանության անգործության կամ ոչ պատշաճ գործունեության արդյունքում ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի 3-րդ, 8-րդ⁶ և 14-րդ հոդվածների խախտում է արձանագրել նաև *Eremia Others v. the Republic of Moldova* գործով⁷:

Մասնավորապես՝ այդ գործով առաջին գանգատաբերը և իր երկու դուստրերը հայտնել էին, թե Մոլդովայի իշխանությունները չեն պաշտպանում իրենց ամուսնու և հոր (ով ոստիկան էր) բռնի և բռնարար վարքագծից: ՄԻԵԴ-ը վճռեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք) առաջին գանգատաբերի նկատմամբ, քանի որ իշխանությունները, իմանալով հանդերձ բռնության մասին, արդյունավետ միջոցներ չէին ձեռնարկել ամուսնու նկատմամբ գանգատաբերին ընտանեկան բռնությունից պաշտպանելու համար: ՄԻԵԴ-ը վճռեց նաև, որ դուստրերի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունք), քանի որ, չնայած ընտանիքի բնակարանում հարազատ մոր նկատմամբ հոր բռնությանն ակնատես լինելու վնասակար հոգեբանական հետևանքներին, քայլեր չէին ձեռնարկվել կամ գրեթե չէին ձեռնարկվել այդ վարքագծի կրկնությունը կանխելու ուղղությամբ: Ի վերջո, ՄԻԵԴ-ը վճռեց, որ առաջին գանգատաբերի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում (խտրականության արգելք)՝ 3-րդ հոդվածի համակցությամբ և եզրակացրեց, որ իշխանություններն իրենց գործողություններով ոչ միայն թերացել էին կամ ուշացրել նրա նկատմամբ բռնության դեմ պայքարը, այլ նաև շարունակվող թողություն էին ցուցաբերել այդ բռնության նկատմամբ, որն առաջին գանգատաբերի՝ որպես կնոջ նկատմամբ խտրական վերաբերմունքի արտացոլում էր: Այս առումով ՄԻԵԴ-ը նկատեց, որ կանանց

⁶ Տե՛ս, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ընդունված 04.11.1950 թվական, Հռոմ, 8-րդ հոդված <https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>

⁷ Տե՛ս, EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS, Case of EREMIA v. THE REPUBLIC OF MOLDOVA, 28.05.2013, CHAMBER JUDGMENT, application no. 3564/11 <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22:%5B%22001-119968%22%5D%7D>

նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի եզրակացություններն ընդամենը հաստատում էին այն տպավորությունը, որ Մոլդովայի Հանրապետությունում իշխանությունները լիովին չէին ըմբռնում ընտանեկան բռնության հիմնախնդրի ծանրությունն ու մասշտաբը և դրա խտրական ազդեցությունը կանանց վրա:

ՄԻԵԴ-ը նախկինում կայացված մեկ այլ՝ *Bălan v. Romania* գործով⁸ արձանագրել է Կոնվենցիայի 3-րդ և 14-րդ հոդվածների խախտում:

Վերոգրյալ գործով գանգատաբերը նշում էր, թե իշխանություններն իրեն չեն պաշտպանել կրկնվող ընտանեկան բռնությունից և պատասխանատվության չեն ենթարկել իր ամուսնուն՝ չնայած իր բազմաթիվ բողոքներին: Նա նաև պնդում էր, թե իշխանությունների կողմից բռնարարքներն հանդուրժելու հետևանքով ինքը մնացել էր նվաստացած և անօգնական վիճակում: ՄԻԵԴ-ը վճռեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք), քանի որ իշխանություններն համարժեքորեն չէին պաշտպանել գանգատաբերին ամուսնու բռնությունից, ինչպես նաև Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում (խտրականության արգելք)՝ 3-րդ հոդվածի համակցությամբ, քանի որ բռնությունը եղել էր գենդերահեն: ՄԻԵԴ-ը նշեց, մասնավորապես, որ գանգատաբերի ամուսինը նրան բռնության էր ենթարկել, իսկ իշխանությունները չէին կարող քաջատեղյակ չլինել այդ բռնությանը, քանի որ նա օգնության համար քանիցս ահազանգել էր թե՛ ոստիկանությանը, թե՛ դատարաններ: Ավելին, թեպետ Ռոմինիայում կար իրավական դաշտ, որի շրջանակում կարելի էր բողոքել ընտանեկան բռնության վերաբերյալ և հայցել իշխանությունների պաշտպանությունը, և գանգատաբերը լիովին օգտվել էր դրանից, իշխանությունները նրա գործով չէին կիրառել օրենքի համապատասխան նորմերը: Իշխանություններն անգամ որոշել էին, որ գանգատաբերն ինքն է սաղորդել իր դեմ տեղի ունեցած ընտանեկան բռնությունը, և համարել էին, որ այն բավականաչափ ծանր չէր, որպեսզի հայտնվեր քրեաիրավական դաշտում: Այդ մոտեցումը նպատազրկել էր ազգային իրավական դաշտը և չէր համապատասխանում կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին: Տվյալ գործով իշխանությունների պասիվությունն իսկապես արտացոլում էր

⁸ Տե՛ս EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS, Case of BĂLAN v. ROMANIA, 23.05.2017, JUDGMENT, application no. 49645/09

<https://www.juridice.ro/wp-content/uploads/2017/05/CASE-OF-BAL-AN-v.-ROMANIA.pdf>

գանգատաբերի՝ որպես կնոջ նկատմամբ խտրական վերաբերմունքը՝ միաժամանակ վկայելով Ռուսիինիայում ընդհանրապես ընտանեկան բռնության դեմ պայքարի հանձնառության բացակայության մասին:

Փաստորեն, ՄԻԵԴ-ն ընտանեկան բռնությունների գործերով ոստիկանության անգործության կամ ոչ պատշաճ գործունեության արդյունքում արձանագրել է կոնվենցիայի մի շարք հոդվածների խախտումներ, որոնք հանգեցրել են կյանքի, անձնական և ընտանեկան կյանքի հարգման, արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի, խտրականության արգելքի իրավունքների խախտումների: Կանխարգելելու և հետագայում ոստիկանության գործունեության նմանատիպ սխալներից խուսափելու համար պետք է հաշվի առնել ՄԻԵԴ-ի կողմից նախանշված դիրքորոշումները և դրանք ներդնել նաև պարեկային ծառայության օրակարգում:

Մասնավորապես, ոստիկանության կողմից պետք է առանձնակի ուշադրության արժանանան ընտանեկան բռնությունների վերաբերյալ ցանկացած հայտնություն /հաղորդում/, նշված ընտանիքները, անձանց առնեն հաշվառման, լինեն հետևողական նրանց գործողություններին, վարքագծին:

Տվյալ դեպքում, նշվածն ունի էական նշանակություն այնքանով, որ ինչպես օրինակ *Kontrová v. Slovakia* գործով արձանագրվել է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ ոստիկանությանը հայտնի են դառնում նմանատիպ դեպքեր, վերջիններս շարունակում են լինել անհետևողական, ցուցաբերում են անգործություն: Նմանատիպ դեպքերը կարող են լինել պատճառ ոչ ծանր հանցագործություններից ընդհուպ մարդուն կյանքից զրկելու դեպքերի:

Այսպիսով, ՄԻԵԴ դիրքորոշումները (և ոչ միայն վերը նշված գործերով) կարևոր են և պետք է ներդրվեն նոր պարեկային ոստիկանության գործունեության համակարգում: Նշված պնդումը հիմնավորվում է նրանով, որ ՄԻԵԴ-ն ըստ էության հանդիսանում է Կոնվենցիայում ամրագրված իրավունքների երաշխավոր, որի հիմնական գործառույթն է ապահովել այդ իրավունքների և երաշխիքների նկատմամբ հարգանքն անդամ պետությունների կողմից: Հետևաբար, սույն աշխատության ամրանձնացված ՄԻԵԴ վերոգրյալ դիրքորոշումների ուսումնասիրությունը հնարավորություն կտա բարձրացնել նոր պարեկային ծառայության կողմից հասարակությանը մատուցվող ծառայության որակը:

РОЛЬ ПОЛИЦИИ В ПРОФИЛАКТИКЕ СЕМЕЙНОГО НАСИЛИЯ В КОНТЕКСТЕ РЕШЕНИЙ ЕВРОПЕЙСКОГО СУДА

Минасян Мэри Кареновна

Соискатель кафедры юриспруденции

Европейского университета Инспектор

патрульно-постовой службы полиции РА

Управления г. Еревана, капитан полиции

Новая патрульная служба, которую планируется запустить в 2021 году в соответствии со «Стратегией постановления Полиции Республики Армения по утверждению Плана действий на 2020-2022 годы», согласно решению 683-Л от 23.04.2020 г., выполняет ряд функций. Эти функции в комплексе включают: деятельность дорожной полиции, общественной полиции и патрульной службы. При этом, среди упомянутых функций особое значение имеет функция оперативного реагирования. Более того, обязанность полиции реагировать на насилие в семье выделяется своей оперативной функцией с юридической точки зрения.

В связи с вышеизложенным, в целях повышения качества деятельности новой патрульной службы, в рамках статьи рассматриваются постановления Европейского суда по правам человека (далее - ЕСПЧ), которые непосредственно касаются вопросов отсутствия реакции на насилие в семье или насилия в результате бездействия полиции и проблем их предотвращения.

Ключевые слова: семейное насилие, деятельность полиции, новая патрульная полиция, служебное бездействие, функции полиции, позиции и решения Европейского суда по правам человека.

ROLE OF POLICE IN DOMESTIC VIOLENCE PREVENTION IN THE CONTEXT OF THE DECISIONS OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Minasyan Mary

*PhD Student at the Chair of Law,
European University of RA, Inspector,
Yerevan Police Department Police Captain*

According to Decision 683-L, April 23, 2020, of the RA government, planned to be enacted in 2021, the new police patrol combines the functions of road police, community police and police patrol. At the same time, the operative response is of significant importance as regards the prevention of domestic violence. Given these facts, the decisions of the European Court of Human Rights referring to police inaction or failure of response have been considered aiming at improving the new police patrol.

Key words: domestic violence, police activity, new police patrol, inaction, police functions, decisions of the European Court of Human Rights.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.10.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 02.10.2020թ.

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սարգսյան Լիդա

*Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի
հայցորդ, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատի դատավորի օգնական*

Կարգապահական պատասխանատվությունն իրավական պատասխանատվության միջոց է, որը ծագում է աշխատանքային կարգապահության խախտման արդյունքում և արտահայտվում է գործատուի կողմից կարգապահական խախտում թույլ տված անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելով: Նշվածից հետևում է, որ գործատուն իրավունք ունի կիրառել կարգապահական պատասխանատվություն միայն այն դեպքում, երբ աշխատողը թույլ է տալիս կարգապահական խախտում: Կարգապահական խախտումն իրենից ենթադրում է աշխատողի՝ աշխատանքային պարտականությունների թերի կատարում կամ այդ պարտականությունների կատարումից խուսափում: Իսկ ինչպե՞ս և որքանով են կիրառելի կարգապահական պատասխանատվության միջոցները դատավորների նկատմամբ: Արդյո՞ք կարգապահական պատասխանատվության ենթարկելու արդյունքում որևէ կերպ չի խախտվում դատավորի անկախության սկզբունքը: Հայտնաբերել և ապահովել դատավորի անկախության և իր գործողությունների հետևանքների արդյունքում նրան անձնական պատասխանատվության ենթարկելու միջև հավասարակշռությունը՝ բարդ է:¹ Հստ էության, դատավորների պատասխանատվության ենթարկելու հարցը դատավորների կարգավիճակում ամենաբարդ խնդիրներից է, քանի որ պատասխանատվությամբ «հավասարակշռվում է» դատավորների անկախությունը:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված «Դատարանները և բարձրագույն դատական խորհուրդը» վերտառությամբ գլխում² բովանդակված նորմերի

¹ Фурсов Д.А., Харламова И.В. Теория правосудия в кратком трехтомном изложении по гражданским делам. Т.1: Теория и практика организации правосудия. М., 2009. С 117.

² ՀՀ Սահմանադրություն, գլուխ 7, ընդունված՝ 06.12.2015 թվականին, ուժի մեջ մտած՝

համաձայն՝ Հայաստանի պետական իշխանության մարմինների համակարգում դատական իշխանությունը դրսևորվում է բոլոր աստիճանների դատարանների անկախությամբ: Սա, թերևս, առավել հիմնարար նշանակություն ունեցող սահմանադրական սկզբունքներից է:³ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կարգով՝ թեև դատավորները, օժտված լինելով արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, արդարադատությունն իրականացնելիս անկախ են և ենթարկվում են միայն օրենքին, այդուհանդերձ՝ օրենսդրորեն սահմանվում են նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը և պայմանները: Նման պայմաններում հարց է ծագում՝ արդյո՞ք հարաբերակցվում է անկախության սկզբունքը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերի հետ: ՀՀ առջև ծառացած մարտահրավերներից առաջնային լուծումներ պահանջող հարցերից է արդարության հաստատումը հասարակությունում: Այս կապակցությամբ թե՛ իշխանության և թե՛ ընդդիմության ներկայացուցիչների տեսակները, ըստ էության, համընկնում են:⁴ Հասարակության ամենամեծ պահանջն արդարությունն է, որն առաջին հերթին պետք է դրսևորվի և բավարարվի դատական իշխանության համակարգում: Այսպես, դատավորի անկախությունն իր բացառիկ նշանակությամբ կոչված է ապահովելու արդարադատության անշեղ իրականացումն այն հաշվով, որ յուրաքանչյուր ոք իրավական հնարավորություն ունենա անարգել իրականացնելու իր խախտված կամ վիճարկվող իրավունքների դատական պաշտպանությունը: Այդ առումով սահմանադրական վավերացման է ենթարկվել ոչ միայն պետական իշխանությունների տարանջատման սկզբունքը, այլ նաև՝ այդ տարանջատման հետագա զարգացումը ֆունկցիոնալ միջավայրում՝ ըստ դատական ատյանների և ըստ արդարադատություն իրականացնող կոնկրետ դատավորների: ՀՀ Սահմանադրությունը հիմնարար դրույթներ է բովանդակում դատարանների լիազորությունների, կազմավորման ու գոր-

22.12.2015 թվականին:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք դասագիրք, էջ. 636 /հեղինակներ՝ Այվազյան Ն.Ա., Դանիելյան Գ.Բ., Եղյան Ռ.Հ., Հարությունյան Գ.Գ., Հարությունյան Ա.Շ., Հովհաննիսյան Վ.Հ., Մուրադյան Ս.Վ., Ստեփանյան Վ.Վ., Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան 2008թ., 704 էջ/:

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 23.12.2011 թվական, թիվ 237 (5325), 19.03.2009 թվական, թիվ 50 (4641), 28.06.2008 թվական, թիվ 125 (4462), 11.07.2008 թվական, թիվ 134 (4471):

ծունեության կարգի վերաբերյալ, ինչը բացառում է ընթացիկ օրենսդրական ակտերում այնպիսի դրույթների ամրագրումը, որոնք այս կամ այն կերպ խոցելի կդարձնեն դատական իշխանությունը:⁵ Մասնավորապես՝ դատական համակարգի անկախությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածով, որի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: 2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է», իսկ դատավորների անկախությունը՝ Սահմանադրության 164-րդ հոդվածով: Հարկ է ընդգծել, որ դատավորի անկախության նշանակության բացառիկությունն առաջին հերթին հաստատվում է այն հանգամանքով, որ այն Հայաստանի իրավական համակարգում ոչ միայն ամրագրված է որպես զուտ սահմանադրական նորմ, այլ նաև հանդիսանում է սահմանադրական նորմ-սկզբունք, քանի որ իր հետագա զարգացումն ու ամրագրումն է ստացել ՀՀ դատական և դատավարական օրենսգրքերում: Միաժամանակ՝ օրենսդիրը, դատավորի անկախության սկզբունքն ամրագրելով իրավական բարձր ուժ ունեցող օրենսդրական ակտերում, այդուհանդերձ, չի հստակեցրել այդ սկզբունքի կառուցվածքային կազմը և ամբողջականորեն չի բացահայտել դրա էությունը կազմող բաղադրատարրերը: Այդ խնդրի լուծումն ապահովվել է միջազգային հանրային իրավունքում համընդհանուր ճանաչում ստացած, իրավական տարբեր համակարգերի համար որպես ելակետային չափորոշիչներ դարձած և միջազգային համայնքի կողմից ընդունված միջազգային իրավական ակտերում ու դրանցում պարունակվող դրույթների վերաբերյալ միջազգային կառույցների կողմից տրված իրավական մեկնաբանություններում, որոնց առանձին դեպքերում միացել է ՀՀ-ն և որոնք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, հանդիսանում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը, ինչպես նաև՝ այն միջազգային ակտերում, որոնց չնայած ՀՀ-ն չի միացել, սակայն այդ ակտերն իրենց մեջ ամրագրում են ՀՀ-ի կողմից այլ միջազգային իրավական փաստաթղթերով ճանաչված միջազգային իրավունքի սկզբունքներն ու չեն հակասում ՀՀ-ի իրավական քաղաքականության հիմնադրույթ-

⁵ Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք դասագիրք, էջ. 637 /հեղինակներ՝ Այվազյան Ն.Ա., Դանիելյան Գ.Բ., Եղյան Ռ.Հ., Հարությունյան Գ.Գ., Հարությունյան Ա.Շ., Հովհաննիսյան Վ.Հ., Մուրադյան Ս.Վ., Ստեփանյան Վ.Վ., Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան 2008թ., 704 էջ/:

ներին: Այդ կապակցությամբ, որպես ելակետային հիմնարար միջազգային իրավական փաստաթուղթ՝ էական դեր և նշանակություն ունի ՄԱԿ-ի 1985 թվականի սեպտեմբերի 06-ին ընդունված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ» միջազգային իրավական ակտը, որի 2-րդ հոդվածով ամրագրվել է, որ «Դատական մարմիններն իրենց հանձնված գործերը վճռում են անաչառ կերպով՝ հիմնվելով փաստերին և առաջնորդվելով օրենքով, հաշվի չառնելով որևէ ուղղակի կամ անուղղակի սպառնալիք կամ միջամտություն, ում կողմից և ինչ պատճառներով էլ այն կատարվի»: Արդարադատության իրականացման ընթացակարգում դատավորի ներքին համոզմունքի կարևորությունը հաշվի է առել նաև ՀՀ օրենսդիրը, որն իր դատավարական իրավական ակտերում, որպես հրամայական պահանջ, արդարադատության իրականացումն ուղղակիորեն կախման մեջ է դնում դատավորի ներքին համոզմունքից⁶: Այսինքն՝ դատավորը, առաջնորդվելով ներքին համոզմունքով, ոչ միայն կաշկանդված չէ իր սեփական իրավական մեկնաբանությունը տալ օրենսդրական ակտի կիրառման, փաստերի բացահայտման և ապացույցների գնահատման վերաբերյալ, այլ այն հանդիսանում է իր պաշտոնական պարտականությունը: Վերոգրյալ եզրահանգումների համար իրավական հիմք են «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիան, Եվրոպական խորհրդի նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 13-ին ընդունված «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» R/94/12 հանձնարարականը: Մասնավորապես՝ Նախարարների կոմիտեի հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին ենթակետով անդամ պետություններին հանձնարարվել է. «Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվեն, պաշտպանվեն և գործի դրվեն դատավորների անկախությունը»: Նույն սկզբունքի 2-րդ ենթակետի «ժ» դրույթի համաձայն. «Դատավորները պարտավոր են ընդունել իրենց որոշումները լիարժեք անկախությամբ և իրենց իշխանությունն իրականացնել առանց սահմանափակման»: Նույն հատվածում ամրագրվել է նաև, որ դատավորները պետք է լինեն բացառապես ազատ: Հիշատակված պահանջն ամրագրված է նաև նույն իրավական ակտի 4-րդ սկզբունքի 3-րդ կետում, որն իր «բ» դրույթում ամրագրել է, որ դատավորները պարտավոր են գործերով որոշումները կայաց-

⁶ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 66, 1-ին մաս, ՀՕ-110-Ն, ընդունված՝ 09.02.2018 թվականին., ուժի մեջ մտած՝ 09.04.2018 թվականին:

նել անաչառ կերպով՝ փաստերի իրենց սեփական գնահատմամբ և օրենքի իրենց մեկնաբանմամբ: Նշված միջազգային իրավական դրույթները թույլ են տալիս եզրակացնել, որ դատավորի կողմից արդարադատության իրականացման անկախության սկզբունքը, այլ երաշխիքների հետ մեկտեղ, որպես հրամայական պահանջ է դիտում դատավորի կողմից արդարադատության իրականացումը բացառապես իր ներքին համոզմամբ, ազատորեն որոշելու այն փաստերի շրջանակը, որն անհրաժեշտ է գործի լուծման համար, ինքնուրույնաբար գնահատելու գործով ձեռք բերված ապացույցները, որոշելու գործի լուծման համար անհրաժեշտ համապատասխան իրավանորմը, տալու կիրառվելիք իրավանորմի իր սեփական մեկնաբանությունը: Նշված չափորոշիչներն ըստ էության երաշխավորում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի անշեղ կենսագործումը:⁷ Միաժամանակ, անդրադառնալով կարգապահական նորմերին, անհրաժեշտ է ընդգծել, որ դրանք՝ որպես համապարտադիր վարքագծի յուրատեսակ կանոններ, ընդհանուր հաշվով կոչված են նպաստելու աշխատանքային ոլորտում ֆունկցիոնալ պարտականությունների առավել բարենպաստ իրականացմանը: Այդ առումով, անկախ աշխատանքի բովանդակության առանձնահատկություններից, աշխատանքային իրավահարաբերության մեջ ներառված յուրաքանչյուր սուբյեկտ ծանրաբեռնված է որոշակի՝ միմյանց փոխկապակցված և միմյանց լրացնող պարտականություններով, որոնք կիրառելի են նաև դատական համակարգի և դատավորի փոխհարաբերություններում՝ որոշակի բացառություններով: Մասնավորապես, դատավորն, իր աշխատանքային գործունեությունն իրականացնելիս անմիջականորեն ձեռք է բերում երկու կարգի պարտականություններ՝ 1. պարտականություններ, որոնք կապված են դատավորի կողմից դատական իշխանության կենսագործման հետ, 2. պարտականություններ, որոնք կոչված են նպաստելու և բարելավելու այն միջավայրը, որի շրջանակներում դատավորը կատարում է իր ֆունկցիոնալ պարտականությունը՝ արդարադատության իրականացումը: Այդ միջավայրը հանդիսանում է դատական համակարգը, որի կազմակերպման և կառավարման ասպարեզում դա-

⁷ Տե՛ս «Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, թիվ 11 արձանագրություն (ETS N 155), 6-րդ հոդված, ընդունված 04.11.1950 թվականին, Հոմ

տավորը պարտավոր է պահպանել որոշակի համապարտադիր վարքագծի կանոններ: Այն է՝ դրսևորել այնպիսի վարքագիծ, որն առավել նպաստավոր պայմաններ կստեղծի արդարադատության իրականացման, այն է՝ դատական իշխանության կենսագործման համար: Դատավորի ֆունկցիոնալ պարտականության՝ արդարադատության իրականացման կապակցությամբ առաջ եկող իրավահարաբերությունների կարգավորման իրավական դաշտն ամփոփվում է նյութական և դատավարական իրավունքի նորմերով, իսկ դատական համակարգի՝ որպես արդարադատության իրականացման միջավայրի պահպանության, բարելավման ու կառավարման բնագավառներում դատավորի մասնակցությունն ապահովող իրավանորմերում առանցքային նշանակություն են ստանում դատավորի կարգապահական կանոնները, որոնք ՀՀ իրավական համարկարգում անվանակոչված են «Դատավորի վարքագծի կանոններ»:⁸ Նշված կանոնները, սակայն, չեն կարող նույնականացվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի հետ, քանի որ, ի տարբերություն վերջինների, որոնց խնդիրն է իրավական լուծում տալ կոնկրետ գործով առկա վիճելի իրավահարաբերությանը, կարգապահական նորմերի կարգավորման առարկան է հանդիսանում ոչ թե կոնկրետ գործով վիճելի իրավահարաբերությունը, այլ դատավորի՝ որպես դատական իշխանության անմիջական և միակ կրողի⁹ վարքն ընդհանրապես, ինչպես արդարադատության իրականացման պրոցեսում, այնպես էլ՝ դրանից դուրս: Այդ նորմերը կոչված են ոչ թե կանոնակարգելու արդարադատության իրականացման դատավարական ընթացակարգը, այլ՝ դատավորների համար սահմանելու վարքագծի այնպիսի կանոններ, որոնք կնպաստեն դատական իշխանության դերի բարձրացմանը, ինչպես նաև՝ սոցիալական համակարգում վստահության ամրապնդմանը: Նշվածը հիմք է տալիս եզրակացնել, որ նյութական և դատավարական իրավունքի նորմը չի կարող կանոնակարգել կոնկրետ գործից դուրս դատավորի վարքագիծը, իսկ իրենց հերթին դատավորի վարքագծի կանոնները չեն կարող իրավական կարգավորման ենթարկել այն հարա-

⁸ Տե՛ս ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի որոշումը ՀՀ դատավորի վարքագծի կանոնները սահմանելու մասին թիֆ 01-Ն որոշում, ընդունված 19.02.2016 թվականին, ուժի մեջ մտած 11.04.2016 թվականին:

<https://www.arlis.am/documentView.aspx?docid=104548>

⁹ Դատավորի այդպիսի բնորոշում առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 20.09.2006թ. ՄԴՈ-647 որոշման (ՀՀՊՏ 2006.11.01/56(511)) տեքստում (կետ 11-րդ):

բերությունները, որոնք վերաբերում են արդարադատության իրականացման բուն պրոցեսին:¹⁰ Հարկ է ընդգծել, որ եթե դատավորի վարքագծի կանոնների խախտումն առանձին դեպքերում առաջ է բերում կարգապահական պատասխանատվություն, ապա նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտումը /դատական սխալ/, հանդես գալով որպես դատավարական իրավունքի կարգավորման առարկա, ենթակա է վերականգնման դատավարական իրավունքի նորմերով՝ դատական վերադաս ատյանների կողմից: Նշվածը վճռորոշ նշանակություն ունի դատավորի անկախության սկզբունքի պահպանման համար, քանի որ «դատական սխալը», ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, այնպիսի նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումն է, որն ազդել կամ կարող էր ազդել գործի ելքի վրա:¹¹ Ընդ որում՝ նյութական իրավունքի նորմի խախտումը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, կարող է դրսևորվել, երբ չի կիրառվել այն օրենքը, ՀՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ, որը պետք է կիրառվեր, երբ կիրառվել է այն օրենքը, ՀՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառվեր, երբ սխալ է մեկնաբանվել օրենքը կամ ՀՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:¹² Նշված դատական սխալի բովանդակային վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այդ խախտումները վերաբերում են կոնկրետ գործով վեճի լուծման համար դատավորի կողմից կիրառելի նյութական իրավունքի նորմի ընտրությանը և մեկնաբանությանը: Ընդ որում՝ կիրառելի իրավանորմի որոշման և մեկնաբանման մեջ դատավորն օժտված է բացարձակ ազատությամբ, որը հանդիսանում է նրա անկախության սկզբունքի կառուցվածքային բաղադրատարրը: Դատավարական իրավունքի նորմի խախտումը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, կարող է դրսևորվել, երբ առկա է դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում կամ սխալ կիրառում, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծմանը:¹³ Տվյալ դեպքում՝ դատավորի անկախության սկզբունքի կիրառման տեսանկյունից ևս դատավորի բացարձակ ազա-

¹⁰ Հակառակ դեպքում՝ դրանք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի տեսանկյունից պետք է դիտվեին որպես դատավարական նորմեր:

¹¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 363

¹² Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 364

¹³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 365

տությունն է՝ ինքնուրույնաբար որոշելու այն փաստերի շրջանակն ու դրանց հաստատմանն ուղղված ապացույցների գնահատումը, որն անհրաժեշտ է գործի ճիշտ լուծման համար: Նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ դատական սխալի առկայությունը ևս կոնկրետ գործով դատավորի կողմից փաստերի վերհանման, ապացույցների գնահատման, նյութական իրավունքի նորմի ընտրության, կիրառման և մեկնաբանման արդյունք է, ինչն արդարադատություն իրականացնելիս դրսևորվել է որպես դատավորի մոտ անհատապես ձևավորված վեճի լուծման ներքին համոզմունք և ինչը հանդիսանում է ՀՀ Սահմանադրությամբ նրան վերապահված անկախությունը: Այդ տեսանկյունից, կարծում եմ, որ դատական սխալի վերացման միակ ուղին, որով կապահովվի ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի գործողությունը, դատավարական իրավունքի նորմատիվային ընթացակարգով այդ սխալի ուղղումն է վերադաս դատական օղակների կողմից: Այսինքն՝ դատավորի կողմից իր ֆունկցիոնալ պարտականությունների կատարման ընթացքում առաջ եկած խախտումները չեն կարող իրավական կարգավորման ենթարկվել այլ կերպ, քան նյութական և դատավարական իրավունքի նորմերով, ու այդ խախտումների իրավական հետևանքները հարկ է սահմանափակել այդ իրավական դաշտի շրջանակներում: Այդ առումով խիստ գործնական նշանակություն է ստանում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի շրջանակի որոշման հարցը՝ այն առումով, որ արդարադատություն իրականացնելիս այդ հիմքերը որևէ կերպ չխոչընդոտեն դատավորի անկախության սկզբունքի պահպանմանը: Այն, որ դատավորի ֆունկցիոնալ պարտականությունները /արդարադատության իրականացումը/ և նրա անհատական վարքագիծն /աշխատանքից դուրս և աշխատանքի ժամանակ/ իրենց կարգավորման առարկայով տարբեր են, և որ դատավորի անկախության ապահովման երաշխիքներից մեկն էլ հանդիսանում է այն հրամայական պահանջը, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերում կարող են դրվել միայն վարքագծային բնույթի և ոչ ֆունկցիոնալ պարտականություններում բացահայտված խախտումը, ունի վճռորոշ նշանակություն թե՛ արդարադատության, թե՛ դատավորի անկախության երաշխավորման համար և թե՛ յուրաքանչյուր անձի համար իր խախտված կամ վիճարկվող իրավունքներն անկախ և անաչառ դատարանում պաշտպանելու սկզբունքի ապահովման տեսանկյունից: Այդ սահմանազատման կարևորությունը դատավորի անկախության ապահովման բնագա-

վառում ձեռք է բերել այն աստիճանի ելակետային նշանակություն, որ իր արտացոլումն է ստացել դատական մարմինների և դատավորների անկախությանը վերաբերող առավել բարձր միջազգային նշանակություն ունեցող փաստաթղթում՝ Միավորված ազգերի կազմակերպության 1985 թվականի սեպտեմբերի 06-ին ընդունած «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ»-ում: Նշված սկզբունքների հավելվածի 19-րդ կետում ամրագրվել է, որ դատավորին պատժի, պաշտոնից ազատելու և հեռացնելու բոլոր գործընթացները պետք է որոշվեն սահմանված դատական վարքագծի կանոններին համապատասխան: Նշված միջազգային նորմ-չափորոշիչն իր հետագա զարգացումն է ստացել տարածաշրջանային միջազգային իրավական բնույթի փաստաթղթերում /«Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիան, Եվրոպական խորհրդի նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 13-ին ընդունած «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» R/94/12 հանձնարարականը, Եվրախորհրդի եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի/CCJE/ 1-ին և 3-րդ բանաձևերը և այլ միջազգային փաստաթղթերը/: Նման պայմաններում վերոգրյալը հիմք է եզրակացնելու, որ դատական սխալի հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի նախատեսումը խախտում է կարգապահական կանոնների և դատավարական կանոնների կողմից կանոնակարգվող իրավահարաբերությունների սահմանազատումը՝ պատասխանատվության հիմք սահմանելով դատական սխալը, որը դուրս է դատավորի վարքագծի կանոնների կարգավորման առարկայից, պատասխանատվություն է սահմանվում դատավորի նկատմամբ այն գործողությունների կատարման համար, որոնց իրականացումը հանդիսանում է դատավորի մենաշնորհին ապացույցի գնահատման, փաստի գոյության հավանականության և կիրառելի նորմի ընտրության ու մեկնաբանության առումով /բացարձակ ազատությունը փաստի որոշման, ապացույցի գնահատման և իրավանորմի մեկնաբանման առումով/, ոտնահարում է արդարադատություն իրականացնելիս դատավորի բացարձակ անկախությունը՝ կոնկրետ վեճին լուծում տալ միայն իր ներքին համոզմամբ: Վերոգրյալ եզրահանգումներն իրենց արտացոլումն են ստացել մի շարք իրավական փաստաթղթերում, մասնավորապես՝ Դատական համագործակցության եվրոպական հանձնաժողովի բյուրոյի 2010 թվականի հունվարի 22-ի CDCJ-BU/2010/2 «Դատավորների, անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին»

նախագծի 15-րդ կետում շարադրված է. «Դատավորների որոշումները չեն կարող այլ կերպ քննության առարկա դառնալ, քան վերաքննության կամ նոր երևան եկած ընթացակարգով՝ նախատեսված օրենքով»: Նույնաբովանդակ իրավական դիրքորոշում է որդեգրվել նաև Եվրախորհրդի եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2001 և 2003 թվականների եզրակացություններում:

Այսպիսով, վերը նշված օրենսդրական բացերը խաթարում են դատավորի կողմից արդարադատության իրականացման անկախության սկզբունքը, խախտում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ միջազգային իրավունքով սահմանված պահանջը, բացառապես վարքագծային բնույթ կրող անիրավաչափ գործողության համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու դատավորների անկախության սկզբունքի պահպանումը, որը նախատեսված դատավորի վարքագծի մասին կանոններով: Միաժամանակ, վերը նշված հարցադրումները հիմնախնդիրներ են և Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխությունների իրականացման համատեքստում առանցքային մտահոգություններ են, հետևաբար՝ այդ կապակցությամբ համապատասխան իրավաչափ լուծում ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային պրակտիկան, համեմատական եզրեր անցկացնել Հայաստանի Հանրապետությունում գործող պրակտիկայի հետ, միջոցներ ձեռնարկել այն ՀՀ դատական համակարգի բարեփոխման ուղղությամբ կիրառելու նպատակով:

ДИСЦИПЛИНАРНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ И СООТНОШЕНИЕ ЗАДАЧ НЕЗАВИСИМОСТИ СУДЬИ

Саргсян Лида Арташесовна

*Соискатель кафедры юриспруденции
Европейского университета, помощник
судьи гражданско-административной
палаты Кассационного суда РА*

В статье рассматривается вопрос о дисциплинарной ответственности судей как факторе их независимости. Независимость судей является конститу-

ционной нормой, которая подразумевает, что возможность привлечения судей к дисциплинарной ответственности, в любом случае, никоим образом не должна препятствовать осуществлению принципа независимости судей. Резюмируя статью, автор делает вывод о том, что в целях сохранения принципа независимости судей, их следует привлекать к ответственности только за противоправные действия поведенческого характера, предусмотренные правилами поведения судей.

Ключевые слова: дисциплинарная ответственность, судебная власть, независимость судьи, дисциплинарные принципы, нормы, правила поведения, судебная ошибка.

RELATIONSHIP BETWEEN JUDGE'S DISCIPLINARY LIABILITY AND INDEPENDENCE

Sargsyan Lida

*PhD Student at the Chair of Law,
European University of RA, Assistant
Judge of the Civil-Administrative
Chamber of the RA Court of Cassation*

The article covers the issues of judges' disciplinary liability as a factor of independence. The independence of judges is a constitutional normative principle, which implies that the possibility of subjecting judges to disciplinary liability, in any case, should not, in any way, impede the true implementation of the principle of independence. Summing up the article, it is important to conclude that in order to maintain the principle of independence, judges should be subjected to disciplinary liability only for illegal acts of a behavioral nature, provided by the rules of judicial conduct.

Key words: disciplinary liability, judiciary, independence of the judge, disciplinary norms, rules of conduct, miscarriage of justice.

Հոդվածը գրախոսվել է՝ 08.09.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 10.09.2020թ.

ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽԹԱՆ

Վարդանյան Արթուր

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,

արդարադատության նախարարի խորհրդական

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկն է և հասարակության կեցության հիմքը: Այն նշանակալի է ոչ այնքան և ոչ միայն որպես ոլորտ, որից ստացվում է որոշակի ավելացված արժեք, այլև որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունն ու անվտանգությունը:

Գյուղատնտեսությունը 2018թ. դրությամբ ապահովել է ՀՆԱ-ի 13,7 %-ը (822,4 մլրդ ՀՀ դրամ):¹ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2018թ. կազմել է 889,7 մլրդ ՀՀ դրամ, որի 46 %-ը (411,8 մլրդ ՀՀ դրամ) ձևավորվել է բուսաբուծական, 54 %-ը (477,9 մլրդ ՀՀ դրամ)՝ անասնաբուծական արտադրանքից:²

Գյուղատնտեսության ոլորտի զարգացմամբ է պայմանավորված ինչպես գյուղական համայնքների, այնպես էլ սննդի արտադրության արժեղթայում զգալի մասնաբաժին ունեցող այն ենթաճյուղերի զարգացումը, որոնք հիմնվում են տեղական գյուղատնտեսական արտադրանքի վրա և ունեն արտահանման բավականին մեծ ներուժ: Այդուհանդերձ, ոլորտի արտահանման ծավալները ներկայումս բավականին ցածր են: Մասնավորապես, 2018 թ. արտահանման ընդհանուր ծավալի մեջ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմել է ընդամենը 6 % (144,3 մլն ԱՄՆ դոլար):³ Գյու-

¹ Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_03_19a_112.pdf, կայքին հղումը՝ 08.06.2020թ.-ի դրությամբ

² Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf կայքին հղումը՝ 08.06.2020թ.-ի դրությամբ

³ Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf կայքին հղումը՝ 08.06.2020թ.-ի

դատնիսության համախառն արտադրանքում (889,7 մլրդ ՀՀ դրամ, 2018) արտահանման մասնաբաժինը կազմել է մոտ 7,8 %:⁴ Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ վերջին տարիներին գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալները և վերջինիս մասնաբաժինն արտահանման ընդհանուր ծավալներում որոշակիորեն աճել են: Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման ծավալները համեմատաբար ավելի մեծ են: Մասնավորապես՝ 2018 թ. ներմուծման ընդհանուր ծավալում գյուղատնտեսության մասնաբաժինը կազմել է 8,2 % (404,7 մլն ԱՄՆ դոլար):

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությունն ունի զարգացման մեծ պոտենցիալ, սակայն այդ ճանապարհին հանդիպող խոչընդոտները բազմաթիվ են, որոնց շարքում առաջնային է գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ հաշվառման բացակայությունը, գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը ոչ նպատակային նշանակությամբ կամ առհասարակ դրանց չօգտագործումը: Հայաստանում առկա 445,6 հազ. հա վարելահողերից 2018 թվականին նպատակային օգտագործվել է ընդամենը 242,8 հազ. հա կամ շուրջ 54,5 %, որը բավական ցածր ցուցանիշ է այսպիսի սակավահող երկրի համար: Գյուղատնտեսական հողերը չեն մշակվում բազմաթիվ պատճառներով՝ ռոտզման ջրի անհասանելիություն կամ անբավարար մատակարարում, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիություն, հողի բերրիության ցածր մակարդակ, հողօգտագործողի կամ հողի սեփականատիրոջ բացակայություն, ցածր եկամտաբերություն, անհրաժեշտ շրջանառու միջոցների անբավարարություն և այլն: Անմշակ հողատարածքների մասշտաբները (վարելահողերի ավելի քան մեկ երրորդը) և փոքր հողակտորների տարածվածությունը դանդաղեցնում են գյուղատնտեսության զարգացումը և խոչընդոտում արտադրության ակտիվացմանն ու ներդրումների ներգրավմանը: Գյուղատնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի հողի նպատակային օգտագործումը: Որպես երկրի տնտեսության ռազմավարական կարևորություն ունեցող ոլորտ՝ ՀՀ գյուղատնտեսության արտադրական ներուժի օգտագործման, ինչպես նաև հողօգտագործման արդյունավետության մակարդակը դեռևս

դրությամբ

⁴ Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf կայքին հղումը՝ 08.06.2020թ.-ի դրությամբ

ցածր է: Դրա հիմնական պատճառը գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն են, ինչը խոչընդոտում է հողի շուկայի (հատկապես՝ երկրորդային) աշխուժացմանը, ինչպես նաև հողային ֆոնդի կառավարմանն ու գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպմանը: Փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական նշանակության հողերի օպտիմալ օգտագործման և միաժամանակ գյուղացիական տնտեսությունների խոշորացման լավագույն ձևը գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումն է և գյուղատնտեսական հողերի ներդրումը գյուղատնտեսական կոոպերատիվներում՝ փայերի տեսքով:⁵

Հողային ոլորտի կարևորագույն խնդիրներից է նաև ոռոգման համակարգերի ոչ ամբողջական ապահովվածությունը: Հայաստանում գյուղատնտեսական հողերի ոռոգումը դեռևս ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկն է: Մասնավորապես, 2018 թվականի տվյալներով՝ Հայաստանում ոռոգվող է համարվում գյուղատնտեսական նշանակության հողերի 154.9 հազար հեկտարը, որը կազմում է գյուղատնտեսական նշանակության հողերի ընդամենը 7,6 %-ը: Սակայն հարկ է նկատել, որ ոլորտի խնդիրներից է ոչ այնքան ոռոգման համակարգերի հասանելիության, այլ վերջիններիս արդյունավետ կառավարման ցածր մակարդակը: Մասնավորապես, խնդիրը ոչ այնքան ջրային պաշարների պակասն է, որքան վերջինիս ճիշտ բաշխման կառուցակարգերի բացակայությունը, օրինակ՝ ոռոգման առավել արդյունավետ և ժամանակակից համակարգերի կիրառությունը:⁶

Գյուղատնտեսական հողերի մշակման ցածր արդյունավետության և չմշակման հիմնական պատճառների շարքին են դասվում նաև հողի սեփականատիրոջ բացակայությունը երկրից կամ զբաղվածությունն այլ ոլորտում, հողերի մասնատվածությունը և փոքր չափերը, դեպի վարելահողեր տանող ճանապարհների ոչ բարվոք վիճակը կամ բացակայությունը և այլն:⁷

Խիստ հրատապ խնդիր է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի և ագրոքիմիական լայնածավալ հետազոտությունների հիման վրա հո-

⁵Տե՛ս Elias H. Tuma: Land Reform_Agricultural Economics <https://www.britannica.com/topic/land-reform/Evaluation-and-criteria-of-success>:

⁶ Տե՛ս ՀՀ Կառավարության՝ 23 հունվարի 2020 թվականի N 68-Լ որոշումը «Գյուղատնտեսության նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», Հավելված 1:

⁷ <https://www.azatutyun.am/a/30054973.html> կայքին հղումը 04.06.2020թ.-ի դրությամբ:

ղերի որակական հատկանիշների թվայնացված քարտեզների կազմումը: Մեփականաշնորհումից հետո հողերը մշակվել են առանց ագրոքիմիական կանոնների պահպանման՝ միակողմանի պարարտացման և գիտականորեն հիմնավորված ցանքաշրջանառության բացակայության պայմաններում, ինչի հետևանքով նվազել են հողերի որակական հատկանիշներն ու բերքիությունը, մշակաբույսերի բերքատվությունն ու դիմացկունությունը, բերքի որակը: Նվազել են նաև ոլորտի եկամտաբերությունը և ներդրումային գրավչությունը:

Այս խնդիրը խիստ փոխկապակցված է գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառման, խոշորացման և երկրորդային շուկայի զարգացման հետ. թվայնացված ագրոքիմիական քարտեզները հնարավորություն կտան ստանալ հետազոտված հողերի՝ սննդատարրերով ապահովվածության տվյալները:

Այսպիսով՝ Հայաստանում առկա է գյուղատնտեսական հողերի թույլ զարգացած երկրորդային շուկա, որը, այնուամենայնիվ, առանցքային է գյուղատնտեսության զարգացման համար: Եվ չնայած վերը թվարկված խնդիրներին՝ Հայաստանում գյուղատնտեսությունը կարող է դառնալ ժամանակակից, բարգավաճող և դիվերսիֆիկացված տնտեսության առաջնային հիմնասյուներից մեկը: Այն երկրի տնտեսական աճի, բնակչության կյանքի որակի բարձրացման, աղքատության մեղմման, կայուն և բարձր վարձատրվող աշխատատեղերի և ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ստեղծման մեծ ներուժ ունի:

Գյուղատնտեսության զարգացման, նրա պոտենցիալը ճիշտ օգտագործելու ճանապարհին պետության կողմից առաջնային է հողային բարեփոխումների քաղաքականության հրատապ և հետևողական իրագործումը: Հողային բարեփոխումը գյուղատնտեսության ոլորտի զարգացման հենասյուներից մեկն է, առաջնային և հիմնարար խթանը գյուղատնտեսության զարգացման ճանապարհին: Գյուղատնտեսական նշանակության հողերը պետք է հասանելի լինեն արտադրողների և գործարարների համար: Կառավարությունը հետամուտ պետք է լինի հողի շուկայի զարգացմանը՝ իրականացնելով հողերի ճշգրիտ գրանցում և հաշվառում, հողերի մասին նոր իրավական ակտերի ընդունում և անմշակ հողատարածքների կրճատման նպատակով տեխնիկական միջոցառումների (օրինակ՝ հողերի առք ու վաճառքի էլեկտրոնային հարթակ) մշակում: Հողային բարեփոխումների հիմնական նպատակը պետք է լինի հողերի կոնսոլիդացման միջոցով արագ

բարձրացնել հողի արտադրողականությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ինչպես հողի վարձակալության, այնպես էլ վաճառքի շուկաներին: Եվ ինչպես ցույց է տալիս միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը, հողային բարեփոխումների լավագույն դեպքերը նրանք են, երբ բարեփոխումները կատարվում են հավասարության սկզբունքով՝ նպատակ ունենալով խուսափել գյուղատնտեսական նշանակության հողերի կենտրոնացումից մի քանի խոշոր ձեռնարկատերերի ձեռքում՝ այն կոռպորատիվների միջոցով բաշխելով գյուղական համայնքի բնակչության միջև, ինչպես դա տեղի է ունեցել Ճապոնիայում: Ներկայումս Ճապոնիան ամբողջությամբ ապահովել է գյուղատնտեսական արտադրանքի ներքին պահանջարկը՝ այն պայմաններում, երբ ամբողջ հողային ֆոնդի ընդամենը 13 տոկոսն է գյուղատնտեսական նշանակության:⁸

Այսպիսով, գյուղատնտեսության ոլորտի խնդիրները լուծելու և հողային բարեփոխումներն արդյունավետ և հնարավորինս արագ իրագործելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է կատարել հետևյալ թիրախային գործողություններն ըստ հաջորդականության.

1. **Գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառում**, որն իրենից ենթադրում է՝ հողերի վերաբերյալ էլեկտրոնային քարտեզների կազմում, հողերի դասակարգում՝ ըստ որոշակի չափանիշների, ինչպիսիք են օրինակ՝ օգտագործվող և չօգտագործվող հողերի տարանջատումը (ընդ որում՝ չօգտագործվող հողերի դեպքում ևս անհրաժեշտ է ստորակարգված չափանիշներով դասակարգումը, օրինակ՝ չի օգտագործվել, մշակվել 5 տարի և ավելի), դասակարգումը՝ ըստ բերրիության, ըստ ագրոքիմիական հետազոտության հիման վրա արված գիտական եզրահանգումների, թե տվյալ հողամասում ինչպիսի մշակաբույսերի մշակումը և(կամ) գյուղատնտեսության ինչպիսի ճյուղով զբաղվելը կլինի ավելի արդյունավետ և եկամտաբեր:

Ներկայումս չունենալով գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն՝ խնդիրներ են առաջանում ինչպես օբյեկտիվ պատճառներով չօգտագործվող կամ ոչ նպատակային օգտագործվող վարելահողերի՝ գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառումը խթանող գործուն կառուցակարգեր մշակելու և ներդնելու, այնպես էլ ներդրողներին անհրաժեշտ հողատարածքների վերաբերյալ տեղեկատվություն

⁸ Տե՛ս Арте́м Петро́нко: Риски и важность аграрной реформы. Мировой опыт. Часть 1 <https://blogs.pravda.com.ua/authors/petrenko/5dc57e76ce98a/>

տրամադրելու գործում: Հողի շուկայի զարգացումը և չօգտագործվող ու լքված հողերի դեմ իրականացվող միջոցառումները չափազանց մեծ նշանակություն ունեն երկրի գյուղատնտեսության հետագա զարգացման համար: Այս տեսանկյունից չօգտագործվող հողը պետք է լինի հնարավորություն, ոչ թե խոչընդոտ:⁹ Ուշագրավ է նաև այն փաստը, որ գյուղատնտեսական հողերի հաշվառման պահանջը նախատեսվել է «գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգի»¹⁰ 14-րդ կետով՝ համաձայն որի. «Առաջարկվող լուծումներին հասնելու համար առաջնահերթ են համարվում գյուղատնտեսական հողատարածքների, այդ թվում՝ չօգտագործվող հողերի հաշվառումն ու թվայնացումը, որոնք պետք է ուղեկցվեն հողային օրենսդրության բարելավված փաթեթով և հողերի սեփականատերերի ու հողօգտագործողների միջև նոր կապերի հաստատման խթանմամբ»:

Հողերի հաշվառման համակարգի ներդրման համատեքստում հիշատակման արժանի է Համաշխարհային բանկի զեկույցը, որը վերաբերում է հողերի կառավարման արդյունավետության բարձրացմանը¹¹: Զեկույցում մասնավորապես նշված է, որ հողերի և անշարժ գույքի հաշվառման և տեղեկատվական բազայի ամբողջականության բացակայությունը լրջագույն խոչընդոտ է ոլորտում բիզնես միջավայրի զարգացման համար, ընդ որում՝ նման խոչընդոտն առավել դժվար հաղթահարելի է այն դեպքում, երբ առկա չէ հստակ գործառնության տարանջատում ոլորտի պատասխանատու պետական մարմինների միջև: Միասնական հաշվառման համակարգի ներդրման ոլորտում հատկապես ուշագրավ է Լիտվայի փորձը, որն ըստ Համաշխարհային բանկի Doing Business սանդղակի՝ աշխարհում զբաղեցնում է երկրորդ տեղը¹²: Այստեղ գյուղատնտեսական և ոչ միայն հողերի հաշվառման պատասխանատու մարմինը գյուղատնտեսության նախարարությունն է: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ հաշվառման միասնա-

⁹ Сборник материалов национальной научно-практической конференции: Новосибирск 2018: Регулирование земельно-имущественных отношений в России: Правовое и геопространственное обеспечение, оценка недвижимости, экология, технологические решения, ст: 36-40.

¹⁰ St' u ՀՀ Կառավարության՝ 23 Հունվարի 2020, 68 - Լ որոշումը հավելված 1-ին:

¹¹ St' u Hilhorst, Thea and Frederic Meunier, eds. 2015. How Innovations in Land Administration Reform Improve on Doing Business: cases from Lithuania, the Republic of Korea, Rwanda and the United Kingdom. Washington DC.: World Bank.

¹² St' u նոյն տեղում, էջ 20:

կան և թվային համակարգի ներդրումը և արդյունավետ կիրառումն էականորեն թեթևացրել է դատարանների ծանրաբեռնվածությունը հողային վեճերով, և ներկայումս հողային վեճերի գրեթե 95 տոկոսը լուծվում են արտադատական ընթացակարգերով: Լիտվայում կիրառվող հողերի ռեգիստրի առկա թվային համակարգը թույլ է տալիս էլեկտրոնային հարթակում իրական ժամանակի ռեժիմով տեսնել հողամասի չափսերը, դրա վրա առկա շինությունները, ծանրաբեռնվածությունը և սահմանափակումները, շինարարական թույլտվությունները, ջրի, էլեկտրաէներգիայի, գազի հասանելիությունը, հողամասերն վերաբերող գործարքների պատմությունը, դատական պրոցեսները, ժառանգական գործընթացները և այլն, ընդ որում՝ տվյալներն ամբողջությամբ բաց են: Կարևոր է նաև այն փաստը, որ անշարժ գույքի ռեգիստրը կապված է պետական մյուս մարմինների տեղեկատվական բազաների հետ, այդ թվում՝ նոտարիատի հետ, որը հնարավորություն է տալիս նոտարներին վավերացնել անշարժ գույքին վերաբերող գործարքներն անմիջապես՝ էլեկտրոնային հարթակում ստուգելով հողամասի վերաբերյալ սահմանափակումների առկայությունը, սեփականատիրոջ տվյալները և այլ անհրաժեշտ տեղեկությունները, իսկ այդպիսի գործարքները նոտարների կողմից վավերացվելուց և էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվելուց հետո անմիջապես գններացվում են անշարժ գույքի ռեգիստրում՝ տվյալների ինքնաշխատ փոփոխությամբ:¹³ Նման փոփոխությունների արդյունքում Լիտվայում սեփականության վկայականների կեղծման միջոցով կատարվող գործարքների և հանցագործությունների թիվը հասել է զրոյի:¹⁴ Անշարժ գույքի վերաբերյալ առկա տեղեկատվական բազան ակտիվորեն օգտագործվում է նաև բանկերի կողմից անշարժ գույքի գնահատման և վարկային քաղաքականություն իրականացնելիս, ինչպես նաև նոր կիրառվող հնարավորությունների միջոցով հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունները (ջուր, գազ, էլեկտրաէներգիա) կարող են նշել այն տարածաշրջանները, հողերը, որտեղ նախատեսվում է հաջորդիվ միացումներ անել կամ գնահատել միացման հնարավոր ծախսերը: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի¹⁵ 110-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը հողօգտագործողների համար, ի թիվս այլ պարտականությունների,

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 24-25, 26-27:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

¹⁵ Տե՛ս ՀՀՊՏ 2001.06.15/17(149):

նախատեսում է հողամասը նպատակային նշանակությամբ օգտագործելու պարտականություն: Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասը, որպես նշված պարտականությունը չկատարելու անբարենպաստ հետևանք, նախատեսում է հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի դադարումը, եթե հողամասն օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ: Սակայն նորմի կիրառման դեպքերն ըստ էության բացակայում են: Հարկ ենք համարում նշել նաև, որ ներկայումս գյուղատնտեսական ոլորտի պատասխանատու պետական գերատեսչությանը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն արված հարցմանն ի պատասխան ստացել ենք այն տեղեկությունը, որ չօգտագործվող գյուղատնտեսական հողերի վերաբերյալ վարված հաշվառում առկա չէ, և մինչ օրս նմանատիպ պրակտիկա առկա չէ: Ինչը, մեր կարծիքով, ևս մեկ անգամ ապացուցում է այն փաստը, որ գյուղատնտեսության նախարարության առկայությունը գործադիր իշխանության կազմում անհրաժեշտ է, և դրա հնարավորինս արագ ստեղծումը կարող է արագացնել ստեղծված խնդիրների լուծումը: Պետք է նկատել նաև, որ «գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը» հաստատելու մասին կառավարության որոշման 2-րդ հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ էկոնոմիկայի նախարարության կողմից մինչև 2020թ. 1-ին կիսամյակը պետք է մշակվեր «Գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները և որպես չօգտագործվող հողեր հաշվառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, սակայն նման որոշման նախագիծ մինչ օրս առկա չէ, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առկա գործառնության ծանրաբեռնվածության պայմաններում ի գործու չէ արդյունավետ իրագործել հողային ոլորտի բարեփոխումները և լուծել գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրները: Վերոգրյալի համատեքստում ավելի արդիական է դառնում գյուղատնտեսության նախարարություն ստեղծելու անհրաժեշտությունը:

2. Հողային ոլորտի բարեփոխումների երկրորդ քայլը պետք է լինեն իրավական բարեփոխումները: Փոփոխությունները պետք է միտված լինեն չօգտագործվող կամ ոչ նպատակային նշանակությամբ օգտագործվող հողամասերը պետականացնելուն և դրանք ուղղակի աջակցության մեխանիզմների միջոցով գյուղացիական տնտեսություններին տրամադրելուն, հատկապես՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին փոխանցելուն: Այստեղ հարկ է նկատել, որ կոոպերատիվներին ուղղակի աջակցություն ցու-

ցաբերելու հրամայականը որդեգրվել է նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվներին պետական աջակցության ծրագիրը» հաստատելու մասին Կառավարության որոշման¹⁶ 9-րդ կետով՝ համաձայն որի. «Ծրագրի նպատակը պետական ուղղակի աջակցության մեխանիզմների կիրառմամբ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման խթանումն ու կարողությունների հզորացումն է»: Կոոպերատիվներին ցուցաբերվող ուղղակի աջակցության լավագույն դրսևորումներից մեկը կլինի չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառումը, դրանք պետականացնելը և անհատույց օգտագործման իրավունքով հանձնելը գյուղատնտեսական կոոպերատիվներին:

Վերոգրյալը հաշվի առնելով և հողային ոլորտի իրավակարգավորումների բարեփոխումների անհրաժեշտությունը կարևորելով՝ առաջարկում ենք լրացնել Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածը, որով նախատեսվում են պետության և համայնքների սեփականությունը հանդիսացող հողեր անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու դեպքերը և պայմանները: Մասնավորապես՝ առաջարկում ենք 75-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.3 կետով.

«2.3) գյուղատնտեսական կոոպերատիվների, եթե գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ սեփականության իրավունքը դադարել է օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին, երկրորդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում»:

Նշված լրացման արդյունքում պետությունը և համայնքները հնարավորություն կունենան երեք տարի և ավելի ժամկետում չօգտագործված գյուղատնտեսական հողերն անհատույց օգտագործմամբ առանց մրցույթի տրամադրել գյուղատնտեսական կոոպերատիվներին: Այս առաջարկն ունի գործնական կարևոր նշանակություն և միտված է գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը, անմշակ հողերի առկայության բացառմանը՝ դրանք ներդնելով կոոպերատիվների գույքային կազմում, ադապտով իսկ օժանդակելով կոոպերատիվ տիպի իրավաբանական անձանց ստեղծմանը և զարգացմանը: Առավել ևս, որ կոոպերացիան արդեն իսկ ճանաչվել է որպես ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման հիմնական տեսլական, ավելին՝ գործնականում ապացուցել է իր գործունեության արդյունավետությունը: Նշվածի մասին է վկայում նաև Հայաստանի Հանրապետության գյուղատն-

¹⁶ Տե՛ս <https://www.e-draft.am/en/projects/593/about> հղումը՝ 08.06.2020թ.-ի դրությամբ:

տեսության նախարարության կողմից իրականացված ուսումնասիրությունը (ուսումնասիրությունը կատարվել է 2017թ, երբ կառավարության կազմում կար գյուղատնտեսության նախարարություն): Ուսումնասիրության համաձայն՝ գյուղատնտեսական կոռուպցիայի ստեղծման արդյունքում գրանցվել է արտադրանքի ինքնարժեքի, արտադրության ծախսի նվազում (20-30%), շահագործվել է շուրջ 500 հա անմշակ հող, տնտեսավարողների կողմից ներդրումների ծավալը կազմել է շուրջ 500 մլն դրամ: Համատեղ գործունեության արդյունքում՝ տնտեսավարողների կողմից ներդրվել է բարձրարժեք և ոչ ավանդական մշակաբույսերի արտադրություն (հնդկացորեն, ոսպ, կտավատ, բրդկուլի, ֆիզալիս, կիվանո, արտիշոկ և այլն):¹⁷

Հոդային օրենսգրքի 64-րդ հոդվածով կարգավորվում են պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերի՝ սեփականության իրավունքով անհատույց հանձնելու հետ կապված հարաբերությունները: Գյուղատնտեսության ոլորտում լրացուցիչ ներդրումներ խթանելու համար առաջարկում ենք Հոդային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասը հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) ՀՀ քաղաքացի հանդիսացող այն ֆիզիկական անձանց և այն ռեզիդենտ իրավաբանական անձանց, որոնք ներկայացրել են գյուղատնտեսության ոլորտում 100 միլիոն դրամը գերազանցող ներդրումային ծրագիր և ծրագիրը արժանացել է կառավարության հավանությանը»:

Նույն հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությունը՝ «արգելվում է» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Անհատույց տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասը ենթակա է բռնագանձման, եթե չի կատարվել ներդրումային ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունը, կամ այն կատարվել է պայմանագրի էական խախտումներով: Ներդրումային ծրագրով նախատեսված ներդրման պարտականության ժամկետը չի կարող երեք տարուց ավել լինել: Սույն մասով նախատեսված ներդրումային ծրագրի ձևը, ներկայացման և քննարկման կարգը սահմանում է կառավարությունը»:

ՀՕ 100-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1 կետով.

«8.1) Ներդրումային ծրագրի շրջանակում անհատույց հանձնված հողա-

¹⁷ <https://www.e-draft.am/projects/593/justification> Հղումը 04.06.2020թ. -ի դրությամբ:

մասի նկատմամբ, եթե չեն կատարվել ներդրումային պայմանագրով ստանձնված պարտականությունները կամ դրանք կատարվել են պայմանագրի էական խախտումներով, կամ կատարվել են երեք տարվա ժամկետի խախտումով»:

ՀՕ 102-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1 կետով.

«3.1) Սեփականության իրավունքով անհատույց տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ ներդրումային պարտականությունները չկատարելը կամ դրանք կատարելը պայմանագրի էական խախտումներով, կամ եռամյա ժամկետի խախտմամբ»:

Վերոգրյալ փոփոխությունները հնարավորություն կտան գյուղատնտեսական նշանակության հողերը սեփականության իրավունքով անհատույց հանձնել այն անձանց, ովքեր պատրաստակամություն կհայտնեն գյուղատնտեսության ոլորտում կատարել 100 միլիոն դրամի կամ ավել ներդրումներ: Առաջարկի գործնական կարևոր նշանակությունն այն է, որ օրենսդրական փոփոխության արդյունքում հնարավոր կլինի զգալի ներդրումներ ներգրավել գյուղատնտեսության ոլորտ, իսկ որպես ներդրումները խթանող գործիք՝ պետությունն անմշակ հողամասերը սեփականության իրավունքով կտրամադրի ներդրողներին:

3. Հողային ոլորտի՝ վերը նշված երկու բարեփոխումներին զուգահեռ՝ որպես գյուղատնտեսության զարգացման հաջորդ քայլ՝ պետք է ստեղծել գյուղատնտեսական հողերի միասնական շուկա, որն իրենից ենթադրում է նաև համապատասխան էլեկտրոնային հարթակի առկայություն՝ հնարավորություն տալով պոտենցիալ ներդրողներին, հողամաս ձեռք բերել ցանկացողներին էլեկտրոնային հարթակում տեսնելու առկա հնարավոր տարբերակները՝ ըստ նշանակության, բերքիության, մոտակա ենթակառուցվածքների առկայության: Նման էլեկտրոնային հարթակի ձևավորումն զգալի խթան կդառնա գյուղատնտեսության ոլորտում բիզնես միջավայրի զարգացման համար՝ օտարերկրյա ներդրողներին ևս հասանելի դարձնելով ՀՀ-ում առկա գյուղատնտեսական հողերի բանկը: Նմանատիպ շուկա ձևավորվեց նաև Ուկրաինայում տեղի ունեցած հողային բարեփոխումների արդյունքում, որն ապացուցեց իր գործունեության արդյունավետությունը և անվանվեց պատմական իրադարձություն:¹⁸

¹⁸Տե՛ս

https://www.dw.com/ru/%D0%B7%D0%B5%D0%BC%D0%B5%D0%BB%D1%8C%D0%BD%

Իհարկե, վերը նշված գործողություններն ամբողջությամբ չեն լուծելու գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրները, սակայն դրանց հետևողական և ճիշտ իրագործումն առաջնային և անխուսափելի քայլն է՝ գյուղատնտեսության հիմնական միջոցը հանդիսացող հողային ոլորտը բարեփոխելու և ՀՀ-ում առկա գյուղատնտեսական հողերի պոտենցիալը հնարավորինս արդյունավետ օգտագործելու համար: Հատկանշական է նաև, որ ՄԱԿ-ի զեկույցում ևս հողային ոլորտի բարեփոխումները ներկայացվել են որպես գյուղական համայնքներում աղքատության հաղթահարման և գյուղատնտեսության զարգացման առաջնային խթան:¹⁹

ЗЕМЕЛЬНАЯ РЕФОРМА КАК ВАЖНОЕ УСЛОВИЕ РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

Варданян Артур Арменович

*Советник министра юстиции,
аспирант кафедры гражданского
права юридического факультета ЕГУ*

В статье представлена роль сельского хозяйства в экономике Республики Армения. В этом контексте подчеркнута важность земельных отношений и необходимости проведения земельной реформы для развития сельского хозяйства. Представлена международная практика в сфере земельной реформы, сделаны ряд предложений по изменению Земельного кодекса, внедрению системы регистрации земли и электронной платформы земельного рынка, а

[D0%B0%D1%8F-%D1%80%D0%B5%D1%84%D0%BE%D1%80%D0%BC%D0%B0-%D0%BA%D0%B0%D0%BA-%D0%B1%D1%83%D0%B4%D0%B5%D1%82-%D1%80%D0%B0%D0%B1%D0%BE%D1%82%D0%B0%D1%82%D1%8C-%D1%80%D1%8B%D0%BD%D0%BE%D0%BA-%D0%B7%D0%B5%D0%BC%D0%BB%D0%B8-%D0%B2-%D1%83%D0%BA%D1%80%D0%B0%D0%B8%D0%BD%D0%B5/a-52973735](https://www.un.am/up/library/Land%20Reform%20Rural%20Poverty%20and%20Inequality_eng.pdf)

կայքին

հղումը՝ 17.06.2020թ. դրությամբ:

¹⁹Max Spoor: Land reform, rural poverty and inequality: a pro-poor approach to land policies, Yerevan/Hague, UNDP-Armenia: White paper 2004.

https://www.un.am/up/library/Land%20Reform%20Rural%20Poverty%20and%20Inequality_eng.pdf

также развитию бизнес-среды в сельском хозяйстве.

Ключевые слова земельная реформа, земельный реестр, изменения Земельного кодекса, инвестиции в сельское хозяйство, сельскохозяйственный кооператив.

LAND REFORM AS AN IMPORTANT STIMULUS TO AGRICULTURAL DEVELOPMENT

Vardanyan Arthur

Advisor to the Minister of Justice

PhD Student at the Chair of Civil Law,

Faculty of Law, YSU

The focus of the present article is role of agriculture in the economy of the Republic of Armenia. In this context, the importance of land relations and the necessity of a land reform for agricultural development purposes have been presented. Meanwhile, the article covers the best international practice in the sphere of land reforms, a number of proposals for amendment to the Land Code, the implementation of a land registration system and an electronic platform of land market and the development of business environment in the agricultural sector.

Key words: land reform, land register, amendments to the Land Code, investments in agriculture, agricultural cooperative.

Հոդվածը գրախոսվել է՝ 02.09.2020թ.

Ներկայացվել է տպագրության՝ 09.09.2020թ.

ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարյան Նվարդ

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի
ուսումնամեթոդական և զարգացման
վարչության ավագ տեսուչ, ռստիկանության
ավագ լեյտենանտ, իրավագիտության մագիստրոս*

Անհնար է գերազնահատել ողջամիտ ժամկետում դատական քննության դերն ու նշանակությունը արդարադատության արդյունավետության ապահովման համատեքստում: «Ուշացված արդարադատությունը հավասար է արդարադատության մերժման» (Justice delayed is justice denied) մաքսիման լիովին արտահայտում է ողջամիտ ժամկետում արդարադատության չիրականացման էությունը:

Պետք է նշել, սակայն, որ ՀՀ-ում ողջամիտ ժամկետում գործերի քննության խնդրին բավարար ուշադրություն չի դարձվում: Այդ մասին են վկայում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին տարեկան հաղորդումները, Բարձրագույն դատական խորհրդի տարեկան հաղորդումները: Բարձրագույն դատական խորհրդի տարեկան հաղորդման (2019 թ.)¹ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական իշխանության ոլորտում համակարգային վերլուծությունները բացահայտել են մի շարք խնդիրներ, որոնք պայմանականորեն կարող են բնորոշվել որպես «սև խոռոչներ» և որոնցից է նաև ողջամիտ ժամկետում գործերի քննության ապահովումը ՀՀ-ում:

Համաձայն վերոնշված հաղորդման մեջ ներկայացված տվյալների՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի վավերացումից հետո Հայաստանի Հանրապետության դեմ կայացվել է 103 վճիռ, որից 40-ը (38.8 տոկոսը)՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման հիմքով: Ստահողիչ են հատկապես վերջին

¹ Տե՛ս <https://clck.ru/Qpigd> (11.09.2020թ.):

տարիներին արձանագրված խախտումների ժամկետները: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի վճիռներով Դեգիկյանն ընդդեմ Հայաստանի գործով այն կազմում է 13 տարի և չորս ամիս, Նիկողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ 5 տարի չորս ամիս, Պապոյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ 8 տարի 11 ամիս, իսկ 2018 թվականին ընդունված Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ 7 տարի և 8 ամիս: Ցավոք, նման իրավիճակի պատճառները խորությամբ չեն հետազոտվել ու հաղթահարվել: Ներկայումս թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական և թե՛ վարչական գործերով տարիներ շարունակ քննությունները հետաձգվում են, իսկ առանձին դատավորների մոտ 50 տոկոս և ավելին են նշանակված ու չկայացած նիստերը: Միայն Երևան քաղաքում ներկայումս առկա է 155 քրեական և 1628 քաղաքացիական գործ, որոնց քննությունը երկու և ավելի տարիներ ձգձգվում է (կան գործեր, որոնց քննությունը չի ավարտվում 10 և ավելի տարիներ): Այս գործերից շատերը հավանաբար կրողոքարկվեն վերաքննիչ ու վճռաբեկ աստիաններ: Նման պարագայում քննության ավարտը կրկնակի ու գուցե եռակի անգամ ձգձգվելու վտանգի տակ կհայտնվի:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր 1997 թ. հուլիսի 1-ի DH (97) 336 հանձնարարականում ընդգծել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումները լուրջ վտանգ են ներկայացնում, հատկապես իրավունքի գերակայության ապահովման տեսանկյունից»: Հարցի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է²:

Գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջ են բովանդակում ՀՀ կողմից վավերացված այնպիսի միջազգային պայմանագրեր, ինչպիսիք են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ): ՄԻԵԿ-ը՝ որպես անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման

² Տե՛ս Ա. Դալլաքյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. դեկտեմբերի 23-ի թիվ ԼԴ/0082/13/09 որոշում, կետ 18:

երաշխիք, նշում է ողջամիտ ժամկետում դատաքննության իրականացումը: Այսպես, ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում, արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Ողջամիտ ժամկետում գործի քննության այս երաշխիքի նպատակը դատավարության բոլոր կողմերի պաշտպանությունն է գործի քննության ավելորդ ձգձգումներից, որոնք կարող են վտանգել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը: Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նշանակությունը, հետևաբար, նաև այն է, որ պետք է ապահովվի ողջամիտ ժամկետում համապատասխան դատավարական ակտի կայացումը՝ դրանով իսկ վերջ դնելով այն անորոշ վիճակին, որում գտնվում է անձը՝ կապված քաղաքացիաիրավական բնույթի իր վիճակի կամ իր նկատմամբ առաջադրված մեղադրանքի հետ, ինչը կարևոր է ինչպես տվյալ անձի շահերի, այնպես էլ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից³:

ՀՀ Սահմանադրության 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ գործի արդարացի քննության սկզբունքը սահմանող 17-րդ հոդվածներում նշված է, որ «յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»: Ինչպես տեսնում ենք, և՛ ՄԻԵԿ-ում, և՛ վերոնշյալ ՀՀ իրավական ակտերում խոսվում է դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի քննության մասին, այնինչ գործի քննության ողջամիտ ժամկետը միայն դատական քննությամբ չի սահմանափակվում և սկսում է հոսել ավելի վաղ, քան գործը կքննվի դատարանում: «Էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր որոշման մեջ նշել է, որ քրեական գործերով ողջամիտ ժամկետը, որն ամրապնդված է ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետում, սկսում է ընթանալ այն պահից, երբ անձին մեղադրանք

³ Stéu Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of article 6 of the European Convention of Human Rights. Human rights handbooks, No. 3. Directorate General of Human Rights Council of Europe. 2nd edition 2006, էջ 25 :

է առաջադրվել: Դա կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունն սկսելու պահից: Մեղադրանքը, ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների ներքո, կարելի է բնորոշել որպես իրավասու իշխանությունների կողմից անձի պաշտոնապես տեղեկացումն առ այն, որ գոյություն ունեն հիմքեր՝ պնդելու վերջինիս կողմից քրեորեն պատժելի իրավախախտում կատարելու մասին»⁴:

Հետևաբար, ողջամիտ ժամկետում գործի քննության կարևորությունը պետք է ընդգծվի քրեական դատավարության ողջ ընթացքի համար՝ չսահմանափակվելով միայն գործի դատական քննությամբ: Կարծում ենք, որ մինչդատական վարույթի ողջամիտ ժամկետում իրականացումը մեծ դեր ունի ընդհանուր դատավարության ողջամտության ապահովման մեջ: Հետևաբար, կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ ՀՀ քրեական դատավարության սկզբունքների շարքում ամրագրել «ողջամիտ ժամկետում գործի քննության» սկզբունք՝ ընդգծելով վերջինիս իրականացման նշանակալիությունը ոչ միայն դատական, այլ նաև մինչդատական վարույթի արդյունավետ իրականացման տեսանկյունից: Այս տեսանկյունից ողջունելի ենք համարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) «քրեական վարույթի ողջամիտ ժամկետի» սահմանումը՝ որպես ինքնուրույն սկզբունք: Նախագծի 15-րդ հոդվածում, մասնավորապես, ամրագրված է, որ նախաքննությունը և դատական քննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում:

Կարծում ենք, որ ողջամիտ ժամկետում գործը քննելու պահանջ սահմանելով հանդերձ, պետք է խուսափել գործերի քննության կոնկրետ ժամկետներ սահմանելուց ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթի շրջանականներում: Վարույթն իրականացնող մարմնին գործերի քննության կոնկրետ ժամկետներով կաշկանդելն իր մեջ վտանգներ է պարունակում քննության պատշաճ որակի ապահովման տեսանկյունից: Այդ պատճառով մտահոգիչ ենք համարում նախագծով մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդման համար հստակ ժամկետների ամ-

⁴ St' u Eckle v. Germany գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73:

րագրումը՝ բացառիկ դեպքերում սահմանելով այդ ժամկետների մեկանգամյա երկարացման առավելագույն ժամկետ: Ճիշտ է, այս դրույթը ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը մինչդատական վարույթի համար դարձնում է ավելի իրական, սակայն հարց է առաջանում, թե ինչպիսի՞ չափանիշներով են առաջնորդվել նախագծի հեղինակները այդ ժամկետների սահմանման ժամանակ, և թե ինչպե՞ս է որոշվել այդ ժամկետների ողջամտությունը, բավարա՞ր են արդյոք այդ ժամկետները գործերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու, ապացուցման գործընթացի լիարժեք ապահովման, ապացուցողական գործունեության ծանրությունը դատական քննության փուլ չտեղափոխելու տեսանկյունից: Նշենք, որ ՄԻԵԴ-ը, ողջամիտ ժամկետում գործի քննության հետ կապված իր ոչ աղքատ նախադեպային պրակտիկայով հանդերձ, այնուամենայնիվ, խուսափել է սահմանելուց, թե գործի քննության համար որ ժամկետը պետք է համարել ողջամիտ:

Մինչդատական վարույթն ու դատական քննությունը միմյանց հետ օրգանապես կապված են, և մինչդատական վարույթի ընթացքում գործի քննության թերություններն ու բացթողումներն անխուսափելիորեն իրենց բացասական ազդեցությունն են ունենալու դատական քննության ընթացքում գործի քննության և որպես հետևանք՝ արդարադատության իրականացման որակի վրա: Վարույթն իրականացնող մարմինների համար պետք է առաջնային նշանակություն ունենա քրեական գործերի պատշաճ քննության ապահովումը, և վերջիններիս համար գործերի քննության օրենսդրորեն ամրագրված կոնկրետ ժամկետները չէ, որ պետք է գործի քննությունն անհարկի ձգձգելու համար զսպող օղակ հանդիսանան: Ցանկալի կլիներ ոչ թե իմպերատիվ կերպով սահմանել գործերի քննության կոնկրետ դատավարական ժամկետներ, այլ նախատեսել խորհրդատվական բնույթի և վարույթն իրականացնող մարմնի համար կողմնորոշիչ նշանակություն ունեցող որոշակի ժամկետներ, որոնց երկարացումը հնարավոր կլինի այնքան անգամ, քանի անգամ որ վարույթն իրականացնող մարմինը կկարողանա հիմնավորել դրա անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է դատական քննության շրջանակներում գործի քննության ողջամտությանը, ինչպես արդեն նշել ենք, ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունից այդպես էլ պարզ չի դառնում, թե գործի քննության ո՞ր ժամկետն է ՄԻԵԴ-ը համարում ողջամիտ, սակայն

«Պրետոն և այլոք ընդդեմ Իտալիայի» գործով Եվրոպական դատարանը նշել է, որ «դատական քննության տևողության ողջամտությունը յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է գնահատել ըստ տվյալ գործի կոնկրետ հանգամանքների և դատարանի պրակտիկայում ձևավորված չափանիշների»⁵:

Դրա հետ միասին, Եվրոպական դատարանը մշակել է չափանիշներ, որոնք հաշվի առնելով՝ որոշվում է ողջամիտ ժամկետի խախտման հարցը. գործի բարդությունը, դիմողի վարքագիծը, դատական ու վարչական մարմինների վարքագիծը և ռիսկի աստիճանը դիմողի համար⁶:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածում՝ ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ ամրագրված են դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելու չափանիշները: Մասնավորապես, 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները՝ ներառյալ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը,

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

Եթե «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածում ներկայացված առաջին 3 չափանիշների դեպքում առկա է որոշակի հստակություն, ապա չորրորդ չափանիշի դեպքում պետք է նշել, որ դեռևս Բարձրագույն դատական խորհրդի կողմից գործերի քննության միջին ուղենիշային տևողությունը չի սահմանվել: Համաձայն ՀՀ բարձրագույն դատա-

⁵ St' u Pretto and others v. Italy գործով 1983 թ. դեկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 7984/77, կետ 31:

⁶ St' u «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում» Գ. Ս. Ղազինյան, Ս. Ա. Դիլբանյան, Հ.Հ. Ղուկասյան, Ա. Ռ. Հարությունյան, Դ. Մ. Մելքոնյան, Ա. Հ. Թաթոյան- Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 130:

կան խորհրդի 2018թ. ապրիլի 9-ի թիվ ԲԴԽ-1-Ո-1 որոշման հավելվածով նախատեսված՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված և ընդունման ենթակա իրավական ակտերն ընդունելու ժամանակացույցի՝ գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության սահմանելու մասին որոշումը նախատեսվում է ընդունել 2020թ. նոյեմբերի 1-ին: Այս որոշման ընդունումն առավել քան սպասված է՝ հաշվի առնելով այն տվյալները, որոնք արդեն ներկայացվել են՝ կապված ՀՀ-ում ողջամիտ ժամկետում գործի քննության իրականացման հետ:

Պետք է նշել, սակայն, որ գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետների սահմանումը պետք է հիմնված լինի երկարամյա դատական պրակտիկայի խորքային ուսումնասիրության վրա՝ հաշվի առնելով ՀՀ դատարանների գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալները: Գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետների սահմանումը, անկասկած, կնպաստի գործերի քննության ողջամտության գնահատմանը, գործերի քննության տևողության կանխատեսելիությանը, ինչպես նաև դատարանների և դատավորների հաշվետվողականությանը:

Նշենք, որ դատական քննության ողջամիտ ժամկետի պահպանման հիմնախնդրի լուծումներ գտնելն ավելի հրատապ և արդիական է դարձնում ՀՀ քր. դատ. օր-ի 138-րդ հոդվածի 6-րդ մասում առկա իրավակարգավորումը՝ համաձայն որի որևէ կերպ սահմանափակված չէ անձի՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը, եթե գործը գտնվում է դատական վարույթում:

Այս հարցի առնչությամբ ՄԻԵԴ-ը դիրքորոշում է ձևավորել առ այն, որ դատարանները արդարադատություն իրականացնելիս պետք է «հատուկ ջանասիրություն» դրսևորեն այն գործերով, որոնցով անձը դատական քննության ընթացքում գտնվում է կալանքի տակ⁷:

Իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 18-ին Լ. Վարդանյանի և Ջ. Այվազյանի վերաբերյալ կայացված որոշմամբ ընդգծել է, որ ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից հատուկ ջանասիրության պետք է արժանանան այն գործերը, որոնք հնարավորինս սեղմ

⁷ St' u Kalashnikov v. Russia գործով 2002 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47095/99, կետ 132:

Ժամկետում քննության չառնելն էապես վնաս կհասցնի արդարադատության շահերին, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Վճռաբեկ դատարանն առանձնացրել է նաև քրեական գործերի այն կատեգորիաները, որոնք պետք է հատկապես ուշադրության արժանանան ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից: Վճռաբեկ դատարանի դասակարգմամբ՝ կարող են առաջնային ուշադրության արժանանալ այն գործերը, որոնցով «անձինք գտնվում են կալանքի տակ (հատուկ ուշադրության են արժանի ավելի երկար ժամանակահատված կալանքի տակ գտնվող անձանց վերաբերյալ գործերը)»⁸:

Վերոնշված դրույթների տրամաբանությունից են բխում նախագծում տեղ գտած այն իրավակարգավորումները, որոնց համաձայն՝ «... 2. Մեղադրյալն ունի ողջամիտ ժամկետում դատարանի առջև կանգնելու իրավունք: 3. Անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է սահմանափակվի ամենակարճ անհրաժեշտ ժամանակահատվածով»⁹: Ընդ որում՝ նախագծում դատական վարույթում գործերի քննության առաջնայնություն է սահմանվում այն գործերի համար, որոնցով մեղադրյալները գտնվում են կալանքի տակ: Այսպես՝ նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «իր վարույթում գտնվող քրեական գործերի քննության հաջորդականությունը որոշելիս դատավորը նախապատվությունը պետք է տա այն վարույթին, որով՝

1) մեղադրյալը գտնվում է կալանքի տակ.

2) մեղադրյալն ավելի երկար է գտնվում անազատության մեջ՝ համեմատ այլ վարույթով ներգրավված մեղադրյալների»:

Այս իրավակարգավորումը բխում է ինչպես ՄԻԵԴ-ի, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումներից և միանշանակ կնպաստի մեղադրյալների՝ անազատության մեջ մնալու անհարկի ձգձգումների ռիսկերի նվազմանը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ քննարկված հարցերը վկայում են ողջամիտ ժամկետում գործի քննության ապահովման տեսանկյունից ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին, քրեական արդարադատության ոլորտում մարդու ի-

⁸ Տե՛ս Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի ԵԱՔԴ/0016/01/14 որոշումը, կետ 20:

⁹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հոդված 15:

րավունքների հանրաճանաչ սկզբունքներին համահունչ կատարելագործելու անխուսափելի անհրաժեշտության մասին: Ընդ որում՝ այս իմաստով ՀՀ քրեադատավարական օրենսդրության կատարելագործմանն ուղղված իրավական մեխանիզմները նույնպես պետք է մշակվեն ողջամիտ ժամկետում և լինեն ողջամիտ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ С ОБЕСПЕЧЕНИЕМ РАССМОТРЕНИЯ ДЕЛА В РАЗУМНЫЙ СРОК В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

Варьян Нвард Вардановна

*Старший инспектор Управления по
учебно-методической работе и развитию
Образовательного комплекса полиции РА,
магистр юриспруденции,
старший лейтенант полиции*

Проблема обеспечения рассмотрения дела в разумный срок - одна из самых актуальных в уголовном процессе РА. Статья посвящена исследованию некоторых вопросов, касающихся этой проблемы в свете решений Европейского суда по правам человека, Кассационного суда РА, а также правового регулирования в Проекте Уголовно-процессуального кодекса РА.

Ключевые слова: уголовный процесс, разумный срок, Европейский суд по правам человека, Проект уголовно-процессуального кодекса РА.

SOME ISSUES RELATED TO CASE INVESTIGATION WITHIN A REASONABLE TIME IN THE CRIMINAL PROCEDURE OF RA

Varyan Nvard

*Senior Inspector at the Educational-Methodical
and Development Department,
Educational Complex of Police of RA,
Master of Jurisprudence, Police Senior Lieutenant*

The problem of case investigation within a reasonable time is one of the topical issues in the criminal procedure of RA. The article is devoted to the study of some issues related to this problem in the light of the judgments of the European Court of Human Rights and the Court of Cassation of RA, as well as the legal regulations of the Draft Criminal Procedure Code of RA.

Key words: criminal procedure, reasonable time, European Court of Human Rights, Draft Criminal Procedure Code of RA.

Հոդվածը գրախոսվել է՝ 14.09.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 22.09.2020թ.

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՌԵԱԼ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Օհանյան Դավիթ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

Պայմանագրի մեկնաբանման ժամանակ կարևոր նշանակություն ունեն նրանում պարունակվող բառերը և արտահայտությունները, որոնց գնահատման արդյունքում դատարանը կարողանում է լուծել իրավական վեճը: Սակայն արդյո՞ք պայմանագրի մեկնաբանման ժամանակ բառերը և արտահայտություններն այն միակ աղբյուրներն են, որոնք կարող են օգտագործվել դատարանի կողմից վեճը լուծելու համար:

Իրականում փիլիսոփայական հերմենևտիկան որևէ արհեստական խոչընդոտ չի ստեղծում մեկնաբանողի համար, չի արգելում, այլ, հակառակը, հնարավորություն է տալիս ստեղծագործության մեկնաբանման համար կիրառել բոլոր հնարավոր միջոցները: Երբ բանասերները մեկնաբանում են Ցիցերոնի խոսքը կամ Գյոթեի դրամաները, նրանք չեն սահմանափակվում այդ ստեղծագործության առարկայի շրջանակներով, այլ անդրադառնում են նաև ուրիշ աղբյուրների՝ այդ հեղինակների համանման ստեղծագործություններին, նրանց թղթակցությանը, խոսակցություններին, նրանց ժամանակակիցների ստեղծագործություններին: Իսկ միթե՞ իրավաբան-մեկնաբանողը գտնվում է այլ կարգավիճակում, միթե՞ նա չի հետապնդում նույն նպատակը՝ հեղինակի իրական իմաստի բացահայտումը: Իսկ եթե դա այդպես է, ապա՝ արդյո՞ք պետք չէ ընդունել, որ պայմանագրի մեկնաբանման ժամանակ անհրաժեշտ է օգտվել ցանկացած տեսակի աղբյուրի ուսումնասիրման իրավունքից, որ հնարավորություն կտա ստանալ հավաստի տվյալներ պայմանագրի իրական իմաստը բացահայտելու համար:

Եթե բանասերն իր մեկնաբանման խնդիրը կատարելու համար պետք է սահմանափակվի հեղինակի մտքի շրջանակով (օրինակ՝ չի կարող բանասերն Իլիականի ասքը մեկնաբանել այն տեսանկյունից, որ Պատրոկլեսը Հեկտորի կողմից սպանվելու փոխարեն ողջ վերադառնում է հունական ճամբար), ապա իրավաբան-մեկնաբանողը, հակառակը, պետք է միշտ անցնի այն մտքերի աշխարհը, որի ազդեցության տակ գործել է հեղինակը և տեքստի կիրառումը տարածի այնպիսի երևույթների վրա, որոնց մասին հե-

դինակը չի մտածել և չէր էլ կարող մտածել¹:

Ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ մոտեցումների կիրառման դեպքում, բացի պայմանագրի բուն տեքստից, ինչպես կողմերի էմպիրիկ, այնպես էլ բանական կամքը հաստատելիս հաշվի են առնվում այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են վկայել նման բովանդակության մասին: Մակայն ձևավորել այդպիսի հանգամանքների սպառիչ ցանկ օբյեկտիվորեն անհնար է, ինչը պայմանավորված է ինքնին պայմանագրի մեկնաբանման պրոցեսով, որում կարող են մտցվել այնպիսի հանգամանքներ, որոնց կողմերը կարող են հղում տալ իրենց տեսակետը հիմնավորելիս: Կարելի է նմանատիպ հանգամանքները պայմանականորեն անվանել արտաքին աղբյուրներ, քանզի դրանք, որպես կանոն, գտնվում են պայմանագրից դուրս:

Ինչ վերաբերվում է արտաքին աղբյուրների ներպետական իրավական կառուցակարգերին, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով *պայմանագրի նպատակը*: Ընդ որում՝ նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ *ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը*:

Ինչպես տեսնում ենք, քաղաքացիական օրենսգրքում տրված են այն ելակետերը, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ռեալ մեկնաբանման համար: Թվում է, թե առաջին հայացքից ունենք այն օրենսդրական գործիքակազմը, որն անհրաժեշտ և բավարար է կողմերի իրական կամքը բացահայտելու համար, սակայն դա ընդամենը առաջին հայացքից: Բանն այն է, որ կարծես թե օրենսդիրը չի կարողացել իր կարգավորման նշանակությունը հրամցնել իրավակիրառներին: Մասնավորապես, ներպետական դատական պրակտիկան այս մասով աչքի է ընկնում երկու ակնառու թերությամբ՝

1. հեռանալով տառացի մեկնաբանումից և կիրառելով ռեալ մեկնաբանում՝ դատարանները մեծամասամբ չեն քննարկում այն կոնկրետ հանգամանքը կամ հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել նման որոշում

¹ St' u K. Menger- Zur Methodologie der Staats und Sozialwissenschaften" in Jahrbuch für Gesetzgebung, Verwaltung und Volkswirtschaft im deutschen Reich, 1883 էջ 109

կայացնելու համար²:

2. Եթե նույնիսկ այդ հանգամանքները քննարկվում են, շատ հաճախ դատարանները չեն մատնանշում դրանք³:

Իսկ ինչո՞վ են պայմանավորված այդ թերությունները՝

1. Խնդիրն այն է, որ շատ հաճախ բարդ է տարանջատել միմյանցից արտաքին աղբյուրները, քանզի որոշակի դեպքերում դրանք կամ շատ նման են, կամ կարող են ուղղակիորեն համընկնել: Օրինակ՝ կարող է պատահել այնպես, որ կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը և գործարար շրջանառության սովորույթները նույնանան:

2. Արտաքին հանգամանքները որքան էլ առաջին հայացքից պարզ են թվում, այնուամենայնիվ, բովանդակային առումով կան մի շարք նրբություններ: Օրինակ՝ բավականին վիճելի հարց է այն, թե կոնկրետ ո՞ր պահից է գործելակերպը կողմերի փոխադարձ հարաբերություններում համարվում հաստատված:

3. Առանձնակի բարդություն են նաև արտաքին աղբյուրների հաստատումը և գնահատումը: Քանի որ արտաքին աղբյուրները հանգամանքներ (փաստեր) են, ապա դրանք ապացուցման կարիք ունեն: Հետևաբար, այստեղ ևս դրսևորվում է ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության հարցը: Օրինակ՝ այս հարցը կարող է դրսևորվել կողմերի բանակցությունների և թղթակցության մասով:

Այս և նմանատիպ այլ խնդիրները բերում են նրան, որ շատ հաճախ դատարանները խուսափում են արտաքին աղբյուրների գնահատումից և կիրառումից: Մեր ներդատական պրակտիկայում վերոնշյալ թերությունները և դրանք ծնող պատճառները վեր հանելու և օպտիմալ լուծումներ առաջարկելու համար նպատակահարմար ենք համարում արտաքին աղբյուրները քննարկել առանձին-առանձին՝ միևնույն ժամանակ համադրելով ներպետական պրակտիկան, արտասահմանյան երկրների օրենսդրությունը և պրակտիկան, միջազգային օրենսդրությունը և տեսությունը:

1. Բանակցություններ և կողմերի թղթակցություն

Կողմերի բանակցությունները, ինչպես նաև թղթակցությունը, կարող

² Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թ.-ի նոյեմբերի 28-ի թիվ ԵԱՆԴ/0976/02/13 որոշումը:

³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թ.-ի մայիսի 24-ի թիվ ԵՄԴ/0250/02/12 որոշումը:

են ծառայել որպես ապացույցներ առ այն, թե ինչպիսին է եղել կողմերի կամքը պայմանագրի կնքման պահին, կամ ինչպես կհասկանար այդ պայմանը բանական անձը: Մայրցամաքային իրավակարգերում առաջին հերթին հաշվի է առնվում գրավոր թղթակցությունը, որով փոխանակվել են կողմերը մինչ պայմանագրի կնքելը կամ պայմանագրի կատարման ընթացքում, ինչպես նաև՝ հանդիպումների արձանագրությունները, խորհրդակցության ձայնագրությունները:

Դատավարական տեսանկյունից թղթակցությունը և կողմերի բանակցությունները կարող են ներկայացվել դատարանին գրավոր ապացույցների տեսքով (նամակագրություն, հուշագիր, հանդիպումների արձանագրություն, պայմանագրերի նախագիծ, տարաձայնությունների արձանագրություն), ինչպես նաև աուդիո և վիդեո ձայնագրությունների տեսքով: Մեկնաբանման վեճի քննության ժամանակ հնարավոր է հաշվի առնել նաև վկաների ցուցմունքները (օրինակ՝ բանակցություններին մասնակցած վկաների), ինչպես նաև՝ կողմերի հայտարարությունները:

Որպես պայմանագրին նախորդող բանակցությունների բովանդակության մասին վկայի ցուցմունքի հաշվի առնման օրինակ կարելի է հանդիպել ամերիկյան դատական պրակտիկայում:

Գործի հանգամանքների համաձայն՝ ֆինանսական ընկերությունը կապալի պայմանագիր է կնքում շինարարական ընկերության հետ՝ շենքերի և օժանդակ կառույցների քանդման մասին: Ապամոնտաժելով կառույցները՝ շինարարական ընկերությունը որոշում կայացրեց պահպանել մատերիալը՝ պայմանավորվելով այդ օբյեկտները երրորդ անձանց վաճառելու մասին: Ֆինանսական ընկերությունը դիմեց դատարան՝ պահանջելով վերացնել պայմանագրային խախտումը: Օֆերտայի համաձայն՝ շենքերը և օժանդակ շինությունները պետք է ամբողջությամբ քանդվեն: Միևնույն ժամանակ, օֆերտան պարունակում էր այլ պայման, որի համաձայն՝ շինարարական մատերիալն անցնում էր կողմերի սեփականությանը, և նրանք իրավունք էին ստանում օգտագործել այն իրենց հայեցողությամբ: Դատարանը վճիռ կայացրեց հօգուտ ֆինանսական ընկերության՝ հենվելով շինարարական ընկերության տնօրենի ցուցմունքի վրա՝ որի համաձայն պայմանագրի կնքման բանակցությունների ընթացքում չի արտահայտվել ապամոնտաժված ապրանքի պահպանման և հետագա վաճառքի մտադրություն: Չնայած այն հանգամանքին, որ պայմանագրում պայման կար շինարարական մա-

տերիալի պահպանման մասին, դատարանը նշեց, որ կողմերի ընդհանուր մտադրությունը միտված է եղել գույքի ամբողջական լիկվիդացիային, և պայմանագրի այլ նշանակության մասին բանական անձը ֆինանսական ընկերության տեղում չգիտեր և չէր կարող իմանալ⁴:

Այս գործի հանգամանքներից հետևում է, որ կողմերի բանակցությունները գնահատելու միջոցով դատարանը եկավ վիճելի պայմանի այնպիսի հետևության, որը պետք է լիներ բանական անձի մոտ շինարարական ընկերության տեղում:

Մեկ այլ գործով շենքի սեփականատերը կապալի պայմանագիր էր կնքել կապալառու ընկերության հետ, որով վերջինս պարտավորվում էր ներկել պատուհանների արտաքին շրջանակները (*exterior window frames*): Ընկերությունը կատարել է աշխատանքը միայն դրսի հատվածից: Շենքի սեփականատերը պնդում էր, որ կողմերը համաձայնել են ներկել նաև ներսի հատվածից: Չնայած վիճելի պայմանի տառացի նշանակությունը խոսում էր հակառակի մասին՝ դատարանը գործը վճռեց հոգուտ շենքի սեփականատիրոջ՝ հիմնվելով այն փաստաթղթի վրա, որ պայմանագրին նախորդող բանակցությունների համաձայն՝ կողմերի ընդհանուր կամքը միտված էր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին աշխատանքներին⁵:

Քննարկվող օրինակում պայմանագրին նախորդող բանակցությունները հաստատեցին կողմերի իրական ընդհանուր կամքը՝ չնայած այդպիսի արտաքին հատկանիշները հակասում էին վիճելի պայմանի տառացի բովանդակությանը:

2. կողմերի փոխադարձ հարաբերություններում ձևավորված պրակտիկա

Վիճելի պայմանի մեկնաբանման ժամանակ դատարանները հաշվի են առնում պրակտիկան, որը կողմերը ձևավորել են միմյանց միջև հարաբերություններում: Պրակտիկայի տակ պետք է հասկանալ սահմանված կարգը, այսինքն՝ վարքագծի կանոնները, որոնք սահմանվել են կողմերի միջև նախորդող հարաբերություններում:

Ինչպես ընդգծում է պրոֆեսոր Ե. Ա. Սուխանովը՝ այդպիսի կանոնները կարող է ուղղակիորեն սահմանված չեն կողմերի միջև, բայց ենթադրվում են

⁴ St' u Burton S. j. Elements of contract interpretation , N. Y. , 2009, էջ՝ 30.

⁵ St' u` Lando O., H. Beale. Principles of European Contract Law. Parts I and II. Hague, London, Boston. 2000. էջ՝ 346.

այդ մասին առարկությունների բացակայության ուժով: Այդպիսի կարգն արտացոլում է կողմերի միջև կնքված պայմանագրի ենթադրվող պայմանը, այդ իսկ պատճառով չեղարկում է ինչպես օրենքի դիսպոզիտիվ կանոնները, այնպես էլ սովորույթները⁶:

Ինչպես նշում է պրոֆեսոր Կ. Լյուիսոնը՝ պայմանագրի պայմանը կարող է ինկորպորացվել՝ հաշվի առնելով կողմերի վարքագիծը: Այդպիսի վարքագիծը պայմանավորված է նրանով, որ կողմերից մեկը մինչ պայմանագիր կնքելը մյուս կողմի ուշադրությունը հրավիրում է այն պայմանների վրա, որոնց շուրջ նա մտադրվել էր մտնել հարաբերությունների մեջ, կամ դա կարող է բխել կողմերի նախորդող ձեռնարկատիրական պրակտիկայից⁷:

Առաջին հերթին սահմանված կարգի մեջ մտնում են այն գործարքները, որոնք կնքվել են կողմերի միջև մինչ մեկնաբանման վեճի ծագումը: Բերենք մեկ օրինակ ռուսական դատական պրակտիկայից:

Վարձակալության պայմանագրով վարձակալը պահանջում էր վարձատուից (ավիաընկերություն) վնասների հատուցում՝ կապված այլընտրանքային տարածքի տրամադրման պարտականության չկատարման հետ: Մերժելով պահանջը՝ ստորադաս դատարանները մեկնաբանել էին վիճելի պայմանն այնպես, որ այն չի նախատեսում այլընտրանքային տարածքներ տրամադրելու՝ վարձատուի պարտականությունը: Ընդ որում՝ ստորադաս դատարանները եկել էին այն եզրահանգման, որ վարձատուի գործողությունները պայմանագրով սահմանափակվում էին միայն այլընտրանքային տարածքներ փնտրելու օժանդակությամբ: Վճռաբեկ դատարանը չհամաձայնեց այդ եզրահանգմանը՝ նշելով, որ վիճելի պայմանը պարտավորեցնում է հենց վարձատուին տրամադրել այլընտրանքային տարածքները: Դատարանը հաշվի առավ այն հանգամանքը, որ այս վեճին նախորդող պայմանագրային հարաբերությունների ժամանակ (երբ կրկին վարձակալվել են տարածքներ), մասսայական միջոցառումների իրականացման ժամանակ վարձատուն տրամադրել է այդպիսի տարածքներ⁸:

⁶ St' u Гражданское право: В 4 т. Том 1: Общая часть /Под общ. ред. Е.А.Суханова. М. 2005. Էջ՝ 94

⁷ St' u Lewison K. The interpretation of contracts, L. 2011, էջ՝ 74.

⁸ St' u Постановление ФАС Московского округа от 02 февраля 2011 года N КГ-А41/16933-10 по делу N А41-28669/09.

Այս գործով դատարանը եկավ այն եզրակացության, որ կողմերի միջև նախկինում կնքված պայմանագրերով վարձատույն վարձակալին տվել է այլընտրանքային տարածքներ: Սակայն վիճելի է մնում այն հարցը, թե կողմերի միջև ձևավորված պրակտիկան ե՞րբ կարելի է համարել ձևավորված: Կապված Վիեննայի կոնվենցիայի կիրառման հետ՝ տարբեր իրավագործության դատարանների կարծիքով պրակտիկան համարվում է ձևավորված, երբ կողմերը փոխադարձ հարաբերություններում որոշակի տևողությամբ և պարբերականությամբ միշտ պահում են որոշակի վարքագիծ ⁹:

Դատավարական տեսանկյունից որպես ապացույցներ կարող են հանդիսանալ կողմերի հայտարարությունները, նախկին պայմանագրերի տեքստը, տարատեսակ գրավոր ապացույցներ և այլն:

3. Կողմերի հետագա վարքագիծ

Այն փաստի հաստատման համար, որ մյուս կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ իրական կամքի բովանդակության մասին, կարևոր դեր է խաղում նաև կողմերի հետագա վարքագիծը, այսինքն՝ պայմանագրի կատարման կամ չկատարման համար իրականացված այն փաստական գործողությունները, որոնք կարող են վկայել, թե ինչպես են կողմերն ընկալել վիճելի պայմանը: Կողմերի հետագա վարքագիծը նաև կարող է օգնել բանական անձի կառուցակարգի սահմանմանը կոնկրետ գործով:

Կողմերի հետագա վարքագծի տակ կարելի է հասկանալ վիճելի պայմանի կատարմանն ուղղված գործողությունները: Գործի հանգամանքերի համաձայն, որը քննվել էր Համբուրգի դատարանում՝ օֆիսային ապրանքների գերմանացի մատակարարն իր ապրանքները Ֆրանսիայի հյուսիսում տարածելու համար ներգրավեց գործակալի: Պայմանագիրը կնքվեց 6 տարի ժամկետով, և նրանում նախատեսվեց առանց գործակալին տեղեկացնելու պայմանագրի լուծման հնարավորություն՝ նրա կողմից իր պարտականությունների էական խախտման դեպքում: Նմանատիպ պարտականություններից մեկն էլ հանդիսանում էր գործակալի կողմից նախօրոք սահմանված տարածքում տեղակայված 20 համալսարանների այցելումը յուրաքանչյուր ամիս: Գործակալն այցելել էր յուրաքանչյուր համալսարան տարին 11 անգամ՝ ելնելով նրանից, որ իր պարտականությունները պետք է կա-

⁹ St' u Amtsgericht Duisburg, Germany, 13 April 2000 (CLOUT no. 360); Zivilgericht des Kantons Basel-Stadt, Switzerland, 3 December 1997 (CLOUT no. 221).

տարվեն միայն այն ամիսներին, երբ համալսարանները բաց են: Ձեռնարկատերը գիտեր գործակալի վիճելի պայմանի նման հասկացողության մասին և 4 տարի շարունակ վճարել էր: Դատարանը գործը վճռեց գործակալի օգտին և ընդունեց, որ ձեռնարկատիրոջ մոտ բացակայել են պայմանագրի լուծման հիմքերը, քանզի կողմերի հետագա վարքագիծը վկայում էր, որ վիճելի պայմանը նրանց կողմից հասկացվել է միատեսակ¹⁰:

Արևմտյան դոկտրինայում ակտիվորեն քննարկվում է հետագա վարքագիծը հաստատող ապացուցման բեռի բաշխումը: Վիեննայի կոնվենցիայի 8-րդ հոդվածի կիրառման առնչությամբ Ֆ. Լոթենշլագերը նշում է, որ պայմանագրի կողմի հետագա վարքագիծն առաջին հերթին օգտագործվում է որպես հակափաստարկ (կոնտր-ապացույց) սեփական մտադրության բովանդակության կապակցությամբ: Ֆ. Լոթենշլագերը ուշադրություն է դարձնում նրա վրա, որ ոչ բարեխիղճ կողմը կարող է ընտրել սեփական հետագա վարքագծի որոշակի տեսակ այն բանի համար, որ ազդի վիճելի պայմանի մեկնաբանման արդյունքի վրա, այդ իսկ պատճառով կողմերի հետագա վարքագիծը պետք է կիրառել միայն որպես նրա պնդումների հակափաստարկ¹¹:

Կողմի ոչ բարեխիղճ վարքագծի ռիսկն իրականում առկա է, սակայն, այս չափանիշով պայմանավորված, կիրառման ոլորտի նեղացումն արդարացված չէ: Հետագա վարքագծին հղում տալը պետք է որոշվի յուրաքանչյուր կոնկրետ գործում հաշվի առնելով բոլոր հանգամանքները՝ այդ թվում նաև՝ կողմերի բարեխղճության սկզբունքը պահպանելը:

Կողմերի հետագա վարքագիծը՝ որպես գնահատման ենթակա հանգամանք, կիրառություն է ստացել նաև նաև ներպետական դատական պրակտիկայում:

Մասնավորապես, <<Կարատ>> ՍՊԸ-ն ընդդեմ <<Էգնա Շին>> ՍՊԸ-ի գործով Ընկերության և Կազմակերպության միջև կնքվել է մատակարարման պայմանագիր՝ որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով նախատեսված ժամկետներում Կազմակերպությանը հանձնել 16.000 մ³ գրանիտե խիճ (հետագայում՝ «Ապրանք»), իսկ Կազմակերպությունը

¹⁰ St' u Lando O., H. Beale. նշվ. աշխ. էջ 354.

¹¹ St' u Lautenschlager F. Aktuelle Probleme bei der Auslegung von Willenerklärungen und Parteiverhalten bei Verträgen im Anwendungsbereich der CISG - Der objektive Dritte, späteres Parteiverhalten, Sprachprobleme und Allgemeine Geschäftsbedingungen. 2006. էջ 7-10.

նը պարտավորվել է ընդունել այդ «Ապրանքը» և վճարել դրա համար:

Վերլուծելով պայմանագրի դրույթները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա մեկնաբանումը, համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, չի բացահայտում 4.3 կետով նախատեսված վճարումների կատարման կարգը (վճարումը պետք է կատարվի պայմանագրով նախատեսված ամբողջ ապրանքը մատակարարելուց՝ թե՛ յուրաքանչյուր խմբաքանակ մատակարարելուց հետո): Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել պայմանագրի մեկնաբանման երրորդ կանոնը, այն է՝ պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը, նկատի առնելով նաև կողմերի հետագա վարքը «Ապրանք» եզրույթը սահմանելիս:

Մասնավորապես, սույն գործի փաստերի համաձայն՝ Կազմակերպությունը մատակարարված որոշ խմբաքանակի ապրանքի դիմաց կատարել է վճարումներ: Այսինքն՝ Կազմակերպության հետագա վարքը դրսևորվել է մատակարարված ապրանքի խմբաքանակի դիմաց վճարելով: Հակառակ դեպքում՝ Ընկերության կողմից մատակարարված ապրանքների դիմաց Կազմակերպության վճարումները կկատարվեին 16.000 մ³ գրանիտե խիճը մատակարարելուց հետո: Նշվածից հետևում է, որ կողմերի իրական ընդհանուր կամքն ուղղված չէր 16.000 մ³ գրանիտե խիճը մատակարարելուց հետո գումարը վճարելու պայման սահմանելուն¹²:

4. Պայմանագրի ընդհանուր իմաստը և նպատակը

Պայմանագրի մեկնաբանման ժամանակ ևս մեկ կարևոր հանգամանք է պայմանագրի ընդհանուր իմաստին կամ նպատակին հղում տալը (ՈՒՆԻԴՈՒՄ 4.3 հոդված, Եվրոպական պարտավորական իրավունքի սկզբունքներ 5:102 հոդված): Ընդ որում՝ մեկնաբանման ժամանակ հաշվի են առնվում ինչպես տնտեսական, այնպես էլ իրավական նպատակները: Իրականում պայմանագրի իմաստի և նպատակի տակ ուսումնասիրվում են այլ պայմաններ: Սրա հետ կապված՝ պետք է խոսել պայմանագրի համակարգային մեկնաբանման մասին, երբ վիճելի պայմանի նշանակությունը բացահայտվում է՝ այն համադրելով պայմանագրի այլ պայմանների հետ:

Պայմանագրի համակարգային մեկնաբանումը ծանոթ է եղել նաև հռո-

¹² Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թ.-ի մայիսի 27-ի թիվ ՇԴ1/0303/02/10 որոշումը:

մեական իրավունքին: Պայմանագրի պայմանը պետք է մեկնաբանվի այլ պայմանների լույսի ներքո՝ անկախ այն հանգամանքից՝ նախորդում է այն մյուս պայմաններին, թե հաջորդում է (*"Incivile est nisi tota lege perspecta una aliqua particula eius proposita iudicare vel respondere"*: Cels. D. 1, 3, 24):

Ինչպես նշվում է Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների մեկնաբանություններում՝ ողջամիտ է ենթադրել, որ կողմերը մտադրվել են արտահայտել իրենց մտքերը համաձայնեցված (հաջորդականորեն): Ուստի պայմանագիրը պետք է մեկնաբանել որպես մեկ ամբողջություն՝ չտարանջատելով մեկ պայմանը մյուս պայմանից: Պետք է ենթադրել, որ տերմինալոգիան ենթադրվում է համաձայնեցված, էությամբ մոտ պայմանները չպետք է պայմանագրի տարբեր հատվածներում տարբեր նշանակություններով հասկացվեն¹³:

Գործերից մեկի համաձայն, որը քննվել էր Փարիզի դատարանում, կատարողը (երգչուհի) հրավիրվել է աշխատանքի կաբարեյում 6 ամիս ժամկետով՝ որպես մենեջեր *Champs-Élysées*: Պայմանագիրը պայման էր նախատեսում՝ որի համաձայն մենեջերն իրավունք ուներ լուծել պայմանագիրը կատարողի առաջին երեք աշխատանքային օրվա ընթացքում: Մեկ այլ պայմանի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պայմանագրի լուծման դեպքում մյուս կողմին պետք է վճարեր տուգանք: Երգչուհին աշխատանքից հեռացվեց առաջին իսկ օրը: Արդյո՞ք նման պարագայում նա ձեռք է բերում տուգանք պահանջելու իրավունք: Նրա կողմից ներկայացրած հայցը մերժվեց՝ հետևյալ հիմնավորումներով՝ տուգանքի մասին վիճելի պայմանը պետք է մեկնաբանվի ամբողջ պայմանագրի լույսի ներքո, այդ թվում նաև՝ առաջին երեք աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը լուծելու հնարավորությունը, որը դատարանը ճանաչել է փորձնական ժամկետ¹⁴:

Ելնելով պայմանագրի ընդհանուր իմաստից՝ դատարանը գտավ, որ տուգանք նշանակելու պայմանն ուղղված է եղել կողմերի իրավունքների և շահերի պաշտպանությանը միայն կատարողի կողմից փորձնական ժամկետն անցնելուց հետո:

Պայմանագրի ընդհանուր իմաստը և նպատակը՝ որպես գնահատման ենթակա արտաքին աղբյուր, նախատեսված է նաև ՀՀ քաղաքացիական օ-

¹³Sté u Lando O., H. Beale. նշվ. աշխ. էջ 360.

¹⁴Sté u Principles, Definitions and Model Rules of European Private Law. Draft Common Frame of Reference (DCFR). Full Edition / Chr. von Bar, E. Clive. Vol. I. P.568.

րենսգրքի 447-րդ հոդվածի 2-րդ մասում: Ընդ որում, նորմի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրն այս հանգամանքը կարևորում է, քանզի առանձնացնում է այն մյուս հանգամանքներից:

Բերենք այս հանգամանքի պրակտիկ կիրառման մեկ օրինակ ներպետական դատական պրակտիկայից՝

Անշարժ գույքի բաժնի նախնական նվիրատվության պայմանագրի համաձայն՝ նվիրատուն պարտավորվել է ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո անհատույց, որպես սեփականություն, հետագա նվիրատուին հանձնել Երևան քաղաքի Դ.Վարուժանի փողոցի թիվ 4 հասցեի անշարժ գույքի՝ իրեն հասանելիք ժառանգությամբ ձեռք բերվող սեփականության 1/2 բաժնի իրավունքը: Պայմանագրի 2-րդ կետով նվիրատուն պարտավորվել է հիմնական նվիրատվության պայմանագիր կնքել մինչև **30.07.2011 թվականը**:

Ստացվել է այնպես, որ ժառանգման իրավունքի շուրջ առաջացած վեճի արդյունքում նվիրատուն սեփականության իրավունք է ձեռք բերել պայմանագրում նշված ժամկետից ավելի ուշ: Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, պայմանագրում նշված ժամկետը տառացի մեկնաբանման արդյունքում դիտարկելով որպես էական պայման, եզրահանգել են, որ նվիրատուն չունի հիմնական նվիրատվության պայմանագիր կնքելու պարտականություն, քանի որ այդ ժամկետն անցել է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով պայմանագրի կատարման ժամկետը՝ 30.07.2011 թվականը, ինքնին հանդիսացել է **լրացուցիչ** պայման, այն հիմնականում պայմանավորված է եղել ժառանգման իրավունք ձեռք բերելով, և կողմերի մեղքի բացակայության պայմաններում պայմանագրում նշված ժամկետի լրանալը չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրի էական և հիմնական պայմանը չկատարելու համար, քանի որ պայմանագրի էական պայման է հանդիսացել ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո գույքի նվիրատվություն կատարելը, և այդ իսկ պատճառով կողմերի միջև կնքվել է նախնական նվիրատվության պայմանագիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կողմերի միջև կնքված՝ անշարժ գույքի բաժնի նվիրատվության նախնական պայմանագիրը հանդիսացել է կողմերի կամքի ազատ արտահայտումը, որում ամրագրվել են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, այն վավերացվել է նոտարական կարգով, և վերջիններիս կամահայտնությունն ուղղված է եղել հիմնա-

կան նվիրատվության պայմանագիր կնքելուն: Ինչ վերաբերում է նշված պայմանագրի 2-րդ կետով սահմանված պայմանագրի կատարման ժամկետին, ապա այն բաց է թողնվել կողմերի կամքից անկախ հանգամանքներում և ունի ածանցյալ բնույթ ժառանգման իրավունք ձեռք բերելու պայմանի նկատմամբ¹⁵:

Ակնհայտ է, որ այս իրավիճակում Վճռաբեկ դատարանը թեկուզև չի շեշտում, բայց հետևում է պայմանագրի ընդհանուր իմաստին և նպատակին:

5. Սովորույթներ

Պայմանագրի մեկնաբանման ժամանակ սովորույթներին հղում տալն առաջին հերթին հանդիպում է արտասահմանյան դատական պրակտիկայում բանական անձի կառուցակարգը հիմնավորելիս, քանզի վիճելի պայմանի ձևակերպման ժամանակ կողմերից պահանջվում է սովորույթների պահպանում: Սովորույթի կիրառումը որպես հանգամանք, որն անհրաժեշտ է պայմանագրի մեկնաբանման ժամանակ, կարող է բարդություններ առաջացնել՝ կապված սովորույթ հասկացության շուրջ առկա տարաձայնությունների հետ: Հիմնական հարցն այն է, թե ինչ պետք է հասկանալ սովորույթի տակ՝ ինքնին իրավունքի աղբյուր հանդիսացող սովորույթը, թե՞ հասարակ սովորույթը, որը չունի համընդհանուր ուժ:

ՀՀ Քաղաքական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը՝ անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից: Արևմտյան իրավակարգերում ևս սովորույթը դիտարկվում է որպես իրավունքի աղբյուր: Սովորույթի առավել լայն սահմանում տրվում է ԱՄՆ միատեսակ առևտրային օրենսգրքի 303(c) հոդվածում՝ որի համաձայն առևտրային սովորույթի տակ պետք է հասկանալ առևտրային գործունեության պրակտիկա կամ միջոց, որը համապատասխան առևտրային ոլորտում կամ մասնագիտության մեջ ունի կանոնավորություն և հիմնավորում է վիճելի գործարքի սպասումները: Նշված ձևակերպումից հետևում է, որ այս իրավիճակում խոսքն ավելի շուտ գործնական սովորույթությունների մասին է:

¹⁵ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թ.-ի մայիսի 24-ի թիվ ԵՄԴ/0250/02/12 որոշումը

Սովորույթի և սովորության միջև տարբերությունն այն է, որ վերջինիս չեն ներկայացվում լայն տարածում ունենալու պահանջներ: Սակայն կանոնները, որոնք պարունակվում են սովորությունների մեջ, մտնում են գործարքի կողմերի կամահայտնության կազմի մեջ, եթե համապատասխանում են նրանց մտադրություններին¹⁶:

Վիեննայի կոնվենցիայի 8-րդ հոդվածի առնչությամբ պրոֆեսոր Պ.Շլեխտրիմը նշում է, որ սովորությունները տարբերվում են իրավունքի աղբյուր հանդիսացող սովորույթներից, որոնք ամրագրված են նույն կոնվենցիայի 9-րդ հոդվածում: Նրա կարծիքով՝ բացի 9-րդ հոդվածում նախատեսված սովորույթներից, մեկնաբանման ժամանակ պետք է հաշվի առնվեն ավանդույթները, որոնք գոյություն ունեն լոկալ, տարածաշրջանային, ազգային կամ որոշակի խումբ անձանց միջև¹⁷:

Մեր կարծիքով՝ ինչպես սովորույթը, այնպես էլ սովորությունները պետք է հաշվի առնվեն մեկնաբանման ժամանակ: Տարբերությունը միայն ապացուցման առարկայի մեջ է: Սովորույթների առնչությամբ ենթադրվում է, որ կողմերը գիտեին դրա մասին, իսկ սովորությունների մասով՝ դրանց իրազեկվածությունը դեռևս ենթակա է ապացուցման:

ՈՒՆԻԴՐՈՒԱ-ի սկզբունքներն ուղղակի հղում են պարունակում ձեռնարկատիրական գործունեության ոլորտում հանրաճանաչ պայմանների և արտահայտությունների կիրառմանը մեկնաբանման ժամանակ (4.3 հոդված):

Որպես օրինակ կարելի է բերել վեճը Համբուրգի ձեռնարկատիրոջ հետ, ով պայմանավորվել էր մեկ այլ վաճառողից գնել 2000 բարել գինի՝ *Beaujolais* ծագմամբ: Այդ ծագման գինու համար, համաձայն տեղական սովորույթների, 1 բարելը պարունակում է 216 լիտր՝ այն ժամանակ, երբ ընդհանրապես Բուրգունդիայում բարելը ենթադրում է ավելի մեծ տարողություն: Հաշվի առնելով տեղական սովորույթները՝ ձեռնարկատերը (գնորդ) չէր կարող հղում կատարել պայմանագրի ոչ պատշաճ կատարմանը քանակի մասով՝ հաշվի առնելով, որ բարելը Բուրգունդիայում հասկացվում է այլ տեսակ գի-

¹⁶ St' u Зыкин И.С. Обычай и обыкновения в международной торговле. М., 1983. էջ 13.

¹⁷ St' u Schlechtriem P. Internationales UN-Kaufrecht: Ein Studien- und Erläuterungsbuch zum Übereinkommen der Vereinten Nationen über Verträge über den internationalen Warenkauf (CISG). 2007. էջ 53.

նիների համար¹⁸:

Սովորույթի (գործարար շրջանառության սովորույթ)՝ որպես գնահատման ենթակա հանգամանքի, <<քողարկված>> կիրառում հանդիպում է նաև ներպետական դատական պրակտիկայում:

Վարկային պայմանագրով վիճելի էր **սպասարկման վճար** հասկացությունը: Մասնավորապես, հայցվոր կողմը պնդում էր, որ կողմերը պայմանագիր կնքելիս նկատի են ունեցել ոչ թե սպասարկման վճար, այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար **տուժանք**: Բավարարելով հայցվորի պահանջը՝ դատարանը գտավ, որ վարկային պայմանագրով վարկառուի հիմնական պարտավորությունը կազմում է վարկի գումարը վերադարձնելը և դրա դիմաց տոկոսներ վճարելը: Միաժամանակ, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր վարկային պայմանագրերում առկա է նշված հիմնական պարտավորությանն ուղեկցող այլ հիմնական պարտավորություններ՝ ներառյալ վարկի սպասարկման վճարը: Վարկային պայմանագրի հիմնական պարտավորությանն ուղեկցող սպասարկման գումարը վճարելու մասին դրույթն ունի իր ինքնուրույն նպատակները՝ հիմնական պարտավորությունից գատ: Այսպես՝ որպես ընդհանուր կանոն՝ սպասարկման վճարն այն ամսական դրամական վճարն է (որոշակի կամ որոշվող), որը հաճախորդը վճարում է ֆինանսական կազմակերպությանը՝ վարկի սպասարկման դիմաց: Դատարանն արձանագրում է, որ սպասարկման վճարը վարկի մայր գումարի և դրա դիմաց վճարվելիք տոկոսների վճարելու պարտավորությունների հետ միասին ծագում է պայմանագրի կնքման և ոչ դրանից ծագող պարտավորությունների խախտման ուժով: Այլ կերպ՝ սպասարկման վճարը նպատակ է հետապնդում հատուցելու բանկին առկա կամ հնարավոր ծախսերը, որոնք կապված են վարկային պարտավորության սպասարկման հետ (օրինակ՝ քաղվածքների տրամադրում, պատճենահանում կամ այլ գործողությունների կատարում) և հանդիսանում է պայմանագրով կողմերից մեկի հիմնական (գլխավոր) պարտավորություններից մեկը, որի չկատարումը/անպատշաճ նոր ինքնին կարող է հանգեցնել լրացուցիչ (ակցեսոր) պարտավորության (ներառյալ՝ պատասխանատվության) կիրառման: Այսինքն՝ ելնելով սպասարկման վճարի նպատակներից՝ այն ինքնին չի կարող հան-

¹⁸ St' u Lando O., H. Beale. նշվ. աշխ. էջ 354.

դիսանալ պատասխանատվության միջոց (ակցետոր պարտավորություն), որն առաջ է գալիս հիմնական պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով և նպատակ է հետապնդում ապահովել նշված պարտավորության կատարումը: Եվ բացի այս, սպասարկման վճարը, ելնելով իր նպատակներից, գանձվում է միայն վարկային պայմանագրի գործողության ընթացքում, և, միաժամանակ, դրա և հիմնական մնացած պարտավորությունների կատարմամբ է, որ, որպես կանոն, դադարում են կողմերի միջև եղած իրավահարաբերությունները՝ այն դեպքում, երբ պատասխանատվության միջոցներից տուժանքի կիրառումը չի հանգեցնում վարկային պայմանագրով սահմանված կողմերի իրավունքների և պարտավորությունների դադարման՝ հաշվի առնելով, որ տուժանքի վճարումը չի ազատում կողմին հիմնական պարտավորության կատարումից, եթե օրենքով նման բան չի նախատեսված¹⁹:

6. Այլ հանգամանքներ, որոնք հաշվի են առնվում պայմանագրի մեկնաբանման ժամանակ

Այլ հանգամանքների տակ կարելի է հասկանալ, օրինակ, պայմանագրի կնքման տեղը և ժամանակը, կողմերից մեկի մոտ պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ապրանքի առկայությունը, պայմանագրի կոնտեքստը, տերմինների սահմանումները, որոնք պարունակվում են օրենքներում, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են ազդել նրա վրա, թե ինչպես է կողմը, ում հասցեագրված է եղել կամահայտնությունը, կամ բանական անձը նրա տեղում հասկացել վիճելի պայմանը:

Գերմանական գրականության մեջ բերվում է պայմանագրի գնի հետ կապված մի օրինակ, որի նշանակությունը կապված է գործարքի կնքման վայրի հետ: Այսպես, գործի հանգամանքների համաձայն, ըստ պրոֆեսոր Ռ. Ցիմերմանի, Համբուրգում վաճառողի (Ֆրանսիայից) և գնորդի (Բելգիայից) միջև կնքվել է ավտոմեքենայի առուվաճառք 2000 ֆրանկի դիմաց: Վեճը կողմերի միջև ծագել է նրանից, թե որ երկրի արժույթով պետք է կատարվի վճարումը: Բնական է, որ կողմերից յուրաքանչյուրը նկատի է ունեցել իր երկրի արժույթը: Ինչպես նշում է Պրոֆեսոր Ռ. Ցիմերմանը, եթե պայմանագիրը կնքվեր Բրյուսելում, հավանաբար դատարանը կգար այն եզրահանգ-

¹⁹ Տե՛ս ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թ.-ի սեպտեմբերի 5-ի թիվ ԵԴ/27518/02/19 որոշումը

ման, որ կողմերը մտադրվել էին կատարել հաշվարկ բելգիական ֆրանկով²⁰:

Պայմանագրի մեկնաբանման ժամանակ հաշվի է առնվում նաև պայմանագրի կնքման կոնտեքստը, որի տակ պետք է հասկանալ գործարքի այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են ազդել կողմերի վիճելի պայմանի հասկացողության վրա: Որպես օրինակ կարելի է բերել ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի կողմից մեկնաբանվող պայմանագիրը:

Ձեռնարկատիրական ընկերությունը թոշակ էր նշանակել իր կառավարման մասնակից Կամիլ Բլանկին նրա թոշակի գնալուց հետո և պարտավորվել էր վերջինիս կնոջը՝ տիկին Բլանկին, պարոն Բլանկի մահից հետո տրամադրել վերջինիս թոշակի կեսը: Ստացվում է այնպես, որ կինը մահանում է ավելի շուտ և ամուսինը կրկին ամուսնանում է: Նրա մահից հետո նոր կինը պահանջ է ներկայացնում ընկերության դեմ: Դատարանը, գործը վճռելով ընկերության օգտին, նշեց՝ ենթադրությունը, որ պայմանագրի կնքման պահին կողմերը մտադրվել էին ծերուկի երկրորդ ամուսնության հնարավորության մասին և առավել ևս ունեցել են նման ընդհանուր մտադրություն, ֆանտազիայի ժանրից է²¹:

Ինչպես տեսնում ենք, ներպետական արտաքին աղբյուրները մեծամասամբ համապատասխանում են օտարերկրյա ազգային օրենսդրություններում և միջազգային իրավական տարբեր ակտերում նախատեսված և կիրառվող արտաքին աղբյուրներին: Իհարկե, <<տեղական>> աղբյուրներն ունեն որոշակի նրբություններ, սակայն դա պայմանավորված է ազգային առանձնահատկություններով: Իսկ ընդհանրապես դրանք համապատասխանում են միջազգային աղբյուրներին, մասնավորապես՝ մայրցամաքային իրավունքի համակարգին:

Քաղ. օր. 447-րդ հոդվածի վերլուծությունից նաև պարզ է դառնում, որ օրենսդիրն ուղղակիորեն ընդգծում է պայմանագրի նպատակը՝ տարանջատելով այն գնահատման ենթակա մյուս արտաքին աղբյուրներից: Ի՞նչ է նշանակում դա: Արդյո՞ք օրենսդիրը դրանով նախապատվություն է տալիս պայմանագրի նպատակին՝ մյուս աղբյուրների նկատմամբ: Այլ կերպ ասած,

²⁰ St' u Zimmerman R. The Law of Obligations, Roman Foundations of the Civilian Tradition, NY, 1996, էջ 681.

²¹ St' u Цвайгерт К, Кетц Х. Введение в сравнительное правоведение в сфере частного права, Т. 2, М. 1998, էջ 109.

արդյո՞ք գործ ունենք արտաքին աղբյուրների գնահատման ներպետական օրենսդրական հիերարխիայի հետ: Եթե այս հարցադրումներին տրվի դրական գնահատական, կստացվի, որ պայմանագրի նպատակի և մեկ այլ արտաքին աղբյուրի միջև հակասության դեպքում պետք է առավելություն տրվի նպատակին: Մեր կողմից վերը ներկայացրած ոչ մի իրավական համակարգում նման նախապատվություն չի տրվում: Կարծում ենք, որ դատարանի թիվ մեկ խնդիրը կողմերի իրական ընդհանուր կամքը բացահայտելն է: Իսկ այդ կամքի բացահայտման ճանապարհին, ըստ էության, որևէ նշանակություն չունի, թե ինչ արտաքին աղբյուր է ելակետ վերցվում: Հետևաբար չպետք է գերազնահատել մեկ աղբյուրը մեկ այլ աղբյուրի հաշվին:

Մեր այս հետևությունը հիմնավորվում է նաև նրանով, որ արտաքին աղբյուրները դատարանի համար առավելապես կրում են խորհրդատվական բնույթ: Այսպես՝ կողմերի հետագա վարքագիծը կարող է գնահատվել դատարանի կողմից մեկնաբանման ժամանակ, սակայն եթե ինքնին պայմանագիրը կամ այլ ապացույցներ վկայում են կողմերի կամքի այլ բովանդակության մասին, ապա այդպիսի հանգամանքը չպետք է դրվի դատական որոշման հիմքում:

Վերլուծության արդյունքում նաև պարզ դարձավ, որ թե՛ մեր օրենսդրության մեջ, թե՛ պրակտիկայում հաշվի առնվող արտաքին աղբյուրների շրջանակը սահմանափակ է: Ինչպես արդեն վերը նշվեց, պայմանագրերը մեկնաբանելիս հանգամանքները կարող են լինել բազմատեսակ (օրինակ՝ շատ կարևոր և կիրառելի հանգամանք է պայմանագրի կնքման տեղը): Կարծում ենք, որ ներպետական օրենսդրական թվարկումն սպառնիչ չէ և թույլ է տալիս դատարաններին ուշադրություն դարձնել նաև այնպիսի հանգամանքների վրա, որոնք թեև նախատեսված չեն օրենսգրքում, սակայն կարող են էական նշանակություն ունենալ կողմերի իրական ընդհանուր կամքը բացահայտելիս:

РЕАЛЬНОЕ ТОЛКОВАНИЕ ДОГОВОРА

Оганян Давит Арменович

*Аспирант Образовательного комплекса
полиции Республики Армения*

Статья посвящена выявлению сущности реального толкования договора. В частности, анализируются: внутригосударственное законодательство, судебная практика, зарубежный опыт и доктринальные подходы к реальному толкованию договора. На основе анализа выявляются недостатки реального толкования договора и предлагаются оптимальные решения по их преодолению.

Ключевые слова: текст договора, реальное толкование, обычай, дальнейшее поведение сторон, иерархия толкования.

CONTRACT REAL INTERPRETATION

Ohanyan Davit

*PhD Student at the Educational
Complex of Police of RA*

The present article is an attempt to discuss the essence of contract real interpretation. Particularly, some practical examples of contract literal interpretation, the national legislation and judicial practice, the international experience and a wide range of doctrinal approaches of real interpretation have been analyzed. As a result, the disadvantages of real interpretation with the best solutions have been highlighted in the article.

Key words: contract text, real interpretation, custom, parties' behavior in the future, interpretation hierarchy.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.09.2020թ.
Ներկայացվել է տպագրության՝ 03.09.2020թ.

Գիտական հոդվածներին ներկայացվող պահանջներ

Նյութերն ընդունվում են համապատասխան բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության կամ մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Հոդվածները պետք է վերաբերվեն իրավագիտության ոլորտին, իսկ առանձին դեպքերում հանդիսանան գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններ: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի վերնագիրը, համառոտագիրը՝ առնվազն 60 բառի սահմաններում, հեղինակի տվյալները և բանալի բառեր (առնվազն 5 բառ)՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն: Նյութերի ծավալը որոշելիս՝ խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա՝ 1,5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ, Unicode տառատեսակով՝ «Arial Unicode», ռուսերեն և անգլերեն տեքստերը՝ Times New Roman տառատեսակով: Նորմատիվ ակտեր օգտագործելիս՝ տեքստում պետք է նշել դրա տեսակը, ընդունման ժամանակահատվածը, անվանումը: Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Գիտական հոդվածները կարող են ներկայացվել, որպես կանոն, առավելագույնը 15 էջի սահմաններում:

ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ

Սրբագրիչներ՝ **Ա. Քոչարյան**
Մ. Առաքելյան
Գ. Ռուսակովա

Корректоры: **А. Кочарян**
М. Аракелян
Г. Русакова



Ստորագրված է տպագրության 05.11.2020թ.
Չափսը՝ 60x84 1/16, թուղթ օֆսեթ N 1:
Ծավալ՝ 12.5 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 180:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ ՍՊԸ»-ի տպարանում:
ք.Երևան, Դ.Մալյան 45:
հեռ.՝ 094-58-22-99, E-mail: info@limush.am